

ՀԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ**

14



ԵՐԵՎԱՆ 2013



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

14

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԻԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ

98



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

98

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2013

ՀՏԴ 941(479.25)

ԳՍԴ 63.3(22)

Հ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան (նախագահ), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Խառատյան, պ.գ.դ. Է. Լ. Դանիելյան, պ.գ.դ. Է. Ա. Կոստանոյան, պ.գ.թ., դոցենտ Կ. Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Սուրադյան, պ.գ.թ. Ա. Վ. Մաղալյան, պ.գ.թ. Հ. Կ. Սուքիասյան:

Հ 282 Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան և ուրիշներ/. - Եր.: Պատմ. ինստ., 2013. - 286 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների ժողովածուի հերթական 14-րդ հատորում զետեղված աշխատությունները սկզբնաղբյուրների, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Ժողովածուում զետեղված են նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 34-րդ նստաշրջանի (4–7 հուլիսի, 2013 թ.) զեկուցումները: Նստաշրջանը նվիրված էր Պատմության ինստիտուտի հիմնադրման 70-ամյակին:

Նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941(479.25)

ԳՍԴ 63.3(2Հ)

ISBN 978-99941-73-83-9

© Պատմության ինստիտուտ, 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

1943 թ. նոյեմբերին ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիման վրա կազմավորված Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում Պատմության ինստիտուտի ստեղծումը նոր թափ հաղորդեց հայրենի պատմագիտությանը: Հիմնադրումից անմիջապես հետո ինստիտուտն իր շուրջը համախմբեց հայ պատմագիտության նշանավոր շատ երախտավորների ու դարձավ հանրապետության պատմական մտքի հիմնական և առաջատար հաստատությունը: Ինստիտուտում սկսվեց հայ ժողովրդի պատմության ամբողջական և համակարգված հետազոտումը՝ ի սկզբանե մինչև նորագույն ժամանակաշրջանը:

Ինստիտուտի հիմնադրումը և նրա գործունեության առաջին տարիներն անքակտելիորեն կապված են Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հ. Օրբելու անվան հետ, ով դարձավ նորաստեղծ ինստիտուտի առաջին տնօրենը (1943–1947 թթ.): Նույն թվականներին ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենն էր Մ. Ներսիսյանը (1944–1947 թթ.): Ակադեմիկոս Հ. Օրբելուց հետո, 1947–1953 թթ. ինստիտուտի տնօրեն դարձավ Աբ. Հովհաննիսյանը, որին հաջորդեց Ս. Երեմյանը (1953–1959 թթ.): Ինստիտուտի տնօրենի պաշտոնը 1959–1963 թթ. զբաղեցրել է Ա. Հարությունյանը (Հարենցը), որից հետո՝ Գ. Գալոյանը (1963–1979 թթ.): 1962 թ. վերականգնվել է գիտական հարցերի գծով փոխտնօրենի պաշտոնը, որը մինչև 1966 թ. զբաղեցրել է Գ. Սարգսյանը, նրանից հետո մինչև 1991 թ.՝ Վ. Բարխուդարյանը: 1979–2002 թթ. ինստիտուտը ղեկավարել է Հ. Ավետիսյանը, գիտական հարցերի գծով փոխտնօրեն են եղել Ռ. Ազիզբեկյանը (1991–1994 թթ.) և Ա. Մելքոնյանը (1994–2002 թթ.), գիտքարտուղարներ՝ Ռ. Գասպարյանը (1994–1999 թթ.) և Կ. Խաչատրյանը (1999–2008 թթ.): 2002 թ. մինչ օրս պատմության ինստիտուտի տնօրենն է Ա. Մելքոնյանը: 2002–2008 թթ. փոխտնօրեն է եղել՝ Գ. Գրիգորյանը: 2008 թվա-

կանից ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենը Կ. Խաչատրյանն է, գիտական քարտուղարը՝ Զ. Մուրադյանը:

Ինստիտուտում գիտական աշխատանքների կազմակերպման գործում կարևոր դերակատարում է ունեցել ինստիտուտի գիտական խորհուրդը, որի նիստերը գումարվել են պարբերաբար, դրանցում լսվել են գիտական զեկուցումներ, քննարկվել գիտակազմակերպական հարցեր և այլն: Խորհրդի կազմում ընդգրկված էին ավագ և երիտասարդ սերնդի ճանաչված գիտնականներ՝ Զ. Օրբելին, Զ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը, Ս. Մալխասյանը, Ա. Իսահակյանը, Գ. Լևոնյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Լ. Գյուլիքեխյանը, Կ. Տրևերը, Վ. Ռշտունին, Ա. Ղարիբյանը, Բ. Պիոտրովսկին, Ա. Հովհաննիսյանը, Ս. Ներսիսյանը, Մ. Հասրաթյանը, Զ. Գրիգորյանը և ուրիշներ՝ թվով 28 գիտնական:

Ինստիտուտի կազմում գործում էին հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն պատմության, հնագիտության, փիլիսոփայության գիտական ստորաբաժինները: Վերջիններիս հիման վրա հետագայում ՀԽՍՀ ԳԱ համակարգում ստեղծվեցին գիտական ինքնուրույն հաստատություններ: 1947 թ. ինքնուրույն դարձան փիլիսոփայության և արվեստի պատմության բաժինները: 1957 թ. ինստիտուտից առանձնացավ Մերձավոր արևելքի խումբը, որի հիման վրա ստեղծվեց ակադեմիայի արևելագիտության բաժինը, որը հետագայում վերածվեց ինստիտուտի: 1959 թ. ինստիտուտից անջատվեց հնագիտության և ազգագրության բաժինն ու նրա հենքի վրա կազմակերպվեց հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ առաջինը հիմնվել է ինստիտուտի հնագիտության և վիճագրության բաժինը: Բաժնի վարիչ Բ. Պիոտրովսկու հեղինակությամբ շուտով լույս տեսան Կարմիր բլուրում կատարված պեղումների հաշվետվությունները: Նրա «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» ուսումնասիրությունն արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Արդյունավետ աշխատանքներ տարվեցին հին և միջնադարյան Հայաստանի պատմության բարդ ու առանցքային հիմնախնդիրների լուսաբանության ուղղությամբ: Ս. Երեմյանը հրատարակեց «Հայաստանն ըստ Աշխարհացույցի» մենագրությունը: Լ. Բաբայանը քննության ենթարկեց XIII–XIV դարերի

Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության հարցերը: Ի հայտ եկան աղբյուրագիտական լուրջ հետազոտություններ: Վ. Հակոբյանը Մատենադարանի գրչագրերից քաղած նյութերի հիման վրա հրատարակեց XIII–XVIII դդ. հայերեն մանր ժամանակագրությունների երկհատորյակը: Նա նախածեռնեց միջնադարյան Հայաստանի եկեղեցական իրավունքի ժողովածուի՝ «Կանոնագիրք Հայոց»-ի ստեղծման ու հրատարակման գործը: Վ. Հակոբյանը 1964 և 1971 թթ. Հայաստանի պատմությամբ հետաքրքրվողների սեղանին դրեց հարուստ ու տարաբնույթ տեղեկություններ պարունակող սկզբնաղբյուր, որի գիտական արժեքը դժվար է գերազնահատել: Այս սկզբնաղբյուրի աշխատասիրողն 1974 թ. արժանացել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի: Վ. Հակոբյանը Աշ. Հովհաննիսյանի հետ կազմեց և հրատարակեց նաև XVII դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին (1601–1620 թթ.) և երկրորդ (1621–1640 թթ.) հատորները՝ համապատասխանաբար՝ 1974 և 1978 թթ.: Լ. Խաչիկյանը կազմեց XIV և XV դդ. հայերեն ձեռագիր հիշատակարանների բազմահատոր ժողովածուն:

Հին և միջին դարերի պատմության բաժնում արդյունավետ գործունեություն էր ծավալել Հ. Անասյանը, որը սկզբնավորեց V–XVIII դդ. հայ ինքնուրույն և թարգմանական, տպագիր և անտիպ գրականության մշակումը: Նրա «Հայկական մատենագիտություն» եզակի ուսումնասիրությունը, հայագիտության մեծագույն ձեռքբերումներից է, որը, ցավոք, հեղինակի մահվան պատճառով չավարտվեց: Այն իրավացիորեն համարվել է հայերենի գրական հուշարձանների հանրագիտարան:

Միջնադարյան Հայաստանի պատմության առանցքային հիմնախնդիրներից մեկի՝ Կիլիկիայի հայկական պետության քաղաքական պատմությունը հիմնավորապես ուսումնասիրեց Գ. Միքայելյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ դեպի Կիլիկիա հայերի կատարած արտագաղթին, հայկական իշխանությունների և Կիլիկյան պետության երևան գալու ու նրա անկման սոցիալ-քաղաքական և տնտեսական պատճառներին, Արևելք-Արևմուտք հարաբերություններում Կիլիկյան Հայաստանի ունեցած կապերին: Գ. Միքայելյանի գիրքը, որ հրատարակվեց 1952 թ., հիմնահարցին նվիրված առաջին

ամբողջական հետազոտությունն էր, որն այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը: Կիլիկիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությանն անդրադարձան նաև Ս. Բոռնազյանն ու Ա. Գալստյանը:

1950-ական թվականների սկզբից գիտական ասպարեզ մտան երիտասարդ գիտնականներ, որոնք ոչ միայն նոր թափ հաղորդեցին բաժնի աշխատանքներին, այլև նպաստեցին ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկայի ընդլայնմանն ու աշխատանքների որակի բարձրացմանը: Նրանցից ոմանք իրենց ասպիրանտական ուսումնառությունն ստացել էին միութենական գիտական առաջավոր կենտրոններում՝ Մոսկվայում, Լենինգրադում՝ աշակերտելով հին և միջնադարյան պատմության ու արվեստի հայտնի գիտուններին՝ Յ. Օրբելուն, Բ. Պիոտրովսկուն, Կ. Տրևերին, Ն. Պիգուլևսկայային, Ա. Տվերիտինովային, Զ. Կոլոբովային և ուրիշների:

Չարգացած միջնադարի ագրարային հարցերի հետազոտությամբ զբաղվեց Վ. Բարխուդարյանը, պավլիկյան շարժման սկզբնաղբյուրներն ուսումնասիրեց և դրա արդյունքները հրատարակեց Յ. Բարթիկյանը, արաբական շրջանում Հայաստանում հաստատված ամիրությունների պատմությունը շարադրեց Ա. Տեր-Ղևոնդյանը: Հայաստրական առնչությունների խնդրին անդրադարձավ Յ. Մելքոնյանը: Երվանդունիների հարստության հիմնահարցերն ուսումնասիրեց Գ. Տիրացյանը: Սելջուկների՝ Հայաստան կատարած արշավանքների, Հայաստանում ստեղծված սելջուկյան ամիրությունների հարցերը հանգամանալից ներկայացրեց Ս. Բոռնազյանը, որի մենագրությունը խարսխված է հայկական ու թուրքական սկզբնաղբյուրների, ինչպես նաև թուրքագետ հեղինակների աշխատությունների վրա: XV–XVIII դդ. Արևմտյան և Արևելյան Հայաստանի քաղաքական, սոցիալ տնտեսական պատմությանը սկզբում հողվածներով, իսկ հետագայում՝ մենագրություններով անդրադարձան Մ. Չուլալյանը, Յ. Փափազյանը, Վ. Գրիգորյանը, Յ. Բարթիկյանը, Ս. Կրկյաշարյանը, Յ. Մելքոնյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը: Նրանք ոչ միայն մենագրություններ հրատարակեցին իրենց կողմից ուսումնասիրվող հիմնահարցերին նվիրված, այլև «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ընդհանուր խորագիրը կրող շարքը հարստացրին

առանձին՝ բյուզանդական, հունական, ասորական, արաբական և թուրքական աղբյուրների նոր շարքերով: Դրանք լույս թարգմանություններ չէին, այլ ընդարձակ առաջաբաններով և ծանոթագրություններով օժտված ու մատենագիտական ցանկով ներկայացված բարձրարժեք աշխատություններ:

Պատմության ինստիտուտի հին և միջին դարերի պատմության բաժինը 1966 թ. տրոհվեց: Հին դարերի պատմության բաժնի վարիչ նշանակվեց Գ. Սարգսյանը: 1970-ական թվականներին այս բաժնի աշխատանքների հեռանկարները կապված էին հետևյալ չորս խնդիրների հետ. ա) Հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, բ) Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական կարգի, գ) Հին Հայաստանի քաղաքական պատմության հիմնահարցեր, դ) Հին Հայաստանի պատմության աղբյուրագիտություն: Որպես առաջնային հիմնախնդիրներ առանձնացվել էին Ուրարտու-Հայաստանի, Հին Հայաստանի հոգևոր մշակույթի և աղբյուրագիտական ուսումնասիրությունները: Օտար աղբյուրների մատենաշարից բացի՝ ուշադրություն է դարձվել նաև վաղ միջնադարյան հայ մատենագրության ուսումնասիրության վրա, որն ուղղակի կամ անուղղակի կապվում է հայոց պատմության հին շրջանի հետ:

Գիտական արտադրանքի ադյունավետությամբ աչքի ընկավ ինստիտուտի նոր դարերի պատմության բաժինը, որի առաջին վարիչը եղել է Վ. Ռշտունին, այնուհետև՝ Վ. Պարսամյանը, Ծ. Աղայանը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Համբարյանը, Է. Կոստանոյանը: Հայոց պատմության տարբեր հիմնախնդիրների, հայ ազատագրական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում զգալի ներդրում ունեցան Աշ. Հովհաննիսյանը, Աբ. Հովհաննիսյանը, Հ. Անասյանը, Վ. Ռշտունին, Վ. Պարսամյանը, Զ. Գրիգորյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Դիլոյանը, Հ. Պողոսյանը, Ա. Համբարյանը, Ն. Սարուխանյանը և ուրիշներ: Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկու գրքերը իրավացիորեն կարելի է դիտել հայ պատմական գիտության լուրջ նվաճումներից մեկը:

1950-ական թվականների կեսից աճեց հետաքրքրությունը հայկական գաղթավայրերի պատմության նկատմամբ: Հրատարակվե-

ցին աշխատություններ՝ նվիրված Ռուսաստանի, Ուկրաինայի, Հունգարիայի, Եվրոպական այլ երկրների, Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի հայկական գաղթավայրերի, հայերին հյուրընկալած երկրների տնտեսական ու հասարակական կյանքին նրանց մասնակցության, հայ ազգային մշակույթի զարգացման, հայրենիքի հետ հայկական գաղթավայրերի կապերի, հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի, սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների, սփյուռքահայության հայրենադարձության կազմակերպման ու իրագործման պատմությանը (Վ. Բարխուդարյան, Վ. Միքայելյան, Ա. Աբրահամյան, Լ. Խուրշուդյան, Ռ. Խաչատրյան, Հ. Սելիքսեթյան, Ժ. Անանյան, Ս. Քոլանջյան, Ս. Հովնանյան, Կ. Դալլաքյան, Ջ. Ղասաբյան և ուրիշներ):

Այս բնագավառում հրատարակված աշխատություններից ու հոդվածներից զատ, կարևոր նշանակություն ունեցան Ուկրաինայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների կազմակերպված համատեղ գիտաժողովները՝ նվիրված Ուկրաինայի հայկական գաղութների և հայ-ուկրաինական պատմական կապերին (1959, 1966 և 1987 թթ.՝ Երևան, 1962 թ.՝ Կիև, Լվով): Այս գիտաժողովների նյութերն առանձին գրքերով հրատարակվեցին Երևանում և Կիևում («Հայ և ուկրաինացի ժողովուրդների բարեկամությունն ու պատմական կապերը», ռուսերեն, Երևան, 1961 թ., Կիև, 1965 թ., Երևան, 1971 թ.): Նման գիտական համագործակցության արդյունք է նաև «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» (Երևան, 1983 թ.) հոդվածների ժողովածուն, որն իրականացվել է ՀԽՍՀ և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների միջև 1968 թ. կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա:

1965 թ. ինստիտուտում սկսեց գործել հայ պարբերական մամուլի պատմության բաժինը: Բաժնում գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են մի քանի ուղղություններով՝ ուսումնասիրվել են մամուլի առանձին օրգաններ, հասարակական և քաղաքական ուղղություն ներկայացնող գործիչների ժառանգությունը (հաճախ՝ այս երկուսը միասին), տպագրվել են մամուլի պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններ, հայ գաղթօջախների մա-

մուլի հիմնահարցերը լուսաբանող մենագրություններ, մամուլի մատենագիտություններ և գիտական այլ երկասիրություններ:

Ինստիտուտի գիտական կարևոր օղակներից էր պատմագրության բաժինը, որի վարիչ Լ. Բաբայանը հրատարակեց միջնադարի տարբեր փուլերի պատմագրությանը նվիրված աշխատություններ:

Աշխատությունների և մենագրությունների հետ մեկտեղ, խորհրդային տարիներին ինստիտուտը լույս ընծայեց տարբեր ժամանակաշրջանների հիմնահարցերին վերաբերող փաստաթղթերի և նյութերի բազմաթիվ ժողովածուներ: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում XVII–XVIII դդ. հայ-ռուսական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի և նյութերի բազմահատորյակը, «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (2 հատորով), «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցության և այլ թեմաներով ժողովածուները:

Հայ պատմաբանների ձեռքբերումները խորհրդային ժամանակաշրջանում ընդհանրացվեցին պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակում (Երևան, 1967–1984), որն արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի: Բազմահատորյակն իրավացիորեն դիտվեց հայ պատմագիտական մտքի նվաճում: Այն հայ պատմագիտության մեջ աննախադեպ երևույթ էր: Պատմության ինստիտուտին է պատկանում հայ ականավոր պատմաբան Հ. Մանանդյանի երկերի ամբողջական հրատարակության պատիվը:

Այդուհանդերձ, խորհրդային ամբողջատիրության պայմաններում, ընդհանուր առմամբ, պատմագիտության համար ստեղծված չէին լիակատար առաջընթացի լայն հնարավորություններ: «Պատմության շատ հիմնահարցեր կամ շրջանցվում էին, կամ էլ քննվում էին ոչ ճիշտ, աղավաղվում էին, առանձին դեպքերում՝ գունազարդվում ու միակողմանիորեն էին ներկայացվում պատմական որոշ իրադարձություններ ու երևույթներ:

Պատմագիտությունը որոշակի ազատություն ստացավ վերակառուցման տարիներին: Արցախյան շարժման առաջին օրերից պատմության ինստիտուտում ստեղծվում է «Լեռնային Ղարաբաղ» տեղեկատուն (1988), որը թարգմանվեց մի քանի լեզուներով և տա-

րածվեց արտասահմանում: Պատմական տեղեկանքը կարևոր նշանակություն ունեցավ Արցախի ճշմարիտ պատմությունը ներկայացնելու համար, նպաստեց թուրք-ադրբեջանական խեղաթյուրումների և բացահայտ կեղծիքների մերկացմանը:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, հիմնվելով նախկինից եկող պատմագիտական ավանդույթների վրա, արդեն զերծ գաղափարաքաղաքական կաշկանդիչ պարտադրանքներից, հայ պատմագիտությունը զգալի հաջողություններ է արձանագրել: Այդ աշխատանքներում իրենց ներդրումն են ունեցել ինչպես պատմության ինստիտուտի ավագ սերնդի պատմաբանները, այնպես էլ անկախ պետականության օրոք գիտական ասպարեզ մտած երիտասարդ ուսումնասիրողները:

1992 թ. պատմության ինստիտուտի գիտական օղակներում տեղի ունեցան կառուցվածքային արմատական փոփոխություններ: Ինստիտուտում ստեղծվեցին գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ խմբեր.

ա) Հին հայկական պետականության սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը (գիտական ղեկավար՝ Ս. Կրկյաշարյան),

բ) Հին և վաղ միջնադարյան Հայաստանի պատմաքաղաքական աշխարհագրությունը (Է. Դանիելյան),

գ) Հայաստանը միջին դարերում (Հ. Բարթիկյան),

դ) Էթնիկ տեղաշարժերը Հայաստանում XIX դ. վերջին – XX դ. սկզբին (Ա. Մելքոնյան),

ե) Հայ հասարակական-քաղաքական կյանքը XIX դ. վերջին – XX դ. սկզբին (Է. Կոստանդյան),

զ) Հայ ազգային քաղաքական կուսակցությունները և նրանց գաղափարաբանությունը (Դ. Մուրադյան),

է) Հայկական հարցը, հայոց ցեղասպանությունը և մեծ տերությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին (Ս. Ստեփանյան),

ը) Հայ գաղթավայրերի պատմություն (Վ. Միքայելյան),

թ) Հայ-ռուսական հարաբերությունները XIX դարում (Վ. Բարխուդարյան),

ժ) Սոցիալ-մշակութային և քաղաքական իրադրությունը սփյուռքում և ինքնության պահպանության խնդիրը XX դարի 20–40-ական թվականներին (Կ. Դալլաքյան),

ժա) Հայերի սոցիալ-մշակութային գործունեությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում 1922–1939 թթ. (Զ. Ղասաբյան),

ժբ) Հասարակական-քաղաքական միտքը մամուլում և հրապարակախոսության մեջ (Ա. Խառատյան),

ժգ) Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (Հ. Ավետիսյան),

ժդ) Խորհրդային Հայաստանի պատմություն (Վ. Ղազախեցյան),

ժե) Խորհրդային Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (Կ. Հարությունյան),

ժզ) Խորհրդային ցենզուրայի պատմություն (Գ. Մարտիրոսյան):

Այսօր ինստիտուտն ունի 7 բաժին, գրադարան, Մեսրոպ արք. Աշճյանի անվան գիտական կենտրոն, որն իր մեջ ներառում է թանգարան, տպարան, որտեղ «Մեսրոպ արք. Աշճյան» մատենաշարով տպագրվում են ինստիտուտի գիտաշխատողների գրքերը. մինչ օրս տպագրվել է շուրջ 100 անուն աշխատություն: Ինստիտուտում ներկայումս աշխատում են 2 ակադեմիկոս, 2 թղթակից-անդամ, գիտության 21 դոկտոր և 47 թեկնածու: Ինստիտուտին կից գործում է ՀՀ ԿԳՆ ԲՈՅ-ի «Հայոց պատմության» մասնագիտական խորհուրդը, նաև՝ ԳԱԱ ԳԿՄԿ պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնը: Վերջինս իրականացնում է «Պատմություն» և «Միջազգային հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրով ուսուցում:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո նոր հիմքերի վրա դրվեց Հայոց հին և միջին դարերի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Ինստիտուտի աշխատակիցների կողմից ուսումնասիրություններ են հրատարակվել հնագույն հայկական պետական կազմավորումների, Վանի թագավորության, Երվանդունիների, Արտաշեսյան դարաշրջանի Հայաստանի (Է. Դանիելյան, Վ. Խաչատրյան, Ա. Ղարաբյոզյան, Ե. Մարգարյան Ռ. Մանասերյան, Ս. Կրկյաշարյան, Գ. Վարդումյան, Ռ. Գաբրիելյան, Ա. Մուշեղյան և ուրիշներ) վերաբերյալ: Ս. Կրկյաշարյանը հայերեն թարգմանությամբ

յամբ հրատարակեց Յերոդոտոսի պատմությունը, Քսենոփոնի «Կյուրոպեդիա», Պլուտարքոսի «Կենսագրություններ» և այլ գործեր: Հայ-բյուզանդական հարաբերությունների վերաբերյալ մեծարժեք ուսումնասիրություններ է կատարել ակադեմիկոս Հ. Բարթիկյանը: Նրա հրատարակած «Հայ-բյուզանդական հետազոտություններ»-ի եռահատորյակը արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին:

Ուսումնասիրվել են վաղմիջնադարյան Հայաստանի վարչաքաղաքական բաժանումները, եկեղեցի-պետություն հարաբերությունները (Է. Դանիելյան, Վ. Վարդանյան), Աղվանքի (Հ. Սվազյան), Արցախի մելիքությունների և մելիքական տների XVII–XIX դդ. պատմության հարցերը (Ա. Մադայան):

Ուսումնասիրություններ են կատարվել միջնադարում Հայոց եկեղեցու դերի, Արծրունի և Պահլավունի իշխանական տոհմերի պատմության (Վ. Վարդանյան), Անի մայրաքաղաքի եկեղեցիներին կատարված նվիրատվությունների (Գ. Գրիգորյան) վերաբերյալ: Իրենց աշխատություններում միջնադարյան Հայաստանի պատմության առանձին խնդիրներ են լուսաբանել Ա. Շահնազարյանը, Հ. Թորոսյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը, Վ. Թորոսյանը, Հ. Ստեփանյանը, Վ. Փափազյանը, Ա. Ութուջյանը, Կ. Մելիքյանը և ուրիշներ:

Նոր ուսումնասիրություններ են հրատարակվել Կիլիկիայի հայկական թագավորության պատմության վերաբերյալ (Վ. Տեր-Ղևոնդյան, Դ. Թինոյան, Զ. Գևորգյան և ուրիշներ):

Հայ պատմաբաններն այսօր ազատորեն ուսումնասիրում են խորհրդային տարիներին «փակ» համարվող բազում հիմնահարցեր: Ուսումնասիրվեցին XVII–XVIII դդ. հայ ազատագրական շարժումները, XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևմտահայ ազատագրական շարժումները, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները (Հ. Սիմոնյան, Գ. Գալոյան, Ա. Համբարյան, Է. Կոստանդյան, Ս. Ալեքսանյան, Վ. Հովակիմյան), հայ ավանդական կուսակցությունների պատմությունը. ՀՀԴ (Կ. Խուդինյան), արմենականներ, ՌԱԿ (Կ. Դալլաքյան, Ս. Սարգսյան, Ա. Կարապետյան), ՍԴՀԿ (Գ. Հովհաննիսյան):

Ուսումնասիրություններ կատարվեցին նաև Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հիմնահարցերի վերաբերյալ: Հրատարակվեցին ցեղասպանությանն առնչվող տեսական հարցերի, ցեղասպա-

նության իրականացման թուրքական քաղաքականության շարունակականության, միջազգային արձագանքների, ասորիների ցեղասպանության (Գ. Գալոյան, Յ. Սիմոնյան, Ն. Սարուխանյան, Ս. Ստեփանյան, Գ. Մախմուրյան, Ա. Մարուքյան, Վ. Պողոսյան, Ռ. Գասպարյան, Ռ. Օ. Սահակյան, Կ. Խաչատրյան, Ա. Ղամբարյան, Յ. Բոյաջյան, Լ. Հովհաննիսյան, Բ. Պողոսյան, Ա. Խոսրոնա և ուրիշներ) վերաբերյալ ուսումնասիրություններ: Հրատարակվել են նաև Հայոց ցեղասպանությունը փաստող գերմանական, ֆրանսիական, ռուսական արխիվների (Ս. Ստեփանյան, Վ. Միքայելյան, Վ. Պողոսյան, Ա. Մարուքյան) փաստաթղթերը: 2013 թ. սկզբին լույս է տեսել Ա. Մելքոնյանի «Հայոց պատմության դասերն ու պատգամները» նյութերի ժողովածուն, որտեղ գետեղված են հայաստանյան և սփյուռքյան մամուլում հեղինակի տպագրած հոդվածներն ու հարցազրույցները: Բազմաբնույթ նյութի մեջ գերակշռում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հատուցման թեման:

Շարունակելով նախկինից եկող լավագույն ավանդները՝ նոր աշխատություններ են հրատարակվել հայկական գաղթավայրերի վերաբերյալ. Մոսկվա և Պետերբուրգ (Վ. Բարխուդարյան), Կոստանդնուպոլիս (Ա. Խառատյան), ԱՄՆ (Բ. Ավագյան), սկանդինավյան երկրներ (Ա. Բախչինյան), ԽՍՀՄ՝ «ներքին սփյուռք» (Յ. Ալեքսանյան): Ուսումնասիրվել է հայկական սփյուռքի (Կ. Դալլաքյան), Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմությունը (Է. Մելքոնյան), Գ. Գյուլբենկյանի գործունեությունը (Կ. Դալլաքյան, Վ. Ղարախանյան): Բաքու քաղաքի հայության պատմաժողովրդագրությանն է վերաբերում Գ. Ստեփանյանի արժեքավոր ուսումնասիրությունը, որը հրատարակվել է նաև անգլերենով: Վ. Միքայելյանի խմբագրությամբ հրատարակվեցին «Հայ գաղթաշխարհի պատմություն» երկու հատորները: Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ հրատարակվեց այդ աշխատության երրորդ հատորը:

Արևմտահայ մամուլի և հասարակական-քաղաքական կյանքի պատմության հիմնահարցերին է նվիրված ինստիտուտի կողմից 2006 թ. հրատարակված «Հայ պարբերական մամուլի պատմություն (18–19-րդ դարեր)» մեծածավալ աշխատության 1-ին հատորը: Հրատարակության է պատրաստ աշխատության 2-րդ հատորը (խմբա-

գիր՝ Ա. Խառատյան): Հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության վերաբերյալ արժեքավոր աշխատություններ հրատարակեցին Մ. Մխիթարյանը, Ա. Խառատյանը, Ռ. Խաչատրյանը, Լ. Գևորգյանը, Ս. Նազարյանը, Է. Ստեփանյանը և ուրիշներ:

Ա. Մելքոնյանի ղեկավարությամբ ինստիտուտում սկսեց գործել գիտաքաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող Հայաստանի նահանգների վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության թեմատիկ խումբ: Թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է Հայաստանի տարածաշրջանների XIX–XX դդ. պատմությունը և ժողովրդագրությունը. երգրումի նահանգ, Ջավախք (Ա. Մելքոնյան), Լոռի (Հ. Ամիրջանյան), Արցախ (Հ. Հարությունյան, Հ. Աբրահամյան և այլք), Կարսի մարզ և նահանգ (Ա. Հակոբյան, Հ. Մուրադյան), Երևանի նահանգ (Գ. Կիրակոսյան), Նոր-Բայազետի գավառ (Հ. Հարությունյան), Ալեքսանդրապոլի գավառ (Ա. Հայրապետյան) և այլն:

Մեծ ուշադրություն է հատկացվել Հայաստանի առաջին Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի պատմության ուսումնասիրությանը: Լույս են տեսել զգալի թվով փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, այդ թվում՝ «Нагорный Карабах в 1918–1923 гг.» (խմբագրությամբ՝ Վ. Միքայելյանի), «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» (կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան և ուրիշներ), «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը. 1918 թ. մայիս-հուլիս» (կազմող՝ Հ. Սուքիասյան), «Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг.» (կազմող՝ Գ. Մախմուրյան), «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» (կազմողներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան):

Ուսումնասիրվել են 1918 թ. անկախության նախօրյակի իրադարձությունները, Հայկական հարցը, մայիսյան հերոսամարտերը (Հ. Ավետիսյան, Վ. Մելիքյան), ՀՀ խորհրդարանի, քաղաքական կուսակցությունների գործունեությունը (Ա. Հակոբյան), Հայոց զինուժի պատմությունը (Կ. Հարությունյան, Մ. Կարապետյան), մշակույթը (Գ. Վարդանյան), ՀՀ նկատմամբ արևմտյան պետությունների, ինչպես

նաև խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի քաղաքականությունը (Յ. Ավետիսյան, Գ. Գալոյան, Գ. Մախմուրյան, Կ. Խաչատրյան և ուրիշներ): Առանձին ուսումնասիրության խնդիր է դարձել Գարեգին Նժդեհի գործունեությունը (Վ. Ղազախեցյան):

Նոր հայեցակետով, առանց գաղափարական պարտադրանքների ուսումնասիրվել են Հայաստանի խորհրդային շրջանի պատմության առանցքային հարցերը: 1920–1940 թթ. խորհրդային Հայաստանի ամբողջական պատմության վերաբերյալ ծավալուն մենագրություն է հրատարակել Վ. Ղազախեցյանը: Առանձին ուսումնասիրվել են Հայաստանի խորհրդայնացման, 1920–1922 թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերը, 1921 թ. Սոսկվայի և Կարսի պայմանագրերը (Կ. Խաչատրյան, Ա. Հակոբյան): Կարևոր ուսումնասիրություններ են կատարվել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայերի մասնակցության, հայ անվանի զորավարների գործունեության, թիկունքի աշխատանքների, խորհրդային Հայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերության խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ (Կ. Հարությունյան, Գ. Խաչատրյան, Կ. Խաչատրյան):

Աշխատություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ են հրատարակվել նաև Հայաստանի Երրորդ Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության վերաբերյալ: Ուսումնասիրվել է Հայաստանի անկախացման գործընթացը, սոցիալ-տնտեսական դրությունը, քաղաքական կյանքը, ԼՂՀ կայացման ընթացքը (Գ. Գեղամյան, Կ. Խուդավերդյան, Ռ. Ագիզբեկյան, Յ. Աբրահամյան և ուրիշներ):

Պատմության ինստիտուտում գործող «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-ադրբեջանական պատմագրության մեջ» թեմատիկ խմբի շրջանակներում հրատարակվել է Է. Դանիելյանի «Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության» աշխատությունը, որում արցախյան ազատագրական պայքարի արդյունքում ձեռք բերած հաղթանակն իմաստավորվում է որպես գաղափարական հզոր գեներընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության:

Ինստիտուտը հրատարակում է «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուն, 2012 թ. լույս է տեսել ժողովածուի հերթական՝ 13-րդ համարը: Ինստիտուտը կարևոր մասնակցություն ունի դպրոցական ու բուհական դասագրքերի և ձեռնարկների ստեղծման աշխատանքներին:

Հայաստանի անկախացումից հետո հայ պատմագիտության ունեցած ձեռքբերումներն արտացոլվելու են ինստիտուտի կողմից պատրաստվող «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակությունում (չորս հատոր՝ յուրաքանչյուրը երկու գրքով, նաև մեկական հատոր ռուսերեն և անգլերեն): 2010 թ. հրատարակվել են արժեքավոր այդ աշխատության երրորդ հատորի առաջին (XVII դ. II կես – 1900 թ.) և չորրորդ հատորի առաջին գրքերը (1918–1945 թթ.):

Ինստիտուտն ունի լայն միջազգային կապեր: Պատմության ինստիտուտը հանդիսանում է ԱՊՀ պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի անդամ: Հաստատության ավագ գիտաշխատողները մասնակցում են վերջինիս շրջանակներում պարբերաբար կազմակերպվող գիտական միջոցառումներին, իսկ երիտասարդները՝ Ամառային դպրոցներին:

Այսպիսով, ԳԱԱ պատմության ինստիտուտն իր յոթանասունամյա գործունեության ընթացքում ծավալուն աշխատանք է կատարել Հայոց պատմության հիմնահարցերի հետազոտման, անկողմնակալ և պատմականության հենքի վրա այն ներկայացնելու ուղղությամբ: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին ինստիտուտի աշխատակիցները ջանքեր չեն խնայելու Հայոց ցեղասպանության պատմության հետազոտման ուսումնասիրության, հայ ժողովրդի արդարացի պահանջատիրության խնդիրների բարձրաձայնման ու լուծման ուղղությամբ:

*ASHOT MELKONYAN,
KAREN KHACHATRYAN*

INSTITUTE OF HISTORY

S U M M A R Y

In November 1943 the formation of the Institute of History of the Academy of Sciences of Armenia gave a new impetus to the national historiography. The foundation of the Institute and the first years of its activities are inextricably linked with the name of the first President of the Academy of Sciences of Armenia, academician H.A. Orbeli. The Institute soon put together the team of prominent representatives of the Armenian historical science and became a leading center of the historical thought of the Republic. In fact, there started a systematic and holistic study of the history of Armenia and the Armenian people from ancient times to the modern period.

Since its formation the Institute had departments of ancient and medieval, new and modern history, archaeology, philosophy, which served as a basis for the establishment of separate scientific institutes of the Academy of Sciences. In 1947 the departments of philosophy and history of arts became independent institutions. In 1957 the group studying the Middle East separated from the Institute and the department of Oriental Studies was formed, which later was transformed into the Institute of Oriental Studies. In 1959 the Department of Archaeology and Ethnography separated from the Institute and on its basis the Institute of Archaeology and Ethnography of the Academy of Sciences was formed.

Until 1991 9 research departments functioned at the Institute, then there were formed thematic groups. At present there are 7 departments and a research center (named after Archbishop Mesrop Ashchyan). The latter includes a museum, a printing house, which publishes the works of the scientific staff of the Institute. The Institute has 2 academicians, 2 corresponding members, 21 doctors and 47 candidates of science. At the Institute functions a specialized council of the High Attestation Commission of the MES of RA, on the speciality "History of Armenia". There also functions the Department of History and International Relations of the International Scientific-Educational Center of NAS RA, realizing training programs for magistrates.

After gaining independence by the Republic of Armenia the achievements of the Armenian historiography have been summarized in the forthcoming new edition of "The History of Armenia" (four volumes, 2 books of each, one in Russian and one in English) realized by the Institute of History of the National Academy of Sciences. In 2010 the first book of the third volume (the second half of the 17th century – 1900) and the first book of the fourth volume (1918–1945) were published.

During 70 years of the existence the Institute of History of NAS RA by means of its productive work realizes a special and important role in the study of the problems of the history of the Armenian people and the development of the Armenian historiography.

*АШОТ МЕЛКОНЯН,
КАРЕН ХАЧАТРЯН*

ИНСТИТУТ ИСТОРИИ

РЕЗЮМЕ

Создание в ноябре 1943 г. в составе Академии наук Армении Института истории придало новый толчок отечественной историографии. Основание Института и первые годы его деятельности неразрывно связаны с именем первого президента Академии наук Армении, академика Н. А. Орбели. Институт вскоре собрал коллектив выдающихся представителей армянской исторической науки и стал основным и передовым центром исторической мысли республики. Фактически началось систематическое и целостное изучение истории Армении и армянского народа с древнейших времен до новейшего периода.

С момента своего создания Институт имел отделы древней и средневековой, новой и новейшей истории, археологии, философии. На основе последних впоследствии были созданы самостоятельные научные институты в составе Академии наук. В 1947 г. самостоятельными учреждениями стали отделы философии и истории искусств. В 1957 г. от Института отделилась группа Ближнего Востока и был создан отдел востоковедения, который позже был преобразован в институт. В 1959 г. из Института истории выделился отдел археологии и этнографии, на основе которого был создан Институт археологии и этнографии Академии наук.

До 1991 г. в Институте истории действовало 9 научных отделов, затем были созданы тематические группы. Ныне в Институте 7 отделов и научный центр (имени архиеп. Месропа Ашчяна). Последний включает музей, типографию, в которой издаются работы научных сотрудников Института. В Институте работают 2 академика, 2 члена-корреспондента, 21 доктор и 47 кандидатов наук. При Институте действует специализированный совет ВАК-а МОН РА по специальности «История Армении», а также кафедра Истории и международных отношений Международного научно-образовательного центра НАН РА, осуществляющая учебные программы по магистратуре.

Достижения армянской исторической науки после обретения независимости Республикой Армения обобщены в подготавливаемом Институтом истории НАН РА новом издании «Истории Армении» (четыре тома, по 2 книги каждый, по одному на русском и английском языках). В 2010 г. вышли в свет первая книга третьего тома (2-я половина XVII в. – 1900 г.) и первая книга четвертого тома (1918–1945 гг.).

Институт истории НАН РА за 70 лет существования своей плодотворной работой выполняет особую и важную роль в изучении проблем истории армянского народа, в развитии армянской историографии.

*«Պատմաբանասիրական հանդես»,
Երևան, 2013, N 2, էջ 13–24:*

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇՏԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը ինստիտուտի մինչև 35 տարեկան աշխատակիցներին միավորող կառույց է: Խորհուրդը հիմնականում զբաղվում է ինստիտուտի երիտասարդ աշխատակիցների և ասպիրանտների գիտական աշխատանքների համակարգմամբ, նրանց մասնակցությամբ երիտասարդական գիտաժողովների կազմակերպման, գիտական աշխատանքների հրատարակման և հարակից հարցերով:

Պատմության ինստիտուտը հիմնադրվել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ստեղծման հետ միաժամանակ՝ 1943 թ. նոյեմբերին: Ինստիտուտի հիմնադրմանը հաջորդող առաջին երկու տասնամյակներին երիտասարդական գիտաժողովներ չեն անցկացվել, չի եղել նաև երիտասարդներին միավորող մարմին:

Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հասարակագիտական հիմնարկների երիտասարդ աշխատակիցների և ասպիրանտների մասնագիտական աճի համար Ակադեմիայի ղեկավարությունը կարևոր խնդիր համարեց երիտասարդական գիտական նստաշրջանների անցկացումը:

Արդեն 1962 թ. փետրվարի 13-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների անդրանիկ կոնֆերանսը: Այստեղ ելույթ ունեցան 4 երիտասարդներ՝ կրտսեր գիտաշխատող Լավրենտի Բարսեղյանը («Դիտողություններ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների շուրջը (15–13-րդ դդ. մ.թ.ա.)»), լաբորանտ Հասմիկ Իսրայելյանը («Ուրարտական նորահայտ դամբարան Երևանում»), կրտսեր գիտաշխատող Վերժինե Սվազյանը («Մուսա լեռան հայ ժողովրդական բանահյու-

¹ Ձեկուցում՝ ընթերցված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների XXXIV նստաշրջանում:

սությունը») և կրտսեր գիտաշխատող էմմա Պետրոսյանը («Ձգեստավորումը միջնադարյան Հայաստանում»)¹:

Նմանատիպ կոնֆերանս կազմակերպելուն ուղղված քայլեր ձեռնարկեցին նաև Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ղեկավարները՝ տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Արամայիս Հարությունյանը (Հարենց), գիտական հարցերի գծով փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Գագիկ Սարգսյանը և գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Վահրամիր Բարխուդարյանը: Առանձնապես մատնանշելի է Գ. Սարգսյանի և Վ. Բարխուդարյանի նախանձախնդիր աշխատանքը:

Ինստիտուտի գիտական խորհրդի 1962 թ. հունիսի 29-ի նիստում, որին ներկա էին նաև կոլեկտիվի անդամները, Գ. Սարգսյանը ներկայացրեց «Ինստիտուտի ասպիրանտների գիտական սեսիա կազմակերպելու մասին» հարցը: Նա նստաշրջանի անցկացումը հիմնավորեց երիտասարդ պատմաբանների մասնագիտական աճի, նրանց գիտական աշխատանքի նախապատրաստելու և որպես հետազոտողի ձևավորման տեսակետից: Իրենց ելույթներում ասպիրանտների նստաշրջանի գաղափարը ողջունեցին տնօրեն Ա. Հարությունյանը, գիտքարտուղար Վ. Բարխուդարյանը և սեկտորի վարիչ Արշավիր Հակոբյանը: Գիտխորհուրդը որոշեց նստաշրջանը կազմակերպել սեպտեմբերի վերջերին: Նախատեսվում էր լսել Սարգիս Բոռնազյանի, Վահրամ Սարտիրոսյանի, Գուրգեն Գեղամյանի, Հայկ Մելքոնյանի և Ռաֆիկ Հովհաննիսյանի զեկուցումները: Ձեկույցները նախօրոք պետք է քննարկվեին բաժիններում (այն ժամանակ սեկտորներ էին կոչվում): Նստաշրջանի նախապատրաստումը և ղեկավարումը հանձնարարվեց Գ. Սարգսյանին²: Այդ ժամանակվանից էլ ինստիտուտում ավանդույթ դարձավ երիտասարդական գիտական նստաշրջանների կազմակերպման, իսկ հետագայում նաև զեկուցումների հիմնադրույթների խմբագրման ու հրատարակման պա-

¹ Խանգաղյան է., Երիտասարդ գիտաշխատողների գիտական կոնֆերանսը Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, հասարակական գիտություններ», 1962, N 2, էջ 85—86:

² Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1086, ց. 4, գ. 210, ք. 24:

տասխանատվությունը դնել գիտական հարցերի գծով փոխտնօրենի վրա:

Ինստիտուտի գիտխորհուրդը հաջորդ անգամ ասպիրանտական նստաշրջանի կազմակերպչական հարցերը քննարկեց 1962թ. հոկտեմբերի 16-ի նիստում՝ հաստատելով հոկտեմբերի 25-26-ը կայանալիք նստաշրջանի ծրագիրը³:

Նստաշրջանի բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 25-ին, ժամը 12.00-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի փոքր դահլիճում (Աբովյան 61 հասցեում): Ընթերցվեցին 8 զեկուցումներ:

Առաջինը զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի ասպիրանտ Գուրգեն Գեղամյանը: Նրա թեման էր՝ «Գյուղատնտեսության զարգացման նոր էտապի նշանակությունը կոմունիզմի ծավալուն կառուցման համար մղվող պայքարում»: Այնուհետև զեկուցումներ ներկայացրեցին՝ ասպիրանտ Ռաֆիկ Հովհաննիսյանը («Նոր նյութեր Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին»), կրտսեր գիտաշխատողներ Ստեփան Հակոբյանը («Արևմտյան Հայաստանը ֆրանսիական իմպերիալիստների պլաններում 1-ին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում») և Վահրամ Մարտիրոսյանը («Արևելյան Անդրկովկասի հարցը ռուս-թուրքական հարաբերություններում 1722–1724 թթ.»): Հոկտեմբերի 26-ին զեկուցեցին ինստիտուտի կրտսեր գիտաշխատողներ Սարգիս Բոռնազյանը («Կիլիկիայի հայ ասպետությունը 13–14-րդ դարերում»), Սիմոն Կրկյաշարյանը («Քաղաքների և միապետների փոխհարաբերությունները հելլենիստական աշխարհում»), Հայկ Մելքոնյանը («Հայաստրական մշակութային հարաբերությունները 4–5-րդ դարերում») և Հովհաննես Կարագյոզյանը («Ուրարտական հարկային սիստեմի մասին»)⁴: Ընթերցված զեկուցումները վերաբերվում էին հեղինակների թեկնածուական ատենախոսությունների առանձին հարցերի: Այս օրինակով՝ հաջորդ նստաշրջանների ժամանակ ևս խնդիր դրվեց.

³ Նույն տեղում, թ. 32:

⁴ Նույն տեղում, թ. 28: Ինչպես տեսնում ենք, բացի նախորդ օրոշվածներից, ասպիրանտական գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան նաև ինստիտուտի կրտսեր գիտաշխատողներ Ստեփան Հակոբյանը, Սիմոն Կրկյաշարյանը և Հովհաննես Կարագյոզյանը:

որպեսզի երիտասարդները զեկուցումներ ներկայացնեն իրենց ատենախոսությունների թեմաներով:

Նստաշրջանի անցկացման բարձր գիտական մակարդակը (պատահական չէ, որ բոլոր մասնակիցներն էլ հետագայում դարձան պատմագիտության ոլորտի ճանաչված ներկայացուցիչներ) Պատմության ինստիտուտի ղեկավարությանը ստիպեց մտածել այն շարունակական դարձնելու մասին: Ուստի՝ ինստիտուտի 1962 թ. տարեկան հաշվետվության մեջ տնօրինությունը կարևոր համարեց մատնանշել. «Նման միջոցառումները մեծ չափով կարող են նպաստել կրտսեր գիտաշխատողների և ասպիրանտների գիտական ծնավորմանն ու աճին: Այդ առումով էլ այն պետք է գումարել պարբերաբար յուրաքանչյուր տարի»⁵:

Այդուհանդերձ, 1963 թ. հնարավոր չեղավ ասպիրանտական նստաշրջան կազմակերպել: Այդ թվականն անցումային տարի էր. 1963 թ. գարնանը ինստիտուտի տնօրենի պաշտոնում Ա. Հարությունյանին փոխարինեց պատմական գիտությունների դոկտոր Գալուստ Գալոյանը: Երկարատև նախապատրաստական աշխատանքից հետո նույն Գագիկ Սարգսյանը 1964 թ. փետրվարի 25-ին ինստիտուտի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց «ասպիրանտների և կրտսեր գիտական աշխատողների երկրորդ գիտական նստաշրջանի» թեմատիկան⁶: Ինչպես տեսնում ենք, ասպիրանտական գիտական նստաշրջանը վերանվանվել էր ասպիրանտների և կրտսեր գիտաշխատողների գիտական նստաշրջանի: Հաջորդ տարիներին այն շարունակեց հենց այդպես էլ կոչվել, իսկ ներկայումս կոչվում է Երիտասարդ գիտաշխատողների գիտական նստաշրջան:

Երկրորդ նստաշրջանը տեղի ունեցավ 1964 թ. մարտի 26–28-ին⁷: Ձեկուցումներով հանդես եկան Քնարիկ Գրիգորյանը («Հայ ծո-

⁵ Նույն տեղում, գ. 45, թ. 21: Բացի այդ՝ շեշտվում էր, որ «ասպիրանտական սեսիան այն լծակներից մեկն է, որով հնարավոր է կատարել ՍՍՀՊ Կենտկոմի և Մինիստրների սովետի 1962 թ. մարտի 12-ի «Կադրերի ընտրության և պատրաստման հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշումը»:

⁶ Նույն տեղում, գ. 212, թ. 18:

⁷ Նիստի ծրագրում մարտի 26–27 է գրված (ՀԱԱ, ֆ. 1086, ց. 4, գ. 212, թ. 19–20): Ծրագրով նախատեսվում էր նաև Գուրգեն Գեղամյանի ելույթը «Սոցիալիստական

վայինները Կովկասի համար մղված մարտերում»), Ռաֆիկ Յովհաննիսյանը («Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման վերելքը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո և հայքուրդ-ասորական դաշնակցության խնդիրը»), Վարդան Խաչատրյանը («Աստրախանի հայերի մշակույթը 18-րդ դարում»), Ժորես Անանյանը («Գրիգորիոպոլ քաղաքի հայկական գաղութի հասարակական կյանքի պատմությունից»), Լիզա Մարտիրոսյանը («Հայաստանի առողջապահության բնագավառի կին աշխատողները Հայրենական պատերազմի տարիներին»), Մառլեն Յովհաննիսյանը («Լեհաստանի հայերի ինքնավարության օրգանների ֆունկցիաների հարցի շուրջ»), Սերգեյ Ալավերդյանը («Հայկական ՍՍՀ համատարած կուլտիվացման սկզբնական էտապի մասին»), Գայանե Պինգիրյանը («Լվովի հայ գաղութի հասարակական-քաղաքական պայքարի պատմությունից»), Վլադիմիր Ղազարյանը («Խ. Աբովյանի գաղափարական առնչությունները Վ. Բելինսկու հետ»): Գիտաժողովի վերջում ելույթ ունեցան և իրենց նկատառումները ներկայացրեցին ինստիտուտի տնօրեն Գալուստ Գալոյանը, ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտոր Արշավիր Հակոբյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Գագիկ Սարգսյանը, Վազգեն Ոսկանյանը, Վլադիմիր Ղազախեցյանը, Համբարձում Կարապետյանը և ուրիշներ:

Երկրորդ նստաշրջանը նախորդից առավել լավ էր կազմակերպվել: Նույնիսկ նստաշրջանում արտահայտված ավագ գիտնականների խոսքերն են սղագրվել⁸: Ի դեպ, նստաշրջանի վերաբերյալ լուսաբանող հոդված է հրատարակել ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր»-ը⁹:

Առաջին երկու նստաշրջանների ծրագիրը պատկերացում է տալիս, թե կես դար առաջ ինչպիսի թեմաներով էին զեկուցումներ պատ-

մրցության ծավալումը Հայաստանի գյուղատնտեսության մեջ 1953–1958 թթ.» թեմայով, սակայն նա չի մասնակցել նստաշրջանին: Այդ երևում է նիստի սղագրությունից և նստաշրջանը լուսաբանող հոդվածից:

⁸ ՀԱԱ, ֆ. 1086, ց. 4, գ. 212, թ. 19–20, ց. 5, գ. 115ա, թ. 1–10 (արխիվային գործը սխալմամբ 1969 թ. է թվագրված):

⁹ «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, հասարակական գիտություններ, 1964, N 4, էջ 80–82 (հոդվածագիրը Վ. Սանթրոսյանն է):

րաստում ինստիտուտի այն ժամանակվա երիտասարդ աշխատակիցները:

Երիտասարդական նստաշրջանների կազմակերպման, երիտասարդների գիտական և ժամանցային կյանքի անցկացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ինստիտուտի երիտասարդ գիտաաշխատողների խորհրդի ստեղծումը:

1979 թ. Պատմության ինստիտուտի տնօրեն դարձավ պատմական գիտությունների դոկտոր Հրանտ Ավետիսյանը: Վերջինիս նախաձեռնությամբ էլ Նոր պատմության բաժնի աշխատակից, պ.գ.թ. Վաչե Հովակիմյանը նշանակվեց ինստիտուտի երիտասարդ գիտաաշխատողների խորհրդի նախագահ: 1980 թ. նոյեմբերին Վ. Հովակիմյանը դարձավ ինստիտուտի գիտքարտուղար: Նրանից հետո երիտասարդ գիտաաշխատողների խորհրդի նախագահներ են հանդիսացել՝ Աղավնի Ութուջյանը (1980–1987 թթ.), պ.գ.թ., հետագայում ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը (1987–1991 թթ.), պ.գ.թ., հետագայում ինստիտուտի գիտքարտուղար Ռուբեն Գասպարյանը (1991–1997 թթ.), պ.գ.թ. Բնարիկ Ավագյանը (1997–2005 թթ.), պ.գ.թ. Անահիտ Խոսրոևան (2005–2008 թթ.), պ.գ.թ. Արտակ Մաղալյանը (2008–2013 թթ.): 2013 թ. ապրիլից խորհրդի նախագահը պ.գ.թ. Համո Սուքիասյանն է:

Մինչև այժմ կազմակերպվել է ինստիտուտի երիտասարդ գիտաաշխատողների 33 նստաշրջան: Անկասկած, բոլորն էլ կարևոր և օգտակար են եղել: Դրանցից առանձնացնենք 1980 թ. հոկտեմբերի 1-5-ը Աղվերանում անցկացված նստաշրջանը՝ նվիրված Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման 60-ամյակին: Այն կազմակերպել էին ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը և «Գիտելիք» ընկերության հանրապետական վարչությունը՝ Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտների հետ համատեղ: Բացի Հայաստանից, նստաշրջանին մասնակցեցին և ելույթներ ունեցան նաև վրացի, ադրբեջանցի, ռուս և ուկրաինացի երիտասարդ պատմաբաններ: Պատմության ինստիտուտից զեկուցումներ ընթերցեցին 11 երիտասարդներ, այդ թվում՝ Վաչե Հովակիմյանը,

Համլետ Հարությունյանը, Գայանե Մախմուրյանը, Գոհար Խաչատրյանը, Գասպար Կիրակոսյանը¹⁰:

Մինչև ատենախոսությունների պաշտպանությունը ինստիտուտի ասպիրանտների և կրտսեր գիտաշխատողների աշխատանքների հիմնական դրույթները փորձաքննություն էին անցնում երիտասարդ գիտաշխատողների նստաշրջաններում: Սա եղել և մնում է նստաշրջանների հիմնական խնդիրն ու նպատակը: Տասնյակ երիտասարդ պատմաբանների համար դրանք եղել են առաջին զեկուցումները: Գիտաժողովների ընթացքում դաստիարակվել և մասնագիտական պատրաստություն են ստացել պատմաբանների մի քանի սերունդներ: Այդ երիտասարդներից շատերը դարձել են ճանաչված պատմաբաններ, գիտության կազմակերպիչներ: Սոսկ նրանց անունների թվարկումը բազում էջեր կզբաղեցներ: Որակյալ գիտական զեկուցումների համար տարբեր տարիներին մի շարք երիտասարդներ պատվոգրերով և դրամական պարգևներով են պարգևատրվել (Աշոտ Սելջոնյան, Վահան Մելիքյան, Ռուբեն Սահակյան, Մարինա Չալյան, Լիլիթ Չաքարյան և ուրիշներ):

Խորհրդային տարիներին երիտասարդ մասնագետների համար դժվարություն էր ներկայացնում հողվածների տպագրությունը: Հայտնի է, որ կային միայն մի քանի գիտական ամսագրեր, ուր պատմաբանները կարող էին հողվածներ տպագրել: Հարցի մասնակի լուծում էր հանդիսանում գիտաժողովների հիմնադրույթների (թեզիսներ) հրատարակումը: Առաջին անգամ հրատարակվել է 1970 թ. անցկացված ինստիտուտի կրտսեր գիտաշխատողների 5-րդ նստաշրջանի զեկուցումների թեզիսները¹¹: Հետագայում պարբերաբար հրատարակվել են նստաշրջանների հիմնադրույթները: Դրանք սովորաբար խմբագրվել են ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենների և երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահների կողմից:

¹⁰ Հովակիմյան Վ., Երիտասարդ պատմաբանների գիտական նստաշրջան՝ նվիրված Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման 60-ամյակին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, N 10, էջ 111-112:

¹¹ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատողների և ասպիրանտների հիմնադրույթ սեսիա, զեկուցման թեզիսներ, Երևան, 1970, 17 էջ:

1997 թ. սկսած երիտասարդական նստաշրջանների լավագույն զեկուցումները հրատարակվում են ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքում¹²: Ինստիտուտի երիտասարդ աշխատակիցներից շատերն իրենց առաջին հոդվածները հրատարակել են հենց այս հանդեսում: Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահները նաև հանդիսանում են նշյալ հանդեսի խմբագրակազմի անդամներ, 1999 թ. սկսած նրանք ինստիտուտի գիտական խորհրդի անդամներ են, նաև տնօրինության անդամներ:

Մինչև այժմ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը հիմնականում զբաղվել է ամենամյա գիտական նստաշրջանների կազմակերպման, զեկուցումների հիմնադրույթների և ապա հոդվածների խմբագրման ու հրատարակման աշխատանքներով: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր խնդիրներն է առաջադրում: Եթե 1990-ական թթ. նույնիսկ դժվարություն էր երևանում գիտաժողով կազմակերպելը, ապա այժմ շատ հարցեր առավել հեշտությամբ են լուծվում: Արդեն 5 տարի շարունակ երիտասարդ գիտաշխատողների խորհուրդի նստաշրջանները շարունակաբար տեղի են ունենում Աղվերանում (ինչպես 1970–1980-ականներին), իսկ լավագույն զեկուցումները տպագրվում են՝ շնորհիվ 2005 թ. ինստիտուտում գործող տպարանի:

Ներկայումս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի անդամների թիվը 22 է՝ գիտաշխատողներ, կրտսեր գիտաշխատողներ, ավագ լաբորանտներ: Նրանցից 12-ը գիտությունների թեկնածու են, գրքերի և հոդվածների հեղինակ:

Այժմ երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը գործունեության ուղղությունների ճշգրտման փուլում է: Անկասկած, պետք է շարունակել նախկինից եկող ավանդույթը՝ հատկապես ամենամյա գիտական նստաշրջաններ հրավիրելը և լավագույն զեկուցումները հրատարակելը: Դրան զուգահեռ՝ անհրաժեշտ է կազմակերպել թեմատիկ երիտասարդական գիտաժողովներ, ինչը գիտական տեսակետից առավել արդյունավետ է: Դրանցից առաջինին արդեն ձեռնա-

¹² «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, N 1-14, Երևան, 1997–2013:

մութ ենք եղել. այս տարվա նոյեմբերի սկզբին երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը Ծաղկածորում կազմակերպում է «Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ» խորագրով գիտաժողով՝ նվիրված նշանավոր պատմաբան-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի ծննդյան 85-ամյակին: Պատրաստվում ենք նաև Հայոց պատմության տարբեր թեմաների վերաբերյալ գիտագործնական սեմինարներ, դասախոսություններ կազմակերպել, պարբերական խորհրդատվություններ անցկացնել ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների հետ:

Ամփոփելով՝ փաստենք, որ 1962 թ. ասպիրանտական նստաշրջանը, լինելով առաջինը, կոչված էր շարունակական լինելու: Ու այսօր հպարտորեն կարող ենք արձանագրել, որ 2013 թ. հոբելյանական տարում, երբ տոնում ենք Պատմության ինստիտուտի հիմնադրման 70-ամյակը, տեղի է ունենում ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 34-րդ նստաշրջանը՝ նվիրված ինստիտուտի հիմնադրման 70-ամյակին: Նախորդ 33 գիտական նստաշրջանների կազմակերպման գործում ջանքեր են գործադրել ինստիտուտի նախկին տնօրեններ Արամայիս Հարությունյանը, Գալուստ Գալոյանը, Հրանտ Ավետիսյանը, նախկին փոխտնօրեններ Գագիկ Սարգսյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Ռուբեն Ազիզբեկյանը, Աշոտ Մելքոնյանը, Գնել Գրիգորյանը: Իսկ վերջին տարիներին մեծ ջանքեր է գործադրում ինստիտուտի ներկա ղեկավարությունը՝ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, փոխտնօրեն, պ.գ.թ., դոցենտ Կարեն խաչատրյանը, գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հակոբ Մուրադյանը: Նստաշրջանների կազմակերպման համար շնորհաշատ աշխատանք են կատարել ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախկին նախագահներ Վաչե Հովակիմյանը, Աղավնի Ութուջյանը, Վահան Փափազյանը, Ռուբեն Գասպարյանը, Զնարիկ Ավագյանը, Անահիտ Խոսրոևան, Արտակ Մաղալյանը:

Պատմության ինստիտուտի այսօրվա երիտասարդներն իրենց գիտական առօրյան այլևս չեն պատկերացնում առանց ամենամյա գիտական նստաշրջանների: Եվ, համաձայն տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդույթի, նստաշրջաններում ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողները, ասպիրանտներն ու հայցորդ-

ներն իրենց զեկույցներով կարծես հաշվետվություն են ներկայացնում նախորդ տարում կատարած աշխատանքների մասին, խորհուրդներ ստանում ավագ գործընկերներից: Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուրս տեղեկանում ենք նաև մեր երիտասարդ գործընկերների գիտական պրպտումների արդյունքների մասին: Չափազանց կարևոր է, որ նստաշրջանները տեղի են ունենում Աղվերանում: Սա երիտասարդների համար նաև լավ հնարավորություն է՝ մտերմիկ մթնոլորտում առավել անմիջական շփվել ավագ գործընկերների ու ինստիտուտի ղեկավարների հետ, ինչը, անկասկած, չափազանց կարևոր է նրանց մասնագիտական աճի համար:

HAMO SUKLASYAN

THE COURSE MADE BY THE COUNCIL OF YOUNG
RESEARCHERS OF THE
INSTITUTE OF HISTORY OF NAS OF RA

SUMMARY

The administration of the Institute of History of the Academy of Sciences of Soviet Armenia decided to organize a session of young aspirants and researchers of the Institute, with a view to promote the professional growth of young historians. The first youth session took place on 25-26 October 1962 and became continuous. 33 sessions have been organized until now.

In 1979 the Council of Young Researchers was founded, playing an important role in the organization of youth conferences, scientific life and different entertainments of young researchers. Since 1970 the theses of the conferences of young researchers have been published. Since 1977 the best reports of the conferences are being published in the "Questions of Armenian History" - the annual collection of the Institute of History.

Several generations of historians have been educated and received their professional preparation during the youth conferences of the Institute of History. Many of them became prominent historians and skilled organizers of science.

АМО СУКИАСЯН

ПРОЙДЕННЫЙ ПУТЬ СОВЕТА МОЛОДЫХ УЧЕНЫХ ИНСТИТУТА ИСТОРИИ НАН РА

РЕЗЮМЕ

Институт истории Академии наук Советской Армении с целью содействия профессиональному росту молодых историков 25–26 октября 1962 года созвал первую молодежную сессию. До 2013 г. состоялось 33 сессии.

В 1979 году был сформирован Совет молодых ученых института, который имел важную роль в организации конференций, научной жизни и других мероприятий с участием молодых исследователей.

Начиная с 1970 г. публикуются тезисы конференций, а с 1997 г. лучшие доклады публикуются в ежегоднике Института истории “Вопросы истории Армении”.

Через Совет молодых ученых прошли несколько поколений историков, которые получили профессиональную подготовку. Многие из них стали знаменитыми историками и квалифицированными организаторами науки.

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԴԻՑԱՊԱՇՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(համառոտ ակնարկ)

Հայոց դիցապաշտական համակարգը հնագույն ժագում ունի և անցել է պատմական զարգընթաց, որի փուլերը բնութագրվում են որոշակի ժամանակային շրջանակներով, աստվածների խմբով, ծիսակարգով և մի շարք այլ բնորոշիչներով:

Հայոց հին կրոնին ու դիցաբանությանը շատ հետազոտողներ են անդրադարձել՝ թե հայ, թե օտարագգի, սկսած դեռևս նախանցյալ դարի վերջերից¹: Սակայն նրանց մեծ մասը քննության է առել աստվածների առանձին խումբ կամ խմբեր, չներկայացնելով դիցապաշտական համակարգի ամբողջական պատկերը: Ոմանք փորձել են խմբավորել աստվածներին ըստ ժամանակային պատկանելության, ոմանք էլ՝ ըստ գործառույթների, ուրիշներն՝ ըստ որևէ այլ բնութագրի: Հակիրճ ներկայացնենք նրանց, ովքեր առավել խորը և համակողմանի են հետազոտել խնդրո առարկա նյութը:

Նախ հարկ է հիշատակել Ղ. Ալիշանին, որի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» կոթողային աշխատությունում հանգամանալից քննության են առնվում բնապաշտությունը, աղթարքը, չար ու բարի ոգիները, կենդանիների պաշտամունքը, ինչպես նաև «դյուցագուհիները» (Հայկ, Արա, Անուշավան Սոսանվեր), ապա այսպես կոչված «չաստվածները» (Անահիտ, Արամագդ, Վահագն, Միհր, Տիր, Աստղիկ, Նանե, Ամանոր, Վանատուր, Սպանդարամետ և այլք):

¹ Ներկայացնենք մի քանիսը՝ Կոստանեանց Կ., Հայոց հեթանոսական կրօնը, Վաղարշապատ, 1879, էմին Ս., Հայ հեթանոսական կրօնը, Վաղարշապատ, 1898, Տաղավարեան Ն., Հայոց հին կրօնները, Կ. Պոլիս, 1909, Դուրեան Ե., Հայոց հին կրօնք կամ հայկական դիցաբանութիւնը, Երուսաղեմ, 1933, Пусторовский Б. Б., История и культура Урарту, Ереван, 1944, Մելիք-Օհանջանյան Կ., Միթրա-Միհրը «Սասնա ծռեր»-ի մեջ, Երևան, 1946, Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, Լիսիգյան Ստ., Հայրենի առասպելներից ու վեպերից, Երևան, 1995, Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, Արծրունի Գ., Դիցարան հայոց (հանրագիտարանային բառարան), Երևան, 2003, Ananikian M. H., Armenian Mythology: Stories of Armenian Gods and Goddesses, Heroes and Heroines, Hells and Heavens, Folklore and Fairy Tales, Indo-European Publishing, 2010.

Ալիշանը ներկայացնում է նաև կրոնի, հավատքի, աստծո մասին իր պատկերացումները, նաև մոգության, հմայության, հանդերձյալ կյանքի, պաշտամունքի վերաբերյալ հարուստ նյութ, առաջադրում է հայոց հին հավատքի որոշակի համակարգում, որն իր ժամանակի համար անգերազանցելի էր²:

Հայոց առասպելաբանությանը բազմիցս է անդրադարձել բանասեր-գրականագետ Ս. Աբեղյանը, որը հանգամանալից հետազոտության է ենթարկել հայոց հին հավատալիքները, առասպելները, ավանդական վեպը, ժողովրդական հավատքը, դիցարանը, քննության առնելով Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի, Տորք Անգեղի, Վահագն Վիշապաքաղի և մյուս դիցաբանական ու վիպական կերպարները, «վիշապ» քարակոթողները ևլն³:

Լեզվաբան-պատմաբան Գր. Ղափանցյանը, հենվելով խեթագիտության նվաճումների վրա, իր «Ха́йаса – колыбель армян: этногенез армян и их начальная история» և «Малоазийские (азуанические) боги у армян» աշխատություններում ներկայացրել է խեթական աղբյուրներից հայտնի հայասական և խեթա-խուրրիական աստվածներին, համարելով նրանց «ասիանիկե կամ «փոքրասիական», ըստ էության տեղական (իմա հայկական. – Գ. Վ.) ծագման: Նրա հետազոտություններում շեշտվում է դիցարանի կապը ազգածագման և էթնիկ պատմության հետ⁴: Հայասական աստվածներին հետազայում անդրադարձել է Գ. Զահուկյանը, որն իր «Հայոց լեզու. նախագրային շրջան» արժեքավոր աշխատությունում, շատ դեպքերում վկայակոչելով Գր. Ղափանցյանի ստուգաբանությունները, լեզվաբանական քննության է առել դիցանունները՝ հնդեվրոպաբանության իր ժամանակվա տվյալներից ելնելով⁵:

Հայ դիցաշխարհի ներկայիս ամենահայտնի ուսումնասիրողներից է բանագետ-ազգագրագետ Ս. Հարությունյանը, որը հայոց հին

² Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, Սբ. Ղազար, 1895:

³ Աբեղյան Ս., Երկեր, հի. Ա, Գ, Է, Ը, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1966–1985:

⁴ Գր. Ղափանցյանի վերոնշյալ և այլ աշխատություններ ներառված են նրա ուսերեն երկհատորյակում Капанцян Гр., Историко-лингвистические работы, тт. 1, 2, Ерван, 1957, 1975:

⁵ Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 327–330:

առասպելները բաժանում է հետևյալ տիպերի՝ «աստեղային», «օդերևույթի», «բնատեսքի», «բուսաշխարհի», «կենդանական աշխարհի», «երկվորյակների», «մեռնող-հառնողի», «մահվան և հանդերձյալ կյանքի», «կատարածաբանական»⁶: Իսկ հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը համարում է «բարդ և տարաբնույթ համակարգ», «հայ էթնոսի ձևավորման և պատմական զարգացման տարբեր փուլերի արգասիք», բաժանելով այդ համակարգը հետևյալ խմբերի՝ ա/ նախնադարյան տոհմացեղային ժամանակներին բնորոշ հավատալիքներ և հմայական արարողություններ, բ/ տոհմացեղային հասարակության քայքայման, ցեղային մեծ միությունների և պետական վաղ կազմավորումների ժամանակներից սերող կրոնաառասպելական ընկալումներ, հավատալիք և պաշտամունք, գ/ զարգացած պետական կազմակերպություններին բնորոշ կրոն և դիցարան⁷:

Այդուհանդերձ, հայոց հեթանոսական հավատալիքները և աստվածները պատմական կտրվածքով գիտականորեն տակավին համակարգված չեն, և վաղուց ժամանակն է դրանց զարգընթացի ուսումնասիրությունը, որով և նախաքրիստոնեական դիցապաշտական համակարգի ամբողջական պատկերի վերականգնումը:

Նախ ճշգրտենք, որ դիցապաշտական համակարգը ներկայացնում է ժողովրդի հավատալիքների, կրոնական պատկերացումների, աստվածների, առասպելների, ծիսա-սովորութակարգի ամբողջությունը, որն իր ձևավորման ողջ ընթացքում կրում է էթնո-քաղաքական պատմության ազդեցությունները: Ըստ այդմ, հին հայոց դիցապաշտական համակարգը կարելի է բաժանել փուլային խմբերի՝ պայմանավորված հայոց հոգևոր պատմության զարգացումներով: Անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում վկայված են Հին Աշխարհի պատմական այնպիսի աղբյուրներում, որպիսիք են շումերական և հեթիթական գաղափարագիր (III–II հազ. մ.թ.ա.) և ասորա-բաբելական ու բիայնական սեպագիր (I հազ. մ.թ.ա.) արձանագրությունները, անտիկ հունա-հռոմեական (VI դ. մ.թ.ա. – IV դ. մ.թ.) և հայկական

⁶ Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:

⁷ Հարությունյան Ս., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 5–6:

միջնադարյան (V–X դդ.) պատմիչների երկերը, ինչպես նաև հնագիտական, բանահյուսական, լեզվական, ազգագրական նյութերը⁸։

Հին հայոց դիցապաշտական համակարգը, վերը ասվածի համաձայն, անցել է պատմական զարգացման երկու հիմնական փուլ՝ 1/ վաղնջական հավատալիքներ և 2/ հայկյան դիցարան. ընդ որում, փուլերից յուրաքանչյուրն ունի իր ճյուղավորումները, որոնք կներկայացվեն ստորև⁹։

1) *Վաղնջական հավատալիքները* (հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. IV հազ.) ծագել են անհիշելի ժամանակներում, երբ Հայկական լեռնաշխարհում էթնիկական աստիճանաբար համախմբումը տեղի էր ունենում նյութական կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ձևավորվում էր նաև հոգևոր մշակույթը, մասնավորապես՝ դիցաբանական պատկերացումներն ու ծիսակարգը։ Հավատալիքները, վաղնջական ծագում ունենալով հանդերձ, ուղեկցել են հետագա բոլոր փուլերին ու անընդհատ համալրվել. դրանց վերաբերող նյութերը հավաքվում են անընդհատ, վերը նշված տարաբնույթ աղբյուրներից։ Այս խմբին անդրադարձել ու անդրադառնում են հայոց հին հավատքն ուսումնասիրող գրեթե բոլոր հեղինակները։

Վաղնջական հավատալիքների խումբը ներկայացնում է ա/ բնապաշտությունը, բ/ որսորդական ու երկրագործական հավատալիքները, գ/ բարի ու չար ոգիների մասին պատկերացումները, դ/ նախնիների պաշտամունքը, ե/ տիեզերագիտական պատկերացումները, զ/ մայր դիցուհու պաշտամունքը, է/ մեռնող-հառնող աստծո պաշտամունքը։ Հավատալիքները և դրանց հետ կապված ծիսա-

⁸ Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig, 1897, նույնի, Die altarmenien Ortsnamen, Strassburg, 1904, Аракелян Б. Н., Гарни, 1, Результаты работы археологической экспедиции Института истории АН Арм. ССР, Ереван, 1951, նույնի, Гарни, 2, Результаты работы Гарниуской археологической экспедиции 1954–55 гг. (античный период), Ереван, 1957, Арутюнян Н. В., Новые урартские надписи из раскопок Кармир-Блур (НУНК), Ереван, 1966, Дьяконов И. М., Ассирио-вавилонские источники по истории Урарту (АВВИУ), ВДИ, 1951, № 2–4, նույնի, Урартские письма и документы (УПД), Москва-Ленинград, 1963.

⁹ Հայոց դիցարանի համակարգման մեր առաջին փորձը տես Վարդումյան Գ., Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքը, Հայ ազգագրություն և բանահյուսություն (ՀԱԲ), պր. 18, Երևան, 1991, էջ 59–161 (ոուս.), Ներկա համակարգումը առավել ճշգրտված ու ընդլայնված է։

արարողական ողջ համալիրը, շատ կենսունակ լինելով, ժողովրդի մեջ պահպանվել են հազարամյակներ շարունակ և մեզ հասել որպես բանագիտական, ազգագրական, հնագիտական նյութ¹⁰: Վաղնջական հուշարձաններից նշելի են հատկապես ժայռապատկերները, հսկայաքար կոթողները, վիշապները, կրոնլեխներն ու մենհիրները¹¹:

2) *Հայկյան դիցարան*. վաղնջականին հաջորդած հնագույն այս փուլից Հայկական լեռնաշխարհում իր զարգացումն է ապրում հայոց հեթանոսական դիցարանը պետականության որոշակի զարգացմամբ:

Ա/ *Ազգածին աստվածներ* (մ.թ.ա. IV–III հազ.). վկայված են հայ բանահյուսության մեջ և վաղ միջնադարյան մատենագրությունում ի դեմս Հայկի և Հայկազունների¹²: Հանգուցային այս ժամանակաշրջանում հայոց դիցամտածողության մեջ երևան են գալիս կերպարներ, որոնք պատմական ավանդությունից հայտնի են որպես նահապետ դյուցազուններ՝ աստվածներից սերված ազգածին այրեր, որոնցից Հայկը, Արամը, Արա Գեղեցիկը, Տորք Անգեղը հետագայում աստվածացվել ու պաշտվել են որպես նախահայր աստվածներ: Այս խմբի հետագոտությամբ զբաղվել են հին հայոց դիցավեպով և առասպելներով հետաքրքրված գրեթե բոլոր ուսումնասիրողները (Յ. Մարկվարտ, Ղ. Ալիշան, Ս. Աբեղյան, Ս. Հարությունյան, Է. Դանիելյան¹³, Ա. Պետրոսյան¹⁴), ոմանք համարելով Հայկյաններին դյու-

¹⁰ Տես Լալայան Ե., Ազգագրական հանդես, գիրք 1–26, Շուշի-Թիֆլիս, 1896–1917), «Եմինեան ազգագրական ժողովածու»-ն (հհ. Ա-Թ, Ալեքսանդրապոլ-Վաղարշապատ-Մոսկվա-Նոր Նախիջեւան-Թիֆլիս, Լազարյան ճեմարանի հրատ., խմբ. Գ. Խալաթեանց, Կ. Կոստանեան, 1901–1913), Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հհ. 1, 2, 3, Երևան, 1931–1941, Սրվանձտեանց Գ., Երկեր, հհ. 1, 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 1982:

¹¹ Կարսախանյան Գ., Սաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» (ՀՀՀ), հ. 5, Երևան, 1970, Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀՀ, հ. 6, Երևան, 1971, Հայ ժողովրդի պատմություն (ՀԺՊ), հ. 1, Երևան, 1971, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 247–276, Իսրայելյան Հ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, Մարտիրոսյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀՀ, հ. 11, Երևան, 1981:

¹² Սովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1991, գիրք 1, գլ. ԹԺԹ, էջ 31–59, գլ. Ը, էջ 114–115: Տես նաև Աբեղյան Ս., Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, Երկեր, հ. 9, Երևան, 1968, հ. Ը, Երևան, 1985:

¹³ Դանիելյան Է., Հին հայոց դիցաբանական պատկերացումները աստղային երկնքի մասին, ՊԲՀ, 1989, N 3, էջ 102–113, նույնի, Հայոց պետականության գաղափա-

ցազուններ, ոմանք էլ՝ աստվածներ: Ազգածին կամ նախահայր աստվածների մասին դիցաբանական պատկերացումները շատ ավելի վաղ անցյալից են ակունքվում և բյուրեղանում են արդեն մ.թ.ա. III հազ. սերունդների մեջ պահպանվելով հետագայում ևս՝ հայոց պատմության ողջ ընթացքում, ընդհուպ մինչև մեր օրերը հասցնելով Հայկ-հայ-Հայք, Արամ-արմեն-Արմենիա, Արա-Արարատ անունները¹⁵:

Բ/ *Արատական աստվածներ* (մ.թ.ա. 28–27-րդ դդ.). վկայված են շումեր-աքադական աղբյուրներում: Արատա երկրի աստվածների հիմնական հետազոտողները արևելագետներն են¹⁶, որոնցից ոչ բոլորն են այս երկիրը կապել Հայկական լեռնաշխարհի և Արարատ անվան հետ: Ս. Կրամերը, Լ. Պետրոսյանը և Ս. Գավուրջյանը առաջիններից էին, որ Արատա պետությունը տեղորոշեցին Հայկական լեռնաշխարհում¹⁷: Նրանց հետևելով, Ա. Մովսիսյանն իր մի շարք աշխատություններում անդրադարձել է Արատա պետությանը և արատական աստվածներին¹⁸: Արատա երկրի («անմահների» և

րական իմաստավորումը վաղ միջնադարյան հայ պատմագրության մեջ, «Հարք» հայագիտական հանդես, Երևան, 2006, N 1, էջ 18–23:

¹⁵ Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, նույնի, *Forefather Hayk in the Light of Comparative Mythology*, "Journal of Indo-European Studies", vol. 37, 2009, N 1&2, p. 155–163.

¹⁶ Հայկյանների ծագումն ակունքվում է ավելի վաղ ժամանակներից, քան Հայկի ու Բելի 2492 թ. ճակատամարտն է, քանզի ա/ Հայկը որսորդ է՝ ամենավաղ, նախապատմական կացութաձևի ներկայացուցիչ, Բ/ Հայկը և Բելը հեծյալ չեն, իսկ հնեաբանական գտածոներից հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում ծին ընտելացված է եղել արդեն մ.թ.ա. IV հազ. (տես *Межлукьян С., Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении*, Ереван, 1972, с. 88–91): Հայկյան թվականը հաշվարկել է Ղ. Ալիշանը, եզրակացնելով, որ այն մեզ իրավունք է տալիս «*առանց տարակուսանքի ընդունելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը՝ Քրիստոստ առաջ 2492 տարին և մեր ազգային գերագոյն տոնին համար օգոստոսի 11*» (Ալիշան Ղ., Յուշիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869, հ. Ա, էջ 95):

¹⁶ *Stu Kramer S. N., Enmerkar and the Lord of Aratta*, Philadelphia, 1952, *Энмеркар и верховный жрец Аратты* (транскрипция, перевод, комментарии и вводные статьи И. Т. Каневоу), *Вопросы древней истории* (ВДИ), 1964, N 4, с. 190–225, Cohen S., *Enmerkar and the Lord of Aratta*, Ann Arbor, 1973.

¹⁷ Պետրոսյան Լ., Հայ ժողովրդի փոխադրամիջոցներ, ՀԱԲ, 6, Երևան, 1974, էջ 123, Kavoukjian M., *Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia*, Montreal, 1987.

¹⁸ Մովսիսյան Ա., Հնագույն պետությունը Հայաստանում Արատա, Երևան, «Դեպի երկիր» մատենաշար, 1992, էջ 38–56, նույնի, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»

«սուրբ օրենքների» երկիր) բնակիչների մասին շումերական առասպելներում երգվում է որպես մարդկանց, որոնք մեծ հեղեղի ժամանակ ջրերից վեր կանգնեցին, այն ժամանակ, երբ հեղեղը սրբեց ամեն բան¹⁹:

Արատտական դիցարանը գուգահեռներ է դրսևորում շումերաքաղաքական դիցաշխարհի հետ, և դրա ամենավառ վկայությունն այն է, որ արատտական գերագույն աստված էնկին քաղաքական աղբյուրներից հայտնի էան է համաշխարհայի երկնային ջրերի, նախասկիզբ իմաստուն աստվածը, որի անվան Հայա տարբերակը նույնանում է հայերիս ինքնանվան հետ²⁰, խորհրդանշելով Հայկի հոգևոր մարմնավորումը:

Եթե համադրենք մ.թ.ա. 28–27-րդ դարերը և Հայկյան թվականը 2492-ը, կարող է թվալ, թե արատտական դիցապաշտական համակարգն ավելի վաղ ծագում ունի, քան հայկազունները, սակայն, ինչպես նշվեց վերը, նահապետ-նախահայր աստվածները հնագույն ակունքներ ունեն և հայոց դիցաշխարհում գոյատևել են անընդհատ, դրանով իսկ արատտականը և նրան հաջորդող մյուս դիցարանները որոշակի փուլում են գործել յուրաքանչյուրն իր անվանակից երկրի պատմա-ժամանակային ընթացքում:

Գ/ *Հայաստական աստվածներ* (մ.թ.ա. II հազ.) վկայված են խեթական աղբյուրներում ի դեմս Հայասա-Ազզի երկրի դիցախմբի («Հայասա» անունը Հայք անվան հեթիթական ձևն է եղել մ.թ.ա. XV–XII դդ.): Այս խմբին առաջինը հանգամանակից անրադարձել են է. Ֆորերը և Գր. Ղափանցյանը, ստուգաբանելով հայասական դիցանունները և, ըստ այդմ, տալով նրանց գործառութային բնութագրերը²¹: Հայասական դիցանունները արտացոլում են գտել նաև Վ. Խաչատրյանի և Գ. Ջահուկյանի գրքերում (վերջինս ստուգաբանել է հա-

իրատ., 2000, էջ 29–31, նույնի, Հայաստանը Բ.ա. երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2006:

¹⁹ Եվ պատահական չէ, որ հետագայում Աստվածաշունչը, վերապատմելով աշխարհակործան ջրհեղեղի ավանդությունը, դարձյալ աղետից հետո փրկության վայր է ներկայացնում Արարատյան երկրի լեռները, որտեղ հանգրվանել է Նոյան տապանը («ի լեռինս յերկրին Արարադայ») (Ծննդոց, 8, 4):

²⁰ Տե՛ս Մովսիսյան Ա., Արատտա, էջ 49–50:

²¹ Forster E., *Hajasa-Azzi, -Caucasica, Fasc. 9, Leipzig, 1931; Капанцян Гр., Хауса – колыбель армян: этногенез армян и их начальная история, Ереван, 1948, с. 84–93.*

յասական դիցանունները), իսկ հետագայում նախորդ կարծիքների որոշ մասը է մի է բերել Ռ. Ղազարյանը²²:

Հայասական դիցարանի աստվածների թիվը, հնարավոր է, ավելին է եղել, քան տվյալ արձանագրության մեջ պահպանված մոտ 14 անունները, որոնց զուգահեռ հիշատակվում են «հազարավոր» բավականին մեծ թվով, հեթիթական աստվածներ: Չի բացառվում, որ նմանօրինակ աստվածներ են ունեցել նաև հայասցիները. համեմայն դեպս, որոտ-կայծակի աստված ու պտղաբերության աստվածուհի երկու դիցարաններն էլ ունեն:

Պ *Նաիրի-Արմեյան աստվածներ* (մ.թ.ա. XIII–IX դդ.). այս խումբը ներառում է Գր. Ղափանցյանի կողմից հետահայաց համադրության շնորհիվ վերականգնած աստվածախմբին, որին հեղինակը համարում է փոքրասիական կամ ասիանիկ ծագման²³: Հենվելով հեթա-հուռական զուգահեռների և հայոց բանահյուսական ու լեզվական տվյալների վրա, Գր. Ղափանցյանը քննության է առնում, նախ Նարջրային դիցուհուն, որը հնագույն ծագում ունի և, ամենայն հավանականությամբ, եղել է Նարի կամ Նաիրի երկրների մայր դիցուհին, մանավանդ, որ երկրանունը «գետեր» իմաստն ունի²⁴: Այս խմբին են պատկանում նաև Հեփիթը, Շավուշկան, Շանթան, Տիրանան և այլ դիցեր, որոնք, հնարավոր է, Նաիրի երկրներին ժամանակագրորեն հաջորդող Արմե-Շուպրիայի դիցախումբն են կազմել²⁵: Այս երկրի հետ են կապվում «արիմ-արմեն» ցեղանունն ու Արմենիա երկրանունը²⁶:

²² Տե՛ս Хачатрян В., Восточные провинции Хеттского империи, Ереван, 1971, с. 148; Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 327–330, Ղազարյան Ռ., Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, էջ 102–112:

²³ Տե՛ս Капанцян Гр., ИАР, т. I, с. 276–282:

²⁴ Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Նաիրի ցեղերը բնակվել են Վանա լճի «Նաիրիի ծով»-ի մերձակա տարածքներում. Տիգրիս ու Եփրատ գետերի վերին հոսանքների ու դրանց վտակների շրջաններում (տե՛ս Дьяконов И. М., Ассирио-вавилонские источники по истории Урарту (АВНИУ), ВДИ, 1951, N 2, 3, 4, ч. 7–10; ՀԺՊ, հ. 1, էջ 282–283):

²⁵ Այս վարկածը արտացոլում է գտել մեր մենագրության մեջ դեռևս 1991 թ. (Вардугян Г., Дохристианские культы армян, с. 70–76):

²⁶ Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 230–246 (Երեմյան Ա., Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում): Արմենիա երկրանունը կապվում է նաև մ.թ.ա. III հազ. կեսերի Արմանում երկրին:

Ե/ *Բիայնական-արարատյան աստվածներ* (մ.թ.ա. IX–VI դդ.). վկայված են (արարատյան-ուրարտական) աղբյուրներում: Այս խմբին անդրադարձել են մեծ թվով ուսումնասիրողներ, որոնցից են Լեհման-Հաուպտը, Գր. Ղափանցյանը, Բ. Պիոտրովսկին, Գ. Ջահուկյանը, Ս. Հմայակյանը և այլք: Վերջինս մանրամասն հետազոտության է ենթարկել Սիերի դռան արձանագրությունից և մյուս աղբյուրներից հայտնի բոլոր բիայնական աստվածներին, դրանց պաշտամունքները, համակարգելով ողջ դիցարանը²⁷:

Վանի թագավորության դիցարանը հին հայոց դիցապաշտական համակարգում ամենահարուստն է. միայն Աիերի դռան արձանագրության մեջ շուրջ 80 աստվածների ու սրբությունների անուն է հիշատակված, դրանց մատուցվող զոհակենդանու անվան ու քանակի հիշատակմամբ: Բազմթնիկ զարգացած տերության պաշտամունքային համակարգ լինելով, Վանի թագավորության դիցարանը հարուստ է թե՛ բնիկ, թե՛ ընդհանուր տարածաշրջանային աստվածներով, կազմելով հայոց դիցապաշտական համակարգի կարևորագույն մասերից մեկը:

Չ/ *Երվանդյան-Արտաշեսյան դարաշրջանի աստվածներ*. Արարատյան կամ Վանի թագավորությանը հաջորդած Հայկազուն Երվանդյան-Արտաշեսյան թագավորության դարաշրջանը բնորոշվել է աստվածների որոշակի աստիճանակարգով, ծիսակարգով, տաճարների ու մեհյանների ցանցով:

Այս աստվածախումբն ամենահայտնին է, նախ, որովհետև ամենաուշ՝ անմիջականորեն քրիստոնեությանը նախորդած փուլին է պատկանում (մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.), ապա նաև այն պատճառով, որ այս դիցերի վերաբերյալ տեղեկությունները միջնադարյան հայ պատմագրությունն է պահպանել²⁸, ինչի հետևանքով հետազոտող-

²⁷Stu Lehman-Haupt C. F., *Corpus Inscriptionum Chaldicarum* (CICH), Berlin – Leipzig, I, 1928; II, 1935; Пуотровский Б. Б., *Ванское царство* (Урарту), Москва, 1959, նույնի, *Мифы народов мира* (МНМ), т. 2, Москва, Изд-во "Советская энциклопедия", 1982, с. 549–550; Lang D. M., *Armenia – Cradle of Civilization* (3 ed.), London, 1980, Allen & Unwin, p. 85–111; Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1991:

²⁸Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, ՀԽՍՀ ՊՍ Իրատ., 1983, Եզնկայ վարդապետի Կողբացվոյ, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց (քննական

ների մեծ մասը հատկապես նրանց է ներկայացնում որպես հայկական դիցարան: Խոսքը վերաբերում է Անահիտ, Արամազդ, Աստղիկ, Նանե, Վահագն, Միհր, Տիր, Ամանոր, Վանատուր, Սպանդարամետ, Բարշամին, Դեմետր, Գիսանե դիցախմբին, որի կերպարների անունները արձանագրություններում և վաղմիջնադարյան պատմագրության մեջ հաճախ համադրվում են հելլենիստական դարաշրջանում Սեծ Հայք, Փոքր Հայք, Ծովք և Կոմմագենե ներմուծված հունական դիցանուններին²⁹: Սակայն, հելլենիստական քաղաքակրթության որոշ ազդեցությամբ հանդերձ, հայոց դիցարանը զարգանում էր իր ներքին օրինաչափությունների և ավանդույթների համաձայն, ներկայացնելով հինարևելյան կրոնա-դիցաբանական ուրույն համակարգ, որի ակունքները հայ էթնոսի հոգևոր մշակույթի հնագույն ժամանակներից էին գալիս:

Մյուս կողմից, այս խմբի աստվածների մեծ մասին որոշ հետազոտողներ իրանական ծագում են վերագրում, ոմանք էլ՝ սեմական ու այլևայլ: Վաղուց ժամանակն է վերանայել հայոց դիցարանի կերպարները հետազոտումը հնդեվրոպաբանության³⁰ և դիցաբանության նորագույն նվաճումների լույսի ներքո, և նկատել, որ աշխարհի բոլոր ժողովուրդների դիցապաշտական համակարգերը դրսևորում

բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ստ. Սալխասյանցի), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1982, Փալեստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց (բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագրութ. Ստ. Սալխասյանցի), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1987, Անանիա Շիրակացույ Տիեզերագիտութիւն եւ տօմար, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1940:

²⁹ Այս խմբի դիցերի մասին տես նաև՝ Эмун Н. О., Исследования и статьи, М., 1896; Gelzer H., Zur armenischen Gotterlehre, Leipzig, 1896; Ananikian M., Armenian [Mythology],- Mythology of all Races, v. 7, N. Y., 1964; Арутюнян С. А., Армянская мифология,- МНМ, т. 1, М., 1980, с. 104–106; Լալայան Վ., Հայոց դիցաբանական տոմարական համակարգը, Երևան, Ա. հ., 2007, նույնի՝ Հայ դիցաբանության և քրիստոնեության համեմատություն, Երևան, 2009:

³⁰ Մասնավորապես տես Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры (в двух частях), Тбилиси, Изд-во Тбилисского университета, 1984 (Thomas V. Gamkrelidze, Viacheslav V. Ivanov, Indo-European and the Indo-Europeans, A Reconstruction and Historical Analysis of a Proto-Language and a Proto-Culture (Trends in Linguistics: Studies and Monographs 80, 2 Vol. Set, 1995), համաձայն որի հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, առավել խիտ բնակեցված լինելով Վանա լճի շրջակա տարածքներում, որտեղից, սկսած մ.թ.ա. V–IV հազ., շարժվել են դեպի արևելք՝ մինչև Հնդկաստան, ապա և արևմուտք՝ բնակեցնելով Եվրոպան, ամենուր տարածելով նախահայրենիքի մշակույթը:

են տեղական և ընդհանուր գծեր: Դիցապաշտական համակարգերը, այդ թվում և հայկականը, մեկուսացած չեն ձևավորվել, այլ Հին Աշխարհի ընդհանուր քաղաքակրթական ծիրում և բնական է, որ մոտ ու հեռու հարևան մշակույթների հետ որոշակի փոխառնչություններ են դրսևորել, հատկապես միևնույն լեզվաընտանիքի շրջանակներում:

Ամփոփելով հարկ է նշել, որ հին հայոց դիցապաշտական համակարգի պատմական փուլերն ավարտվում են քրիստոնեության ընդունմամբ, սակայն հին հավատալիքների, ծեսերի, սովորույթների, պատկերացումների ժողովրդական ընկալումները շարունակվել են՝ որպես հեռավոր անցյալի վերապրուկներ³¹: Դրանք *ժողովրդական քրիստոնեության* նորօրյա արձագանքների տեսքով դարերի խորքից մեզ են հասցնում հեռավոր անցյալի դիցապաշտական ու առասպելաբանական հոգևոր-մշակութային աշխարհը:

GOHAR VARDUMYAN

ANCIENT ARMENIAN MYTHO-WORSHIP SYSTEM (BRIEF SURVEY)

SUMMARY

Ancient Armenian mythology and worship have passed a long course of development during millenia and represent a complete spiritual system. The first stage of this process represents the archaic beliefs (prehistoric times – IV mill. B.C.), including most ancient cults and myths, nature worship, hunting and agrarian cults, good and evil spirits, ancestral veneration, cosmological perceptions etc.

The second stage represents the Haykid pantheon (III mill. B.C. – IV century A.D.), including Prefather gods, gods of Aratta, Hayasa, Nairi and Arme-Shupria, Van kingdom gods, and those of Ervandid and Artashesid period of Great

³¹ Հայոց մեզ քրիստոնեության հոգևոր ակունքների մասին տես՝ Դանիելյան է., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Երևան, 1997:

Armenia. The formation of pantheon proceeded in parallel with the development of the Ancient Armenian statehood.

Later echo of ancient mythology and worship is traced in medieval folk rites and customs, some traditions enduring even nowadays.

ГОАР ВАРДУМЯН

МИФО-КУЛЬТОВАЯ СИСТЕМА ДРЕВНИХ АРМЯН (КРАТКИЙ ОБЗОР)

РЕЗЮМЕ

Мифология и культы древних армян развивались в течение тысячелетий и представляют собой целостную духовную систему. Первый этап этого процесса представляют архаические верования (доисторические времена – IV тыс. до н.э.), вбирающие в себя древнейшие культы и мифы, такие как поклонение природе, охотничьи и земледельческие культы, представления о добрых и злых духах, культ предков, космологические представления и т.п.

Второй этап представляет Хайкидский пантеон (III тыс. до н.э. – IV в.н.э.), включающий в себя богов-первопредков, богов Аратты, Хайасы, Наири и Арме-Шуприн, Ванского царства, Великой Армении ервандидского и арташесидско-ервандидского периодов. Формирование пантеона протекало параллельно с процессом развития древнеармянского государства.

Дальнейшие отголоски древней мифо-культовой системы прослеживаются в средневековых народных обрядах и обычаях, а некоторые традиции живучи и в наши дни.

**ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Քրիստոնեության պատմության առաջին երեք դարերում քաղաքական անցքերի հետ քրիստոնեությունը շաղկապող որևէ աղերս չենք տեսնում: Պատճառն, իհարկե, կայանում էր նրանում, որ հիշյալ ժամանակահատվածում քրիստոնեությունը գտնվում էր առավելապես հալածված կրոնի կարգավիճակում: Միայն 4-րդ դարից սկսած պատմության քաղաքական և եկեղեցական հարթությունները որոշակիորեն մերձենում են իրար: Ընդսմին, եկեղեցու և պետության հարաբերությունները հատկապես 4–6-րդ դդ. ընդունում են այնպիսի ձևեր, որոնք աննշան փոփոխություններով պահպանվում են գրեթե ողջ քրիստոնեական աշխարհում դարեր շարունակ: Քրիստոնեությունը պետականորեն ընդունելու հենց սկզբից պետության և եկեղեցու միջև հարաբերությունները դրվում են փոխադարձ համերաշխության հիմքի վրա: Սակայն, եթե նշված ժամանակամիջոցում 4–6 դդ., հոգևորականության կողմից պետական իշխանության քաղաքական իրավունքներին միջամտելու անգամ փորձի վերաբերյալ որևէ վաստ չենք գտնում, ապա նույնն անկարելի է ասել քաղաքական-պետական իշխանության մասին, որն, ընդհակառակը, շատ ավելի համեստ մտքով էր ընկալում եկեղեցու, այսպես կոչված «անկախ» կարգավիճակը: Իրավունք չունենալով պարզապես խորհրդի բնույթ կրող ձեռնարկումներ անել, հետագայում բյուզանդական կայսրերն, օրինակ, ելնելով կրոնական կամ քաղաքական նկատառումներից, իրենց իրավունք էին վերապահում աթոռից զրկել այն բոլոր պատրիարքներին, որոնք, մեղմ ասած, անհաճո էին իրենց նպաստելով ապա առավել ցանկալի թեկնածուների ընտրությանը: Եվ եթե Բյուզանդական եկեղեցու պատմության մեջ այդ երևույթն

առավել ակնառու դրսևորվում է սկսած 10-րդ դարից¹, ապա Հայոց եկեղեցու վաղ միջնադարյան շրջանում արդեն կան նման օրինակներ²: Երբեմն հիշյալ քայլերը կատարվում էին պահպանելով եկեղեցական ձևը, այսինքն, պատրիարքին կամ հայրապետին աթոռից զրկելը կատարվում էր որևէ եկեղեցական ժողովի հաստատությամբ, սակայն շատ հաճախ զանց էր առնվում նաև ձևական կողմը:

Եկեղեցու անկախության այս փաստացի սահմանափակումները հաճախ էին կրկնվում այն պարզ պատճառով, որ հոգևորականության ներկայացուցիչներն իրենք, միմյանց հետ կատարելապես համաձայն չէին եկեղեցու անկախության իրավունքի ոչ ծավալի, և ոչ էլ արժեքի նկատմամբ³: Չնականորեն առաջ քաշելով Աստվածայինի ու Կայսերականի միջև եղած սահմանը. «Տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ»⁴, մյուս կողմից, բարձրաստիճան հոգևորականությունը շարունակ հանդուրժում էր եկեղեցու գործերի մեջ պետական իշխանության միջամտությունը, նրա բարեհայեցողությանը դիմելով անգամ հավատո վարդապետությանը վերաբերող խնդիրների ժամանակ, խնդրելով թույլատրել կամ արգելել դավանաբանական հայտնի ձևերի վերաքննությունը:

Կայսեր հովանավորության ու բարերարությունների փոխարեն եկեղեցին կատարելապես ընդունեց պետական իշխանության վերահսկողությունն ու միջամտությունը եկեղեցական գործերում ինչ-

¹ 907 թ. պետական դավաճանության և կայսերական իշխանության դեմ դավադրության մեջ մեղադրված Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Ա (901–907) հեռացվեց պատրիարքական աթոռից: 1058 թ. ձերբակալվեց պատրիարք Միքայել Ա, որը ձգտում էր եկեղեցին դուրս բերել կայսերական իշխանության ազդեցությունից: Կայսրը հրամայեց եկեղեցաժողով հրավիրել պատրիարքին կարգալույծ անելու համար, սակայն ժողովը չգումարված, պատրիարքը մահացավ: 1081 թ. պատրիարք Կոզմաս Ա (1075–1081) կարգալույծ արվեց Ալեքսիոս Ա Կոմնենոս կայսեր թագավորության հենց առաջին տարում:

² Հայտնի է, որ Հուսիկ հայրապետի (341–347) և Տիրան արքայի (339–350 թթ.) միջև, ինչպես նաև Ներսես Ա Պարթևի (353–373 թթ.) Արշակ Բ 350–368 թթ. և Պապ թագավորների հետ հարաբերությունները լարված էին, (Փաստացի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 52, 68, 188):

³ Բոլոտով Վ., Եկեղեցու պատմությունը տիեզերական ժողովների շրջանում, Վաղարշապատ, 1914, էջ 132:

⁴ Մատթեոս, ԻԲ, 21–22:

պես ունեցվածքին, այնպես էլ մարդկանց առնչվող հարցերում, քրիստոնեությունն այսպիսով դարձավ իսկական պետական կրոն⁵:

Իրականում, եկեղեցին, որպես նոր կազմակերպվող մի կառույց, ավելի բարձր էր գնահատում պետական իշխանության հովանավորությունն իր եկեղեցու անկախությունից: Արդյունքում, պետության և եկեղեցու միջև սահմանը դառնում էր աննկատելի: Պետության և եկեղեցու փոխհարաբերություններում որևէ սահմանափակում չկար կայսերական իշխանության համար: Եկեղեցուն մնում էր ոչ այլ ինչ, քան ընդունել կայսեր մշտական միջամտությունը որպես միանգամայն օրինական երևույթ: Կոստանդնուպոլսի Մեննաս պատրիարքը 536–552 գրում էր անգամ. «Սուրբ եկեղեցուն ոչինչ չպիտի արվի կայսեր կարծիքին հակառակ»⁶: Անգամ կայսեր օժման արարողությունը կատարելապես ընդգծում էր այն բնույթը, որը կայսերական իշխանությանը հաղորդում էր աստվածային իշխանության արտացոլք: Պետությունն այս շրջանում եկեղեցու հետ դաշինքում սեփական ամրության գրավականն էր տեսնում՝ դավանաբանական վեճերի ժամանակ առավելապես հետամուտ լինելով խաղաղության շուտափույթ վերականգնմանն ու ծևական միությանը: Ձգտումների այս տարբերությունը խառնաշփոթ էր ստեղծում պետության հետ եկեղեցու հարաբերությունների միջև:

Թեև քրիստոնեությունն առավել տարածված ու կազմակերպչորեն ծևավորված էր Հռոմեական կայսրության մեջ, այդուամենայնիվ կայսրությունը, տարաբնույթ պատճառներով ըստ արժանվույն չգնահատեց քրիստոնեության և քրիստոնեական եկեղեցու մեծ հնարավորությունները⁷: Արդեն 3-րդ դարի վերջերից քրիստոնեությունն իրենից բավական հզոր մի ուժ էր ներկայացնում, լիովին պատրաստ պետության հետ դաշինք կնքելու, սակայն ընդառաջ գնալ նույն այդ դաշինքին դեռևս պատրաստ չէր կայսերական իշխանու-

⁵ Դիլ Շ., Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, առաջաբան և ծանոթագրություններ Զ. Բարթիկյանի, Երևան, 2005, էջ 22:

⁶ Mansi J. D., Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio, vol. 4, G.-Austria, 1958, col. 1109.

⁷ Միրումյան Կ., Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և ազգային-քաղաքական խնդրակարգը, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000, էջ 89:

յունը⁸: 4-րդ դարի 20-ական թվականներից ակնհայտ էր, որ պետության ապագան ճանապարհն էր դեպի քրիստոնեություն, սակայն վտանգավոր էր նաև հեթանոսության անտեսումը, որը տակավին գորավոր էր: Սրանով էր պայմանավորված, սկսած Կոստանդին Մեծից 324–337 բյուզանդական մի շարք կայսրերի երկդիմի և ուրապտույտ քաղաքականությունը քրիստոնեության նկատմամբ ընդհուպ մինչև Թեոդոս Ա Մեծ 379–395:

Քրիստոնեությունը, առաջինը աշխարհում պետականորեն ընդունվեց Հայաստանում 301 թ.: Սասանյան Պարսկաստանի հոգևոր, քաղաքական և մշակութային օրստօրե աճող ազդեցության պայմաններում Հայաստանին կենսականորեն անհրաժեշտ էր ինքնահաստատման հզոր մի լծակ, որը և դարձավ քրիստոնեության ճանաչումն իբրև պաշտոնական կրոն⁹:

Քրիստոնեությունը բավականաչափ տարածված և գորեղ էր նաև Հայաստանի մեջ, այն աստիճան, որ Տրդատ Մեծը չվարանեց այն պետական կրոն հռչակել: Քրիստոնեության տարածումը Հայաստանով մեկ առանց ժողովրդի և քրմական դասի կողմից շոշափելի դիմադրության, վկայում է այն մասին, որ երկիրը ներքուստ պատրաստ էր նոր կրոնն ընդունելուն¹⁰: Սա հնարավոր չէ այլ կերպ մեկնաբանել, քան Հայաստանում քրիստոնեական տարրի ծանրակշիռ գործունեության հանգամանքով:

Հայաստանում, դեռ Գրիգոր Լուսավորչի գործունեությունից առաջ, ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզության ժամանակներից, առկա էին քրիստոնեական համայնքներ, որոնք պատմական կարճ ժամանակահատվածում պայմանավորեցին նոր ուսմունքի տարածումը և արմատացումը¹¹:

Ինչպես Տեր-Մինասյանն է արդարացիորեն մատնանշում, հենց վերը նշված քրիստոնեական համայնքներով պայմանավորված,

⁸ Свенцицкая И. С., Раннехристианство: страницы истории, Москва, 1988, с. 171.

⁹ Բաղդասարյան է., Պետություն և եկեղեցի, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», էջ 583:

¹⁰ Արևշատյան Ս., Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը, Հայաստանը և... էջ 18:

¹¹ Անանեան Պ., Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1979, էջ 25:

բազմաթիվ նվիրյալներ, տասնյակ տարիների ընթացքում կատարում են շարունակական աշխատանք, պայքարում հեթանոսության դեմ՝ նախապատրաստելով քրիստոնեության հաղթանակը, մինչև որ հայտնվում է ավելի եռանդուն մի գործիչ՝ ի դեմս Գրիգոր Լուսավորչի, որն ավարտին է հասցնում կատարված ողջ աշխատանքը: Պատմությունը վարձատրում է Գրիգոր Լուսավորչին նաև նրանով, որ նրան է վերագրում նաև ուրիշների վաստակը՝ անմոռանալի դարձնելով նրա անունն իր մեծ գործի համար¹²:

Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեությանն ընդունումն ավելի երկար ճանապարհի անցավ: Կոստանդին Մեծի ժամանակ այն ընդամենը քաղաքացիության իրավունք է ստանում մյուս կրոնական վարդապետությունների կողքին և որոշ պաշտոնական երանգավորում՝ Լիկիայի I տիեզերական ժողովում 325 թ.: Կայսեր կողմից հրապարակված Միլանի եղիկտով /314թ./ քրիստոնեական ուսմունքի թույլատրումն ամենևին չէր նշանակում մյուս կրոնների արգելում: Կայսրության ողջ տարածքում քրիստոնեությունը միակ պետական-պաշտոնական կրոն հռչակվեց միայն Թեոդոս Ա կայսեր օրոք: Քրիստոնեության ընդունման այս ճանապարհն ունեցավ այն առավելությունը, որ չհանգեցրեց «պարտված» ու «արգելված» կողմի (իմա՝ հեթանոսության) արժեքների գրեթե իսպառ ոչնչացման¹³, երևույթ, որն ավելի ցայտուն դրսևորվեց Հայաստանի տարբերակում:

Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի պատմական դերն այն է, որ քրիստոնեության ընդունման ակտով նրանք միանգամից փոխեցին հալածված այս կրոնի կարգավիճակը: Հայ Առաքելական եկեղեցին, ի թիվս այլ հարցերի, պետք է լուծեր այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք էին եկեղեցու վարչա-իրավական կարգավիճակը և պետության հետ հարաբերությունների ճշգրտումը:

Սկզբից ևեթ հոգևոր դարձը Հայաստանում իրականացվում է պետության ու եկեղեցու համագործակցությամբ ու միակամությամբ: Փաստորեն, ճանաչվելով ու հովանավորվելով պետության կողմից, եկեղեցին ի սկզբանե պարտավորված էր ընդունել իր նկատմամբ

¹² Տեր-Մինասեանց Ե., Հայ եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Բ հրատ., Ս. էջմիածին, 2009, էջ 25:

¹³ Բաղդասարյան Է., նշվ. աշխ., էջ 585:

աշխարհիկ իշխանության գերագահությունը: Հենց թեկուզ այն հանգամանքը, որ եկեղեցու գլուխ կանգնած առաջին հայրապետը կարգվում է հայոց արքայի կամքով¹⁴, վկայում է այն մասին, որ Հայոց եկեղեցին և նրա հովվապետը պետք է ենթարկվեն թագավորական իշխանությանը: Եկեղեցին արդեն վաղ միջնադարից դառնում է պետության հենարանը և պետական համակարգի կարևորագույն օղակներից մեկը: Ի դեպ, պետության ու եկեղեցու միջև նույնատիպ հարաբերություններ մենք տեսնում ենք նաև Բյուզանդական կայսրության մեջ՝ քրիստոնեության ընդունումից հետո: Սակայն հատուկ պետք է ընդգծել, որ հայրապետական իշխանությունը Հայաստանում պարզապես և կամ բացարձակապես եկեղեցական չէր, ինչպես որ ընդհանուր առմամբ Բյուզանդական կայսրության մեջ՝ հատկապես 5—6 դդ.: Հայոց բոլոր հայրապետները հատուկ դիրք էին գրավում նաև պետական գործերում: Ինչպես նախորդ դարերում քրմապետներն իրենց անհրաժեշտ մասնակցությունն ունեին երկրի վարչության մեջ, նույն իրավունքը վաստակեցին նաև հայոց հայրապետները: Վաղ միջնադարյան սկզբնադրյունների մեջ քիչ չեն վկայությունները Հայոց կաթողիկոսների վայելած քաղաքական որոշ արտոնությունների մասին: Սա առաջին հերթին պայմանավորված է, իհարկե քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հետ, իրադարձություն, որը ոչ թե «վաստակեց» հայոց քրիստոնեությունը, այլ նրան շնորհվեց թագավորական իշխանության կամքով ու բարեհաճությամբ: Հռոմեական կայսրության մեջ այդ կարգավիճակին հասնելու համար քրիստոնեական եկեղեցուն տասնյակ տարիների համառ աշխատանք պահանջվեց:

Առաջին դարերի ընթացքում կազմակերպված հնագույն քրիստոնեական եկեղեցիները, լինելով անկախ և ինքնուրույն, տարբեր սովորույթներով ու կարգուկանոնով, այնուամենայնիվ գտնվում էին հավատո կատարյալ հաղորդակցության մեջ: Թեև արդեն 4-րդ դարում Եպիփան Կիպրացին 315—403, «...ծ 80 հերժուած շարապատմեաց մեզ .ի. 20 յառաջ քան գտնօրենութիւնն տեառն և .կ. (60) գկնի

¹⁴ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ա. Կանայանցի, ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 444, 446:

մարդեղութեանն Քրիստոսի»¹⁵, այդուհանդերձ, միևնույն դավանությունն էր միավորում ողջ ընդհանրական քրիստոնեական եկեղեցին և նրա անբաժան մասն էր Հայոց եկեղեցին: Քրիստոնեական ընդհանրականության գաղափարը հաստատագրվեց Նիկիայի I Տիեզերական ժողովում 325 թ.: Վերջինս, դավանաբանական տեսակետից դարագլուխ է կազմում ողջ քրիստոնեական աշխարհի համար: Հետագայում, երկար դարերի ընթացքում, դավանական գանազան վեճերի ու տարակարծությունների ժամանակ Նիկիայի ժողովն իր «Հավատո Հանգանակով» հանդիսացել է հիմնական ելակետ: Նրա վրա են փորձել հիմնվել բոլոր «ուղղափառները» տարատեսակ հերետիկոսությունների դեմ պայքարում: Այս ժողովը քրիստոնեական գաղափարաբանության ու ճշմարիտ հավատի հիմնաքար է նաև Հայ Առաքելական եկեղեցու համար:

Պետք է նշել սակայն, որ երբ ծրագրվում էր գումարել Նիկիայի ժողովը, դեռևս չէին մտածում, թե որքան մեծ հեղինակություն կտրվեր նրան հետագայում:

4-րդ դարում Հռոմեական կայսրության մեջ կայսերական իշխանությունը շատ խորը չէր ըմբռնում քրիստոնեությունը դիտելով այն պարզապես մի քաղաքական ուժ, որը կարող է պետական համակարգի համար ամուր հենարան ծառայել: Երբ 4-րդ դարի 20-ական թթ. քրիստոնյա աշխարհն ալեկոծած արիոսականությունը, որն ի դեպ համարվում էր մոլոր ուսմունքներից վատթարագույնը¹⁶, սկսեց բազմաթիվ հետևորդներ ձեռք բերել, եկեղեցու խաղաղությունը վերականգնելու համար եպիսկոպոսները Կոստանդին Մեծին համոզեցին ընդհանուր ժողով գումարել¹⁷: Այս առումով մեծ էր այն դերը, որ հետագայում եկեղեցու հայրերը տվեցին կայսրին: Նա ինքը, հեռու լինելով դավանաբանական հարցերի նրբություններից, թույլ ըմբռնելով

¹⁵ Թուղթ Փաւտայ պատրիարքի առ Չաքարիայ կաթողիկոս Հայոց Մեծաց, Фотия Архиепископа Костантинопольского, Огробе Господанашего Иисуса Христа и другие малые его творения на греческом и армянском языке, изданные с предисловием А. И. Пападопуло-Керамевсом и переведенные Г. С. Дестунисоми Н. Марром, Православный Палестинский Сборник, т. 11, СПб, 1892, с. 187 (վկայություն վերցված Եպիփան Կիպրացու «Պանարիոն» աշխատությունից):

¹⁶ Նույն տեղում, էջ 188:

¹⁷ J. Migne, Patrologiae cursus completus, series graeca /P.G./, vol. 127, Paris, 1864, p. 963.

արիոսականության դավանական էությունը, հարկադրված էր գիջել հոգևորականությանը:

Բավական լայն ծավալ ընդունած խռովությանը վերջ տալու նպատակով առաջ քաշվեց «մեծ ժողովի» գաղափարը: Նրան պետք է ներկա լինեին կայսրության բոլոր եպիսկոպոսները, որպեսզի ժողովի ընդունած որոշումները պարտադիր լինեին բոլոր թեմերի համար: «Մեծ ժողովի» հեղինակությունը բարձրացնելու համար կայսրը հրավիրեց նաև քրիստոնեական մյուս եկեղեցիների եպիսկոպոսներին, որպեսզի արևելյան կազմակերպված հնագույն եկեղեցիների ծայրն իր մեծ կշիռն ունենար կայացվելիք որոշման մեջ¹⁸:

Արձանագրությունների մեջ Նիկիայի ժողովը կոչվեց «մեծ ժողով», հետագայում միայն վերանվանվելով «տիեզերական»: Ժողովում քննության առնված Արիոսի վարդապետությունը դատապարտվեց որպես հերետիկոսություն: Հենց առաջին տիեզերական ժողովից է սկսվում հավատո հալածանքը հերետիկոսների դեմ քրեական դատաստանի միջոցով, որովհետև ժողովի որոշումներին տրվում է պետական նշանակություն: Հերձվածողների դեմ արձակված եկեղեցական բանադրանքին զուգընթաց պատժական միջոցներ են կիրառվում նաև պետության կողմից, և, ինչպես պատմությունն է արձանագրում, հոգևորականությունը և եկեղեցու հայրերը երբևէ չեն բողոքել կայսերական նման նախանձախնդրության դեմ: Հենց այս ժամանակվանից ընդարձակ ճանապարհ է բացվում պետության համար խառնվելու եկեղեցու գործերին: Աշխարհիկ իշխանության օգնությամբ հերձվածողներին հալածելը գործնականորեն հաստատուն հիմք գտնելով, դառնում է սովորական մի երևույթ¹⁹:

¹⁸ Տեր-Միքելեան Ա., Հայաստանեայց եկեղեցին և բիզանդեան ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892, էջ 14:

¹⁹ Հետագայում, արդեն Թեոդոս Ա Մեծի (379–395) ժամանակ, ուղղափառության հարցը թողնվում էր կայսեր բարեհայեցողությանը, նրան էր վերապահվում որոշել, թե որն է «ուղղափառը» զանազան դավանանքների մեջ: Իսկ Հուստինիանոս Մեծի (527–565) օրոք եկեղեցական ժողովների վերջնական վճիռը կանխապես պարզ որոշված էր լինում կայսեր կողմից: Հուստինիանոսի կարծիքով, պետությունը պարտավոր էր հսկողություն ունենալ հոգևորականության վրա և մեծ հոգածություն Աստվածային ճշմարիտ դավանանքի վրա, քանի որ «եկեղեցու կարգուկանոնը կայսրության նեցուկն է, իսկ քրիստոնեական մաքուր հավատն անաղարտ պահելը տիրակալի առաջնահերթ պարտականությունը» (տե՛ս Mansi J. D., Sacrorum Conciliorum..., vol. 11, G.-Austria, 1960, col. 891):

Նիկիայի I տիեզերական ժողովին իրենց մասնակցությունը բերեցին ժամանակի բոլոր նշանավոր եկեղեցիները, որոնք ներկայացնում էին 318 եպիսկոպոսներ: Ժողովին մասնակցելու համար հրավիրվել էր նաև Հայոց եկեղեցու հայրապետ Գրիգոր Լուսավորիչը: Հավանաբար ծերության պատճառով, և կամ էլ բավական մեծ հեռավորությունը նկատի առնելով²⁰, Լուսավորիչն իր փոխարեն որդուն Արիստակեսին է ուղարկում Նիկիա: Արիստակեսն արդեն իսկ փոխանորդ էր նշանակվել հոգևոր-եկեղեցական գործերում՝ որպես օգնական և գործակից եպիսկոպոս²¹: Ի դեպ, հենց Տրդատ Մեծի նախածեռնությամբ էր Գրիգոր Լուսավորիչն Արիստակեսին եպիսկոպոս ձեռնադրել²², փաստ, որ ինքնին վկայում է, որ պետական և հոգևոր իշխանությունները գործում էին միասնաբար: Նիկիայի ժողովի արձանագրությունների հայրապետների ցանկի մեջ առկա է նաև Արիստակեսի անունը՝ «Հայոց Մեծաց Արիստարքոս», կամ «Արիտսեկիսոս»՝ զանազան արձանագրությունների զանազան օրինակներում աղավաղված տառադարձությամբ:

Նիկիայի ժողովի բուն «Հավատամքը» մուտք չի գտել Հայոց եկեղեցում: Ներկայիս պատարագում արտասանվող «Հավատամքը» թեև անվանվում է Նիկիական Հանգանակ, սակայն շատ տարբեր է ժողովին վերաբերող արձանագրությունների մեջ պարունակվող «Հավատո Հանգանակից»: Հայոց Հավատամքը չի կարող նաև վերջինիս ընդարձակումը լինել, սակայն, քանի որ համադրված է նիկիականին՝ ըստ բովանդակության և ոչ թե ըստ ձևի, որպես կանոն կոչվում է Նիկիական: Խորագնին քննությունը ցույց է տալիս, որ Հայոց եկեղեցում գործածվող Հանգանակն Աթանաս Ալեքսանդրացու կողմից կատարված, այսպես կոչված, Աթանասյան խմբագրությունն է, հիմնված Նիկիո Հավատո Հանգանակի վրա, սակայն, որոշակիորեն փոփոխված²³: Վերջնականապես ապացուցված չէ նաև, թե երբ է այն բերվել Հայաստան:

²⁰ Ժողովը գումարվում է Բյուզանդիայի Նիկիա քաղաքում:

²¹ Ազաթանգեղոս, էջ 480:

²² Նույն տեղում:

²³ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001, էջ 118:

Արխատակեսն իր հետ Հայաստան է բերում Նիկիայի ժողովի 20 կանոնները²⁴, որոնք որոշ փոփոխություններով վավերացվում են Պրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցու համար: Նշված ժամանակաշրջանում սովորություն էր որոշ զգուշավորություն ցուցաբերել արդեն հաստատագրված կանոններին՝ հարմարեցնելով տեղի սովորություններին ու ազգային պահանջներին:

Հայոց եկեղեցին մասնակցեց Նիկիայի ժողովին առաջին հերթին քրիստոնեական նախանձախնդրությունից ելնելով: Առհասարակ քրիստոնեական եկեղեցին Հռոմեական կայսրության մեջ հաճախ էր գումարում եկեղեցական ժողովներ, որոնք հատկապես ուղղված էին լինում տարաբնույթ հերետիկոսությունների ու հերձվածների դեմ: Մյուս քրիստոնեական եկեղեցիները սկզբնական շրջանում, հատկապես 4-րդ դարում, որևէ առնչություն չունեին հիշյալ ժողովների հետ, իսկ եթե երբեմն մասնակցում էին, ապա կամ քաղաքական հանգամանքների բերումով, կամ պատահական հանդիպմամբ, իսկ ավելի հաճախ իհարկե՝ ուղղադավանությանը նպաստելու համար²⁵: Նման ժողովներում տարածական առումով Հռոմեական կայսրության սահմաններից դուրս որևէ հարց չէր քննվում: Այդուամենայնիվ, հիշյալ ժողովները հարգվում էին նաև Հռոմեական կայսրության սահմաններից դուրս, հատկապես, եթե նրանց վճիռները կոչված էին ճշմարիտ հավատի վերականգնմանը:

Այն ժողովները, որոնք վերաբերում էին ողջ երկրին, պարտավորիչ էին համարվում պետության բոլոր քաղաքացիների համար: Ավելի աննշանակ ժողովներից տարբերելու համար դրանք սկսեցին կոչվել «տիեզերական», ընդ որում այդպես հորջորջվելով ոչ անմիջապես, այլ շատ հաճախ տասնամյակներ անց, երբ կարևոր էին համարվում պետական իշխանության կողմից:

Հետաքրքիր է սակայն, որ ժամանակի Հայոց եկեղեցին քիչ նշանակություն է տվել այդ ժողովներին: Վաղ միջնադարյան մեր սկզբնաղբյուրներն անգամ, իրավամբ, հարևանցիորեն են հիշատակում «տիեզերական» ժողովների կատարած գործերը: Հետագայում,

²⁴ Կանոնք Նիկիական, Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 114-131:

²⁵ Տեր-Միքելեան Արշ., նշվ. աշխ., էջ 43:

հատկապես 6-րդ դարից սկսած, երբ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների հորձանուտում, Բյուզանդական կայսրության կողմից սկսվեց անվերջանալի մի պայքար՝ Հայոց եկեղեցին ենթարկելու բյուզանդական եկեղեցուն՝ քաղկեդոնականությունը պարտադրելու ճանապարհով, սկսվեց իսկական մի մաքառում այդ բռնության դեմ: Բանավեճերի ու տարածայնությունների արդյունքում ավելի ու ավելի հաճախ կրկնվեցին զանազան ժողովների անուններ, որոնք Հայոց եկեղեցու դավանության ջերմ հետևորդներն առաջ քաշելով, ջանում էին բյուզանդական եկեղեցու դեմ պայքարել իր իսկ զենքով, ցույց տալ, որ վերջինս դավաճանել է իր եկեղեցական բարձրագույն հեղինակությանը և շեղվել առաքելական ճշմարիտ հավատից: Իսկ եկեղեցական բարձրագույն հեղինակություն համարվում էր 325 թ. I Տիեզերական ժողովը, որը առաքելական հավատի միության յուրատեսակ մի ապացույց է: Նիկիայի ժողովին ավելի մեծ ուժ էին հաղորդում 381 թ. Կոստանդնուպոլսի II և 431 թ. Եփեսոսի III Տիեզերական ժողովները, քանի որ վերջիններս իրենց ընդունած որոշումներով վերահաստատում էին Նիկիայի I տիեզերական ժողովի ամրագրած որոշումները:

Սկզբնական շրջանում հիշյալ ժողովների կանոնները և որոշումները բացառապես օգտագործվում էին միայն բյուզանդական եկեղեցու հետ դավանաբանական բանավեճերի ժամանակ: Բանավեճերի դարավոր շարունակականության ընթացքում, ավելի հաճախ կրկնվելով, առաջին երեք տիեզերական ժողովները, բայց հատկապես Նիկիայի ժողովը ուղղադավանության հենարան նաև Հայ Առաքելական եկեղեցու համար, հատկապես որ նրա ներկայացուցիչը ևս իր մասնակցությունն էր բերել ժողովին:

**ABOUT SOME SPECIFITIES CONCERNING THE
ARMENIAN APOSTOLIC CHURCH'S RELATIONS
WITH STATE IN EARLY MIDDLE AGES**

SUMMARY

After acceptance of Christianity as the state religion /301/ in Armenia, the Armenian Church had to solve such important question as the administrative-legal status and to determine its relations with the state. At the beginning of the 4th century the relations between Church and state took such form and content, that were preserved with unimportant changes in the whole Christendom during centuries. The Church, as an organizing structure, had the state protection. However, the Catholicos power in Armenia was not merely ecclesiastical: the Armenian patriarches were taking special position in state affairs. They were enjoyed some privilages.

At the beginning of the Middle Ages the common faith united the whole Christian Church, and the Armenian Church was its important part. The first Ecumenical council of Nicea /325/ was the important event of the union of Christian faith. The canons of the council are the basis of Christian ideology and true faith also for the Armenian Church.

**О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ
ВЗАИМООТНОШЕНИЙ АРМЯНСКОЙ
АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ И ГОСУДАРСТВА
В РАННЕМ СРЕДНЕВЕКОВЬЕ**

РЕЗЮМЕ

После того, как в Армении христианство стало государственной религией (301 г.), Армянская Церковь должна была решить такую важную задачу, как административно-правовой статус и определить свои взаимоотношения с государством. Начиная с 4-го века эти взаимоотношения принимают такие формы, которые с незначительными изменениями веками сохраняются во всем христианском мире. Церковь, как организующаяся структура, пользовалась покровительством государства. Однако, надо отметить, что католикосская власть в Армении простиралась также далеко за рамки церковной жизни: Армянские католикосы занимали особое место в государственных делах, имея при этом определенные привилегии.

В начале раннего средневековья единое вероисповедание объединяло Вселенскую Христианскую Церковь, и Армянская Церковь составляла в ней важное звено. Подтверждением общности Апостольской веры явилось такое важное событие, как Никийский собор (325 г.), каноны которого по сей день являются основой христианской идеологии и истинности веры, в том числе и для Армянской Апостольской Церкви.

ԳՈՒԳԱՐԱՑ ԲԴԵՇԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵԾ ԶԱՅՔԻ ԶՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԶԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ XIX ԴԱՐԻ
ՖՐԱՆՍԻԱՑԻ ԶԱՅԱԳԵՏՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

Գուգարաց բդեշխության մասին հայկական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ ֆրանսիացի հայագետներ Սեն-Մարտենի և Մարի Բրոսեի մեկնությունները կարևոր նշանակություն ունեն ճայաստանի հյուսիս-արևելյան սահմանային գոտու ուսումնասիրության խնդրում:

Մովսես Խորենացին Մեծ Զայքի թագավորության Գուգարաց բդեշխության հաստատման մասին գրել է, որ Զայոց թագավոր Վաղարշակը Կովկաս լեռան դեմ հյուսիսի կողմնակալ կարգեց մի մեծ և հզոր ազգ (իմա՝ ազգատոհմ)՝ նահապետությունն էլ անվանեց «բդեաշխ Գուգարացւոց»: Այս տեղեկության հեղինակ հիշատակելով Աբյուղենոսին¹ Պատմահայրը նշել է, որ այդ բդեշխը Միհրդատ նախարարի սերնդից էր, որին Աղեքսանդրը բերելով իշխան էր նշանակել «ի Վերիացւոց» ազգի գերիների վրա², որոնց տարել էր Նաբուգոդոնոսորը: Ըստ Պատմահոր, Վաղարշակի որդու Արշակի որդին Արտաշես Ա-ը իր դուստր Արտաշամային կին է տալիս ոմն «Վրաց բդեշխի մեծի, որ էր ի գաւակէ Միհրդատայ Դարեհի նախարարի»³:

Տարբեր ժամանակներին և պատմական կերպարներին վերաբերող տեղեկությունների այսպիսի վիպական միահյուսման ազդեցությամբ Մարի Բրոսեն գրել է. «Արշակը ունեցավ մի դուստր, որն անուանացավ Իբերիայի բդեշխ ոմն Միհրդատի հետ»⁴: Այնուհետև նա եզ-

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Զայոց, Զննական բնագիրը և ներածութիւնը Ս. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 114:

² Աբյուղենոսը, ըստ Պատմահոր, այդ «գերեվարված իվերացիների» երկիրը համարել է «յեզր երկրի յարևմուտս» (նույն տեղում), որը համապատասխանում է Իբերական թերակղզուն:

³ Մովսես Խորենացի, էջ 121:

⁴ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècles traduite du géorgien par M. Brosset, I^{re} partie, St.-Petersbourg, 1849, p. 46-47, com. 4.

նացավ Իբերիայի բղեշխ ոմն Միհրդատի հետ»⁴: Այնուհետև նա եզրակացրել է, որ վերջինս Վիրքին հարևան «Հայոց Գուգարք նահանգի կառավարիչն» էր⁵: Այսպիսով Բրոսեն «Իբերիայի բղեշխ» տերմինը միայն որպես տիտղոս է օգտագործել և աշխարհագրորեն Հայոց Գուգարք աշխարհը Վիրքից առանձին ներկայացնելով, գրել է. «Այն ինչ վերաբերում է Գուգարք նահանգին նույն պատմիչը հաղորդում է, որ Վաղարշակը այնտեղ նշանակեց բղեշխ կամ կառավարիչ ոմն Միհրդատին», ով Ալեքսանդրի ժամանակների Միհրդատի սերունդներից է, որին հանձնարարված էր վերահսկել այդ վայրերում հաստատված հրեաներին»⁶: Բրոսեն Նաբուգոդոնոսորի (որն իրականում հրեաներին գերի էր տարել Բաբելոն) մասին հաղորդման և Պատմահոր երկում առկա փաստերի միահյուսման ազդեցությամբ⁷, Միհրդատի վերահսկման տակ է նշել հրեաներին, որոնք իրականում կապ չունեին Գուգարքի հետ:

Գուգարքի կապակցությամբ ուշադրություն դարձնելով *բղեշխ* տերմինին, Սեն Մարտենը գրել է. «Արշակունի արքաների և նույնիսկ նրանցից հետո պարսից (Սասանյան – Ա. Դ.) արքաների օրոք այդ նահանգը վստահված էր *բղեշխ* կամ *բղեշխ* կոչվող գինվորական հրամանատարներին»: Սեն Մարտենը, չնայած Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջաններին վերաբերող որոշ տեղեկություններ միմյանց է շաղկապել, այնուամենայնիվ, մի հետաքրքիր դիտարկում է կատարել, գրելով, որ բղեշխները պետք է Գուգարք նահանգը «պաշտպանեին վրացիների և հյուսիսի ժողովուրդների ներխուժումներից: Քանի որ նրանց կուսակալությունը սահմանակից էր Վիրքին և մեծամասամբ բնակեցված էր նույն տոհմի մարդկանցով, այս պաշ-

⁴ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècles traduite du géorgien par M. Brosset, I^{re} partie, St.-Petersbourg, 1849, p. 46–47, com. 4.

⁵ Ibid.

⁶ Ibid.

⁷ Չ. Սարգսյանն ուշադրություն է դարձրել, որ Գուգարաց բղեշխությանը վերաբերող Մովսես Խորենացու շարադրանքում միահյուսված են տարբեր անձանց, վայրերի և ժամանակների մասին տեղեկություններ (Նաբուգոդոնոսոր II (մ.թ.ա. 604–562 թթ.), Ղարեհ Կողոմանոս (մ.թ.ա. 336–330 թթ.), ինչպես նաև Իբերիան (Իսպանիա) Վիրքի հետ նմանեցմամբ (Мовсес Хоренаци, История Армении, перев. с древне армянского яз., введение и прим. Г. Саркисяна, Ереван, 1990, с. 235, прим. 236–239):

տոնյաները կոչվում էին *Բդեաշխ Գուգարացոց* կամ *Բդեշխ Վրաց*⁸։ Այսինքն Սեն Մարտենը նույնպես բդեշխին ենթակա տարածքների առումով Հայոց Գուգարքը սահմանազատել է Վիրքից, իսկ «*բդեշխ Վրաց*» տիտղոսը այդ սահմանակցության արգասիք է համարել։

Մովսես Խորենացին ի թիվս Տրդատ III-ի նշանակած Հայոց բանակի չորս զորահրամանատարների հիշատակել է նաև «Վրաց առաջնորդ և բդեաշխ Գուգարացվոց Միհրանին»⁹։ Այս փաստը խոսում է այն իրողության մասին, որ Մեծ Հայքի թագավոր Տրդատ III Մեծի ենթակայության տակ գտնվող Գուգարաց բդեշխի պաշտոնավարության ներքո էր նաև Վիրքը։

Գուգարքը IV դարում, ինչպես և նախկինում, եղել է Մեծ Հայքի թագավորության անքակտելի մասը, քանզի, ինչպես երևում է Փավստոս Բուզանդի հաղորդումից, Գուգարքի բդեշխը, որ «յառաջն ծառայեր թագաւորին Հայոց», Արշակ II թագավորի օրոք անհնազանդություն էր ցուցաբերել, որին հնազանդեցրել էր սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը ու վերականգնել «զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»¹⁰։

Բդեաշխ Գուգարացվոց մասին Մովսես Խորենացին գրել է նաև Մեսրոպ Մաշտոցի քարոզչական գործունեության կապակցությամբ, հիշատակելով Գուգարացվոց Աշուշա բդեշխին¹¹։

Հատկանշական է, որ Պատմահայրը Աղծնիքի բդեշխության առաջացման խնդիրը կապել է Վաղարշակ թագավորի պետական գործունեության հետ, քանզի, ինչպես ինքն է նշել. «Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ բդեաշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրս գետոյ, գաւառս պարգևելով զԱրծն և որ շուրջ զնովաւ, և զլեառնն Տաւրոս, որ է Սիմ, և զԿղեսուրն ամենայն»¹²։

Գուգարաց բդեշխության հարցի քննությունն կապված է հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվող «բդեշխ»

⁸ Saint-Martin M. J., *Mémoire historique et géographique sur l'Arménie*, t. I, Paris, p. 79.

⁹ Մովսես Խորենացի, էջ 262։

¹⁰ Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, դպր. Ե, գլ. ԺԵ, էջ 215-216։

¹¹ Մովսես Խորենացի, էջ 340-341։

¹² Նույն տեղում, էջ 116։

տիտղոսի և «բղեշխություն» ռազմա-վարչական միավորի՝ սահմանակալության խնդրի ուսումնասիրության հետ: Մ. Բրոսեն այդ կապակցությամբ ընդհանուր առմամբ նշել է, որ բղեշխը նահանգային կառավարիչ էր և «այդ տիտղոսը ամբողջությամբ հայկական է...»¹³:

Հետագայում նույնպես *բղեշխ* տերմինը քննարկման առարկա է դարձել Հայաստանի և հարևան երկրների պատմությանը նվիրված աշխատություններում:

3. Մարկվարտը անդրադառնալով Պլուտարքոսի՝ Տիգրան Մեծին սպասարկող չորս թագավորների¹⁴ մասին տեղեկությանը, նշել է որ բղեշխությունների ծագումը և կազմակերպումը տեղի էր ունեցել Տիգրան Մեծի ժամանակ¹⁵: Ըստ Ն. Ադոնցի, Տիգրան Մեծի ժամանակներից, սահմանային, այսպես կոչված «արքայիկները», ճանաչելով Հայոց արքաների գերակայությունը, դարձել էին սահմանապահ-կուսակալներ¹⁶:

Հայ Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի առումով, Հ. Մանանդյանը նշել է, որ հյուսիսում գտնվող Գուգարքի բղեշխությունը, լինելով Հայաստանի «սահմանապահ» կամ «սահմանակալ» կոչվող չորս բղեշխություններից մեկը, պահպանում էր Կուր գետով Հայաստանի սահմանները հյուսիսային կողմից¹⁷: Բղեշխների կարգավիճակի կապակցությամբ, հետազոտելով Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու հաղորդումները, Հ. Մանանդյանը եզրակացրել է, որ բղեշխները եղել են թագավորներին գրեթե իրավահավասար իշխաններ նախարարական կազ-

¹³ Histoire de la Géorgie, p. 80, com. 2.

¹⁴ Plutarch's, Lives, London, 1914, Luc. 21.5.

¹⁵ Marquart J., Eranshahr, Berlin, 1901, S. 171–173, նույնի՝ Հայ բղեշխք, քննական ուսումնասիրություն, թարգմ. Հ. Թովմաս Կետիկեան, Վիեննա, 1903, էջ 23: Գ. Խ. Մարգսյանը բղեշխությունների խնդիրը դիտարկելով Մեծ Հայքի սահմանային ռազմա-վարչական կուսակալությունների առումով, նշել է. «Բղեշխ կամ բղեշխ տիտղոսը հին Հայաստանում կրում էին Մեծ Հայք պետության չորս կարևորագույն շրջանների՝ Ծովքի, Անգեղտան, Աղձնիքի և Գուգարքի կառավարիչները» (Мовсес Хоренаци, с. 229, прим. 154): Անհրաժեշտ է նշել, որ Մեծ Հայքի հարավում գտնվող սահմանակալները հայտնի էին նաև որպես Լոր-Շիրականի, «յԱսորեստանեայց», «յԱրուաստան»-ի կողմերի բղեշխներ (Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրտչեան եւ Ատ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլ. 873, էջ 459):

¹⁶ Адонц Н., ух. соч., с. 283–284.

¹⁷ Մանանդյան Հ., Երկեր, Բ. Երևան, 1978, էջ 308, հմմտ. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 48:

մի շրջանակից դուրս են համարվել, որի մասին է վկայում նաև այն, որ նրանք Արշակունյաց թագավորության մեջ չէին վարում գործակալական պաշտոններ¹⁸:

Առանձնակի ուշադրություն է գրավում Տրդատ Մեծի հետ Հռոմեական կայսրություն գնացած չորս բղեշխների մասին Ագաթանգեղոսի հաղորդումը. «Եւ ի գինուորական կողմանէն՝ գչորեսին գահերեցսն իւրոյ տաճարին, որ բղեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն»¹⁹: «Չորրորդ բղեշխի» դեպքում Ագաթանգեղոսը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանակալին, այսինքն՝ «Գուգարաց բղեշխին», որի տիրույթների սահմանը կազմող Կուր գետից արևելք գտնվող բուն Աղուանքի և Կասպից ծովի միջև տեղադրված էր Մասքթաց թագավորությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Մովսես Խորենացու՝ խնդրո առարկա հասկացությունները ներառող հաղորդմանը. «ի Կղարջաց (Գուգարքի արևմուտքից – Ա. Դ.) սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց»²⁰: Այստեղ անհրաժեշտ է նաև նշել, որ Փավս-

¹⁸ Սանանդյան Դ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երկեր, Դ, Երևան, 1981, էջ 214: Ա. Զրիստենսենը V դարի առումով ներկայացնելով Սասանյան Իրանի պաշտոնական տիտղոսները, բավականին անորոշ ձևով նշել է. «Հայաստանի և Վիրքի մարզականները պահպանեցին *բղեշխի* տիտղոսը: 430 թ. Հայաստանը դառնում է պարսկական կայսրության նահանգ և մարզպանի կառավարման տակ է անցնում» (Christensen A., L'Iran sous les Sassanides, Copenhagen, 1944, p. 137, com. 1) ենթադրելով, որ Սասանյանների տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում նահանգների կառավարիչները անվանվել են *սատրապներ* կամ *բղեշխներ*, իսկ *մարզպան* բառը ընդհանուր է դարձել ավելի ուշ (Ibid., p. 102): Կ. Թումանովը, անդրադառնալով *բղեշխ* տերմինի և *բղեշխություն* վարչա-տարածքային հասկացության խնդիրներին, առաջարկել է զանազանել տերմինի և պաշտոնի ծագումները, ընդգծելով, որ իմաստ չունի հայկական պաշտոնը ենթադրել փոխառնված Պարթևից կամ սասանյան պետությունից (Toumanoff C., Introduction to Christian Caucasian History: II: states and dynasties of the formative period, 1961, p. 8–10):

¹⁹ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլ. 873, 459–460 էջ: Դ. Սանանդյանը ենթադրել է, որ «ի Մասքթաց կողմանէ» արտահայտությունը պետք է կարդալ «Մեսխեթի շրջանի», որի դիմաց իշխում էր «չորրորդ սահմանակալը» Գուգարաց բղեշխը (Սանանդյան Դ., Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 308):

²⁰ Մովսես Խորենացի, էջ 234:

տոս Բուզանդը Արշակ Բ-ի ժամանակաշրջանի առումով հիշատակել է «Գուգարաց բղեշխին»²¹:

Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո Գուգարաց բղեշխությունը որոշակի փոփոխություններ կրեց կարգավիճակի առումով²²: Ա. Մելքոնյանը նշում է, որ «428 թ. հայ Արշակունիների կործանումից հետո Գուգարաց բղեշխությունը միացվեց Սասանյան Իրանից կախյալ և փաստորեն սովորական պարսկական մարզպանության կարգավիճակ ունեցող Վրաց թագավորությանը: Այստեղից էլ ծագեց բղեշխի նոր տիտղոսը՝ «բղեշխ վրաց»²³ և Գուգարաց»²⁴: «Բղեշխ Վրաց» հավելումը *Գուգարաց բղեշխ* հայկական տիտղոսի կողքին ոչ թե էթնո-տարածքային, այլ Սասանյանների վարած վարչաքաղաքական բաժանումների հետևանք էր:

Այսպիսով, Գուգարաց բղեշխություն հասկացության հետազոտության առումով կարևոր ներդրում ունեն Սեն-Մարտենը և Մարի Բրոսեն, որոնք կարևորել են այդ ռազմավարչական պաշտոնը Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանների պաշտպանության գործում:

²¹ Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, գլ. Ծ, էջ 166: Այդ նույն տիտղոսը Ղազար Փարպեցին նշել է հաջորդ դարում տեղի ունեցած իրադարձությունների առումով Աշուշայի կապակցությամբ (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 47, 52, 55, 111):

²² Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1977, № 2, էջ 386–388:

²³ Վրաց պատմագրության մեջ բղեշխ տերմինի կապակցությամբ Ատրաբոնի հիշատակած *ὁ δεύτερος* բառը անհիմն կերպով նույնացվել է Լեոնտի Սրովելու հիշատակած *սպասպետի* հետ: Օրինակ՝ ըստ Թ. Գամսախուրդիայի՝ «Թագավորից հետո երկրորդ դեմքը Քարթլիի թագավորությունում, որին Ատրաբոնը *ὁ δεύτερος* է կոչում, նույն բղեշխը պիտի լինի» (Գամսախուրդիա Թ., Բղեշխության ինստիտուտի հարցի շուրջ, - Կովկասագիտության պրոբլեմներ, Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Ա. մատենաշար, N 5, 1971, էջ 52–53):

²⁴ Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 42:

**SIGNIFICANCE OF GUGARK *BDESHKUTYUN*
IN THE DEFENCE SYSTEM OF THE NORTH-
EASTERN BORDER OF GREAT ARMENIA IN
THE INTERPRETATION OF THE XIX CENTURY
FRENCH ARMENOLOGISTS**

SUMMARY

Study on the question of Gugark *bdeshkutyun* in historiography is connected with the research of the title "bdeshkh" and the border military-administrative unit "*bdeshkutyun*" mentioned by early medieval Armenian authors. In connection with it interpretations of French Armenologists are important. Saint Martin drawing attention to the term *bdeshkh* ("margrave") noted that *bdeshkh* had to protect the province of Gugark "against intrusions of the Iberians and the northern peoples". According to Marie Brosse, *bdeshkh*, in functional meaning, is an Armenian title which wore provincial governor, holding office of *bdeshkh* in the province of Gugark of the Kingdom of Great Armenia.

After the fall of the Armenian Arshakuni kingdom (428) the status of Gugark *bdeshkhutyun* underwent changes.

**ЗНАЧЕНИЕ ГУГАРКСКОГО БДЕШХСТВА В
СИСТЕМЕ ОБОРОНЫ СЕВЕРО-ВОСТОЧНЫХ
ГРАНИЦ АРМЕНИИ В ИНТЕРПРЕТАЦИИ
ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ XIX ВЕКА**

РЕЗЮМЕ

Исследование вопроса Гугаркского бдешхства в историографии связано с изучением упоминания раннесредневековыми армянскими авторами титула “бдешх”, а также, в частности, северо-восточной приграничной военно-административной единицы “бдешхство”. В этой связи, интерпретации французских арменоведов имеют важное значение. Сен-Мартен, обратив внимание на термин *бдешх*, отметил, что провинцию Гугарк бдешхи должны были “защитить от вторжений иверов и северных народов”. Согласно Мари Броссе, “бдешх”, в функциональном значении, является армянским титулом, который носил правитель приграничной провинции Гугарк в должности *бдешх*.

После падения царства армянских Аршакидов (428 г.) статус Гугаркского бдешхства претерпел изменения.

ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

XIX դ. վերջին – XX դ. սկզբին Աղվանքի բուն գավառների տեղադրության, վարչական նկարագրի հարցերով զբաղվել է Սակար Բարխուտարյանը¹: Առաջնորդվելով իր տեսածով նա հանգամանորեն ներկայացրել է երկրի աշխարհագրական սահմանները, գավառների տեղադրությունը, բնակլիմայական պայմանները, գետային ցանցը: Հեղինակի նկարագրությունները, սակայն, տարբերվում են «Աշխարհացոյց»-ի հաղորդումներից, քանզի դարերի ընթացքում կատարված վարչական փոփոխությունների հետևանքով մի շարք գավառներ այլևս գոյություն չունեին, փոխվել էին նաև դրանց անվանումներն ու էթնիկական կազմը: Ըստ այդմ, հասկանալի է, որ Ս. Բարխուտարյանը չէր կարող տալ բուն Աղվանքի գավառների վարչաքաղաքական այն պատկերը, ինչը գոյություն ուներ Անանիա Շիրակացու օրերում՝ VII դարում: Ուստի, մենք կօգտագործենք հեղինակի միայն այն հաղորդումները, որոնք համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի տվյալներին:

«Աշխարհացոյց»-ի թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ խմբագրություններում առաջինը հիշատակվում է Եխնի գավառը: Սկզբնաղբյուրը փաստում է, որ Եխնի գավառը սահմանակից է Վիրքին՝ «առ Վրօք»², Ս. Երեմյանն իր աշխատությունում և կից քարտեզում Եխնի գավառը տեղադրում է Վիրքի սահմաններից դեպի արևելք³, դրանով իսկ փոքրացնելով Աղվանքի սահմանները: Եխնի գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն, քան նշում է Ս. Երեմյանը: Վերջինս Եխնի գավառի տարածությունը հաշվում է 1722 կմ², այն տեղադրելով

¹ Բարխուտարյանց Ս., Աղվուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 34–152, նույնի Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902:

² Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881, էջ 29:

³ Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, 1963, էջ 50 և կից քարտեզը Բ7:

այժմյան Չաքաթալայի շրջանում⁴: Կարծում ենք, որ Եխնի գավառը սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է Վիրքի սահմանը, այսինքն՝ Վելիս-Ցիխե ամրոցի շրջակայքից՝ իր մեջ ներառելով «Գավազք» գավառի⁵ տարածքը: Եխնի գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Աղուան (Ալազան) գետի երկարությամբ բաժանվում է Կամբեճան գավառից, արևելքից սահմանակից է Բեխ գավառին, իսկ արևմուտքից՝ Դիդոյքին⁶:

Հակառակ սկզբնաղբյուրների տեղեկությունների, որոնք Եխնի գավառը համարում են Աղվանքի անբաժան մաս, վրաց պատմաբան Դ. Մուսխելիշվիլին գավառը ներառել է Վիրքի կազմում: Նա նշում է, որ V դարում Եխնի և Բեխ գավառները միացվեցին Վիրքին⁷: Իր իսկ խոստովանությամբ՝ սկզբնաղբյուրներում չգտնելով հաղորդում այն մասին, որ Եխնի և Բեխ գավառները պատկանել են Վիրքին, այդ տեղադրման համար որպես հիմք նշում է վրացիների և աղվանների «քաղաքական համագործակցությունը» հին ժամանակներից, որը պայմանավորված էր տնտեսական պատճառներով⁸: Սակայն, ինչպես կտեսնենք, մինչև V դարի կեսերը Աղվանքում գոյություն ուներ թագավորական իշխանություն, իսկ վերջինիս վերացումից հետո ստեղծվեց մարզպանություն, որի կազմում էլ գտնվում էին Եխնի և Բեխ գավառները: Վրաց հեղինակի հիմնադուրկ փաստարկները քննադատության չեն դիմանում այն պարզ պատճառով, որ VII դ. «Աշխարհացոյց»-ը նշում է, որ Աղվանքը V դարում ունեցավ ոչ թե տարածքային կորուստներ, այլ, ընդհակառակը, մի շարք գավառներ միացվեցին Աղվանից պետությանը⁹: Եխնի և Բեխ գավառները մարզպանության գոյության ողջ ընթացքում մնացին Աղվանքի կազմում, իսկ ինչ վերաբերում է վրաց պատմաբանի կարծիքին, կրկին

⁴ Նույն տեղում, էջ 50, 119:

⁵ Ա. Երեմյանը Եխնի գավառի հարևանությամբ նշում է Գավազք գավառը: «Աշխարհացոյց»-ում, սակայն, այդ մասին հաղորդում չկա: Կարծում ենք, որ նման անվանումով գավառ ընդհանրապես գոյություն չի ունեցել:

⁶ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:

⁷ Мусхелишвили Д., Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), с. 18.

⁸ Նույն տեղում:

⁹ Տե՛ս «Աշխարհացոյց», էջ 28–29, 33:

նշենք, որ «քաղաքական համագործակցության» հետևանքով մեկ պետության գավառը բնավ չի անցնում մյուս տերությանը:

Կամբեճան գավառի տեղադրությունն Անդրկուրյան Հայքում ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք չի տվել: Գավառն Անանիա Շիրակացու օրերին արդեն գտնվում էր Աղվանքի կազմում և, ըստ այդմ, «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է նրա գավառների շարքում: Դա հաստատվում է նաև Ղևոնդի տեղեկություններով: Պատմիչը, անդրադառնալով խազարների Այսրկովկաս կատարած արշավանքին, նշում է. «Առնուին բազում գաւառս գՅէջար, գՔաղա, գՈստանի, գՄարգպանեան, գՀաբանդ, գԳեղաւու, գՇաքէ, գԲեխ, գԽենի, գԿամբեխճան, գԽողմաղ»¹⁰: Գավառը, ինչպես նշել ենք, Աղուան (Ալազան) գետով սահմանակից էր Եխնի և Բեխ գավառներին, իսկ արևելքից՝ Գետառու գավառին: Կամբեճան և Գետառու գավառների հատման կետում գտնվում էր Գվգավ քաղաքը: Հարավից գավառը Կուր գետի երկարությամբ սահմանակցում էր հայկական Ուտիքին, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Վիրքին: Կամբեճանն ունեցել է նշանավոր բերդեր և գյուղաքաղաքներ¹¹: Գավառի մեծ մասն իր բնակլիմայական պայմանների պատճառով անմարդաբնակ է եղել, քանի որ, ըստ «Աշխարհացոյց»-ի տեղեկության, Կուրաթ գյուղաքաղաքից «Վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ...»¹²: «Աշխարհացոյց»-ից առաջ այդ մասին վկայում է նաև Ստրաբոնը: Անդրադառնալով Հայաստանի նկարագրությանը, նա գրում է. «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների և աղվանների հետ»¹³:

Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ գավառի բնակչության հոծ զանգվածները կենտրոնացած են եղել Կուր գետի և գավառի միջով հոսող Կամբեճ գետի շրջակայքում:

Բուն Աղվանքի գավառացանկում երրորդը Բեխն է: Հյուսիսից

¹⁰ Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 132:

¹¹ Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանքի քաղաքներն ըստ հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, թիվ 3, էջ 98–105:

¹² «Աշխարհացոյց», էջ 29:

¹³ Страбон, XI, IV, 1.

գավառը սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային՝ «առ Կակասաւ»¹⁴, հարավ-արևմուտքից՝ Ալազան գետով Կամբեճանին, իսկ արևելքում՝ Շաքե գավառին:

Գավառը գտնվում է այժմյան Կախի շրջանում:

Բեխ գավառում պահպանվել են եկեղեցու ավերակներ, որտեղից հայտնաբերվել է արժաթյա խաչ: Եկեղեցին շրջապատված է միջնադարյան հայ հանգստարաններով¹⁵:

Աղվանքի հաջորդ՝ Շաքե գավառի տեղադրությունը տարակարծությունների տեղիք չի տալիս: Ըստ «Աշխարհացոյց»-ի գավառը գտնվում է Բեխից արևելք¹⁶: Մենք համակարծիք ենք Ս. Երեմյանի և Բ. Հարությունյանի տեսակետներին, ըստ որոնց Շաքե գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից Գետառու գետի ամբողջ երկարությամբ սահմանակցում է համանուն գավառին, արևելքից՝ Հողմազ, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Բեխ գավառին¹⁷:

Շաքե գավառի ընդհանուր տարածությունը կազմում է 870 կմ² և գտնվում է այժմյան Նուխիի շրջանում¹⁸: Գավառի տարածքում կան հայկական մի շարք եկեղեցիներ՝ Սուրբ Գևորգ, Սուրբ Գեղարդ¹⁹, նաև Գիս վանքը: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ հիշատակված Աղվանքի հաջորդ գավառը Գետառուն կամ Դեգառուն է: Վերջինիս տեղադրությունը հստակ է, քանի որ «Աշխարհացոյց»-ը հաղորդում է. «Դեգառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով»²⁰: Հյուսիսից գավառը սահմանակից է Շաքե գավառին, հարավից՝ Կուրին, արևելքից՝ Սանի գետով բաժանվում է Հողմազ և Քաղաց դաշտ գավառներից, իսկ արևմուտքում՝ Կամբեճանին: Թվում է՝ Գետառուի սահմանները որոշելիս չպետք է խնդիր առաջանա, քանի որ «Աշխարհացոյց»-ը հստակ տալիս է գավառի աշխարհագրական դիրքի մանրամասն նկարագրությունը: Դրան հակառակ՝

¹⁴ «Աշխարհացոյց», էջ 29:

¹⁵ Բարխուտարեանց Ս., նշվ. աշխ., էջ 108:

¹⁶ «Աշխարհացոյց», էջ 29:

¹⁷ Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44 և կից քարտեզը, Բ7, Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

¹⁸ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 73:

¹⁹ Բարխուտարեանց Ս., նշվ. աշխ., էջ 136–137:

²⁰ «Աշխարհացոյց», էջ 29:

Ս. Երեմյանը Քաղաց դաշտ գավառը տեղադրում է Սանի գետի երկու կողմերում՝ մի մասով մտցնելով Գետառու գավառի մեջ²¹, ինչը հակասում է սկզբնաղբյուրի տեղեկությանը: Այդ մասին ավելի հանգամանորեն կխոսենք Քաղաց դաշտ գավառի տեղադրության քննության ժամանակ:

Գետառու գավառն այժմ զբաղեցնում է Աջինուրի - Էլդարի տափարակ տարածքը: Գավառի ընդհանուր տարածությունը Ս. Երեմյանը հաշվում է 1575 կմ²(?)²²: Սակայն, կարծում ենք, որ գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն՝ ի հաշիվ Քաղաց դաշտ գավառի:

Այս գավառի աշխարհագրական նկարագրությամբ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում ավարտվում է Աղվանքի վարչական նկարագրությունը: Մենք կփորձենք գավառների մյուս մասը ներկայացնել «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրություն առկա հաղորդումների հիման վրա:

Բայց մինչ այդ նշենք, որ «Աշխարհացոյց»-ի մի շարք ձեռագրերի հաղորդումների և ուսումնասիրողների կազմած քարտեզների միջև հակասություն է նկատվում: Դա ակնհայտ է նաև սկզբնաղբյուրի աշխարհաբար թարգմանության մեջ: Նախ, «Աշխարհացոյց»-ի խմբագրության համառոտ ձեռագրերում Աղվանքի արևելյան գավառները հերթականությամբ չեն բերվել: Եթե որոշ ձեռագրերում հիշատակվում են արևելյան գավառները, ապա պարզ չէ, թե որ գավառն է մյուսին հաջորդում և այն գավառներն, որոնք ներկայացված են կողք կողքի՝ մեկը մյուսին հարևան են, թե՞ ոչ: Օրինակ, մի շարք ձեռագրերում Հողմազ գավառը միշտ հիշատակվում է Շաքե գավառի տեղում²³ և, թվում է, Հողմազ գավառը պետք է լինի Շաքեի տեղում՝ Բեխի հարևանությամբ:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության 582 ձեռագիրը, որը մյուս ձեռագրերի համեմատ ավելի անխաթար է և մեզ է ներկայանում Աղվանքի գավառների ցանկով, այդ առումով նույնպես ամբողջական չէ: Դրանում պահպանված չէ գավառների հերթականութ-

²¹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89 և կից քարտեզը, Բ7:

²² Նույն տեղում, էջ 47, 120:

²³ Երևանի Սեսրոպ Սաշտոցի անվան Սատենադարան (այսուհետև՝ ՍՍ.), ձեռ. № 582, էջ 177^թ, ձեռ. № 1864, էջ 152^ա, ձեռ. № 2370, էջ 256^ա:

յունը՝ արևելյան գավառները հայտնվել են արևմտյան գավառների կողքին, ինչպես սկզբում նշել ենք, մի շարք գավառներ էլ դուրս են մնացել: Այսպես, Գեղավու գավառը հայտնվել է Շաքեի կողքին²⁴: Ինչպես գիտենք, Գեղավուն «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեքստում չի հիշատակվում, իսկ Շաքե գավառը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ՝ իր հարևան գավառների ու գետերի հետ²⁵: Նույն տեղում Գեղավուի կողքին հիշատակվում է Ոստան գավառը²⁶ (Ոստան-ի-Մարգպան): Այս դեպքում թվում է, թե այս երկու գավառները իրար կից են, բայց դրա հետևանքով արդեն Համբասի գավառը դուրս է մնում, որը Ս. Երեմյանը ենթադրաբար տեղադրում է Գեղավու և Ոստան գավառների միջև²⁷:

Նույն պատկերն է նաև Ոստան-ի-Մարգպան գավառի տեղադրության առումով: Մի շարք ձեռագրերում գավառը հիշատակվում է Գետառուի կողքին²⁸, մեկ այլ տեղում էլ՝ Շաքե գավառի հարևանությամբ²⁹: Բայց, ինչպես հայտնի է, այս երկու գավառների՝ հատկապես Շաքեի և թագավորանիստ գավառի միջև գտնվում է Հողմազ գավառը³⁰: «Աշխարհացոյց»-ի աշխարհաբար թարգմանությունում Գեղավու և Համբասի գավառները հիշատակվում են Հողմազ գավառի հարևանությամբ. «Իսկ դեպի արևելք գտնվում են Հողմազ, Գեղավու, Համբասի գավառները, ապա Ոստան-ի-Մարգպան գավառը»³¹: Ստացվում է, որ թվարկված այս երեք գավառներից հետո է սկսվում Ոստան-ի-Մարգպան գավառը: Բարեբախտաբար, «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ պահպանվել է հետևյալ հատվածը. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէրօջ դէպ ի հարաւոյ»³²: Այս հաղորդումից ելնելով վստահորեն կարելի է ասել, որ բուն Աղվանքի մայրաքաղաք Կապաղակը գտնվել է

²⁴ ՄՍ, ձեռ. № 582, էջ 177^p:

²⁵ «Աշխարհացոյց», էջ 29:

²⁶ ՄՍ, ձեռ. № 582, էջ 177^p:

²⁷ Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62 և կից քարտեզը, ԲՑ:

²⁸ ՄՍ, ձեռ. № 1898, էջ 268^p, ձեռ. № 2370, էջ 256^m, ձեռ. № 3502, էջ 214^f:

²⁹ ՄՍ, ձեռ. № 5120, էջ 97^m:

³⁰ Տես Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

³¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Արրահանյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 290:

³² «Աշխարհացոյց», էջ 29:

Ոստան-ի-Մարգապան գավառում՝ Սեբոջ գետի ափին: ԱՆԵՐԿԲԱ է, որ այն գտնվել է ոչ թե վերոհիշյալ երեք գավառներից արևելք, այլ՝ Հողմազ գավառի հարևանությամբ³³:

Սկզբնաղբյուրի աշխարհաբար տեքստում Հողմազ, Գեղավու և Համբասի գավառները հանդես են գալիս մեկ շարքով, ըստ որում՝ վերջինս համարվել է բուն Աղվանքի սահմանային արևելյան գավառը: Սակայն, Ս. Երեմյանը հակառակ հերթականությամբ է ներկայացնում Աղվանքի արևելյան գավառների տեղադրությունը: Նախ՝ Հողմազը, ճիշտ տեղում՝ Ոստան-ի-Մարգանը, ապա դրանից արևելք՝ Համբասին և Գեղավուն³⁴: Եթե չհաշվենք աշխարհաբար տեքստում Հողմազ և Գեղավու գավառների նկարագրությունը մեկը մյուսի կողքին, որոնց միջև ընկած է Ոստան - ի - Մարգապան գավառը, ապա տարբերությունը մնում է վերջին երկու գավառը՝ Համբասի, դրանից արևելք Գեղավու, թե՛ Գեղավու, ապա Համբասի: Վերոհիշյալ հարցին որոշակի պատասխան չեն տալիս նույնիսկ «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը, որտեղ, ինչպես նշել ենք, չի պահպանվել գավառների հերթականությունը, որը պետք է կատարվեր հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կամ հակառակ ուղղությամբ: Եվ այստեղ մեզ մնում է ընդունել Ս. Երեմյանի տեսակետը՝ Գեղավուն, այլ ոչ թե Համբասին է Աղվանքի արևելյան վերջին գավառը՝ Կովկասյան լեռների հարավային փեշերին: Մեր կարծիքով, դրա համար հիմք կարող է ծառայել նաև համանուն գետի առկայությունը: Եվ եթե այդ գետը կոչվում էր Գեղավու, ապա հարկ չկա նույնանուն գավառը տեղափոխել արևմուտք և նրա տեղը խցկել Համբասին:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում առկա խաթարումները դրանում իրենց մեղքի բաժինն ունեն ընդօրինակողները ուսումնասիրողներին թույլ չեն տվել հարցին տալ ամբողջական և սպառիչ պատասխան: Եվ մենք էլ կփորձենք մոտավոր ճշտությամբ ներկայացնել Աղվանքի արևելյան գավառների վարչական բաժանումը: Ի դեպ, նշենք, որ ուսումնասիրողները խնդրո առարկայի վերաբերյալ գործնականում սահմանափակվել են «Աշխարհացոյց»-ի համառոտ տեքստի հաղորդումներով:

³³ Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և կից քարտեզը, Բ7:

³⁴ Նույն տեղում:

Բուն Աղվանքի արևելյան գավառների շարքում առաջինը Հողմազ կամ Խողմազ գավառն է: Այն հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավ-արևելքից՝ Գետառու³⁵ գավառին, արևելքից՝ Ոստան-ի-Սարգպանին, իսկ արևմուտքից՝ Շաքեին³⁶: Գավառի տարածքը հետագայում կոչվել է Խաչմազ և ներկայումս գտնվում է Կուրի ծախափնյակի Վարդաշենի շրջանում: Ընդհանուր տարածությունը կազմում է 1330 կմ² (?)³⁷:

Բուն Աղվանքի Քաղաց դաշտ գավառի տեղադրությունը, ինչպես նշել ենք, չի համապատասխանում սկզբնաղբյուրի տեղեկությանը, իսկ Քաղաց դաշտի վերաբերյալ «Աշխարհացոյց»-ում չկա այն հաղորդումը, ըստ որի վերջինս տարածված է եղել գետի երկու կողմերում: Հյուսիսից գավառը սահմանակից է Հողմազ և Ոստան-ի-Սարգպան գավառներին, հարավից՝ Կուր գետին, արևելքից՝ Սեբոջ (Քալածոր) գետով Բազկան գավառին, իսկ արևմուտքից՝ Գետառուին: Գավառը գտնվում է Սեբոջ և Սանի գետերի ստորին հոսանքի տարածքում³⁸: Քաղաց դաշտի տարածությունը մոտ 950–1000 կմ²:

Ոստան-ի-Սարգպան գավառը հյուսիսից Կովկասյան լեռնաշղթայով սահմանակից է Շիղբքին³⁹, հարավից՝ Քաղաց դաշտ, Բազկան, արևելքից՝ Համբասի և Գեղավու արևմուտքից՝ Հողմազ գավառներին: Վիճահարույց է մնում Ոստան գավառի հարավային սահմանը: Կարծում ենք, որ այն հասել է Սեբոջ գետի այն հատվածին, որի մյուս ափին գտնվել է Քաղաքերոյ ամրոցը և ունեցել է ավելի մեծ տարածք:

«Աշխարհացոյց»-ը հաղորդում է. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սեբոջ»⁴⁰: Աներկբա է, որ գետը գտնվում էր Կապաղակ մայրաքաղաքի շրջակայքում:

Բուն Աղվանքի և ոչ մի գավառի տեղադրությունն այնքան տա-

³⁵ Ս. Երեմյանի կազմած քարտեզում Հողմազ գավառը նշված է մի փոքր դեպի արևելք, որի հետևանքով գավառի հարավային հարևան է դարձել Քաղաց դաշտ գավառը (տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 55 և կից քարտեզը, Բ7):

³⁶ Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

³⁷ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 55, 120:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁴⁰ «Աշխարհացոյց», էջ 29:

րակարծությունների տեղիք չի տվել, որքան Բազկան գավառինը: Նախ, ժամանակի ընթացքում սխալ է նշվել գավառի անվանումը՝ Բաղասական դաշտ, Բաքանի, Բազանք և այլն: Հիմնականում գործածության մեջ է եղել առաջին անվանումը: Ինչպես նկատել է Ս. Երեմյանը, «Հետագա արտագրողների մոտ Քաղաց դաշտ, Դաշտ-ի-Բազկան շարքն աղավաղվելով դարձել է Քաղաց դաշտ, ի Բազկան, կամ Քաղա, Դաշտ ի Բաղկան, ապա՝ Դաշտ ի Բաղական և Դաշտ ի Բալասական»⁴¹: Հետագայում «Աշխարհացոյց»-ի համառոտ № 582 ձեռագրի⁴² շնորհիվ վերականգնվել է գավառի անվանումը՝ Ի Բազկան: Կարծում ենք, ելնելով վերը նշված հանգամանքից, գավառի անունը պետք է լինի ոչ թե Ի Բազկան, այլ ուղղակի՝ Բազկան: Վրիպումն առաջ է եկել նրանից, որ Դաշտ-ի-Բազկան գավառին նախորդում է Քաղաց դաշտը:

Ս. Երեմյանը իր կազմած քարտեզում Դաշտ ի Բաղասականը նշում է Փայտակարանի տարածքում⁴³: Քանի որ այստեղ մեր խնդիրը բուն Աղվանքի գավառների տեղադրությունն է, ապա այդ առումով չենք ծավալվում, այլ միայն նշենք, որ գուցե թե հարևան շրջաններից ինչ-որ մեկը, մասնավորապես, ներկայիս Շամախու տարածքը, որոշ ժամանակ կոչվել է Բաղասական կամ Բազկան անունով: Բայց աներկբա է, որ Բազկան անվամբ գավառ ունեցել է նաև Աղվանքը և դրա տեղադրությունը որոշելիս չպետք է դուրս գալ բուն Աղվանքի սահմաններից: Ս. Երեմյանի քարտեզում գավառն բուն Աղվանքի տարածքում նշված է Հեջերի անվամբ⁴⁴, ինչն «Աշխարհացոյց»-ի Բազկան գավառն է, քանի որ սկզբնաղբյուրը հաղորդում է. «Ըստ որում Քաղաց դաշտ, Դաշտ ի Բազկան որ է Հեջերի»⁴⁵: Այսինքն՝ Բազկան գավառը գտնվել է Քաղաց դաշտի հարևանությամբ: Մեր կարծիքով, երկու գավառների միջև սահման է հանդիսացել Սեբոջ գետը. «...դէպ ի հարաւոյ ըստ փոքր Հայոց»⁴⁶: Ս. Երեմյանը գա-

⁴¹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42-43:

⁴² ՄՄ, ձեռ. № 582, էջ 177^o:

⁴³ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և կից քարտեզը, 97-98:

⁴⁴ Նույն տեղում, Բ7:

⁴⁵ Նույն տեղում, էջ 105:

⁴⁶ «Աշխարհացոյց», էջ 29:

վառը 4900 կմ² տարածությամբ⁴⁷ տեղադրել է ներկայիս Շիրվանում:

Ոստան-ի-Մարգպան գավառը մեծ տարածություն է ունեցել ի հաշիվ Բազկան գավառի, ուստի, կարծում ենք, որ Համբասի գավառն իր տարածքի մեծ մասով կարելի է տեղադրել Բազկան գավառի մեջ: Ս. Երեմյանը դա տեղադրել է Ոստան-ի-Մարգպան և Գեղավու գավառների միջև՝ համապատասխանաբար Կեսիոս (Կոկիսոն) և Գեղավու գետերի ավազանում, ինչի մասին խոսք կլինի ստորև:

Այսպիսով՝ Բազկան գավառը Համբասի գավառից դեպի հարավ տեղաշարժելու դեպքում էլ հյուսիսից սահմանակցում է Ոստան-ի-Մարգպան, Համբասի, Գեղավու, հարավից Կուր գետով Փայտակարան նահանգին, իսկ արևելքից նրա սահմանը Աղուան գետն է, արևմուտքից՝ Քաղաց դաշտ գավառը՝ Սեբոջ գետի երկարությամբ:

Աղվանքի մյուս Համբասի գավառի ճշգրիտ տեղադրությունն ուսումնասիրողների մոտ որոշակի չէ, կարելի է միայն գավառի տեղադրությունը տալ ենթադրաբար, քանի որ այդ հարցում մեզ լիովին չի օգնում այնպիսի վստահելի սկզբնաղբյուր, ինչպիսին է «Աշխարհացոյց»-ը:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում, ինչպես քանիցս արդեն նշել ենք, չի պահպանվել Աղվանքի գավառների հերթականությունը՝ ինչը հնարավորություն կտար դրա վրա հիմնվելով՝ մոտավոր տալ գավառների, մասնավորապես Համբասի գավառի տեղադրությունը: «Աշխարհացոյց»-ի մի քանի ձեռագրերում⁴⁸ Համբասի գավառը հանդես է գալիս Ոստան-ի-Մարգպան գավառի հարևանությամբ, և միգուցե դրանից ելնելով է Ս. Երեմյանը ենթադրաբար տեղադրել է Կեսիոս և Գեղավու գետերի ավազանում⁴⁹: Սա ենթադրություն է և ոչ ավելին, քանզի մենք չենք կարող պնդել, թե վերոհիշյալ հանգամանքն է Ս. Երեմյանին ստիպել գավառը տեղադրել այդ տարածքում: Միաժամանակ իր աշխատության այն մասում, որտեղ ներկայացրել է «Աշխարհացոյց»-ի հաղորդումն բուն Աղվանքի վերաբերյալ, սկզբնաղբյուրն Համբասի գավառի մասին փաստում է. «Իսկ դե-

⁴⁷ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62, 120:

⁴⁸ ՄՄ, ձեռ. № 1864, էջ 248^p, ձեռ. № 1883, էջ 152^m, ձեռ. № 1898, էջ 268^p:

⁴⁹ Ս. Երեմյանը գավառը 4900 կմ² տարածությամբ տեղադրել է ներկայիս Շիրվանում (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62 և կից քարտեզը, Բ8):

պի արևելք գտնվում են... Համբասի գավառները»⁵⁰: «Ղեպի արևելք» չի նշանակում, որ Համբասի գավառը պարտադիր պետք էր տեղադրել Կովկասյան լեռների փեշերին՝ իր ամբողջ տարածությամբ ներառելով Ոստան-ի-Մարգպան ու Գեղավու գավառների միջև:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում Ոստան-ի-Մարգպան և Համբասի գավառների կողք կողքի հիշատակումից թվում է, թե դրանք հարևան են եղել սահմանի ողջ երկարությամբ: Սակայն դա միայն առաջին հայացքից: Համբասի գավառը տարածված է եղել ավելի հարավ և Կովկասյան լեռների հետ սահման չի ունեցել: Մեր կարծիքով գավառի մեծ մասը պետք է տեղադրել Բազկան գավառի հյուսիսային շրջաններում: Կոնկրետացնելով նշենք, որ Համբասի հիմնական մասը պետք է որ փռված լիներ Գեղավու գետի այն մասում, որը Ս. Երեմյանի քարտեզում նշված է որպես Բազկանի տարածք:

Համբասի գավառը հյուսիսից սահմանակից է Գեղավու գավառին, հարավից՝ Բազկանին, արևելքից Գեղավու գետին, իսկ արևմուտքից՝ Ոստան-ի-Մարգպան գավառին և մոտավորապես ունեցել է 1100–1200 կմ² տարածություն: Մեր եզրակացությունն այն է, որ Ոստան-ի-Մարգպան և Համբասի գավառները սահմանի ողջ երկարությամբ հարևան չեն եղել: Այս մասին ավելի հանգամանակից խոսք կլինի ստորև:

Աղվանքի վերջին գավառը Գեղավուն է: Այն գտնվում է այժմյան Աղ-սուի շրջանում: Ս. Երեմյանը գտնում է, որ գավառի անունն առաջացել է Գեղ կամ Գել ցեղի անունից և որ տարածությունը 975 կմ² է⁵¹: Ըստ Ս. Երեմյանի կազմած քարտեզի՝ գավառը հյուսիսից սահմանակցում է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Բազկան գավառին, արևելքից՝ Աղուան գետին, արևմուտքից՝ Համբասի գավառը ղեպի հարավ տեղափոխման հետևանքով, Ոստան-ի-Մարգպան գավառին, հյուսիս-արևմուտքից էլ, սահմանի մի փոքր մասով, Համբասի գավառներին: Մեր նախանշած սահմաններով, մասնավորապես, Գեղավուն սահմանակից է Ոստան-ի-Մարգպան գավառին, ինչի արդյունքում Համբասի գավառի տեղադրությունը տեղափոխվում է ղեպի հարավ: Ղա հաստատվում է նաև Ս. Բարխուտարյանցի

⁵⁰ Նույն տեղում, էջ 105:

⁵¹ Նույն տեղում, էջ 47:

հետևյալ հաղորդումով. «(Գեղավու – Ա. Վ.) գավառն ընկած է Կոկիսոն (Կեսիոս – Ա. Վ.) եւ Օրաբան գետակների եւ Կովկասեան մեծ լեռնաշղթայի գագաթնագծի եւ Բոզ-Ղաղի հիւսիսային լեռնաշղթայի հիւսիսային լանջերի մէջ...»⁵²: Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ Գեղավու գավառի սահմանը հասել է Կոկիսոն գետը: Իսկ եթե դա այդպես է, ապա Գեղավուն սահման է ունեցել Ոստան-ի-Մարզպան գավառի հետ: Այստեղից էլ՝ Գեղավու գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն՝ մոտավորապես 1080–1150 կմ²:

Այսպիսին է մեզ ներկայանում Աղվանքի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի:

ARGISHTI VARDANYAN

ADMINISTRATIVE DIVISION OF PROPER AGHVANK ACCORDING TO "ASHKHARHATSUYTS"

SUMMARY

In the seventh century, «Ashkharhatsutys» as a primary source of proper Atghank administrative division gives detailed information on its provinces. For instance, Eghni territorially exceeded other provinces and its borders reached the suburbs of Velis-Tsikhe.

In the east, Getaru was separated from Kholmaz and Kagats Dasht by the river Sani, and Marzipan was located in the vicinity of Kholmaz.

Kagats Dasht was located at the lower tributaries of the rivers Sebodzh and Sani. The southern border of Vostan reached Sebodzh riverbed, on the opposite bank of which was Kagaberd.

Hambasi stretched to the South and did not border with the Caucasian ridge. Most part of this province must have been located in that part of Gegavu valley, which is placed on the map by S. Yeremyan as Bazkan territory. Gegavu borders reached Kokison bordering with Marzpan province in District of Vostan.

⁵² Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 124:

АДМИНИСТРАТИВНОЕ
ДЕЛЕНИЕ СОБСТВЕННО АГВАНКА ПО
“АШХАРАЦУЙЦУ”

РЕЗЮМЕ

“Ашхарацуйц” VII в. в качестве главного первоисточника административного деления собственно Агванка представляет целостную картину его провинций. К примеру, провинция Ехни в территориальном отношении превосходила иные провинции, и ее границы доходили до окрестностей крепости Велис-Цихе. Провинция Гетару с востока отграничивалась от провинций Хохмаз и Кагац-дашт рекой Сани, а провинция Марзпан локализована по соседству с провинцией Хохмаз. Провинция Кагац-дашт находилась у нижнего притока рек Себодж и Сани. А южная граница провинции Востан доходила до той части русла реки Себодж, на противоположном берегу которой была локализована крепость Кагаберд.

Провинция Хамбаси простиралась к югу и не граничила с Кавказским хребтом. Большая часть этой провинции должна была быть локализована в той части долины р. Гегаву, которая на карте С. Еремяна указана как территория Базкан, границы же провинции Гегаву доходили до реки Кокисон, гранича с провинцией Марзпан уезда Востан.

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՎԵՐԱԾՆՆԴԻ
ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՋՈՎԱՆՆԻ
ԲՈԿԱԶԶՈ «ԴԵՎԱՄԵՐՈՆ», ՋԵՖՐԻ ՉՈՍԵՐ
«ՔԵՆՏԵՐԲԵՐՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ»)**

Խաչակրաց արշավանքները նոր թափ հաղորդեցին Արևելք-Արևմուտք տնտեսական, մշակութային ու գաղափարական սերտ շփումներին: Չինաստանի, Հնդկաստանի, Ասիայի այլ հեռավոր վայրերի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի հետ առևտրատնտեսական կապերը որակապես նոր, բազմաշերտ հոսքեր էին ուղղում դեպի Եվրոպա: Դրանք կարող էին լինել նոր՝ գաղափարական, մշակութային, ինչպես և բազմաթիվ տեխնոլոգիական նորամուծությունների փոխհոսքեր, որոնք, ի վերջո, աստիճանաբար Եվրոպական իրականության մեջ հասունացնում էին մշակութային մեծագույն պայթյուններից մեկը՝ Վերածնունդը:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրատնտեսական հարաբերություններն իրենց զարգացման գագաթնակետին էին հատկապես XIV դ. առաջին տասնամյակներին, մի ժամանակաշրջան, երբ Եվրոպայում սկսեցին ի հայտ գալ Վերածննդի դարաշրջանի առաջին սաղմերը: Կիլիկյան Հայաստանը Եվրոպական իրականությանը ներկայանում և ճանաչելի էր դառնում մեծ մասամբ Եվրոպացի առևտրականների և ճանապարհորդների միջոցով, որոնք Հայոց պետության և հայերի մասին իրենց ունեցած բազմաբնույթ տեղեկությունները տանում էին Հին Աշխարհամաս:

Կիլիկյան Հայաստանի համբավը Եվրոպայում այն աստիճան մեծ էր, որ նրա մասին գրում էին ոչ միայն Վիլիելմ Ռուբրուքը, Մարկո Պոլոն, Ջովաննի դե Սոնտեկորվինոն և բազմաթիվ այլ ճանապարհորդներ ու քարոզչական առաքելությունների ղեկավարներ, այլ նաև վաղ Վերածննդի դարաշրջանի գեղարվեստական գրականության վառ ներկայացուցիչները: Կիլիկյան Հայաստանի մասին առատ հիշատակություններ ունի Ջովաննի Բոկասչոն իր հռչակավոր «Դե-

կամերոնում», որի հետ միասին Դանթե Ալիգիերին և Ֆրանչեսկո Պետրարկան կազմում են վաղ Վերածննդի «Մեծ եռյակը»: Բոկաչչոն Վերածննդի դարաշրջանի հումանիստական գրականության առաջին ներկայացուցիչներից է, ռեալիստական արձակի և նովելի հիմնադիրը եվրոպական գրականության մեջ: Ծնվել է մոտավորապես 1313 թ. և մահացել ճիշտ նույն՝ Կիլիկիայի հայկական պետության կործանման տարում՝ 1375 թ.: Նա իր մանկությունն ու հասուն տարիներն անցկացրել է Ֆլորենցիայում: Լատիներեն գրել է գիտական աշխատություններ. մոտ 20 տարի աշխատել է «Աստվածների ծագումնաբանությունը» գրքի վրա: Գրել է նաև «Նշանավոր կանանց մասին», «Նշանավոր մարդկանց դժբախտությունների մասին» գրքերը: Բոկաչչոյի գրական ժառանգության մեջ ամենաարժեքավորները գեղարվեստական գործերն են: Մեծագույն գրողի ստեղծագործական ուղին սկսվել է ասպետական գրականությամբ, որը նրան հրապուրել էր ազնվականական, անտիկ գրականության, դիցաբանական թեմաներով և հումանիզմով: Բոկաչչոյի ստեղծագործության գլուխգործոցը «Դեկամերոնն» է, որը նա գրել է 1350–1353 թթ. ընթացքում: Այն հրատարակվել է միայն 1471 թվականին: Նրա հերոսների մեծ մասն իրական դեմքեր են: Գիրքը սկսվում է 1348 թ. Ֆլորենցիային պատուհասած ժանտախտի նկարագրությամբ¹: 7 երիտասարդ կին և 3 պատանի՝ բոլորն էլ մեծահարուստ ընտանիքներից, փախչում են քաղաքից և պատսպարվում Ֆլորենցիայի մերձակա ամառանոցներից մեկում: 10 օրվա ընթացքում (այստեղից էլ՝ գրքի անվանումը. հունարեն «դեկամերոն» նշանակում է տասնօրյակ) խմբի անդամները զվարճանում են, երգում, պարում, իսկ երեկոյան նրանցից մեկը պատմում է որևէ պատմություն:

Իր հիշատակություններում Բոկաչչոն Կիլիկյան Հայաստանն ուղղակի անվանում է «Հայաստան»: Նշենք, որ միջնադարյան եվրոպական կարելի է ասել բոլոր պատմագեղարվեստական երկերում,

¹ Խոսքը XIV դ. Արևելքում բռնկված, ապա Եվրոպա թափանցած «Սև մահ» անվանված համաճարակի մասին է, որը միլիոնավոր մարդկանց կյանք խլեց: Եվրոպայում այն իր գագաթնակետին էր հասել XIV դ. 40–50-ական թթ. միջակայքում, ճիշտ այն ժամանակ, երբ Բոկաչչոն գրել է «Դեկամերոնը» (տես Byrne J. P., *The Black Death*, Greenwood Publishing Group, 2004).

տարաբնույթ սկզբնաղբյուրներում Կիլիկիայի հայկական պետությունը հիշատակված է կամ «Հայաստան», կամ էլ՝ «Փոքր Հայաստան» (համեմատաբար ավելի քիչ դեպքերում) ծներով²: Հայաստանի (այն է՝ Կիլիկյան Հայաստան) մասին հիշատակություններից զատ, Բուկաչչոն բազմիցս խոսում է նաև Կիլիկյան Հայաստանի խոշորագույն նավահանգստի՝ Այասի մասին, որն իտալական սկզբնաղբյուրներում և գեղարվեստական երկերում հիշատակված է Լայաջո³ ձևով:

Դուրս գրելով Կիլիկյան Հայաստանի մասին «Դեկամերոնում» տեղ գտած հատվածները, կիործենք վերլուծել դրանցում կուտակված սլատմագեղարվեստական հարուստ նյութը: Կիլիկիայի մասին Բուկաչչոյի շարադրանքի ոճը, նրա գրած այս կամ այն հետաքրքրաշարժ դրվագները խիստ կարևոր են այն տեսանկյունից, թե ինչպես էին ընկալվում Հայոց պետությունն ու հայերը ոչ միայն հռչակավոր ֆլորենտացու կողմից, այլև իտալական և ընդհանրապես միջնադարյան եվրոպական իրականությունում:

Կիլիկյան Հայաստանի մասին «Դեկամերոնի» երկրորդ օրվա VII նովելում տեղ գտած հիշատակությունը վերաբերվում է կիպրոսցի մի հարուստ վաճառականի, որը Կիպրոսից իր ապրանքներն առած Հայաստան էր գնացել⁴:

Ի թիվս Կիլիկյան Հայաստանի մասին ունեցած անդրադարձների, ամենաուշագրավ և գունեղ մասը «Դեկամերոնի» Հինգերորդ օր-

² Марко Поло, Книга, Москва, 1956, с. 49. Marino Sanuto, Liber secretorum fidelium crucis super Terrae Sanctae recuperatione et conservatione, Hanoviae, Heredes I. Aubrii, 1611, p. 1-39, 83-94, 173-300. Francesco Balducci Pegolotti, La Pratica della Mercatura, New York, 1970, p. 59. Zibaldone da Canal, Manoscritto Mercantile del sec. XIV, ed. A. Stussi, Venezia, 1967, p. 108-109. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice: "The Zibaldone da Canal", Binghamton, NY, 1994, p. 110-114. Balletto L., Notai genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989, p. 175, 396. Bondi Sebellico A., Felice de Merlis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315-1348, V. 1, Venezia, 1973, p. 50-68. V. 2, Venezia, 1978, p. 280-288. Balard M., Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296-23 giugno 1299), Genova, 1983, p. 208, 213. Pavoni R., Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio - 27 ottobre 1301), Genova, 1982, p. 310. Polonio V., Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300 - 3 agosto 1301), Genova, 1983, p. 548.

³ Այսպես եվրոպական սկզբնաղբյուրներում և գեղարվեստական գրականության մեջ հիշատակված է Ayacio, Ajazzo, Giazza, Glaza, Laiazzo, Lajazzo, Layas ձևերով (տես նախորդ տողատակում նշված աղբյուրները):

⁴ Ջովաննի Բուկաչչո, Դեկամերոն, թարգմ. Ս. Վահունու, Երևան, 1972, էջ 151:

վա VII նովելն է: Այս նովելը Բոկաչչոն պարզապես ողողել է Կիլիկյան Հայաստանի և հայերի մասին տեղեկություններով: Նովելի հիմնական սյուժեն հետևյալն է. Սիցիլիայում⁵ ապրում էր Ամերիգո Աբատտե Տրապանցի անունով ոմն ազնվական: Բացի մեծահարուստ լինելուց, նա ուներ բազմաթիվ զավակներ, ուստի շատ ծառաների կարիք ուներ: Այդ նպատակով նա օգտվում է ջենովացի ծովահենների ծառայությունից, որոնք անցած լինելով Հայաստանի (Կիլիկյան Հայաստան) ափերով բազմաթիվ տղաներ էին առևանգել: Ամերիգոն կարծում է, որ նրանք թուրք են և գնում է նրանցից մի քանիսին⁶: Երեխաները բռի հովիվների տպավորություն էին թողնում, սակայն նրանց մեջ կար մեկը, որ շատ բարետես էր ու գեղեցիկ, իսկ նրա անունն էր Թեոդորոս: Թեև նրա հետ էլ էին վարվում ինչպես ստրուկի, սակայն նա ապրեց ու մեծացավ Ամերիգոյի տանը նրա երեխաների հետ, և ավելի շուտ իր խառնվածքի, քան այդ պատահական վիճակի բերումով դարձավ բարեկիրթ ու վայելչաշնորհ մի երիտասարդ և մեսսեր Ամերիգոյին այնքան դուր եկավ, որ նա ազատություն տվեց, միաժամանակ կարծելով, որ թուրք է՝ մկրտել տվեց, անունը դնելով Պիետրո: Ավելին, Ամերիգոն շատ վստահելով նրան կարգում է իր գործերի ավագ վերակացու: Ամերիգոն ուներ մի շատ նրբագեղ դուստր՝ Վիոլանտան: Մեծանալով միասին, Պիետրոն ու Վիոլանտան սիրեցին միմյանց: Ի վերջո, ինչպես պատահում է դեկամերոնյան յուրաքանչյուր պատմության մեջ, Վիոլանտան հղիանում է: Նման արարքի համար Պիետրոյին սպառնում էր մահապատիժ, ուստի նրանք որոշում են որևէ մեկի չպատմել այդ մասին: Սակայն

⁵ 1282 թ. Արագոնի թագավոր Պետրոս III-ը (1276–1285) ներխուժում է Սիցիլիայի թագավորություն, որտեղ իշխում էին Ֆրանսիայի Կապետինգյան արքայատոհմին ազգակից Անժուի թագավորական տան ներկայացուցիչները: Սիցիլիայի թագավորությունը տրոհվում է երկու մասի. բուն Սիցիլիա կղզին ընդգրկող տարածքում, որն անցնում է Արագոնի թագավորության հովանու տակ, ձևավորվում մի նոր Սիցիլիայի թագավորություն, որը հայտնի է Տրինակրիայի թագավորություն անվամբ. մյուս՝ մայրցամաքային հատվածում, պահպանվում է ֆրանսիական թագավորների իշխանությունը, որտեղ առաջացած միապետությունը թեև նույնպես հանդես է գալիս որպես Սիցիլիայի թագավորություն, սակայն պատմության մեջ հայտնի է Նեապոլիտանական թագավորություն անվանումով: (Runciman S., *The Sicilian Vespers: A History of the Mediterranean World in the Later Thirteenth century*, Cambridge, 1992, p. 242–280).

⁶ Բոկաչչոն այստեղ շեշտում է, որ կարծելով թուրք են Ամերիգոն գնում է այդ երեխաներին: Անշուշտ, հնարավոր է, որ իտալացիները քրիստոնյա ստրուկներ կամ ծառաներ չէին պահում, կամ դրա համար կարող էր մեկ այլ պատճառ լինել:

աղջկա հղիութիւնը ժամանակի հետ թաքցնել հնարավոր չէր և օրերից մի օր Վիոլանտան այս մասին պատմում է իր մորը: Երեխան ծնվում է. Ամերիգոն վերադառնում է և մահի սպառնալիքով պահանջում է դստերը պատմել ճշմարտութիւնը: Ամերիգոն հրամայում է ոչ միայն քաղաքում ման ածելով գանակոծել և սպանել Պիետրոյին, այլ նաև պահանջում է, որ Վիոլանտան թույն խմելով ինքնասպան լինի, իսկ նորածնին պարզապես զարկեն պատին ու ջախջախեն: Եվ երբ Պիետրոյին պահակախումբը տանում էր դեպի կախաղանը, ճանապարհին նրանք անցնում էին հյուրանոցի մոտով, որտեղ իջևանել էին Հայաստանից ժամանած երեք նշանավոր անձինք, որոնք Հայոց թագավորի կողմից առաքված էին Հռոմ՝ առաջիկա խաչակրաց արշավանքին վերաբերող կարևոր հարցերի շուրջ պապի հետ բանակցելու: Նրանք կանգ էին առել այդտեղ, որպեսզի մի քանի օր հանգստանային, և Տրապանայի երևելի մարդկանց, առանձնապես Ամերիգոյի կողմից ընդունվել էին մեծ պատիվներով: Լսելով Պիետրոյին ուղեկցող պահակախմբի ոտնաձայները, նրանք մոտենում են լուսամուտին: Պիետրոյին մինչև գոտկատեղը մերկացրել էին և ձեռքերը կապել էին մեջքին: Հանկարծ դեսպաններից մեկը, որի անունը Ֆինեո էր, տեսնելով Պիետրոյին, անմիջապես նրա կրծքի վրա նկատեց մի մեծ կարմիր խաչի պատկերով նշան: Դեսպանը մտաբերեց իր որդուն, որին տասնհինգ տարի առաջ Լայացցոյի ծովեզերքից առևանգել էին ծովահենները: Նա մտածեց, որ եթե իր որդին կենդանի լիներ, կլիներ հենց այդ տարիքի, ինչ այդ թշվառ երիտասարդն է: Ահա ինչու, երբ Պիետրոն մոտեցել էր, Ֆինեոն ձայն տվեց. «Հեյ, Թեոդորոս»: Պիետրոն գլուխը բարձրացնում է, որից հետո Ֆինեոն հայերեն նրան հարցնում է, թե որտեղացի է նա: Պիետրոն պատասխանում է, որ նա Հայաստանից է և նրա հոր անունը Ֆինեո է, որ նրան Իտալիա են բերել փոքր հասակում: Ֆինեոն լալով անմիջապես իջնում է և որդու վրա զցում թանկագին կերպասից մի թիկնոց: Տեղեկանալով ամբողջ պատմության մասին, Ֆինեոն անմիջապես հայտնում է Ամերիգոյին Պիետրոյի ով լինելը: Ֆինեոն և Ամերիգոն համաձայնության են գալիս՝ ամուսնացնել Պիետրոյին և Վիոլանտային: Ֆինեոն և մյուս դեսպանները Հռոմից վերադառնալուն պես Տրապանիում մեծ հարսանիք են անում, որից հետո իր որդու ու հարսի հետ վերադառ-

նում են Լայացցո, ուր սիրահարները ապրում են մինչ ի մահ հաշտ ու խաղաղ հղումը:

Ինչպես տեսնում ենք, Բոկաչչոն «Դեկամերոնի» այս նովելն ամբողջությամբ նվիրել է Կիլիկյան Հայաստանին և հայերին, ինչն ամենևին պատահական չէ, հաշվի առնելով իր ապրած ժամանակամիջոցի ընթացքում հայ-իտալական բազմակողմանի, շատ աշխույժ շփումները: Կիլիկյան Հայաստանի մասին Բոկաչչոյի հիշատակումներից ստացվող պատկերացումները և, ինչու ոչ, նաև եզրահանգումները, ըստ էության, կարող են մեծ մասամբ լինել երկու բնույթի: Առաջինը դա Կիլիկյան Հայաստանի և հայերի մասին Բոկաչչոյի շարադրանքի գեղարվեստականությունն ու ոճային յուրահատկությունն է: XIII–XIV դդ. Կիլիկյան Հայաստանն Արևելքի այն երկրներից էր դեպի ուր ձգտում էին հազարավոր եվրոպացիներ, հատկապես իտալացիներ, որոնց համար հայկական պետությունը դեպի Արևելք գնացող ճանապարհի կարևորագույն հանգրվաններից էր: Ընդ որում, նրանց մեջ գերակշռում էին հատկապես Վենետիկի, Ջենովայի, Պիզայի, Ֆլորենցիայի և իտալական տասնյակ այլ քաղաքների ազնվականական ամենահայտնի ընտանիքների ներկայացուցիչները: Սա եվրոպական իրականության մեջ Կիլիկյան Հայաստանի մասին անխուսափելիորեն ձևավորել էր հեքիաթային, էկզոտիկ պատկերացումներ, ինչն էլ հստակ արտացոլվում է «Դեկամերոնում»:

Եվ երկրորդ, Բոկաչչոյի հիշատակումներից կարելի է երևան հանել պատմական որոշակի ստույգ փաստեր: Մասնավորապես, Հայոց թագավորի կողմից ուղարկված հայկական պատվիրակության դեպի Հռոմ առաքելությունը, որոնց մեջ էր Ֆինեոն, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Կիլիկիո արքա Լևոն Դ-ի (1320–1342) ժամանակաշրջանին: Լևոն Դ-ի օրոք էր, որ Կիլիկյան Հայաստանի և արևմուտքի հետ դիվանագիտական և առևտրատնտեսական շփումները խիստ սերտացել էին: Ավելին, Հայոց արքան 1330 թ. ամուսնացել էր Սիցիլիայի թագավոր Ֆրեդերիկ III Արագոնցու (1296–1337) դստեր Կոնստանսի հետ: 1332 թ. Լևոնը եվրոպա է ուղարկում Տարսոնի եպիսկոպոս Ստեփանին, հենց խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման ծրագրերի մասին բանակցելու նպատակով: Հովհաննես XXII պապի (1314–1334) գահակալման վերջին տարում

1334 թ. պապը Լևոնին հավաստիացնում էր, որ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI Վալուան (1328–1350) նախապատրաստվում է խաչակրաց նոր արշավանքի: Այդ նույն հավաստիացումները Լևոն Դին է հաղորդում նաև հաջորդ՝ Բենեդիկտոս XII պապը (1334–1342): Այն, որ այդ ժամանակամիջոցում պապերի նստավայրը Ավինյոնում էր, դեռ չի նշանակում, որ այստեղ ժամանակային անհամապատասխանություն կա և պապերը չէին այցելում Հռոմ: Ավելին, Բենեդիկտոս XII-ի և Կիլիկյան կողմի հետ շփումների մեջ կարևորագույն միջնորդական դերակատարում ուներ Սիցիլիայի (Նեապոլիտանական) մյուս թագավորության թագավոր Ռոբերտ Անժուացին (1309–1343), իսկ արդեն նշվեց, որ «Դեկամերոնի» վերոնշյալ նովելի դեպքերը ընթանում էին հենց Սիցիլիայի Տրապանի քաղաքում: Իհարկե, խաչակրաց նոր արշավանքը լուրջ պատրանք էր, քանի որ այդ խոստումներից կարճ ժամանակ անց՝ Այասը մամլուքներից հարկադրաբար հանձնելու տարում, Ֆրանսիայի և Անգլիայի միջև սկսվում է Հարյուրամյա պատերազմը (1337–1453)⁷:

Շատ ուշագրավ է ծովահենության հետ կապված դրվագը⁸: XIV դ. վեներտիկցի, ազնվական և հեղինակ Մարինո Սանուտո Տորչելլո

⁷ Микаелян Г., История Киликийского Армянского государства, Ереван, 1952, с. 455–458: Տեր-Պետրոսյան Լ., խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 405–407: Benoit XII (1334-1342), Lettres Communes, analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican par Vidal J., T. I // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1903, p. 371. Benoit XII (1334–1342), Lettres closes, patentes et curiales, pub. par Daumet G., Fascicule I // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1899, p. 101–104. Թեև Հայոց արքա Օշինը 1316 թ. ամուսնացել էր Ռոբերտ Անժուացու եղբոր դստեր՝ Հովհաննայի (Ժաննա-Իրեն) հետ, սակայն Լևոն Դ-ն էլ, իր հերթին, ամուսնացած էր Նեապոլյան Սիցիլիայի թագավորության հակառակորդ՝ Արագոնի թագավորների իշխանության տակ գտնվող Սիցիլիայի մյուս թագավորության միապետ Ֆրեդերիկ III-ի դստեր՝ Կոնստանսի հետ: Ուստի չենք բացառում, որ Ռոբերտի նշյալ կեցվացքը կարող էր այս պատճառով ևս պայմանավորված լինել (Յովհան Դարդել, Ժամանակագրություն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 27–30, Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 391, 405–406, 436–437):

⁸ Միջերկրածովյան առևտրում գերակա դիրք զբաղեցնելու նպատակով Վեներտիկի և Ջենովայի հանրապետությունները կատաղի պայքարի մեջ էին հատկապես XIII դ. վերջին և XIV դ.: Այդ հակամարտության թատերաբեմերից էր նաև կիլիկյան ծովափը, հատկապես, երբ 1291 թ. մամլուքները նվաճեցին Արևելքում խաչակիրների վերջին քաղաքները և Կիլիկյան Հայաստանն ու Կիպրոսը դարձան եվրոպացի վաճառականների միակ վստահելի հենակետերը Արևելքի հետ առևտրական կապ պաշտպանելու համար: Վեներտիկի և Ջենովային այդ մրցակցությունը շատ հաճախ արտահայտվում էր միմյանց նկատմամբ ծովահենային հարձակումներով ևս (տես Барцеров Ю., Борьба

Ավագը, խոսելով Կիլիկյան Հայաստանին շրջապատող թշնամիների մասին, գրում է. «Հայկական թագավորությունը հոշոտում են իրենց ժանիքներով չորս գազան. Մի կողմից առյուծը (նկատի ունի մոնղոլներին), որին հայոց թագավորը վճարում է հարկեր, մյուս կողմից հովազը՝ եգիպտական սուլթանը, գայլը՝ թուրքերը և օձերը՝ մեր ծովի ծովահենները, որոնք ամեն օր ջարդոտում են հայ քրիստոնյաների ոսկորները» հղումը: Ակնհայտ է, թե ինչու է Բոկաչչոն իր պատմության մեջ օգտագործել ծովահենների հետ կապված դրվագները:

Հարկ ենք համարում կանգ առնել նաև «Դեկամերոնի» մինչ այժմ արված բազմաթիվ ու բազմալեզու հրատարակություններին: Նշենք, որ մասնավորապես XIX–XX դդ. հրատարակված բազմաթիվ հրատարակություններում⁹ Կիլիկյան Հայաստանի և Այասի (Լայացցո) մասին հիշատակությունները նույնանման են: Սակայն հարյուրավոր հրատարակություններից ընդամենը մեկ երկուսի մոտ կատարվել է կոպիտ սխալ: Մասնավորապես մի հրատարակության մեջ նույնությամբ թողնելով Հայաստանը, հեղինակը սխալմամբ, կամ հնարավոր է, գուցե միտումնավոր Լայացցոյի, այսինքն Այասի փոխարեն գրել է Լազիստան¹⁰: Հավանաբար հեղինակը տեղյակ չի եղել, որ եվրոպական բոլոր սկզբնաղբյուրներում, ինչպես վերը նշեցինք, Կիլիկյան Հայաստանը անվանվում է պարզապես Հայաստան և հազվադեպ՝ Փոքր Հայաստան: Սխալի միակ տրամաբանությունն այն է, որ Հայաստան նկատի է առնվել բուն Հայաստանը, իսկ Լազիստանը նրան առավել մոտ ծովափնյա տարածքը Սև ծովի ափին, ինչի մեղմ ասած ոչ մասնագիտական մոտեցումը տարակուսանք է առաջացնում, քանի որ Բոկաչչոյի ժամանակ Հայաստանում վաղուց թագավորություն չկար: Դրան հակառակ XX–XXI դդ. հրատարա-

Киликийской Армении против пиратства в Средиземном море // Պատմա-բանասիրական հանդես, 1970, N 3, էջ 71–84, Барсегов Ю., Отказ армян от «берегового права» // Պատմա-բանասիրական հանդես, 1971, N 1, էջ 95–110):

⁹ Il Decameron di messer Giovanni Boccaccio, cittadino fiorentino, Volumes 3–4, Firenze, 1834, p. 100.

¹⁰ Boccaccio, Giovanni, Decameron, Boston, 2004, p. 233, 373.

կությունների ճնշող մեծամասնության մեջ այդ սխալը բարեբախտաբար չկա¹¹:

Կիլիկյան Յայաստանի, մասնավորապես պետության խոշորագույն նավահանգիստ Այասի մասին հիշատակություն կա անգլիական գրականության գոհար՝ Ջեֆրի Չոսերի «Քենտերբերյան պատմվածքների» նախաբանում: Թեև այդ հիշատակությունը միակն է ամբողջ ստեղծագործության մեջ, սակայն այն եզակի է, քանի որ ժամանակի աշխարհի քիչ քաղաքներն են պատիվ ունեցել տեղ գտնել Ջ. Չոսերի գլուխգործոցում: Խոսելով խաչակրաց արշավանքին մասնակցած ասպետի անցած ուղու, սխրագործությունների մասին՝ նշվում է, որ նա եղել է նաև Այասում¹²:

Կիլիկիայի հայկական պետության շուրջ երեքհարյուրամյա պատմությունը քացառիկ մի փուլ է Յայոց՝ հազարամյակների պատմության ընթացքում: Կիլիկիայում հայկական իրականությունը հայտնվեց միջերկրածովյան մեծ ընտանիքում, արագորեն ներգրավվելով ծովային մշակույթի գունեղ աշխարհ: Կիլիկյան քաղաքներում հայ մարդը կողք կողքի ապրում էր իտալացիների, ֆրանսիացիների, իսպանացիների, հույների, հրեաների, ասորիների, արաբների և բազմաթիվ այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Ի դեմս Կիլիկիայի հայ իրականությունը մշակութային հարուստ ժառանգությամբ հայտնվեց ժամանակի քաղաքակրթական գործընթացների եռուզեռում: Թե՛ Արևելքի, և թե՛ Եվրոպայի հետ աննախադեպ սերտ շփումներն անհամեմատ բարձրացնում էին աշխարհում հայկական իրականության ճանաչելիության աստիճանը, ինչի փայլուն արտահայտիչներից էր վաղ Վերածննդի եվրոպական գրականությունը: Դրանցում տեղ գտած հիշատակություններում հայությունը մեծ մասամբ ներկայանում է ոչ էպիզոդիկ, այլ դեպքերի ընթացքի գլխավոր հարթակում, իսկ շարադրանքն աչքի է ընկնում գեղեցիկ գեղարվեստական ոճով:

¹¹ Boccaccio, Giovanni, *The Decameron, Or 'Ten Day's Entertainment of Doccaccio*, London, H. G. Bohn, 1855, p. 286, 466. Boccaccio, Giovanni, *Decameron*, Oxford, New York, Oxford University Press, 1998. Boccaccio, Giovanni, *Decameron*, Kessinger Publishing, 2005.

¹² Geoffrey Chaucer, *The Canterbury Tales*, Courier Dover Publications, 2004, p. 2.

**CILICIAN ARMENIA IN THE LITERATURE OF
THE EARLY RENAISSANCE PERIOD
(GIOVANNI BOCCACCIO "THE DECAMERON",
GEOFFREY CHAUCER
"THE CANTERBURY TALES")**

SUMMARY

The three hundred year history of the Armenian state of Cilicia is an exceptional stage in the millennia history of Armenians. In Cilicia the Armenian reality appeared in the Mediterranean large family, rapidly penetrating into the colorful world of marine life. In the cities of Cilicia Armenians lived side by side with the Italians, French, Spaniards, Greeks, Jews, Assyrians, Arabs and many other nations. Unprecedented close contacts of the Armenians with the East and Europe significantly increased degree of their recognition in the world, which was brilliantly expressed in early Renaissance European literature. Mentions about Armenians in these literature works are not episodic and composition is distinguished by a beautiful style.

**УПОМИНАНИЯ О КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ
В ЛИТЕРАТУРЕ РАННЕГО ВОЗРОЖДЕНИЯ
(ДЖОВАННИ БОКАЧЧО “ДЕКАМЕРОН”,
ДЖЕФФРИ ЧОСЕР “КЕНТЕРБЕРИЙСКИЕ
РАССКАЗЫ”)**

РЕЗЮМЕ

Триста лет истории армянского государства Киликии является исключительным этапом в насчитывающей тысячелетия истории армян. В городах Киликии армяне жили бок о бок с итальянцами, французами, испанцами, греками, евреями, ассирийцами, арабами и многими другими народами.

Беспрецедентные тесные контакты армян с Востоком и Европой значительно увеличили степень их признания в мире, что прекрасно выражено в литературе европейского Раннего Возрождения. Упоминания об армянах в этих литературных произведениях не эпизодичны, а изложение отличается красивым стилем.

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ 17–19ՐԴ ԴԱՐԵՐՈՒՆ

Իր աշխարհագրական նպաստաւոր դիրքին շնորհիւ, Միջագետքը անցեալին և ներկայիս, մշտապէս եղած է մեծ տէրութիւններուն ուշադրութեան կեդրոնը: Արեւելքն արեւմուտքին կապող աշխարհի այս երկրամասը, Պարսից ծոցի հիւսիսը գտնուող իր Պասրա նաւահանգիստով, ինչպէս անտիկ աշխարհի, նմանապէս միջնադարեան և արդի առեւտրային պատմութեան մէջ իր ուրոյն տեղն ունի:

Իրաքի հաղորդակցութեան ուղիներն եղած են մասնաւորապէս իր երկու գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը, որոնց միացումով, երկրի հարաւը կազմուած է Շաթ-էլ-Արաբը, որ նաւարկելի էր¹: Համաձայն պատմահայր Հերոդոտի²՝ հայերը առեւտրական կապեր մշակած էին ամենուրեք արտաշխարհ: Ըստ որում, անոնք կը ճամբորդէին Հայաստանէն մինչեւ Նինուէ ու Բաբելոն՝ Եփրատ ու Տիգրիս գետերու վրայէն, լաստերով ու ցամաքային ուղիով, ներածելով ընտիր ու պատուական, Հայաստանի գինի, ընկուզեղէն, փայտեղէն, ցորեն, ձի, և այլն: Հետեւաբար, ըստ կարգ մը պատմաբաններու, հայեր Հայաստանէն մինչեւ Միջագետք կուգային առեւտրական գործերով և այդ պարագային կարելի է ընդունիլ, որ մի քանի հայեր, առեւտրական գործերով կը գտնուէին Իրաքի որոշ քաղաքներու մէջ, որպիսին են Պաղտատ, Պասրա և Սուսուլ³:

Բազմավաստակ պատմաբան՝ Աշոտ Աբրահամեան կը նշէ, որ Սասանեան տիրապետութեան ժամանակաշրջանին, երբ Միջագետքը կը գտնուէր Պարսկական գերիշխանութեան տակ, իսկ Տիգրոն անոնց մայրաքաղաքը, այդ շրջանին հայկական խոշոր գաղթօճախ մը գտնուած է հոն, որոնց մեծամասնութիւնը կը բաղկանար առեւտ-

¹ Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, Երեւան, 2003, էջ 14:

² Հերոդոտոս, Պատմութիւն, Երևան, 1986, էջ 79–80:

³ Սելջոնեան Վ., 1930-1955 Քսանհինգամեակ Մարգիլի (Պասրա) Հայ Ազգային Վարժարանի, Պէյրութ, 1955, էջ 62:

րականներէ և պետական պաշտօնեաներէ, որոնք յետագայ դարերուն հաւանաբար ծուլուած են տեղացիներուն հետ և իսպառ անյայտացած պատմութեան թատերաբեմէն⁴:

Միջնադարեան ժամանակաշրջանին, Կիլիկեան Հայաստանի տնտեսական կեանքին մէջ, մեծ դեր ունեցան նաեւ Միջագետքի նաւահանգիստները և գլխաւոր քաղաքները: Հրանդ Պաստրմաճեան կը մատնանշէ, որ Լեւոն Բ., իր մեծ զինուորականի և ճարպիկ քաղաքագետի յատկութիւններուն միացուց նաեւ տնտեսական կարիքներու և կարելիութիւններու խոր հասկացողութիւն մը՝ հիմը դնելով Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան տնտեսական զարգացման: Այս մեծ հայ գահակալը և իր հետեւորդները կը խորհէին, թէ կուզայ ժամանակը, երբ առեւտրական գործառնութիւնները պահպանելու կարիքը պիտի մղէ արեւմտեան պետութիւնները, մանաւանդ ժովային տէրութիւնները՝ գործօն կերպով հետաքրքրուելու Հայաստանի պատշապանութեամբ⁵: Հեղինակը կը նշէ նաեւ, որ Կիլիկիոյ խելամիտ թագաւորները խորհած էին, որ Կեդրոնական Ասիան Միջերկրականին կապող ուրիշ մեծ ճամբայ մը նմանապէս Կիլիկիայ կը յանգեր՝ Մալաթիա և Մարաշի ուղղութեամբ: Վերջապէս, կարելոր միացման գիծ մըն էր նաեւ հիւսիսային Սուրիոյ, Պաղտատի և Պասրայի վրայով Կիլիկիան՝ Պարսից ծոցին կապող ճամբան⁶: Հետեւաբար, տրամաբանական է, որ Կիլիկիոյ հայ վաճառականները իրենց կարաւանները անվտանգ տեղ հասցնելու համար, անպայման պիտի նախընտրէին գործարքներ կնքել իրենց ցեղակից և կրօնակից գործակալներուն կամ ներկայացուցիչներուն հետ վերոյիշեալ քաղաքներուն մէջ, մանաւանդ, որ ըստ Արշակ Ալպոյաճեանի՝ Պասրայի մէջ դեռեւս 1222 թ. արդէն հայկական գաղութ մը գոյութիւն ունէր, որու փաստը այն էր որ սոյն քաղաքի թեմակալն էր Հայաստանցի Սողոմոն անունով եպիսկոպոս մը:

Միջագետքը, այնուհետեւ ինչպէս այս տարածաշրջանի միւս երկիրները, թատերաբեմը կը դառնայ սելճուկեան, մոնղոլական և թա-

⁴ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 393:

⁵ Պաստրմաճեան Հ., Հայոց պատմութիւն, հ. Ա, Պէյրութ, 1954, էջ 278:

⁶ Նոյն տեղը, էջ 280:

թարական բազմաթիւ արշաւանքներու, որու հետեւանքով մեծապէս կը տուժէ ամբողջ երկիրը, ինչպէս նաեւ հայ գաղթօճախը: Գաղթօճախը տուժած է նաեւ երկիրը պատուհասող յաճախակի և կրկնուող համաճարակներէն, որոնք պատճառ դարձած են բնակիչներուն հեռանալուն կամ տեղափոխուելուն աւելի ապահով վայրեր:

Այնուամենայնիւ, Իրաքի հայ գաղթօճախը նորէն կը սկսի վերակենդանանալ և բազմանալ 17րդ դարէն սկսեալ - այս մասին կան եւրոպացի ուղեւորներու յիշատակութիւններ⁷: Իրաքի տնտեսական ծաղկուն ժամանակաշրջանը նաեւ կը սկսի 17-րդ դարէն ետք, Շահ Աբբասի Արարատեան դաշտի 300.000է աւելի բնակչութեան յայտնի բռնագաղթէն և Պարսկաստանի իր մայրաքաղաքին մօտ, Նոր Ջուղայի և ուրիշ համայնքներու հիմնադրումէն յետոյ: Այս ժողովուրդէն զգալի հատուած մը, կ'անցնի Պասրա, Պաղտատ և այլուր: Վայելելով պետական և բարձրաստիճան իշխանութիւններուն կողմէ ցուցաբերած բարեացակամութիւնը, Նոր Ջուղայի մէջ հաստատուած հայ ժողովուրդը կը կարողանայ վերակենդանանալ և իր մշակութային և հասարակական գործունէութեան զուգահեռ, վերակենդանացնել նաեւ իր առեւտրական բեղուն կեանքը, տարածուելով ամենուրեք Ասիոյ մէջ, (ներառեալ Իրաքի գլխաւոր քաղաքներ՝ Պաղտատ, Պասրա և Մուսուլ) և Միջերկրականի կարգ մը երկիրներ:

Սակայն, նկատի ունենալով այն պարագան, որ որեւէ հայ համայնքի տնտեսական գործունէութիւնը, մեծապէս փոխկապակցուած է տուեալ երկրի ընդհանուր տնտեսական և քաղաքական վիճակին հետ, հետեւաբար անհրաժեշտ է Իրաքի քաղաքական կեանքի մասին գաղափար մը կազմել, Նոր Ջուղայի հայ վաճառականներուն ժամանումէն շատ առաջ, որը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ:

Պասրան՝ այս վաճառաչահ քաղաքը, հիմնադրուած է 638 թ.: Այն գտնուելով Իրաքի հարաւը և Պարսից ծոցի հիւսիսը կը հանդի-

⁷ A - Manwaring G., The Travels and Adventures of Sir Anthony and Sir Thomas, www.wikipedia.GeorgeManwaring.

B- Wellsted J. R., Travels to the City of Caliphs Along the Shores of the Persian Gulf and the Mediterranean, www.wikipedia.J.R.Wellsted, Volume 1, pp. 274-275.

C.- Geary, G., Narrative of a Journey from Bombay to the Bosphorus, www.wikipedia.GrattanGeary, London, 1878, pp. 222-224.

սանայ Իրաքի միակ նաւահանգիստը և հանգուցակետն է Հնդկաց Ովկիանոսի նաւային բեռնաթափման և փոխանցման դէպի կարաւանային ճանապարհները՝ Պաղտատ, Հալէպ եւ այլն: Իր աշխարհագրական կարելոր դիրքին շնորհիւ, այստեղ կեդրոնացած է առեւտրային կեանքի աշխուժ գործունեութիւն: Հետեւաբար՝ այս յօդուածը կեդրոնացած է առաւելապէս Պասրային մէջ ծաւալուող վաճառականական կեանքին վրայ:

Այս քաղաքը, ինչպէս Աբբասեան Խալիֆայութեան մայրամուտին Իրաքի միւս քաղաքները, շատ անշուք պատկեր մը կը ներկայացնէր մոնգոլական արշաւանքէն (1258 թ.) դեռ շատ առաջ: Երբ Իբն Բատտուտան⁸ 1327-ին կ'այցելէ Պասրա, քաղաքը կը գտնէ աւերակներու մէջ և իր աննշան թիւ կազմող բնակչութիւնը, քաղաքը ներկայ դիրքին տեղափոխելու գործընթացի մէջ էին⁹:

16-րդ դարէն մինչեւ 17-րդ դարու վերջին քառորդը, Իրաքը ինչպէս տարածաշրջանի միւս երկիրները, թատերաբեմը կը դառնայ Սէֆեան Պարսկաստանի և Օսմանեան կայսրութեան միջեւ տեղի ունեցող յաճախակի և արիւնալի բախումներու: Միայն 1699-ին, զանազան քաղաքական իրադրութիւններու հետեւանքով, Օսմանեան կայսրութիւնը կը կարողանայ ժամանակաւորապէս հաստատել իր իշխանութիւնը այս անկառավարելի նահանգին մէջ: Հինգ տարի ետք, Պասրան պաշտօնապէս ենթարկուեցաւ Պաղտատի փաշայութեան, որ երկիրը կառավարելուն համար յենուած էր գլխաւորապէս մամլուքներէն կազմուած իր բանակին վրայ (մամլուքները ընդհանրապէս թուրքական ծագում ունէին)¹⁰: Թէեւ անուանապէս միայն, բայց և այնպէս, Օսմանեան տիրապետութիւնը կը շարունակուի մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմին աւարտը: Սելի դաշնագրով Իրաքը անկախութիւն կը ստանայ, մնալով Անգլիա-

⁸ Յայտնի արաբ ուղեւոր՝ Սոհամմեդ Իբն Աբդուլլահ Իբն Բատտուտահ (1304-1368 կամ 1369): Իր յայտնի աշխատութիւնն է «Իբն Բատտուտայի ուղեւորութիւնները», որուն մէջ կը նկարագրէ իր բազմաթիւ ուղեւորութիւններն աշխարհի զանազան երկիրներ:

⁹ Abdullah A.J.Th., Merchants, Mamluks and Murder, The Political Economy of Trade in Eighteenth-Century Basra, State University of New York Press, 2001, p. 10.

¹⁰ Longrigg H. S., Four Centuries of Modern Iraq, London, 1925, pp. 123-276.

կան մանդատի ներքոյ մինեւ 1932 թ. երբ երկիրը արդէն իբր անկախ պետութիւն, Ազգերու ընկերակցութեան անդամ կ'ընդունուի:

Հակառակ վերոյիշեալ քաղաքական աննպաստ պայմաններուն, երկիրը հարուածող ժանտախտի սոսկալի համաճարակներուն և վատառողջ կլիմային, 18-րդ դարուն իրաք ընդհանրապէս և Պասրան յատկապէս, շարունակեց մնալ Յնդկաց Ռվկիանոսի ամենակարեւոր նաւահանգիստներէն մէկը:

Նոր Ջուղայի հայ վաճառականութեան մասին բազմաթիւ աշխատութիւններ կան, թէ Հայաստանի և թէ արտասահմանի ուսումնասիրողներուն կողմէն, ըլլան հայ, օտար կամ օտարալեզու հայ հեղինակներ: Սակայն, ինչ-ինչ պատճառներով, իրաքի և մասնաւորապէս, Պասրայի հայ վաճառականութեան մասին ուսումնասիրող պատմաբանները կը լռեն կամ հազիւ թէ յիշեն Պասրա կամ Պաղտատ քաղաքներուն անունները իբրեւ տարանցիկ առեւտուրի կեդրոններ¹¹: Սինչդեռ Յարութիւն Տեր Յովհանեանցը կը վկայէ, թէ Նոր Ջուղայեցւոց «Մեծ մասն գնաց ի Բասրա: Անդ ծաղկեցաւ առ ժամանակ մի վաճառականութիւնն Ջուղայեցւոց, որք կալան ընդ Յնդկաստանի գիաղորդակցութիւն տուրելառութեան»¹²:

Ըստ բազմավաստակ գիտնական-պատմաբան՝ Վարդան Գրիգորեանին, պատմաբաններուն մեծամասնութիւնը համաձայն են այն փաստին հետ, որ Սէֆեան իրանի արտաքին առեւտուրը, հայ վաճառականներու մենաշնորհն էր¹³: Սակայն, 1722-ին Սէֆեաններու անկումով և Սպահանի անշքացումով, հայ վաճառականները կը զրկուին իրենց գլխաւոր հովանաւորներէն և կը սկսին գաղթել տարբեր երկիրներ, ինչպէս՝ Երոպա, Յնդկաստան, իրաք եւ այլն: Այնուամենայնիւ, ըստ արաբ պատմաբան Թաբրթ Աբդուլլահի, հայերը շնորհիւ իրենց միասնութեան անզուգական ոգիին, կարողացան գոյատեւել և

¹¹ Օրինակ՝ Յովհաննես Տեր Ռափայան Ջուղայեցու Հաշվետումարը, աշխատասիրութեամբ Լևոն Խաչիկյանի և Հակոբ Փափազյանի, Լազարեան Առեւտրական Ընկերութեան Հաշուեմատեանը աշխատասիրութեամբ Շուշանիկ Խաչիկյանի, Aslanian S., From the Indian Ocean to the Mediterranean The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa և բազմաթիւ այլ աշխատութիւններ:

¹² Ալպոյաճեան Ա., իրաքի հայերը, Երևան, 2003, էջ 98

¹³ Grigorian V., Minorities of Isfahan: The Armenian Community of Isfahan, 1587–1722 In *Iranian Studies*, vol. 7, part 2, nos. 3-4, Summer-Autumn 1974, p. 670.

պահպանել ոչ թե միայն իրենց ինքնուրոյնութիւնը և ազգային միասնականութիւնը, այլեւ ամբողջ 18րդ դարու ընթացքին, իբրեւ առեւտրային համայնք, շարունակեցին մնալ երկու գլխաւոր առաջատարներէն մէկը, միւսը հանդիսանալով հրեայ համայնքը, որը ծեւաւորուած էր դեռ շատ առաջ, նոյնիսկ Իսլամի Միջագետք մուտք գործելէն առաջ: Սակայն, հրեաներու ներկայութիւնն աւելի միասնական և շեշտուած կերպով ի յայտ կուգայ Աբբասեաններու ժամանակաշրջանին հետզհետէ անշքանալով մոնգոլական արշաւանքներու հետեւանքով: Կ'ըսուի, թէ Լենկ Թեմուրը շատ դաժան վարուած է մասնաւորապէս հրեաներուն հետ, երբ 1393-ին արշաւելով Միջագետք՝ կը կործանէ իրենց սինագոգները և կոտորել կուտայ համարեայ բոլորին¹⁴:

Ուրեմն՝ 1605-էն ի վեր, հայերը գաղթած են Իրանէն Պասրա և հետզհետէ աճելով՝ կազմած են բարգաւաճ գաղութ մը, վարելով առեւտրային շատ բեղուն գործունեութիւն: Մասնաւորապէս 1722-ին, երբ աֆղանները գրաւեցին Սպահանը, Նոր Ջուղան բոլորովին դատարկուեցաւ և այս առթիւ ալ հեռացողներուն կարեւոր հատուած մը՝ Պասրա անցաւ¹⁵:

Այս փախստականներէն՝ Գեորգ Պասրացի եպիսկոպոսն իր անխոնջ գործունեութեամբ, կը յաջողի Ս. Ամենափրկչեան վանքին յափշտակուած անօթները ետ առնել և ապաստանիլ Պասրա, ուր նստած կը վարէր Նոր Ջուղայի առաջնորդութիւնը: «...Պարսկաստանի նոր տիրակալ Քերիմ խան կը փորձէ փախստական հայերը ետ դարձնել, ուստի 1771-ին Նոր Ջուղայի քալանթար Սարգիսին կը յանձնարարէ յորդորել ջուղայեցիներուն ետ դառնան, սակայն անօգուտ: Քերիմ խան զայրացած 1775-ին կը պաշարէ Պասրան և, զայն սովի մատնելով, անձնատուութեան կը հարկադրէ: Պասրա անձնատուր կ'ըլլայ 1776-ին Չատկի օրը: Կը ձերբակալուի աղա Յարութիւն Խալդարեանցը՝ որդի աղա Էմնիագի (զոհ Նադիր շահի), որ պաշարման միջոցին ժողով կը գումարէ ջուղայեցի իշխաններով և վաճառականներով, և գումար հանգանակելով՝ կը հոգայ կարօտեալները: Իրեն հետ կը ձերբակալուին նաեւ իր որդին՝ Ստեփաննոսը և երկու

¹⁴ Abdullah A.J.Th., նշուած աշխ., էջ 95:

¹⁵ Ալպոյսճեան Ա., նշուած աշխ., էջ 98:

հայ նշանաւոր առեւտրականներ, որոնք նոյնպէս օգնած էին չունեւորներուն»¹⁶:

Պասրայի մէջ հաստատուած հայ վաճառականները, շատ կարծ ժամանակուայ ընթացքին, ընտելանալով նոր միջավայրին, աշխուժօրէն կը շարունակեն իրենց գործունեութիւնը և կը սկսին մրցիլ և թրեւս գերազանցել իրենց տեղն արդէն վերագտած տեղացի հրեայ վաճառականներուն, որը տեղի կուտար երկու համայնքներուն միջեւ բազմաթիւ անախորժ միջադէպերու: Թաբըթ Աբդուլլան, իր վերոնշեալ աշխատութեան յառաջաբանը կը սկսի հետեւեալ դէպքի նկարագրութեամբ: «...1791-ի Մարտ 22-ի երեկոյեան, Պասրա քաղաքի ծայրամասին գտնուող աղբանոցին մէջ, տղամարդու դիակ մը կը յայտնաբերուի, որուն արտաքինէն արդէն յայտնի էր իր ոչ հասարակ դասուն պատկանող ըլլալը: Երկար ժամանակ չի պահանջուիր, ճշդելու գոհի ինքնութիւնը ... Սալլում անունով մեծահարուստ հրեայ վաճառական մըն էր և իր սպաննութեան համար կը մեղադրուէր ամբողջ հայ համայնքը: Հրեայ համայնքի պահանջով, որոնց առաջնորդն էր Պասրայի մէջ շատ յայտնի և ականաւոր անձնաւորութիւն մը՝ Խօճա Աբդուլլահի Իբն Եուսուֆ, բազմաթիւ հայեր կը ձերբակալուին: Հրեաները կը հովանաւորուէին թուրք մութասալլըմին կողմէն, իսկ հայերուն զօրաւոր կերպով կը պաշտպանէր Արեւելա-Հնդկական Ընկերութեան¹⁷ անգլիացի ներկայացուցիչ՝ Մանեսթին»¹⁸:

18-րդ դարու սկիզբը, հայ վաճառականական համայնքը, բոլոր հաշիւներով անհամեմատ աւելի հարուստ, բարեկեցիկ և ազդեցիկ էր, քան Պասրայի մէջ գտնուող մնացեալ «դիմմըն»¹⁹ համայնքները: Ըստ Թաբըթ Աբդուլլահի, օտար ուղեւորներէն Նիյբուրը՝ իր ուղեւորական յուշերու մէջ, հազուադէպօրէն կը յիշէ հրեայ համայնքը, բայց

¹⁶ Նոյն տեղը:

¹⁷ حسين محمد القهواتي (تور البصرة التجاري في الخليج العربي 1869 - 1914) جامعة البصرة - مطبعة الارشاد - بغداد 1980 صفحة 40

(Ըլ-Կահուաթի Մ.Հուսէյն, Պասրայի տնտեսական դերակատարութիւնը Արաբական ծոցին մէջ 1869-1914, Ըլ-Իրշադ Տպարան, Պաղտատ, 1980, էջ 40):

¹⁸ Abdullah A.J. Th., նշուած աշխ. էջ 1-2:

¹⁹ «Դիմմըն» համայնքներ կը կոչուին այն փոքրամասնութիւնները, որոնք, կը գտնուին պետութեան հովանաւորութեան ներքոյ:

բազմիցս կ'ընդգծե հայերու ունեցած դերի կարեւորութիւնը Պասրայի վաճառականական կեանքին մէջ²⁰։

Հիշատակութեան արժանի է, որ Արեւելա-Յնդկական ընկերութիւնը, Պասրայի գրասենեակի գործունէութիւնն աւելի արդիւնաւետ դարձնելու համար, կ'որոշէ իր մօտ աշխատող երիտասարդ պաշտօնեաներուն դրկել Սպահան, որպէսզի մնալով հայ վաճառականներու տուներուն մէջ, իւրացնեն վերջիններուն ճարպիկ գործելակերպը, նմանապէս սորվին Հայերէն և Պարսկերէն լեզուները որոնք ամենագործածուող լեզուներն էին այդ տարածաշրջանի առեւտրային կեանքին մէջ²¹։ Վերոյիշեալ ընկերութիւնը գործակալական գրասենեակ մը կը հիմնէ Բանդար Աբբասին մէջ, որտեղ առեւտրատնտեսական գործունէութիւն կը ծաւալէր ամբողջ մէկուկէս դար։ 1723-ին Պասրայի մէջ կը հիմնադրէ «ժամանակաւոր» նոյնանման գրասենեակ, որը հետագային Իրանի քաղաքական դրութեան վատթարանալու հետեւանքով, Բանդար Աբբասի գրասենեակը 1763-ին Պասրա կը տեղափոխէ և մնայուն կեդրոն կը դառնայ։ 1822-ին գրասենեակը կը շարունակէ իր գործունէութիւնը, սակայն իբր սոսկ ներկայացուցչութիւն վերոյիշեալ ընկերութեան, ներկայացուցիչն ալ Բարսեղ անունով տեղացի հայ վաճառական մըն էր, որ այս գործը շարունակեց մինչեւ 1851 թուականը։

Վարդան Գրիգորեանը, իր վերոյշեալ աշխատութեան մէջ կը նշէ, որ Պասրայի մէջ անգլիացիներու ամենագօրաւոր դաշնակիցները հայերն էին։ Սակայն 17-րդ դարուն, հայ վաճառականներն ամենամեծ խոչնդոտը կը համարուէին եւրոպացիներուն Պասրա ներթափանցման։ «Անոնք, -կը շարունակէ Գրիգորեանը,- կատաղի մրցակիցներն էին անգլիացի և հոլանդացի վաճառականներուն և առեւտրային ընկերութիւններուն»²²։ Սակայն մրցակցութիւնը աստիճանաբար տեղի կուտայ համագործակցութեան, յատկապէս Սեֆեաններու անկումէն ետք։ Հայ վաճառականները հետամուտ էին լիոխզիջման,

²⁰ Abdullah A.J. Th, նշուած աշխ. էջ 88։

²¹ الدكتور عبد الأمير محمد امين المصالح البريطانية في الخليج العربي (1747 - 1778) مطبعة الارشاد - بغداد 1977
صفحة 26 (Sogp. Արդուլ էմիր Մուհամմըդ Ըմին, Անգլիայի շահերը Արաբական ծոցին մէջ, 1747-1778, Ըլ-Իրշադ տպարան, Պաղտատ, 1977, էջ 26)։

²² Grigorian V., նշուած աշխ., էջ 671։

հասնելու համար անգլիացիներու պաշտպանութեան: Իր գեկուցման մէջ, անգլիացի ներկայացուցիչը կը հաստատէ, որ անկարելի է վաճառականական գործունեութիւն ծաւալել առանց տեղացի ժողովուրդին օժանդակութեան: Երբ Խօջա Պետրոս Դի Գրիգորը, որը Պասրայի ամենակառկառուն հայ վաճառականներէն մէկն էր, 1754-ին մուսուլման ստրուկ պահելու պատճառով կը ձեբարակալուի, անգլիացի ներկայացուցիչը ամէն ջանք ի գործ կը դնէ իր ազատ արձակման համար²³:

17-րդ դարու ամբողջ տելողութեան և 18-րդ դարուն սկիզբը, հայ վաճառականներու մասնակցութիւնը Օսմանեան-Սէֆեան առելտուրին, կը կայանար մասնաւորապէս Պարսկական մետաքսի առելտուրի ղեկավարման մէջ, որուն կը տիրապետէին շատ հմուտ և արհեստավարժ կերպով²⁴: 1773-էն առաջ, Օսմանեան Կայսրութեան և Պարսկաստանի առելտրական բոլոր կեդրոններուն մէջ, Պասրան կ'առանձնանար իր մեծահարուստ պարսիկ, հայ, հնդիկ, արաբ և հրեայ վաճառական բնակչութեամբ, որոնց առելտրային գործունեութիւնը կը տարածուէր Յնդկաստանի, Պարսկաստանի, Օսմանեան Կայսրութեան և Եւրոպայի միջեւ Միջերկրականի ուղիով: Այս աշխուժ առելտրային կեանքը, վերջ կը գտնէ 1773-ին, քաղաքը հարուածող ժանտախտի հերթական համաճարակով: Ըստ 1775 թ. մարդահամարին, Պասրայի մէջ հայ վաճառականներուն թիւը նուազած էր մինչեւ 30-ը²⁵:

Աշին Դաս Գուլիթա կը նշէ, որ Սուրաթի հայ վաճառականներն ակտիւ կերպով կը գործակցէին Պասրայի հայ վաճառականներուն հետ²⁶: 18-րդ դարուն Յայկական նաւերը կանոնաւոր կերպով կը նաւարկէին Յնդկաստանի և Պասրայի միջեւ: 17-րդ և 18-րդ դարերուն Պասրայի և Յնդկաստանի հայ վաճառականները իրարու հետ փո-

²³ Abdullah A. J. Th., նշուած աշխ., էջ 110:

²⁴ Նոյն տեղը:

²⁵ حامد البازي (البصرة في الفترة المظلمة وما بعدها) بغداد 1969 صفحة 108

(Համըղ Ըլ-Բազի, Պասրան Խաւար Ժամանակաշրջանին և Ետջը, Պաղտատ 1969, էջ 108): Այստեղ, հեղինակը «խաւար» բառը օգտագործած է 1538-1914 ժամանակաշրջանին համար, այսինքն Օսմանեան տիրապետութենէն մինչեւ Պասրայի գրաւումը անգլիացիներուն կողմէն:

²⁶ Ashin Das Gupta, Indian Merchants and the Decline of Surat, Manohar Publishers and Distributors, 1994, p. 136.

խաղարծ վաճառականութեամբ կը զբաղէին, որոնց սեփական նաւերը, ինչպէս «Փաղրոնի», «Սանթա Բրոչէ», «Սանթա Բրուզ», «Յոփուել», «Սենթ Սայքըլ», «Արշակ» եւ այլն, կը գործէին Պասրայի և Յնդկաստանի ջուրերուն վրայ՝ Պարսից ծոցի ուղիով: Այս նաւերը կը խարսխէին ի Սեննավի, Շաթ-իւ-Արաբ գետը, ուրիշ օտարազգի նաւերու կողքին²⁷: Սակայն սոյն դարու կեսերուն, հայ վաճառականները իրենց թանկարժէք բեռները փոխադրելու համար առաւելապէս կ'օգտագործէին անգլիական նաւերը: Օրինակի համար անգլիական Դըրք (Drake) նաւի մարգարիտի վեցը բեռներէն հինգը՝ կը պատկանէր հայ վաճառականներուն²⁸:

Ի լրումն այս գործարքներուն (իմա Յնդկաստանի և Պասրայի միջեւ), Պասրայի վաճառականները շատ զօրաւոր առեւտրային կապեր ունէին Յալէպի մէջ ապրող իրենց ցեղակից և կրօնակից վաճառականներուն հետ: Ամբողջ 17-րդ դարուն և 18-րդ դարու առաջին կեսին, Պասրա հաստատուած Նոր Ջուղայի վաճառականները կը ներկայացնէին ամենակարելոր և ամենանշանակալից առեւտրական համայնքը Յալէպի մէջ: Վերջիններու հարստութեան և բարեկեցութեան գլխաւոր աղբիւրը կը հանդիսանար այնքան եկամտաբեր Պարսկական մետաքսի առեւտուրը: Սակայն 18րդ դարու երկրորդ կեսին, այս առեւտուրի անշքացումով, Յալէպի հայ վաճառականներն իրենց գործունէութեան ուղղութիւնը փոխեցին դէպի կարաւանային առեւտուրը Պասրայի հետ, որը Յալէպը կը կապէր Յնդկաստանին: 1768-ին Ֆրանսական զեկուցման մը մէջ, հայ վաճառականները գլխաւոր դերակատարները կը հանդիսանային կարաւանային առեւտուրի մէջ, որուն ամբողջապէս կը տիրապետէին²⁹:

Հայ վաճառականներուն գործարար ոգիի մասին, տեղին է յիշել նաեւ էմանուել Կանտի խօսքերը, մէջբերուած, հովհաննէս Տեր Դավթեան Ջուղայեցու հաշվետումարըն աշխատութենէն, «... Միւս քրիստոնեա ժողովրդի՝ հայերի մոտ,- գրում է նա,- տիրապետում է առանձնայատուկ գործարար ինչ-որ ոգի: Նրանք զբաղվում են փոխա-

²⁷ Սելջոնեան Վ., նշուած աշխ., էջ 64:

²⁸ Abdullah A.J. Th., նշուած աշխ., էջ 96:

²⁹ Նոյն տեղը:

նակութեամբ՝ հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչեւ Գվինեայի ափերին գտնվող Կորսո հրվանդանը: Այդ հանգամանքը ցույց է տալիս յուրահատուկ ծագումը խելամիտ ու աշխատասեր այդ ժողովրդի, որը շարժվելով հյուսիս-արեւելքից հարավ-արեւմուտք, կտրում անցնում է հին աշխարհի ողջ տարածքով և կարողանում է սիրալիր ընդունելութիւն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց մօտ լինում է այցելութեամբ»³⁰:

Այսպէս, Հնդկաստանի մեծահարուստ վաճառականները յարաբերութեան մէջ էին Պաղտատի և Պասրայի վաճառականներուն հետ, և մեծ օժանդակութիւն կը ցուցաբերէին վերջիններուս եկեղեցի կառուցանելու նուէրներով և կտակներով: Այս նուիրատուներու մէջ յատկապէս յիշատակութեան արժանի է մեծահարուստ վաճառական Յարութիւն Աբգարեանը³¹: Նմանապէս Աղա Պետրոս Սեթ Աղայեանը, մեծահարուստ և ականաւոր առետրականը, որուն ծախքերով, 1736-ին կառուցուած է Պասրայի հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցին: Չանազան բարերար ազգայիններու կողմէն 1832-ին, եկեղեցիին կտակուած են մեծ տարածութեամբ պարտէզներ և քանի մը անշարժ գոյքեր: 1904-ին հնադարեայ այս եկեղեցին բոլորովին աներակ վիճակի մատնուելով, տեղւոյն թաղական խորհուրդը կը ձեռնարկէ անոր վերաշինութեան, նախապէս ունենալով Պոլսոյ պատրիարքարանի արտօնութիւնը: Եկեղեցին կը վերանորոգուի մէկ ուրիշ մեծահարուստ վաճառական՝ Աղա Բարսեղ Օհաննէս Գասպարեանի կողմէն:

1854-ին, Պաղտատցի մեծահարուստ վաճառական կալուածատէր՝ Մահտեսի Մարկոս որդի Մահտեսի Իսքէնտէրի, իր «սեփականութիւնը եղող ամբողջ պարտէզը, որ կը պարունակէր արմաւենիներ, պտղատու և այլազան ծառեր, նաև վերոյիշեալ կալուածին մաս կազմող արեւմտեան կողմը, որ կը կոչուի Ում Իլ Ատամ (Մայր Ոսկերաց) 1800 տէօնիւն տարածութեամբ, կը կտակէ որպէս կատարեալ և շարի վագըՖ յաւիտեան յաւիտենից յատկացուելու համար Պաղտա-

³⁰ Հովհաննէս Տէր Ղազարեանի Զուղայեցու Հաշուտումարը, աշխատասիրութեամբ Լ. Իսաչիկեանի և Գ. Փափագեանի, Երեւան, 1984, էջ 30 (տողատակ 53):

³¹ Աճառեան Գ., Հայ գաղթավայրերու պատմութիւն, էջ 202-203:

տաբնակ հայ, ինչպես նաև ուրիշ երկիրներէ եկած հայ աշխատողներու և դպրոցներու մէջ բնակող հայ անհատներու, յանուն Աստուծոյ»³²: Ինչէն իմանար այս ազնուահոգի հայորդին, որ համարեայ կէս դար վերջ, Վասպուրականցի 500է աւելի իր ազգակիցները, Յեղասպանութենէն ճողոպրած, պիտի հանգրուանէին իր կողմէն ազգին կտակած, հենց այս հողամասին վրայ³³: Այնումենայնիւ, Պաղտատի կեդրոնը և Տիգրիսի ափին գտնուող այս հողամասը, զանազան դատակւսն փուլերէ անցնելէն յետոյ, 1968-ին, գրչի մէկ հարուածով, Յեղափոխական Ղեկավարութեան խորհուրդը կը գրաւէ Ում Իլ-Ադամի բոլոր կալուածը և կը յատկացնէ պաշտպանութեան նախարարութեան և պետական նաֆթի զտարաններուն: Այսպէսով, վերջ կը դրուի Ում Իլ-Ադամի 1854-ին կտակարար մահտեսի Սարկոս Իսքէնտէրեանի ըրած կտակին:

Քաղաքական զանազան վերիվայրումները և համաճարակներու յաճախակի մոլեգնումը Իրաքի կարգ մը քաղաքներուն մէջ, մասնաւորապէս Պասրա քաղաքին մէջ, կը տկարացնէ հայ վաճառականներուն առեւտրային գործունութիւնը, որը յաջորդող տարիներուն մեծապէս կը տուժէ և կ'անշքանայ: Ժանտախտն Իրաքի մէջ պատահած է բազմաթիւ անգամներ, խլելով բազում կեանքեր: Առաջին անգամ 784-ին, ապա 872-ին, 1771-1772-ին, 1773-ին, 1831-1832-ին: Վերջին համաճարակը, ըստ Իրաքահայ պատմագետ Դաւիթ Թադէոսեանին՝ այնքան սաստիկ եղած է, որ Պասրայի և Պաղտատի բնակչութեանց կէսը զոհ կ'երթայ այս մահաբեր հիւանդութեան, երկու քաղաքներն ալ դատարկ ձգելով:

Վերոյիշեալ աղէտներու պատճառով Պասրայի և Պաղտատի հայոց թիւը հետզհետէ պակսեցաւ: Ընդհանուր պատերազմէն առաջ անոնց թիւը շատ չնչին էր: Ըստ Դաւիթ Թադէոսեանին՝ 1900-ին Պաղտատ բնակող հայ վաճառականներու թիւը երկու տասնեակը չէր անցներ: Իսկ Պասրա բնակող հայազգի վաճառականներուն թիւը 1840-ին, միայն չորսն էր³⁴: Իր յուշերուն մէջ հետեւեալ տողերը կը կարդանք. «... Պաղտատի քանի մը խաներուն մէջ տասնեակ մը աչ-

³² Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, Պաղտատ, 2005, էջ 207-208 (անտիպ):

³³ Վարդանեան Ե., Անապատ Անապատ, Վենետիկ, 1923, էջ 9:

³⁴ Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, էջ 348:

քառու վաճառականներ կը գործէին, որոնք բարձր վարկ կը վայելէին առետրական շրջանակներուն մէջ...» առանց յիշելու որեւէ անուն³⁵:

Յայտնի են հետեւեալ հայ առետրական տուները, որոնց անունները քաղած ենք տեղական արաբական զանազան պարբերականներէ:

Խաչիկ Ըլ-Ըրմընի (Հայ Խաչիկ Առետրական տուն), որը մեծահարուստ հայ ընտանիքներէն էր, մեծ կալուածատէր և նախապապն էր հռչակաւոր գեղեցկուհի Սառա Ջընգինին, որու պատմութիւնը յայտնի է Իրաքի ժողովուրդին: Հայ թէ օտար, իր հայուհիի բարոյական կերպարով և անկոտրում կամքով դիմակայելու Պաղտատի Վալի՝ Նադըմ փաշայի ոտնձգութիւններուն³⁶:

Պաղտատար առետրական տուն – կը զբաղուէր հացահատիկի և արմաւի առետուրով: Յարաբերութեան մէջ էր Պաղտատի Հեքթոր անունով ընկերութեան հետ: Այս առետրական տունը բազմաթիւ տեղական առագաստանաւեր ունէր, որոնք կ'օգտագործէր ներքին գետային փոխադրութեան համար³⁷:

Մեսրոպեան ընտանիք, կալուածատէր, արմաւենիներու և տարատեսակ մրգատու պարտէզներու տէր: Երկար ժամանակ այդ շրջանը իր անունով կը կոչուէր:

Կը յիշուի նաեւ Մկրտիչ և ընկերներ անունով ընկերութեան մը մասին, որու գործունէութիւնը սայլերու առետուրի մէջ կը կայանար³⁸:

19-րդ դարու վերջին քառորդին և 20-րդ դարու առաջին կէսին, հայ յայտնի վաճառականներէն, որոնք մեծ ներդրում ունեցած են գաղութին զարգացման, իրենց ազգային բարեսիրական գործունէու-

³⁵ Թադէոսեան Դ., Նիւթեր Իրաքահայ Պատմութեան համար, յուշերէս հատուած մը, Ա. «Գոյամարտ» շաբաթաթերթ, Բ. Տարի, թիւ 15-67, Հինգշաբթի, 16 Փետրուար 1950:

³⁶ النصر في اخبار البصرة – للقاضي احمد نور الاتصاري (تقرير قدمه سنة 1277 هجرية الى منيب باشا والي البصرة – تحقيق قدمه الدكتور يوسف عز الدين – جامعة بغداد 1976

(Ձեկոյց՝ Կադի Ահմըդ Նուր Ըլ-Ընսարիի կողմէն, 1857-ին – (1277 Հիջրեթ իսլամական տարեթիւ) ներկայացուած Պասրայի վալի Սունիթ փաշային, հետաքննութիւն՝ Согр. ԵուսըՖ Ըզըլ-դին, Պաղտատի Համալսարան, 1976):

³⁷ حسين محمد القهواتي – نفس المصدر صفحة 296

(Հուսէյն Սուհամմըդ Ըլ-Կահվաթի, նշուած աշխ., էջ 296):

³⁸ حامد البازي نفس المصدر صفحة 142 (նշուած աշխ., էջ 142):

թեամբ, արժէ յիշել հետեւեալները, որոնց յիշատակը վառ կը մնայ Իրաքահայ գաղութին յիշողութեան մէջ:

Սիմոն Մկրտիչ Ղարիպեան ծնած է Պաղտատ 17 Փետրուար 1878-ին: Պասրայի մէջ առեւտրական տուն մը ունեցող և Պելճիքայի պատուոյ հիւպատոս՝ Երուանդ Դերվիշեանի հետ կը գործակցի: Վերջինս, Ռուսիայէն՝ Օտեսայէն Պասրա տախտակ, քարիւղ և այլ ուրիշ ապրանքներ կը ներմուծէր: Դերվիշեանի Եւրոպա վերադառնալէն ետք, անոր առեւտուրի գործը և Պելճիքական հիւպատոսութիւնը Սիմոն Ղարիպեանին կը փոխանցուի: Այսպէս՝ իր գործունեութիւնը ընդարձակելով, իր ճիգերուն, ձեռներեցութեան և ապահոված վարկին շնորհիւ, շատ փայլուն վերելք մը կ'ունենայ, դառնալով միջազգային շուկաներու մէջ հանրածանօթ անձնաւորութիւն մը: 1896-ին, Պասրայի մէջ կը հիմնէ «Սիմոն Ղարիպեան Առեւտրական Տուն»-ը, մասնաճիւղեր ունենալով Իրաքի զանազան քաղաքներուն մէջ³⁹: Կը զբաղի ներածման և արտածման առեւտուրով, ներածելով ատաղձ, երկաթ, կրաղիւս, եւրոպական խմիչքներ, անգլիական ծխախոտ եւ այլն: Իսկ արտածումը կ'ըլլայ Իրաքեան արմաւը, որուն համար յատուկ գործարան մը կը հաստատէ Պասրայի մէջ: Հետագային, ներկայացուցիչն էր եւրոպական մէկէ աւելի նաւային ընկերութիւններու: Ուրիշ առեւտրական՝ Իսքանդար Մարգարեանի հետ կը հիմնէ Բամպակի Սերմի և Բուսական Ձէթի գործարաններ: Յետագային (1963) երկու գործարաններն ալ կը պետականացուին⁴⁰: Վերջինս, 1947-ին Իրաքի խորհրդարանի անդամ կ'ընտրուի իբրեւ Իրաքի բոլոր քրիստոնեաներու թեկնածուն, որը բացառիկ պարագայ մըն էր: Եղած է նաեւ «Պաղտատի առեւտրականներու ընկերակցութեան» վարչութեան անդամ, 1939-ին մասնակցած է Իտալիոյ մէջ գումարուած առեւտրական միջազգային համաժողովին, իսկ 1946-ին ալ Նիւ Եորքի մէջ գումարուած առեւտրական միջազգային խորհուրդին: Եղած է ազգային զանազան մարմիններու անդամ և Հ.Բ.Ը.Միութեան վարչութեան անդամ:

³⁹ Նոյն տեղը, էջ 113:

⁴⁰ Samira Haj, *The Making of Iraq*, University of New York, 1997, p. 65.

Սիմոն Ղարիպեանի անունը անդառնալիօրէն հիւսուած է Իրաքի գաղութին ներքին կեանքին հետ, իր անթիւ բարեգործութիւններով, դպրոցաշինութեամբ, որբահաւաքով և եկեղեցաշինութեամբ:

Յակոբ և Քերոբ Գույումճեան եղբայրներ՝ մեծահարուստ կալուածատէրեր և առետրականներ: Ծնած են Թալաս՝ Թուրքիա, առաջինը 1842-ին, երկրորդը՝ 1848-ին: Առաջինը մտած է առետրական ասպարէզ Կարնոյ մէջ և իբրեւ գործակից Կիւլպենկեան տան անցած է Տիարպէի, զոր վարած է կէս դար: Հայ ազգային գետնի վրայ, երկար ժամանակ եղած է ազգային իշխանութեան ատենապետը, օժանդակած է Տիարպէիի Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերաշինութեան շօշափելի նուիրատուութեամբ, 1895-96 թրականներու ջարդերէն ազատուած բազմաթիւ հայեր ապաստան գտած են իր տան մէջ⁴¹:

Պաղտատ փոխադրուելուն, հոս եւս հայ համանքը զինքը կ'ընտրէ ազգային իշխանութեան անդամ և կը մնայ անդամ մինչեւ իր մահը: Պասրայի Ս. Աստուածածին հայոց կիսաւեր եկեղեցին վերանորոգելու պետական արտօնութիւն առնելու արգելքը, անձամբ Պասրա երթալով, կը յաջողի վերցնել տալ: 1903-ին Պաղտատի հայոց գերեզմանատան համար ընդարձակ հողամաս մը կը գնէ և զայն ցանկապատելու պարտականութիւնը Քերոբը յանձն կ'առնէ եղբօր մահուրնէ յետոյ:

Քերոբը մեծ համբաւ ու հռչակ ունեցաւ որպէս նշանաւոր վաճառական և գործակիցը Կիւլպենկեան տան: Կիւլպենկեան տան յանձնարարութեան վրայ, Պաղտատէն Ք. Գույումճեանը կը դրկըրի Վան, օգնելու Խրիմեան Հայրիկին. արմտիք և դրամ բաժնելու սովէն տուած ժողովուրդին⁴²:

Գույումճեանները ընդարձակ ազարակ մը ունէին Ֆելլուճա (Պաղտատի և Թիքրիթի միջեւ) քաղաքին մէջ, ուր Իրաքի Ֆէյսալ Ա. Թագաւորը քանիցս այցելութեան գացած է⁴³:

Վերոյիշեալ վաճառական-արդիւնաբերող-բարեգործ հայորդիները, մէկ փոքր մասնիկն են առետրական այն մեծ ընտանիքին՝ որոնք 17-րդ դարէն սկսեալ գործեր են Իրաքի հիւրնկալ երկնակա-

⁴¹ Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, էջ 276:

⁴² Նոյն տեղը:

⁴³ Նոյն տեղը:

մարին ներքոյ, ի շահ իրենց ժողովուրդին, մեծ և շօշափելի ներդրում ունենալով այս երկրի առևտրա-տնտեսական ընդհանուր վերելքին, արժանանալով իրենց հարազատ ժողովուրդին և պետական շրջանակներուն՝ անվերապահ համակրանքին և յարգանքին:

SEDA OHANYAN

ARMENIAN MERCHANTS' ACTIVITIES IN IRAQ IN THE XVII-XIX CENTURIES

SUMMARY

Because of its important geographical location, Mesopotamia has always been the center of attention of the great powers throughout its history. Basra's location at the northernmost of the Persian Gulf was ideal as a transit area in East-West trade, thus, it has occupied was, in ancient and medieval times, as well as at the present, its special place in the international trade history.

Though Armenian trade community present in Mesopotmie during centuries, nevertheless its role was most dominant in the 17th and 18th centuries. These merchants contributed greatly in the development of Iraq's economy. Rightfully winning being favored with admiration of their own people and the official circles.

АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В ИРАКЕ В XVII-XIX ВЕКАХ

РЕЗЮМЕ

Благодаря своему географическому положению, Месопотамия в прошлом и в настоящем была в центре внимания великих держав. Связывая запад и восток, эта часть мира на севере Персидского залива со своей гаванью Пасра, как в античные времена, так и в средневековье и в настоящее время имеет свое особенное место в истории торговли.

Несмотря на то, что в Месопотамии армянское купечество имело на протяжении веков, но значимую роль сыграла в 17-ом и особенно в 18-ом веке. Сыграв значимую роль в экономической жизни армянской общины, армянское купечество имело большой вклад в общем торгово-экономическом развитии Ирака, поправу завоевывая расположение и родного народа и государственных кругов.

ՀԱՄԻՂՅԱՆ ՋԱՐԴԵՐԻՑ ՓՐԿՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1890-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

1890-ական թթ. կեսերին Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում Աբդուլ Համիդ II-ի իրականացրած հայության զանգվածային ջարդերը հանդիսանում են Հայոց ցեղասպանության քաղաքականության առաջին փուլը, որին զոհ է գնացել շուրջ 300.000 հայ¹:

Սուլթանական կառավարության իրականացրած ոճրագործությունն առաջացնում է ժամանակի առաջադեմ գործիչների բուռն բողոքը: Կատարվում են հանգանակություններ և նվիրատվություններ ջարդերից փրկված արևմտահայությանն օգնելու համար:

Ըստ «Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ» (այսուհետև՝ «Եղբայրական օգնությունը») ժողովածուի տվյալների, միայն 1896 թ. փետրվարի դրությամբ Փոքր Ասիայում կողոպտվել և ավերվել էր 39.749 տուն, 7942 խանութ, սպանվել 37.085 քրիստոնյա, 938 մահմեդական, 40.950 հայ բռնի մահմեդականացվել էր: 290.300 հայ հարկադրված լքել էր հարազատ վայրերը²:

Ջգալի թվով փախստականներ ապաստանում են Կովկասի փոխարքայությունում՝ գլխավորապես Երևանի նահանգում:

Ջարդերից փրկված արևմտահայ փախստականների մի հոծ զանգված ճանապարհին ենթարկվելով անասելի զրկանքների և տառապանքների, քրդական զանազան ցեղերի հարձակումների³, անցավ Ռուսական կայսրություն: Արևելյան Հայաստան հասած փախստականներն իրենց անվանում են «դժոխքից արքայութիւն

¹ Մանրամասն տես Հայոց պատմություն, հ. 3, Գիրք I, նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 506–520, 527–544:

² Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ, Москва, 1897, с. 6.

³ Մանրամասն տես «Երկիր», Թիֆլիս, 11 օգոստոսի 1906 թ., № 33:

մտնողներ»⁴: Ըստ «Մշակ»-ի տվյալների՝ 1896 թ. Արևելյան Հայաստանում և փոխարքայության հայաբնակ վայրերում ապաստանել էր 11 հազար արևմտահայ փախստական⁵:

Ուսումնասիրելով Ռուսական կայսրություն հասած արևմտահայերի սոցիալական կազմը, նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի:

I խմբում գտնվում էին նրանք, ովքեր տեղեկանալով կամ կանխազգալով մոտալուտ արհավիրքը, հասցրել էին վաճառել գույքը և որոշակի գումար ունենալ: Նրանք ի գորու էին տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների, հարազատների ու մերձավորների համար: Այս խումբը կազմում էր փախստականների փոքր մասը՝ գլխավորապես արհեստավորներ և առևտրականներ:

II խումբը՝ փախստականների ճնշող մեծամասնությունը, հիմնականում հողագործներ էին և զրկված էին գոյության ամենատարրական միջոցներից:

Հայ հասարակական, հոգևոր և քաղաքական շրջանակների համար առաջնահերթ և հրատապ խնդիր էր փախստականների ստվար զանգվածի օգնության կազմակերպումը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը (1820–1907) իր ուժն ու եռանդը ներդրեց արևմտահայությանն օժանդակելու համար: Կաթողիկոսը կոչով դիմեց ողջ հայությանը՝ օգնելու տարաբախտ հայրենակիցներին⁶:

Արևելյան Հայաստանում արևմտահայ փախստականներին օգնելու գործը կազմակերպողների թվում էր Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ):

Արևմտահայ փախստականները հնարավորության դեպքում փորձում էին հաստատվել Վաղարշապատում կամ շրջակա գյուղերում, որպեսզի մոտիկ լինեն Ս. Էջմիածնին՝ ակնկալելով, որ կաթո-

⁴ «Մշակ», Թիֆլիս, 17 դեկտեմբերի 1896 թ., № 152:

⁵ Նույն տեղում:

⁶ Օգնության մասին մանրամասն տես *Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ*, Москва, 1897, «Տարազ», Թիֆլիս, 24 մարտի, 1896, № 12, էջ 195, Հայոց պատմություն, հ. 3, գիրք I, էջ 548:

ղիկոսն առաջին հերթին կօզնի հոգևոր կենտրոնի մերձակայքում ապաստանածներին:

1896 թ. ամռանը Վաղարշապատ է հասնում փախստականների առաջին խումբը՝ 42 ընտանիք, որոնք զրկված էին գոյատևման տարրական միջոցներից: 26 ընտանիք տեղավորում են Վաղարշապատում, իսկ 16-ը՝ Էջմիածնի վանքի գոմում⁷: Վերջինների թվում կային նաև տարափոխիկ հիվանդություններով տառապողներ, և գոմում տիրող հակահիգիենիկ ու հակասանիտարական վիճակը նպաստում է հիվանդությունների խորացմանն ու տարածմանը:

1896 թ. օգոստոսի 3-ին ԿՅԲԸ Վաղարշապատի վարչությունը, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, որոշում է շտապ միջոցառումներ ձեռնարկել: Բժիշկ Սաժումյանը հանձն է առնում ամենօրյա այցելություններով քննել ու բուժել հիվանդներին:

Վարչությունը քայլեր է ձեռնարկում աշխատունակ տղամարդ փախստականների համար աշխատանք գտնելու համար: Ընդհանրապես, բոլոր բարեգործական կազմակերպությունները ձգտում էին աշխատանքով ապահովել փախստականներին, որպեսզի նրանք ոչ միայն հնարավորություն ունենային ապահովել իրենց ընտանիքների կեցությունը, այլ չսովորեին ապրել բացառապես նպաստների և օգնության հաշվին: Վարչությունը որոշեց աշխատունակներին ներգրավել այգեգործական, իսկ կանանց ու աղջիկներին՝ բամբակ հավաքելու աշխատանքներում⁸:

Սակայն զգալի թվով փախստականներ անաշխատունակ էին, տկար, հիվանդ, գտնվում էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում: Ինչպես վկայում է «Մշակ»-ի թղթակիցը, «Բոլոր գաղթականները համարեա առանց բացառութեան կարոտ են հագուստի և անկողնու... Բացի դրանից նրանք բոլորը զուրկ են բնակարանից, վառելիքից և սննդից...»⁹:

1896 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին աճում է փախստականների թիվը: Այդ մասին հաղորդելով՝ «Արարատ» ամսագիրը 1896 թ.

⁷ Լեօ, Երեսնամեակ Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում 1881–1911, Թիֆլիս, 1911, էջ 189:

⁸ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 108 շրջ.:

⁹ «Մշակ», 11 հունվարի 1897 թ., № 4:

սեպտեմբեր ամսվա համարում գրում է. «Գաղթականների անընդհատ հոսանքը դեռ չէ վերջացել՝ սեպտեմբերի կեսիցն սկսած Ս. Էջմիածինը պատսպարել է օրական 500–600 գաղթականներ, որոնք միշտ տեղի տալով նորեկներին՝ ցրում են դեպի կենդրոնական քաղաքներն ու հայաբնակ գիւղերը»¹⁰:

1896 թ. հոկտեմբերի 22-ի դրությամբ Վաղարշապատի գավառում ապաստանել էր 1270 հոգի, որոնց թվում 58 ասորի: Նրանցից 500-ը, որոնք հիմնականում վանեցի վաճառականներ ու արհեստավորներ էին, կաթողիկոսի առաջարկով տեղափոխվում են Երևան, Թիֆլիս, Բաքու և Բաթում, որտեղ ավելի դյուրին էր աշխատանք գտնել:

Առավել ծանր նյութական վիճակում գտնվող մնացյալ 770 հոգուն, որոնց զգալի մասը մինչև 15 տարեկան երեխաներ էին, մեծ մասին տեղաբաշխում են գավառի գյուղերում իսկ մյուսներն իրենց ցանկությամբ, որոշ գումար ճանապարհածախսի համար ստանալով, շարունակում էին ճանապարհը: ԿՅԲԸ-ն Վաղարշապատի հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են գավառի ինը բնակավայրերը՝ պարզելու փախստականների իրական թվաքանակը: Սա անհրաժեշտ էր ոչ միայն տեղում օգնություն կազմակերպելու, այլև նորերին տեղավորելու համար: Ըստ ԿՅԲԸ-ի ունեցած տեղեկության՝ Վանից գաղթել են ևս 100 տուն հայեր (մոտ 500 հոգի), սակայն առատ ծյան պատճառով հնարավորություն չեն ունեցել սահմանն անցնել¹¹:

Աղյուսակ № 1

1896 թ. ԿՅԲԸ-ն նախնական տվյալները
էջմիածնի գավառում ապաստանած փախստականների մասին¹²

Բնակավայրը	փախստականների թվաքանակը (անձերով)
1. Վաղարշապատ	158
2. Մաստարա	50

¹⁰ «Արարատ», էջմիածին, 1896 սեպտեմբեր, էջ 419:

¹¹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 358, թ. 108 շրջ.:

¹² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ըստ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 358, թ. 107:

3. Թալին	150
4. Եղվարդ	22
5. Չիբուխչի	8
6. Հաջիդարա	12
7. Ղուղղուղուլի	15
8. Սարդարապատ	15
9. Այլանլու	12
Ընդամենը՝	442

Այնուհետև Վաղարշապատ ԿՀԲԸ-ի մասնաճյուղի հանձնաժողովը, ուսումնասիրելով 16 գյուղերում ապաստանած փախստականների դրությունը, արձանագրել է, որ տեղի գյուղացիների առատաձեռնությամբ շնորհիվ բոլորն էլ ապահովված են կացարանով, պարենով և վառելափայտով: Այսինքն՝ գոյատևման տարրական կենսապայմաններ կային: Միակ խոշոր հիմնախնդիրը՝ հագուստի և անկողնային պարագաների սակավությունը կամ իսպառ բացակայությունն էր:

Հանձնաժողովը, միաժամանակ, արձանագրում էր, որ աշխատունակ տղամարդկանց զգալի մասը հողագործներ են և չեն կարողացել աշխատանք գտնել: Միայն մի քանի հոգու հաջողվել էր օրուպարենի դիմաց աշխատանք գտնել տեղացի գյուղացիների մոտ:

Աղյուսակ № 2

1896 թ. էջմիածնի գավառի 16 գյուղերում ապաստանած փախստականների թվաքանակը¹³

բնակավայրը	տեղական բնակչությունը ըստ տների	փախստականներն ըստ տների	փախստականներն ըստ անձերի
1. Վերին Խաթունարխ	72	3	13
2. Ներքին Խաթունարխ	150	2	11
3. Չիբուխչի	160	1	4
4. Ղուղղուղուլի	200	2	17
5. Շահրիար	250	1	6

¹³ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ըստ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, ք. 112:

6. Զաֆարապատ	70	3	16
7. Զյալագիարիս	100	2	14
8. Սոլլա Բայազետ	200	5	16
9. Գեչուլու	250	36	203
10. Զեյվա	200	5	23
11. Այլանլու Ներքին	85	2	7
12. Ալիբեքլու	95	2	7
13. Զյարիմարիս	200	1	7
14. Հայթաղ	150	7	34
15. Սամաղար	200	7	38
16. Այլանլու Վերին	50	2	11
Ընդամենը	2432	81	428

Կատարված շրջայցից պարզվել էր, որ նշված գյուղերից 11-ում կար 52 հիվանդ, այդ թվում՝ նաև տիֆով: Բժշկական խնամքի բացակայությունը տարափոխիկ հիվանդության տարածման պատճառ դառնալ:

Փաստորեն, էջմիածնի 16 գյուղերում ապաստանել էր 81 ընտանիք կամ 428 անձ: Հոկտեմբեր ամսին ևս 442 անձ հաստատվել էր Վաղարշապատում: Այսինքն՝ մինչև 1896 թ. նոյեմբերի սկիզբը փախստականների թիվը հասել է շուրջ 900-ի: Պետք է հաշվի առնել նաև այն, որ նրանցից ոմանք, տեղում աշխատանք կամ ապրուստի միջոց չգտնելով, հեռանում էին՝ փորձելով այլ բնակավայրում հաստատվել:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Վաղարշապատի ԿՀԲԸ վարչությունը ԿՀԲԸ-ի խորհրդից նյութական օգնություն է խնդրում: 1896 թ. հոկտեմբերի 19-ին վարչության խորհուրդը 100 ռուբլի գումար է ուղարկում՝ պահանջելով մանրամասն տեղեկություններ հավաքել տեղի փախստականների դրության և կարիքների մասին: Ըստ կազմած նախահաշվի՝ Վաղարշապատում տեղակայված 26 տուն գաղթականներին մինչև ապրիլ ամիսն օգնելու համար հարկավոր էր 417 ռուբլի: Գումարը ծախսվելու էր գլխավորապես դեղորայքի, սննդի, բնակարանի վարձի, վառելիքի և այլնի համար¹⁴:

Շուտով օգնության խնդրանքով ԿՀԲԸ Վաղարշապատի վարչությանը դիմում են վանքի գոմում ապաստանած մի քանի փախստա-

¹⁴ Նույն տեղում, թ. 109:

կաններ: Վարչությունը, ուսումնասիրելով նրանց վիճակը, փաստում է, որ գոմում գոյատևում էին 125 հոգի, որոնցից 27-ը՝ հիվանդ: Նրանց խնդիրները լուծելու համար Վաղարշապատի վարչությունը պաշտոնական գրությամբ դիմում է Վեհափառին՝ խնդրելով փախստականներին տեղավորել հիվանդանոցում: Միաժամանակ վարչությունը խնդրում է նաև հնարավորության դեպքում նրանց տալ կերակրել: Սակայն երկու խնդրանքներն էլ մերժվում է:

1396 թ. դեկտեմբերի 28-ին ստացվում է ԿՅԲԸ-ից օգնություն 400 ռուբլի, հագուստ, 10 թուփ կտավ, 49 հատ շինել: Բացի՝ դրանից վարչությունը Սուքիաս արքեպիսկոպոսի կողմից ստանում է նաև մեկ արկղ հագուստ: Թանկարժեք լինելու պատճառով վարչությունը որոշում է դրանք աճուրդի հանել և գնել ավելի էժան և շատ հագուստ¹⁵:

Մազապուրծ փախստականների քարավանների հոսքը Վաղարշապատ շարունակվում էր հաջորդ ամիսների ընթացքում: Նրանց բազմությունը շարունակում էր խմբվել էջմիածնի պատերի տակ՝ իրենց վերջին հույսը կապելով կաթողիկոսի հետ: Խրիմյանը չէր կարողանում անտարբեր մնալ գաղթականների բազմաթիվ նամակ-խնդրանքներին: Նա ծեռնարկում է բազմաթիվ քայլեր, դիմում ցարական տարբեր պաշտոնյաների, որպեսզի թույլատրվի կատարել հանգանակություններ, որոնցից ստացված իրերը կամ գումարները օգտագործվեն գաղթականների դրությունը բարելավելու համար:

Կաթողիկոսը հատուկ հրահանգում է էջմիածնի մայր տաճարի սեղանատանը, Կովկասի հայկական վանքերին ու եկեղեցիներին, նրանց կից հոգաբարձուների խորհրդին, Ատրպատականից մինչև Արևելյան Հայաստան ձգվող ճանապարհին գտնվող վանքերի վանահայրերին՝ պատսպարել գաղթականներին, հոգալ նրանց օթևանի և սննդի կարիքները¹⁶:

1897 թ. սկզբներին ԿՅԲԸ վարչության կարգադրության համաձայն Վաղարշապատի մասնաճյուղից կազմված հանձնաժողովը շրջում է գավառի գյուղերում՝ ճշտելու նորեկ գաղթականների թվա-

¹⁵ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 150:

¹⁶ Կոստանդյան է., Մկրտիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008, էջ 389:

քանակը: Շրջայցի արդյունքում հանձնաժողովը ներկայացնում է հետևյալ զեկուցագիրը.

Աղյուսակ № 3

1897 թ. էջնիածնի գավառի
բնակավայրերում ապաստանած նորեկ փախստականների
ցուցակ¹⁷

բնակավայրի անվանումը	փախստականներն ըստ ընտանիքների	փախստականներն ըստ անձի
1. Կոշ	5	21
2. Աղավնատուն	4	32
3. Ուզունոբա	3	12
4. Փարաքար	3	13
5. Թալին	20	154
6. Կարբի	3	16
7. Վերին Այլանլու	4	18
8. Սամաղար	1	4
9. Ղազիզիտան	3	15
10. Թափաղիբի	2	10
11. Սարգարա	2	10
12. Ղուրդուղուլի	3	24
13. Չիբուխչի	4	28
14. Սարդարապատ	2	13
15. Եղուրաղ	6	37
16. Մոլլա Բայազետ	8	31
17. Արտաշար	1	7
18. Արմտլու	2	8
19. Էվջիլար	1	5
20. Գեչլու	22	137
21. Ֆռանգանոց	1	4
22. Դոզս	1	8
23. Վերին Այլանլու	1	3
24. Հայթաղ	1	5
Ընդամենը	103	605

Նորեկների թվաքանակը ճշտելուց բացի, հանձնաժողովը փաստում է, որ նրանց սոցիալ-տնտեսական վիճակը շատ ավելի վատ է.

¹⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ըստ ՀՍԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1066, ք. 1-76:

քան 1896 թ. եկածներինը: Բանն այն է, որ փախստականների առաջին ալիքն ընդունած Վաղարշապատի գավառի գյուղացիությունն այլևս ի գորու չէր ապահովել նորեկների գոյատևման տարրական հոգսերը, քանի որ իրենք ևս գտնվում էին ծանր վիճակում: Նույն խնդիրը կար նաև Արևելյան Հայաստանի այլ բնակավայրերում: Կաթողիկոսի կոչն արժագանք է գտնում ոչ միայն Ռուսական կայսրության, այլև արտասահմանի հայության շրջանում: Նրանք իրենց հնարավորությունների սահմաններում, ուղարկում են դրամ, հագուստ, պարեն:

Օգնությունը հիմնականում ուղարկվում էր Մ. Խրիմյանի անունով: Այսպես, օրինակ, 1897 թ. հունվարի 4-ին Թիֆլիսից ուղարկվում է 2500 ռուբլի: Կից նամակում գրված է, թե տեղի հայությունն «ալելի բարուք համարեց ուղարկել Ձերդ Վեհափառութեան այդ գումարը՝ քաջ գիտենալով, որ դուք ալելի լաւ կարող էք կարգադրիլ և բաժանել նոցա, որոնք իսկապէս կարօտութիւն ունեն...»¹⁸: Կաթողիկոսն իր հերթին ստացված օգնության՝ դրամի և հագուստի մի մասը հատկացնում էր ԿՀԲԸ-ը: Վերջինս Վաղարշապատում ապաստանածների կարիքների համար տրամադրում է 3021 ռուբլի¹⁹:

1898 թ. վերջին և 1899 թ. հունվարին Վաղարշապատի վարչության ուսումնասիրության արդյունքները, ներկայացված է աղյուսակով:

Աղյուսակ № 4

1899 թ. էջմիածնի գավառի բնակավայրերում տեղակայված փախստականների քանակը²⁰

բնակավայրի ավանումը	փախստականներն ըստ ընտանիքների	փախստականներն ըստ անձերի
1. Վաղարշապատ	72	351
2. Ներքին Խաթունարխ	1	9
3. Ալիբեքլու	3	11
4. Ներքին Այլանլու	3	12
5. Զեյվա	3	13

¹⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 101, թ. 1:

¹⁹ Լեօ, նշվ. աշխ., էջ 190:

²⁰ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ըստ ՀԱԱ, ֆ. 5, ց. 17, գ. 15, թ. 80-107:

6. Քիսրփալու	6	24
7. Հայթաղ	4	15
8. Սամաղար	6	38
9. Վերին Այլանլու	4	11
10. Թալիշ	3	12
11. Կոշ	4	15
12. Աղջաղալա	1	3
13. Խզնավուզ	1	4
14. Աղավնատուն	2	8
15. Դոդս	1	6
16. Ֆռանգանոց	1	13
17. Էջմիածին	7	36
Ընդամենը	122	581

Փախստականների վիճակը սոսկալի ծանր էր: Մեծ մասը կիսամերկ էր, քաղցած, քնում էին առանց անկողնու՝ խոնավ հատակին, որի հետևանքով շատերը զոհ էին գնում հիվանդությաններին: Վիճակը գնալով վատթարանում էր: Քանի որ Էջմիածնի գավառի գյուղացիությունը ևս սպառել էր իր պարենը, ԿՀԲԸ-ի տեղական վարչությունը, իր հերթին, ինչպես նշում է Լեոն, 1898 թ. փախստականների խնամատարության ամբողջ գործը հանձնում է տեղական իշխանություններին²¹: Ջարդերից հետո կաթողիկոսն աշխատում էր արևմտահայ փախստականներին վերադարձնել հայրենի երկիր:

Արևմտահայ փախստականների գգալի մասը նախ և առաջ ձգտում էր վերադառնալ հայրենի հողերը՝ թույլ չտալու համար, որպեսզի հողերն ու գույքը գրավվին թուրքերի և քրդերի կողմից: Բացի այդ՝ ռուսական կառավարության կրավորական վերաբերմունքը հայ փախստականների նկատմամբ, որը հատկապես ուժեղացավ 1901 թ. նոյեմբերին, երբ կառավարչապետ Գուլիցինը հայտարարեց, որ 1893 թ. ռուսական սահմանն անցած հայ փախստականներից նրանց, ովքեր ցանկանում են վերադառնալ իրենց հայրենի հողերը, օգնություն ցույց կտրվի, իսկ մյուսները պարտավոր են ռուսահպատակ դառնալ:

Աբդուլ Համիդ II-ի ջարդարարական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ մեծ թվով արևմտահայեր բռնեցին գաղթի ճանապարհը: Օսմանյան յաթաղանից փրկված հայությունը սփռվեց աշ-

²¹ Նույն տեղում, էջ 190–191:

խարհով: Վաղարշապատը՝ որպես հայության հոգևոր կենտրոն, նույնպես իր դռները բացեց թշվառ հայության առաջ: Փախստականների օգնության խնդրում իր մեծ և ուրույն դերն ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, որը, չնայած իր պատկառելի տարիքին, այդուհանդերձ ջանք ու եռանդ չխնայեց հնարավորինս օգնություններ կազմակերպելու արևտահայ գաղթականության համար: Իսկ փախստականների հոծ բազմությունը, հույսերը կապելով հոգևոր կենտրոնի և Վեհափառի հետ, օգնության ակնկալիքով խմբվում էր էջմիածնի գավառում:

Այսպիսով, հիմք ընդունելով արխիվային վավերագրերի և ժամանակի մամուլի տվյալները կարելի է եզրակացնել, որ 1896–1899 թթ. էջմիածնի գավառում և նրա շրջակայքում ապաստանել էր շուրջ 2600 արևմտահայ:

LILIT QOSYAN

**SURVIVORS OF THE HAMIDIAN POGROMS
AND MASSACRES, THE ARMENIAN REFUGEES
IN EJMIATSIN GAVAR
(THE SECOND HALF OF THE 1890s)**

SUMMARY

During the 1890-s massacres organized by Abdul Hamid more than 300.000 western Armenians were killed. The survivors migrated to different countries. There were organized social and religious benevolent organizations and societies. One of such organizations was Caucasian Armenian General Benevolent Association realized humanitarian program.

As follows from the analysis of the archive documents and the press data about 2600 western Armenians found refuge also in Eastern Armenia particularly in the Ejmiatsin gavar and its outskirts in 1896–1899. The documents used in this article describe the hard living conditions of refugees.

**ВЫЖИВШИЕ ИЗ ГАМИДОВСКИХ ПОГРОМОВ
И РЕЗНИ АРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ В
ЭЧМИАДЗИНСКОМ ГАВАРЕ
(ВТОРАЯ ПОЛОВИНА 1890-Х ГОДОВ)**

РЕЗЮМЕ

В 1890-ых годах Абдул Гамид организовал резню 300.000 западных армян. Спасшиеся от резни армяне мигрировали в разные страны. Для помощи беженцам были созданы различные благотворительные, общественные и религиозные организации. Одна из таких организаций – Кавказское Армянское Благотворительное общество, которое осуществляло гуманитарную помощь армянским беженцам. Как следует из анализа архивных документов и данных прессы около 2600 западных армян нашли убежище в Восточной Армении, в частности – в Эчмиадзине и его окрестностях в 1896–1899.

В статье представлены документы, которые описывают состояние беженцев и оказанную им помощь.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1914 Թ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1895 Թ.
ՄԱՅԻՍՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը հայ պատմագիտության մեջ գնահատվել է ոչ միանշանակ: Նրա նշանակությունը կամ գերագնահատվել է տուրք տալով 1912–1914 թթ. Հայկական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականության նախաձեռնողական բնույթին և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը, կամ թերագնահատվել է ելնելով Հայկական հարցում մեծ տերությունների և, մասնավորապես Մերձավոր Արևելքում Ռուսաստանի վարած քաղաքականության շահադիտական մղումներից ու հակահայկական դրսևորումներից: Եվ շատ քիչ են այն աշխատությունները, որոնցում տրված է Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ այդ համաձայնագրի պատմա-իրավական օբյեկտիվ գնահատականը: Մինչդեռ անցյալի սթափ գնահատումը կենսականորեն կարևոր է առաջընթացի ճիշտ ուղու վրա կանգնելու, կամ էլ նրանից չշեղվելու համար: Փորձենք հենց այդ սկզբունքով էլ արժևորել խնդրո առարկա դիվանագիտական փաստաթուղթը՝ համեմատելով այն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ մեծ տերությունների մշակած ծրագրերի շարքում իրեն նախորդող բարենորոգումների Մայիսյան ծրագրի ընդունման վերաբերյալ 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակի հետ:

Այդ նպատակով հարկ է հաշվի առնել մի քանի հանգամանք.

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի իրավունքների պաշտպանության խնդրի միջազգային-իրավական ընկալումը XIX դ. վերջին – XX դ. սկզբին.

Միջազգային իրավունքը՝ ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, ճնշված ժողովուրդների ճակատագիրը դիտարկում էր գլխավորապես իշխող պետության սահմաններում նրանց ֆիզիկական անվտանգության ապահովման, այդ նպատակով հունանիտար ինտերվենցիայի, տվյալ ազգային խմբի անդամների անձնական և ունեցվածքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Դա հավասարազոր էր ինքնակառավարման կամ տարածքային ինքնավարության: Չէր կարևորվում ճնշված ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքն իրացվում էր հարկադրանքի ուժով, այսինքն՝ օտարի տիրապետության դեմ ազատագրական զինված պայքարի միջոցով, ինչպես որ տեղի էր ունեցել Անգլիայի հյուսիսսամերիկյան գաղութների, Յունաստանի կամ բալկանյան սլավոնական ժողովուրդների պարագայում: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր Յու. Բարսեղովն իրավացիորեն նշում է հետևյալը. «Օսմանյան կայսրության պատասխանատվությունը ժողովուրդների կոտորածների համար թե՛ վերջիններիս կառավարման ձևի բարեփոխման, թե՛ ցեղասպան պետության տիրապետությունից նրանց ազատագրման պահանջի ձևով առաջացել է բնավ ոչ Հայկական հարցի կապակցությամբ, այլ՝ կապված մյուս թուրքահպատակ ժողովուրդների՝ հույների, բուլղարների, սերբերի, ռումինների խնդիրների հետ»¹: Հայկական հարցը, որպես հայ ժողովրդի անվտանգության ապահովման հարց, միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի հարց դարձավ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով: Այն 1878–1914 թթ. ընդգրկող ժամանակահատվածում Օսմանյան կայսրության հայկական նահանգների նկատմամբ որևէ տարածքային պահանջ չէր բովանդակում՝ հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու խնդրից բացի:

¹ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2, Москва, 2005, с. 70.

Խնդրով շահագրգռված եվրոպական մեծ տերությունների շահերը, նպատակներն ու հակասությունները, որոնցով պայմանավորված էր միջազգային իրավունքի նորմերի պահպանման մակարդակը.

1878 թ. Բեռլինի պայմանագրի կնքումից հետո ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Մեծ տերությունները Օսմանյան կայսրության նկատմամբ վարում էին նրա տարածքային ամբողջականությունը և անձեռնմխելիությունը պահպանելու քաղաքականություն: Այն ամենահարմարն էր ապահովելու բազմազգ կայսրության նկատմամբ բոլոր մեծ տերությունների շահերի հավասարակշռությունը, թույլ չտալու, որ իրենցից որևէ մեկը բացարձակ գերիշխանության հասներ «հիվանդ մարդու» նկատմամբ: Նույնիսկ Ռուսաստանը, որը դեռևս Ղրիմի 1853–1856 թթ. պատերազմի նախօրեին բացահայտորեն արտահայտում էր Օսմանյան կայսրության թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների հովանավորը լինելու իր մտադրությունը², այնուամենայնիվ, գիտակցում էր, որ status quo-ի քաղաքականությունը բխում էր նաև իր շահերից. այն պաշտպանում էր Ռուսաստանը մրցակից տերությունների հզոր հակազդեցությունից: Այս համատեքստում Մեծ տերությունները չէին կարող թույլ տալ Հայկական հարցի որևէ այլ ձևակերպում՝ արևմտահայերի անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանն ուղղված բարենորոգումներից բացի: Պատահական չէ, որ մեծ տերությունները 1878 թ. Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին թողել էին ռուս-թուրքական պատերազմում տարածքային ձեռքբերումների նվազագույնը, իսկ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացումը՝ որպես Հայկական հարցի լուծման հիմնական ձևը, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը դրվել էր միջազգային վերահսկողության ներքո: Նշենք, որ համաշխարհային պատերազմը բեկունային նշանակություն ունեցավ Հայկական հարցի միջազգային իրավական ուղղվածության համար, քանի որ անցում կատարվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացումից դեպի իրենց հայրենիքում արևմտահայերի ինքնորոշման իրավունքի պաշտպանություն: Այնուամենայնիվ, Հայկական հարցի միջազգա-

² См. История дипломатии, составитель А. Лактионов, Москва, 2005, т. 2 482–483.

յին բնույթը պահպանվեց՝ դառնալով նրա միջազգային դիվանագիտական քննարկումների ողջ հետագա ընթացքի վրա էապես ազդող գործոն:

Օսմանյան կայսրության իշխող վարչակարգի ազգային քաղաքականությունը, նրա վերաբերմունքը հպատակ ժողովուրդների դրության բարելավման խնդրին.

Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարությունը, առաջնորդվելով օսմանիզմի, պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարներով, արևմտահայերի նկատմամբ վարում էր ծուլման և բնաջնջման քաղաքականություն, հետևաբար՝ նրա խնդիրն էր կամ ազատվել բարենորոգումներ անցկացնելու պարտավորությունից առաջին իսկ հնարավորության դեպքում, կամ այն հասցնել նվազագույնի: Լայն հանրությանը մատչելի հրատարակված հսկայական թվով դիվանագիտական փաստաթղթեր վկայում են այն մասին, որ հայերի մասնակի ոչնչացմամբ զուգակցվող տնտեսական հյուծման քաղաքականությունն արդեն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այլևս բավարար չէր համարվում երիտթուրքական կառավարության համար՝ նրանց ներքին և արտաքին քաղաքական նպատակներն իրականացնելու տեսանկյունից: Նա նախապատրաստվում էր անցնելու նախ Օսմանյան կայսրության, ապա նաև ողջ Այսրկովկասի հայերի համատարած ու համընդհանուր բնաջնջմանը³:

Ծնշված ժողովրդի իր իրավունքների պաշտպանության համար պայքարում դրսևորած նպատակասլացությունը, սեփական նպատակների ու գործողությունների տրամաբանվածությունը, դրանց համապատասխանությունը միմյանց ու իրականության պայմաններին.

Արևմտահայությունը ոչ պատրաստ էր և ոչ էլ հակված էր համընդհանուր զինված ազատագրական պայքարի: XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական պայքարը միայն առանձին

³ Տե՛ս Դեոշվիլ արմյան: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, т. 1, Москва, 2002, էջ 122–196: Տե՛ս նաև՝ Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, Երևան, 2002, էջ 37–39, 102–104, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 3–11:

բնակավայրերում էր ապստամբական բնույթ կրում, ունենում հաղթական ելք, արձանագրում նշանակալի արդյունք: Արևմտահայությանն ընդհանուր առմամբ բավարարում էր իր դրության բարելավումն Օսմանյան կայսրության սահմաններում՝ ապավինելով մեծ տերությունների աջակցությանը և օսմանյան կառավարության բարեգթությանը: Այդ խիստ չափավոր ու զգուշավոր դիրքորոշումը բացատրվում էր արևմտահայության առանց այդ էլ դժվարին գոյությունը օսմանյան վարչակարգի նոր հարվածներին ենթարկելու առիթ չտալու իրական երկյուղով:

Լինելով վերոնշյալ պայմանների արդյունքը՝ 1914 թ. հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) ռուս-թուրքական համաձայնագիրը հանդիսանում էր Արևմտյան Հայաստանի հարցով Օսմանյան կայսրության նկատմամբ միջազգային միջամտություն կամ ժամանակակից տերմինաբանությամբ՝ հումանիտար ինտերվենցիա նախատեսող թվով վեցերորդ միջպետական փաստաթուղթը Բեռլինի պայմանագրից հետո՝ 1878–1914 թթ. ընդգրկող ժամանակահատվածում: Դրանով հերթական անգամ իրավաբանորեն ամրագրվում էր թուրքական պետության հայ հպատակների կյանքի և իրավունքների դեմ ուղղված բռնությունների փաստը, մասնավորապես՝ նրանց նկատմամբ ազգային և կրոնական հիմքով զանգվածային բռնությունների իրողությունը, դրանով իսկ անուղղակիորեն ճանաչվում էր թուրքական պետության պատասխանատվությունը հայ հպատակների նկատմամբ ռճրագործությունների հարցում և իրավական լրացուցիչ հիմք էր ստեղծվում միջազգային կոլեկտիվ միջամտության համար⁴:

⁴ Նշենք, որ Օսմանյան կայսրությունում ճնշված ժողովուրդների անվտանգության ապահովման նպատակով մեծ տերությունների կոլեկտիվ միջամտության սկզբունքն առաջին անգամ ձևակերպվել է 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրում, որի նպատակը Դրիմի պատերազմում Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Օսմանյան կայսրությունից և Սարդինիայից կազմված դաշինքի՝ Ռուսաստանի նկատմամբ տարած հաղթանակի արդյունքներն ամփոփելն էր: Այդ ժամանակ քննարկվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Հունաստանի, Կրետեի, Լիբանանի, Բոսնիայի, Հերցեգովինայի, Բուլղարիայի և թուրքահպատակ այլ երկրների ժողովուրդների անվտանգության ապահովման հարցը: Ինչ վերաբերում է արևմտահայերի անվտանգության ապահովման հարցին, ապա այն առանձին քննարկվել և իր արտացոլումն է գտել հետևյալ միջազգային իրավական փաստաթղթերում՝ 1878 թ. փետրվարի 19-ի Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրում, 1878 թ. մայիսի 18 (30)-ի անգլո-ռուսական համաձայնագրում, 1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիայում կամ:

Այդուհանդերձ, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը ոչ այնքան հանդիսանում էր եվրոպական մեծ տերությունների կողմից Հայկական հարցում իրենց ստանձնած պարտավորությունները բարեխղճորեն կատարելու պատրաստականության դրսևորում, որքան որ, դրան հակառակ, այդ միջազգային իրավական փաստաթուղթը կրում էր Մերձավոր Արևելքում տերությունների սուր հակասությունների կնիքը:

Մինչ ստորագրվելը նշված համաձայնագրի դրույթները քննարկվեցին նախ Կ. Պոլսում եվրոպական տերությունների դեսպանների, ապա ռուս-գերմանական, այնուհետև ռուս-թուրքական դիվանագիտական լարված բանակցություններում: Դրանց ընթացքում գերմանական կողմը բացահայտ աջակցում էր թուրքական կառավարությանը և ամեն կերպ փորձում էր ձախողել բարենորոգումների ռուսական նախագիծը, իսկ Բրիտանիան ու Ֆրանսիան էլ իրենց երկդիմի կեցվածքով էին թուլացնում դաշնակից Ռուսաստանի դիրքերը դիվանագիտական պայքարում: Ի վերջո, եվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության կառավարություններին հաջողվեց քննարկվող առանցքային հարցերում Ռուսաստանից կորզել մի քանի եական զիջում: Ըստ այդմ, որո՞նք էին դիվանագիտական լարված պայքարի արդյունքում 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրի առաջադիմական ու հետադիմական կողմերը բարենորոգումների Մայիսյան ծրագիրն ընդունելու վերա-

այսպես կոչված, «պաշտպանական դաշինքի» մասին պայմանագրում, 1878 թ. հուլիսի 1(13)-ի Բեռլինի տրակտատում, 1880 թ. հունիսի 11-ին մեծ տերությունների կողմից Բ. Դռանն ուղղված բողոքի հուշագրում, նույն թվականի սեպտեմբերի 7-ին թուրքական կառավարությանն ուղղված կոլեկտիվ հուշագրում, 1881 թ. օգոստոսին Բրիտանիայի արտգործնախարարության կողմից պատրաստված բարենորոգումների նախագծում, 1895 թ. հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով ստեղծված համաշխարհային պատմության մեջ առաջին և միակ միջազգային (անգլո-ֆրանս-ռուս-իտալական) քննչական հանձնաժողովի հունիսի 20-ի գեկուցագրում, ապա նույն թվականի մայիսի 11-ի անգլո-ֆրանս-ռուսական բարենորոգումների նախագծում, որը Բ. Դուռն ընդունեց սուլթանի հոկտեմբերի 20-ի հրովարտակով (այս մասին մանրամասն տես Генерал армян: отвественность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии, т. 1, փաստ. № 26, էջ 91, փաստ. № 28, 29, էջ 92-93, փաստ. № 30, էջ 93-94, т. 2, ч. 2, էջ 156-164, 165-166, 168-171:

բերյալ 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակի համեմատ: Այսպես.

Ըստ համաձայնագրի՝ Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի և Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբերդի վիլայեթներից կազմվելու էր երկու առանձին վարչական միավոր⁵: Գերմանիայի դիվանագիտական ճնշման ներքո համաձայնագրում ձևակերպված այս դրույթն ակնհայտ նահանջ էր թե՛ 1878 թ. Բեռլինի պայմանագրից, թե՛ բարենորոգումների 1895 թ. մայիսյան ծրագրից ու դրա ընդունման վերաբերյալ հոկտեմբերի 20-ի հրովարտակից, որոնցով ամրագրվել էր ինչպես թուրքական վիլայեթների համեմատ հայկական վիլայեթների ունեցած առանձնահատուկ դրությունը, այնպես էլ հայկական տարածքները որպես վարչական մեկ միավոր դիտարկելու անհրաժեշտությունը⁶: Եվ այս նահանջը կատարվում էր այն դեպքում, երբ Բեռլինի պայմանագրից մինչև բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագիրն ընկած ժամանակահատվածում արևմտահայերի դրությունը ոչ միայն չէր բարելավվել, այլև ավելի էր ահագնացել զանգվածային կոտորածների վտանգը: Ակնհայտ է, որ այն ավելի էր մեծանալու հայկական տարածքները երկու մասի բաժանելու, նրանց միջև փոխադարձ կապերի համաչափությունը խաթարելու հետևանքով, քանի որ թուրքական կառավարությանը թողնվում էին մանևրելու, պետության ողջ ուժը ցեղասպանության նպատակով հայերի դեմ օգտագործելու հնարավորություններ:

Բարենորոգումների Մայիսյան ծրագիրը վերաբերում էր հայկական վեց վիլայեթներին՝ Էրզրում, Բիթլիս, Վան, Դիարբեքի, Խարբերդ, Սեբաստիա: Նույն տարածքում պետք է իրականացվեին նաև ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված բարենորոգումները: Սակայն վարչաքաղաքական երկու միավորները ձևավորվելու

⁵ Համաձայնագրի տեքստը տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 59, թ. 1-4, գ. 60, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագիր՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, փաստ. № 188, էջ 339-342:

⁶ Տես Генерал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. т. 1, փաստ. № 30, էջ 93-94, т. 2, էջ 164-171:

էին՝ ներառելով ոչ միայն Ա. Մանդելշտամի⁷ նախագծում նշված սահմանները, այլև մահմեդականներով խիտ բնակեցված այն տարածքները, որոնք վիլայեթների մասին թուրքական օրենքով և դրա լրացումով նախատեսվում էր միացնել հայկական վիլայեթներին՝ դրանցում հայերին փոքրամասնություն դարձնելու կանխամտածված հեռանկարով: Ավելին, համաձայնագրում ռուսական կողմի պահանջով ամրագրվել էր արդեն նրա ռազմաքաղաքական շահերին համահունչ մեկ այլ խնդիր. էրզրումի և Սեբաստիայի վիլայեթներին էր կցվելու Տրապիզոնի վիլայեթը: Այս հանգամանքները հայկական վարչական միավորների տարածքային ամբողջականությանն ու ներքին կայունությանն ուղղված վտանգ էին պարունակում, ինչը չէր կարելի ասել բարենորոգումների Մայիսյան ծրագրի վերաբերյալ:

Բարենորոգումների մայիսյան ծրագրի համեմատ ռուս-թուրքական համաձայնագրում առաջադիմական էր հայկական երկու վարչական միավորների ղեկավարների նշանակման կարգը, բացի այդ՝ ընդարձակված էին նրանց տրվելիք լիազորությունները: Այսպես, եթե Մայիսյան ծրագրով հայկական վիլայեթների վալիները կուսակալները, ինչպես նաև նրանց ստորադաս բոլոր պաշտոնյաները պետք է նշանակվեին սուլթանի կողմից՝ առանց կրոնի խտրության, բայց և առանց մեծ տերությունների համաձայնությունը ստանալու, ապա ըստ ռուս-թուրքական համաձայնագրի, սուլթանը հայկական վարչական միավորների ընդհանուր վերատեսուչներին կարող էր նշանակել միայն մեծ տերությունների համաձայնությամբ և միայն եվրոպացիներից: Այս իմաստով հայկական վարչական միավորներին տրվում էր այնպիսի կարգավիճակ, ինչպիսին ուներ Լիբանանը այն առավելությամբ, որի տարբերություն Լիբանանի թուրքահպա-

⁷ Ա. Մանդելշտամը հանդիսանում էր Կ.Պոլսում ռուսական դեսպանատան Առաջին դրագոմանը և խորհրդականը: Նրա կազմած բարենորոգումների նախագիծը հիմնված էր Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների 1895 թ. հիշատակագրի և բարենորոգումների ծրագրի, սուլթանի 1895 թ. հոկտեմբերի 20-ի հրովարտակի, 1880 թ. եվրոպական հանձնաժողովի օրինագծի, Լիբանանի արձանագրության ու կանոնադրության վրա և համապատասխանում էր Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի ու Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության 1914 թ. ապրիլին ներկայացրած ծրագրերի դրույթներին (տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 51, թ. 1-3, Կարապետյան Ն. Վ., Հայկական բարենորոգումների խնդիրը 1912-1914 թվականներին, «Հայ ժողովրդի պատմություն», ՀԱՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Երևան, 1981, էջ 523-524):

տակ ընդհանուր նահանգապետի, Արևմտյան Հայաստանն ունենալու էր օտարերկրացի ընդհանուր վերատեսուչներ: Ավելին, ընդհանուր վերատեսուչներին իրավունք էր տրված իրենց իշխանության ներքո գտնվող տարածքում նշանակելու և ազատելու ստորադաս պաշտոնյաներին (բացի վալիներից), սուլթանի հաստատմանը ներկայացնելու բարձր պաշտոնյաների ու դատավորների թեկնածուներ, հաստատելու կարգուկանոն, անմիջականորեն վերահսկելու հողային վեճերի լուծումը, վարչական միավորների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի կազմակերպման ու վերահսկողության հարցերում գործելու ինքնուրույն՝ ընդհուպ մինչև ռազմական ուժ կիրառելու հնարավորությունը:

Ընդհանուր վերատեսուչների նշանակմանը մեծ տերությունների մասնակցությունը Ռուսաստանը դիտում էր որպես Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործումը երաշխավորելու միակ գործուն միջոցը⁸: Դա լիովին արդարացված մոտեցում էր. սուլթանն այլևս չէր կարող կամայական պատճառաբանությամբ զբաղեցրած պաշտոնից ազատել որևէ քրիստոնյայի կամ անհիմն հակադրվել ընդհանուր վերատեսուչներին, քանի որ վերջիններիս հրաժարականը անխուսափելի էր դարձնելու եվրոպական մեծ տերությունների նոր միջամտությունը Օսմանյան կայսրության ներքին կյանքին: Քաջ գիտակցելով խնդրի կարևորությունը՝ թուրքական կառավարությունը դրան հատուկ ուշադրություն դարձրեց ընդհանուր վերատեսուչներ Հոֆֆի և Վեստենենկի հետ աշխատանքային պայմանագրերը մշակելու և ստորագրելու ժամանակ, երբ եվրոպացի գործիչներն իրենց պարտադրված աշխատանքային պայմանագրերով, ըստ էության, վերածվեցին սուլթանի կամքից կախման մեջ գտնվող սովորական թուրքական պաշտոնյաների⁹: Ընդհանուր վերատեսուչների հետ աշխատանքային պայմանագրերի ստորագրումը ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված գործընթաց էր, սակայն դրա մասին դրույթը որևէ գործուն իրավական երաշխիք չէր պարունակում ընդհանուր վերատեսուչների աշխատանքային

⁸ Ств Генерал армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, т. 1, фшատ. № 113:

⁹ Ств Հովհաննիսյան Լ. Հ., նշվ. աշխ., էջ 36–37:

իրավասությունների՝ համաձայնագրով սահմանված շրջանակից չչեղվելու վերաբերյալ: Դա խնդրո առարկա համաձայնագրի թույլ կողմ կարելի է համարվել, քանի որ երաշխիքների բացակայության պատճառով թուրքական կառավարությունը հնարավորություն էր ստանում խոչընդոտելու Արևմտյան Հայաստանում բարենորոգումների լիարժեք իրագործմանը: Ամեն անգամ թուրքական կառավարությունը կարող էր ընդհանուր վերատեսուչների հետ կնքել միայն իրեն ձեռնտու աշխատանքային պայմանագրեր և այդ ճանապարհով ձախողել բարենորոգումների իրագործումը, եթե եվրոպական մեծ տերությունները հետևողականորեն չվերահսկեին համաձայնագրով նախատեսված գործընթացի լիարժեք իրականացումը: Համաձայնագիրն իրավական տեսակետից առավել անխոցելի կդառնար, եթե ռուսական կողմը նրանում նախատեսած լիներ ընդհանուր վերատեսուչների հետ աշխատանքային պայմանագրերի կնքման հիմնական ու անփոփոխ սկզբունքներ:

Մյուս առանցքային հարցը վերաբերում էր տեղական իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում քրիստոնյաների ու մահմեդականների միջև տեղերի բաշխման սկզբունքին: Մեծ տերությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի դիվանագետները, դեռևս բարենորոգումների Մայիսյան ծրագրում այդ հարցի լուծման հիմքում դրել էին քրիստոնյաների ու մահմեդականների հավասարակշիռ ներգրավվածության սկզբունքը՝ անկախ տվյալ վարչաքաղաքական միավորում քրիստոնյա ու մահմեդական բնակչության թվի հարաբերակցությունից: Այսպես, եթե կուսակալը մահմեդական էր, ապա տեղակալը (մուավին) պետք է քրիստոնյա նշանակվեր և հակառակը: Գավառներում գավառապետերը քրիստոնյաներից էին նշանակվելու այն դեպքում, եթե քրիստոնյա բնակչությունը մեծամասնություն էր կազմում տվյալ վարչական միավորում, կամ էլ եթե տվյալ գավառը միակն էր նահանգի կազմում և նահանգի կուսակալը մահմեդական էր: Մայիսյան ծրագրում նախատեսվում էր կուսակալներին ստորադաս պաշտոններում ապահովել քրիստոնյաների ներգրավվածությունը պաշտոնյաների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի չափով: Նշենք, որ նույն ծրագրում հայկական նահանգների օրենսդիր ներկայացուցչական մարմինների գաղափարը սաղ-

մնային վիճակում էր: Ըստ ծրագրի՝ նահանգապետերին, գավառապետերին ու գավառակապետերին կից և նրանց նախագահությամբ գործելու էին չորս հոգուց բաղկացած ընտրովի խորհուրդներ, որոնց անդամներից երկուսը պետք է լինեին մահմեդական, երկուսը՝ քրիստոնյա¹⁰: Բացի այն, որ այս խորհուրդների լիազորությունները հստակորեն սահմանված չէին, դրանց գործունեությունը հայ բնակչության շահերի պաշտպանության տեսանկյունից չէր կարող արդյունավետ լինել այն վարչական միավորներում, որոնց ղեկավարները մահմեդականներ էին: Այս հարցում նկատելիորեն հանգամանալի և սկզբունքորեն այլ էր ռուս-թուրքական համաձայնագրում տրված ձևակերպումը: Նախ նշենք, որ, ըստ դրա, նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի երկու վարչական միավորներում մեկ տարվա ընթացքում անցկացնել հանրաքվե՝ որոշելու տարբեր ազգությունների, կրոնական գաղափարախոսությունների և լեզուների ներկայացուցիչների հարաբերակցությունը: Նշենք նաև, որ, ըստ համաձայնագրի, վիլայեթներում հիմնվելու էին ընդհանուր ժողովներ՝ օրենսդրական գործունեություն իրականացնելու համար: Մինչև հանրաքվեի անցկացումը Վանի ու Բիթլիսի վիլայեթների ընդհանուր ժողովներում պահպանվելու էր մահմեդականների և քրիստոնյաների հավասար ներկայացուցչության սկզբունքը: Նույն սկզբունքը կիրառվելու էր նաև Էրզրումի վիլայեթում, եթե այնտեղ հանրաքվեն չավարտվեր մեկ տարվա ընթացքում: Սեբաստիայի, Խարբերդի ու Դիարբեքիի վիլայեթներում անհապաղ մտցվելու էին համամասնական ընտրություններ՝ $\frac{2}{3}$ -ը մահմեդականներ և $\frac{1}{3}$ -ը քրիստոնյաներ հարաբերակցությամբ: Հավասարության սկզբունքը մահմեդականների ու քրիստոնյաների միջև, անկախ հանրաքվեի արդյունքներից, կիրառվելու էր վարչական խորհուրդներում, երկու հատվածների ոստիկանության և ժանդարմերիայի պաշտոններում¹¹:

Այսպիսով, տեղական իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում քրիստոնյաների ու մահմեդականների միջև տեղերի

¹⁰ Տե՛ս Աղայան Ծ. Պ., Բարենորոգումների Սայիսյան ծրագիրը, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. VI, էջ 246–247:

¹¹ Տե՛ս Հովհաննիսյան Լ. Հ., նշվ. աշխ., էջ 33–34, Կարապետյան Ն. Վ., նշվ. աշխ., էջ 534–535:

բաշխման հարցում ծանրության նժարը աստիճանաբար տեղաշարժվում էր դեպի համամասնական սկզբունքի կիրառում, ինչը նշանակում էր, որ թուրքական կառավարությունը հայկական նահանգներում իր իշխանությունը չկորցնելու համար պետք է արագացներ հայ բնակչության թվաքանակի կրճատմանն ուղղված քայլերի իրականացումը: Դա նշանակում էր նաև, որ մեծ տերությունները նախատեսված բարենորոգումներն Արևմտյան Հայաստանում պարտավոր էին իրագործել ավելի արագ, քան գործի կանցներ ցեղասպան թուրքական կառավարությունը:

Օսմանյան կայսրության սահմաններում, որտեղ փոքրաթիվ ու անզեն հպատակ հայ ժողովուրդը ցեղասպանության օբյեկտ էր, իսկ ընդարձակ կայսրության կառավարությունը, որպես ցեղասպանության սուբյեկտ, այդ ժողովրդի դեմ օգտագործում էր պետության ողջ ուժը, ապահովել հանցագործության զոհերի անվտանգությունը, ապրելու նրա բնական իրավունքը, ենթադրում էր, առնվազն, թուրքական պետության իշխանության սահմանափակման անհրաժեշտություն հայկական տարածքների ինքնավարության երաշխավորմամբ: Եթե մինչ 1913 թ. նշված հարցի շուրջ դիվանագիտական քննարկումների առաջնահերթ նպատակը հայ բնակչության ֆիզիկական գոյության ապահովումն էր, ապա 1913 թ. սկսած տերությունները կարևորում էին նաև հայ ժողովրդի լեզուն, մշակույթը և ազգային գոյության այլ ձևերը պահպանելու անհրաժեշտությունը, քանի որ դրանք ևս հանդիսանում էին ցեղասպանության քաղաքականության օբյեկտ: Պատահական չէ, որ առաջին անգամ այս համաձայնագրով նախատեսվեց, որ բոլոր օրենքները, հրովարտականները և կառավարական հաղորդագրությունները յուրաքանչյուր հատվածում պետք է հայտարարվեին տեղական թուրքերեն, հայերեն և քրդերեն լեզուներով: Նորույթ էին հանդիսանում նաև այն դրույթներն, ըստ որոնց տվյալ վիլայեթի ժողովրդական կրթության բյուջեում յուրաքանչյուր ազգություն ունենալու էր լուսավորության նպատակներով իր վճարած հարկերին համեմատական մասնաբաժին: Յուրաքանչյուր թուրքահպատակ խաղաղ ժամանակ զինվորական ծառայություն էր կատարելու այն շրջանում, որտեղ ապրում էր: «Համիդիե» զորագնդերը վերակառուցվելու էին պահեստի հեծելա-

գորի: Ձեռքը նրանց տրվելու էր միմիայն գորահավաքի ու զինավարժության ժամանակ: Այս պարտավորությունների բարեխիղճ կատարումը կարևոր նշանակություն կունենար հայերի ազգային ինքնության պահպանման համար:

Այսպիսով, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրում բարենորոգումների Մայիսյան ծրագրի ընդունման վերաբերյալ 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակի համեմատ որոշակիորեն ընդլայնված էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ենթակա հարցերի շրջանակը: Այս իմաստով Ակտը ռուս-թուրքական համաձայնագիրը, հանդիսանում էր մեծ տերությունների և թուրքական պետության միջև Բեռլինի կոնգրեսում սկսված ու մոտ 40 տարի տևած դիվանագիտական պայքարի հանգուցալուծումը: Համաձայնագիրը հայերի դեմ ցեղասպանության գործողությունների կանխմանն ուղղված միջազգային իրավական փաստաթուղթ էր և իրագործման դեպքում, անշուշտ, կունենար այդ նշանակությունը: Նրանում բարենորոգումների Մայիսյան ծրագրի համեմատ էապես խոցելի ու քննադատելի կողմը, թերևս, հայկական մեկ նահանգի փոխարեն երկու առանձին վարչական միավորների ստեղծում նախատեսող դրույթն էր: Համաձայնագիրն էլ ավելի առաջադիմական կլիներ, եթե դրա հիմքում դրվեր ռուսական սկզբնական նախագիծը՝ առանց փոփոխության ենթարկելու: Այդ դեպքում հայկական վիլայեթներից կստեղծվեր մեկ միասնական վարչական միավոր, այն վերջապես կունենար ազգային ժողով, մահմեդականներով խիտ բնակեցված տարածքները չէին միացվի հայկական վարչական միավորին, նահանգում բոլոր պաշտոնների, օրենսդիր և գործադիր իշխանություն իրականացնող մարմինների բաշխման, ինչպես նաև ոստիկանության ու ժանդարմերիայի կազմակերպման հիմքում կդրվեր ոչ թե համամասնության, այլ հավասարության սկզբունքը, կարծակիվեր քրդական «համիդիե» հեծելազորը, վերջ կդրվեր մուհաջիրների վերաբնակեցմանը հայկական նահանգում, հողային հարցը կլուծվեր ընդհանուր նահանգապետի ու հատուկ

հանձնաժողովի կողմից հայերից խլված հողերը նրանց վերադարձ-
նելու միջոցով¹²:

Ռուս-թուրքական համաձայնագրով պաշտոնապես վերահաս-
տատվում էր Ռուսաստանի ղեկավար դերը Հայկական հարցում, որի
հիմքը դրվել էր Սան Ստեֆանոյի պայմանագրով:

1914 թ. ապրիլին ընդհանուր վերատեսուչներից նորվեգացի
Հոֆֆը ժամանել էր Վան, իսկ հոլանդացի Վեստենենկը գտնվում էր
երգրումի ճանապարհին, երբ Օսմանյան կայսրությունը պատերազ-
մի մեջ մտավ Ռուսաստանի դեմ: Դրանով իսկ ռուս-թուրքական երկ-
կողմ համաձայնագիրը, ըստ գոյություն ունեցող սովորութային նոր-
մերի, կորցրեց իր միջազգային իրավական ուժը, իսկ թուրքական
կառավարությունն ազատվեց Արևմտյան Հայաստանում բարենորո-
գումներ կատարելու պարտավորությունից:

LILIT HOVHANNISYAN

**THE SIGNIFICANCE OF THE RUSSIAN-
TURKISH AGREEMENT OF 1914 ON THE
REFORMS IN WESTERN ARMENIA IN
COMPARISON WITH THE MAY
PROGRAM OF 1895**

SUMMARY

This article is designed to discuss two basic documents on the Armenian Question from the historical-comparative point of view: Program of May, 1895 on the reforms in Western Armenia and Russian-Turkish Agreement, 1914.

¹² См. Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 – 10 мая 1914 года (Министерство Иностранных Дел России), Петроград, 1915, приложения № 50, сг 52–69:

Both the advantages and disadvantages of the Russian-Turkish Agreement are designated comparing with the May Program of 1895. The Agreement is evaluated from the aspect of the Western Armenians' problems which could be solved in case of its realization.

ЛИЛИТ ОГАНИСЯН

ЗНАЧЕНИЕ РУССКО-ТУРЕЦКОГО СОГЛАШЕНИЯ 1914 ГОДА О РЕФОРМАХ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ В СВЕТЕ СРАВНЕНИЯ С МАЙСКИМ ПРОЕКТОМ 1895 ГОДА

РЕЗЮМЕ

Цель данной статьи – историко-сравнительный анализ Майского проекта 1895 года и русско-турецкого соглашения 1914 года касательно реформ в Западной Армении. Последние являются важными международными дипломатическими документами по Армянскому вопросу. В статье отмечены как преимущества, так и недостатки русско-турецкого соглашения 1914 года по сравнению с Майским проектом 1895 года. Соглашение оценено под углом зрения тех скопившихся в жизни западных армян проблем, которые могли бы решаться в случае его осуществления.

ՈՒՐՈՒԳՎԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԻ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ
(XIX դարի վերջ – XXI դարի սկիզբ)

Հայերն Ուրուգվայում սկսել են հաստատվել XIX դարի վերջից: 1890 թ. այստեղ ժամանեց առաջին հայը՝ վանեցի Մանուկ Ազարյանը¹: 1890-1910 թթ. Ուրուգվայ փոխադրվեցին մի քանի տասնյակ հայեր²: 1912 թվականից սկսած՝ երկրի մայրաքաղաք Մոնտևիդեոյում արդեն կային զգալի թվով մարաշցիներ, քեսաբցիներ, այնթապցիներ, գեյթունցիներ, կեսարացիներ, յոզղաթցիներ, որոնք առավելապես զբաղվում էին դերձակությամբ, կոշկակարությամբ և մանր առևտրով: 1915 թ. նրանք կազմակերպեցին դրամահավաք՝ ի նպաստ տարագիր հայերի, ստեղծեցին նաև Հայ բնակիչների Կենտրոն կազմակերպությունը, որին 1918 թ. հաջորդեց Հայկական Կենտրոնը: Վերջինս գոյատևեց մինչև 1921 թ.³:

Ուրուգվահայ գաղութի կազմավորման լայնածավալ գործընթացը սկիզբ առավ 1920-ական թթ., երբ Մեծ եղեռնից փրկված և Մերձավոր Արևելքի երկրներում ապաստանած հայ գաղթականների ստվար խմբեր սկսեցին տեղափոխվել Ուրուգվայ⁴: 1923 թ. հայության թիվն այստեղ արդեն հասնում էր շուրջ 3 հազարի⁵: Գաղութն ավելի ստվարացավ 1920-ական թթ. երկրորդ կեսին, երբ սկսվեց հայ գաղթականների երկրորդ մեծ հոսքը Ուրուգվայ: 1931 թ. գաղութում անցկացված մարդահամարի տվյալներով՝ Ուրուգվայում ապրում էր ավելի քան 4 հազ. հայ, իսկ 1940-ական թթ. սկզբին միայն Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտևիդեոյում բնակվում էր Արևմտյան Հայաս-

¹ Տես Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920-ական թթ.), Եռահատորյակ, Հատոր Երրորդ, Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութները, Երևան, 2013, էջ 303:

² Տես նույն տեղում:

³ Տես նույն տեղում, էջ 314:

⁴ Տես Blas Nabel Pérez, Armenios en el Nuevo Mundo, Quito 1998, էջ 79:

⁵ Տես Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 613:

տանի տարբեր քաղաքներից ու բնակավայրերից գաղթած շուրջ 1200 հայ ընտանիք կամ 6 հազ. մարդ⁶: Արդեն 1990-ական թվականների վերջին Ուրուգվայում ապրում էր 15 հազ.⁷ հայություն, իսկ 2010-ական թվականների սկզբին ուրուգվահայության թիվը հասնում էր շուրջ 20 հազարի, որոնք հիմնականում կենտրոնացած էին երկրի մայրաքաղաքում⁸: Սակավաթիվ հայ ընտանիքներ էին ապրում նաև առողջարանային Պիրիապուլիս քաղաքում: Հայերի հիմնական մասը զբաղվում էր մանր առևտրով և արհեստներով: Սակայն կային նաև մի քանի խոշոր ձեռնարկատերեր (կոշիկի գործարանատերեր, մեծածախ առևտրով զբաղվողներ), ինչպես նաև բարձրորակ իրավաբաններ, բժիշկներ, հաշվապահներ, ճարտարագետներ, պետական ծառայողներ (1960-2000-ական թթ. երեք հայեր Սոնտևիդեոյի քաղաքային խորհրդի, երկուսը՝ երկրի դատական իշխանության անդամներ էին, մեկը՝ փոխնախարար):

Հայերն իրենց զգալի ներդրումն էին բերում նաև Ուրուգվայի գիտամշակութային կյանքի զարգացման գործին: Երկրի մտավորական շրջաններում լայն ճանաչում էին վայելում աստվածաբան Հակոբ Եպիսկոպոս Գըլընճյանը, բառարանագետ Հարություն վարդապետ Թեքեյանը, պատմաբաններ Դանիել Կարամանուկյանն ու Ալբերտո Դիվրեջյանը, գրականագետ Հովհաննես Բոդուկյանը, իրավագետ Պետրոս Քյորոսյանը, երաժշտագետներ Ալվարո Հակոբյանը և Կորյուն Ահարոնյանը: Վերջինիս Սոնտևիդեոյի քաղաքապետը 2010 թ. շնորհեց «Պատվավոր քաղաքացի» կոչում-շքանշան:

Ուրուգվայի մարզական կյանքում աչքի էին ընկնում շախմատի երկրի բազմակի չեմպիոն Սանվել Տինավորյանը, ծանրամարտիկներ Խերման Թոզճյանը և Ուրուգվայի 2009 թ. չեմպիոն Ալեն Ալայանը, ֆուտբոլային մարզիչ Սերխիո Սարգարյանը, որը ներկայումս Պերուի հավաքականի գլխավոր մարզիչն է:

Ուրուգվահայ գաղութի ընդլայնմանը զուգընթաց ձևավորվում էին նաև համայնքային կառույցները: 35 հոգուց բաղկացած նախա-

⁶ Տես նույն տեղում:

⁷ Տես Blas Nabel Pérez, նշվ. աշխ., էջ 79:

⁸ Տես ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական բաժին, գործ N 328, էջ 11:

ծեռնող խումբը 1923 թ. հիմնեց ուրուզվահայության Գաղութային միությունը: Ընտրվեց միության 5 հոգուց բաղկացած վարչություն, որի կազմի մեջ մտան նոր կազմավորվող համայնքի աչքի ընկնող գործիչներ Կարապետ Չատիկյանը (ատենապետ), Արամ Ղուկասյանը, Հովհաննես Աթեշյանը, Ծերուն Գութուկյանը, Երվանդ Քարամանյանը: Ուրուզվայի կառավարության որոշմամբ 1930 թ. հուլիսի 9-ին պաշտոնապես ճանաչվեց Գաղութային մարմինը՝ Հայ գաղութային ընդհանուր միություն (Union General Armeniana) անվանումով⁹:

Համայնքի առաջին հայկական դպրոցը կազմավորվեց դեռևս 1923 թ., երբ Մոնտեիդեոյի Սերրո կոչվող թաղամասում հայերի կողմից գնվեց մի շինություն, որը սկսեց ծառայել և որպես եկեղեցի, և որպես դպրոց: Այնուհետև հիմնվեցին Աբգարյան, Հայկազյան, Սահակյան, Ներսեսյան, Խրիմյան, իսկ ավելի ուշ՝ Մամիկոնյան, Մեսրոպյան, Հայկազյան վարժարանները: Սակայն, հարկ է նշել, որ այդ դպրոցների մի մասը երկար չգոյատևեց: 1940-ական թթ. սկզբին ուրուզվահայ գաղութում գործում էր ընդամենը վեց հայկական դպրոց՝ 430 աշակերտով¹⁰: Հետագա տարիներին ևս հայկական դպրոցների թիվը հետզհետե նվազում էր, ինչը պայմանավորված էր ուրուզվահայ նոր սերնդի գերակշիռ մասի իսպանախոս լինելու հանգամանքով և դրանից բխող՝ իսպանական վարժարաններ հաճախող հայ երեխաների թվաքանակի տարեցտարի աճով: Արդյունքում, 2010 թ. սկզբին Ուրուզվայում գործում էր միայն երկու ամենօրյա հայկական դպրոց: Մեկը՝ Նուբարյան-Ալեք Մանուկյան վարժարանն էր, որը հիմնվել էր Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ՝ 1971 թ. Մոնտեիդեոյում: Այն ուներ մանկապարտեզ, նախակրթարան և երկրորդական բաժին: Վարժարանում 2005 թ. սովորում էր 310 աշակերտ, իսկ 2010 թ.՝ շուրջ 250 աշակերտ¹¹: Այստեղ դասավանդում էին հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն: Վարժարանի կառուցման գործում մեծ ներդրում ունեին ազգային բարերարներ Միսաք և Արփինե Գոյումճ-

⁹ Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարություն, Ամերիկայի հայ համայնքների վարչություն. Ուրուզվայի հայ համայնքի անձնագիր, 2009 թ., էջ 14-15:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, գործ N 140, էջ 14:

յանները: Սյուսը, 1950-ական թթ. վերջից Մոնտեվիդեոյում՝ Կենտրոնական վարչական խորհրդի հովանավորությամբ գործող Ներսեսյան վարժարանի հիման վրա 1972 թ. կազմավորված երվանդ Գսաճքյան վարժարանն էր՝ իր մանկապարտեզով և նախակրթարանով: Հայ երեխաներն այս վարժարան էին հաճախում 3 տարեկանից սկսած: 2010 թ. այստեղ սովորում էր շուրջ 100 աշակերտ¹²: Վարժարանում դասավանդում էին հայոց լեզու և գրականություն, կրոնագիտություն, հայոց պատմություն:

1938-1982 թթ. ուրուգվահայ համայնքն Արգենտինայի, Բրազիլիայի և Չիլիի հայ համայնքների հետ մեկտեղ ընդգրկված էր Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակության կազմում՝ կենտրոնը Բուենոս Այրես: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով 1983 թ. Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակությունը բաժանվեց երեք առանձին՝ Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի թեմերի: Հայաստանյաց առաքելական եկեղեցու Ուրուգվայի թեմի առաջնորդանիստը դարձավ 1964 թ. համագաղութային հանգանակությամբ Մոնտեվիդեոյում կառուցված և 1965-ին օծված Սուրբ Ներսես Շնորհալի միակ առաքելական եկեղեցին: Մոնտեվիդեոյում գործում են նաև մեկ կաթոլիկ և երկու ավետարանական եկեղեցիներ:

Ուրուգվայի հայ համայնքի պատմության մեջ պարբերական մամուլը շոշափելի դեր չի խաղացել: 1993 թ.-ից Մոնտեվիդեոյում հայերեն և իսպաներեն լեզուներով սկսեց հրատարակվել «Հայ ընտանիք» միակ պարբերաթերթը, որը, սակայն, երկար չգոյատևեց: Համայնքային լրատվամիջոցների դերը հիմնականում ստանձնել էին հայկական ռադիոկայանները: Հարություն Ռուբենյանի ջանքերով 1935 թ. հիմնադրվեց «Ռադիո-Արմենիա» ռադիոկայանը, որի ստեղծման 65 ամյակի կապակցությամբ 2000 թ. թողարկվեց հատուկ փոստային դրոշմանիշ: Սակայն 2007 թ. «Ռադիո-Արմենիան» փակվեց: Նույն թվականին «Ռադիո-Արմենիայի» հաղորդավար, լրագրող Դիեգո Կարամանուկյանի նախաձեռնությամբ հիմնվեց «Ռադիո-Արաքս» հայկական ռադիոկայանը, որը պետական որոշ-

¹² Տե՛ս նույն տեղում, գործ 143, էջ 220:

մամբ՝ տեղական մեկ այլ ալիքով ապահովում էր շաբաթական երեքուկեսժամյա հաղորդում: 2010-ական թթ. Կարո Յեքիմյանի գլխավորությամբ գործում է նաև ՀՀԴ Վռամյան ակումբի պաշտոնական ծայն՝ «Կոմիտաս» ամենօրյա ռադիոժամը:

1920-ական թթ. վերջից սկսեց ձևավորվել ուրուզվահայության հասարակական կյանքը, երբ աստիճանաբար կազմավորվեցին բազմաթիվ հայրենակցական, բարեսիրական-բարեգործական և մշակութային միություններ: Մասնավորապես՝ 1927 թ. հիմնվեցին Մարաշի, Սեբաստիայի, 1928-ին՝ Ադանայի, 1929-ին՝ Չեյթունի, 1930-ին՝ Հաճընի, Յոզղատի, 1933-ին՝ Կեսարիայի, 1935-ին՝ Ուրֆայի հայրենակցական միությունները: 1930-ականներից սկսած աշխույժ գործունեություն ծավալեցին բարեգործական կազմակերպությունները: Մասնավորապես, 1931-ից՝ Հայուհյաց բարեսիրաց միությունը, որն իր ծերանոցով գործում է մինչ օրս, 1934-ից՝ Հայ Կարմիր խաչի Մոնտեվիդեոյի մասնաճյուղը, 1938-ից՝ ՀԲԸՄ Մոնտեվիդեոյի մասնաճյուղը: Հիմնվեցին նաև մի շարք երիտասարդական կազմակերպություններ. 1939-ին՝ Հայ ուսանողական միությունը, «Մարո» օրիորդաց միությունը (1939-ին), 1940-ին՝ «Արմենիա», 1942-ին՝ «Փարամազ» միությունները: Ժամանակի ընթացքում բազմաբնույթ կազմակերպությունների մի մասը դադարեցրեց իր գործունեությունը, ստեղծվեցին նորերը: Ուրուզվայում գործում են նաև ՀՀԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպություններ՝ իրենց միություններով ու ակումբներով: Վերջինների թվին են պատկանում ՀՀԴ-ի «Վռամյան» կոմիտեն և «Արմենիա» երիտասարդական միությունը, ՍԴՀԿ-ի Հնչակյան տունը, ՌԱԿ-ի «Վահան Թեքեյան» ակումբը, ինչպես նաև ծախակողմյան (համայնավար) ուժերին միավորող Հայ ազգային կենտրոնը և Երևան մշակութային հիմնարկը, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, ՀՍԸՄ-ի, ՀՄՄ-ի մասնաճյուղերը: ՀԲԸՄ հովանավորությամբ գործում են միության երիտասարդական լիգան և Հայուհյաց բարեսիրական միությունը, ինչպես նաև «Կամք» և «Երևան 50» սկաուտական խմբերը: Գործում է նաև համադրող մարմնի բնույթ կրող Ուրուզվայի Հայկական բազմամիութենական կազմակերպությունը, որն իր մեջ համախմբում է Հնչակյան տունը, Հայ ազգային կենտրոնը, Արմենիա հրապարակի և պողոտա-

յի հանձնախումբը, Մարաշի հայրենակցական միությունն ու ՀԲԸՄ-ի Մոնտեհիդեոյի մասնաճյուղը: Հարկ է նշել, որ հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների մեծ մասը երկրում մեծ հեղինակություն էր վայելում:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության հիմնադրման 100-ամյա հոբելյանի առթիվ Ուրուզվայի կառավարության կողմից 1987 թ. սկսվեց հատուկ փոստային դրոշմանիշի թողարկում: Այս առումով նշենք, որ հատուկ փոստային դրոշմանիշ թողարկվեց նաև 2001-ին՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ¹³:

Վերոնշյալ բազմաբնույթ կազմակերպությունների ի հայտ գալը նպաստեց ուրուզվահայ գաղութի ոչ միայն հասարակական-քաղաքական, այլև մշակութային կյանքի զարգացմանը: Վերջինի ձևավորումը սկիզբ առավ 1930-ական թթ.: Մասնավորապես՝ 1932 թվականից համայնքում աստիճանաբար սկսեց աշխուժացում ապրել թատերական կյանքը, երբ Հովհաննես Չարիֆյանի ջանքերով՝ Մոնտեհիդեոյում, հայ դերասանների մասնակցությամբ, մի քանի անգամ բեմադրվեց Վ. Շեքսպիրի «Օթելլո» ողբերգությունը: 1940 թ. Հ. և Է. Արծիվների աշխատասիրությամբ մայրաքաղաքի հայ համայնքի դատին ներկայացվեց «Հարսանիքի նվեր» օպերետը:

Ուրուզվահայության մշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր Սուրաբյան ամուսինների ջանքերով Մոնտեհիդեոյում 1946 թ. առաջին անգամ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրումը: Գաղութի մշակութային կյանքը բովանդակալի էին դարձնում նաև 1935-ին հիմնված «Կոմիտաս» երգչախումբը, ՀԲԸՄ «Անդիմակ» թատերախումբը, «Կռունկ» երգչախումբը, «Գայանե» և «Շիրազ» պարախմբերը, «Երևան-50» և «Արամ Խաչատրյան» նվագախմբերը: Իրենց կատարողական բարձր վարպետությամբ աչքի էին ընկնում դաշնակահարներ Մարտիրոս Բայասյանը, Ադրինե Քեոյանը, Քնարիկ Քեկլիկյանը, Անթառամ Ահարոնյանը, ջութակահար Ավետիս Կարամանուկյանը, երգիչներ Կարպիս Գրազիրյանը, Գրիգոր Նիկողոսյանը, Պարզև Ավշարյանը, Աղասի Սանթրուրյանը,

¹³ Տես Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 615:

Հայկուհի Ստեփանյանը, Հակոբ Պոյաճյանը, Սեդա Մաճառյանը, դերասաններ Արմեն Սիրիան և Լևոն Բուռունսուզյանը, երաժշտագետ Կորյուն Ահարոնյանը: Կերպարվեստի բնագավառում լայն ճանաչում էին վայելում գեղանկարիչ Արա Գազանճյանը և քանդակագործ-գեղանկարիչ Ներսես Հունանյանը, որի անունով է կոչվում Մոնտեվիդեոյի փողոցներից մեկը:

Ուրուգվահայ գաղութի համայնքային կառույցների ձևավորմանը զուգընթաց աճում էր նաև նրա կշիռն ու դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Դրա ակնառու արգասիքներից էր 1965 թ. Ուրուգվայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումն ու ապրիլի 24-ը «Հայնահատակների հիշատակի օր» հռչակելը: Ընդ որում, Ուրուգվայը նման որոշում ընդունած առաջին երկիրն էր աշխարհում: Մոնտեվիդեոյի կենտրոնական հրապարակներից մեկը, ուր կանգնեցված էր Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշակոթող, 1971 թ. անվանակոչվեց «Armenia», իսկ 1972-ին՝ մայրաքաղաքի ծովափնյա մի պողոտա՝ «Rambla-Armenia»: «Armenia» անվանավեց նաև Պրիապոլիս քաղաքի հրապարակներից մեկը: Հայոց ցեղասպանության 90-ամյակի շրջանակներում Ուրուգվայի մայրաքաղաքում 2005 թ. բացվեց «La plaza de genocidio de los armenios» հրապարակը՝ հատուկ հուշաքարով: Այս նախաձեռնությունը ներկայացրել էր քաղաքի օրենսդիր մարմնի անդամ Րաֆֆի Ունանյանը: Հայոց ցեղասպանության 95 ամյակի կապակցությամբ 2010 թ. ապրիլի 24-ին Ուրուգվայի ՀԲԸՄ ու ՍԴՀԿ տեղական կառույցների, Հայ ազգային կենտրոնի և «Armenia» հրապարակի հանձնախումբի նախաձեռնությամբ Մոնտեվիդեոյի «Armenia» հրապարակում տեղադրվեց՝ ուրուգվահայ բարերար Կառլոս Կեցոյանի հովանավորությամբ Հայաստանից բերված խաչքար, որի բացումը կատարեց Ուրուգվայի այն ժամանակվա նախագահ ժոզե Ալբերտո Մուսիկա Կորդանոն: Բացման արարողությանը ներկա էին նաև երկրի կառավարության և հայ համայնքի երևելի ներկայացուցիչներ¹⁴:

Այսպիսով, ուրուգվահայ գաղութը հայ գաղթաշխարհի ամենակազմակերպված համայնքներից է, որի կառույցները հետևողական

¹⁴ ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, գործ N 143, էջ 75-78:

աշխատանքներ են ծավալում տեղի հայության ազգային ինքնության, հոգևոր արժեքների և պատմամշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ:

ZARUHI AZIZBEKYAN

**FORMATION AND DEVELOPMENT OF THE
ARMENIAN COMMUNITY IN URUGUAY
(THE END OF THE XIX CENTURY - BEGINNING
OF XXI CENTURY)**

SUMMARY

The first reference of Armenians in Uruguay dates back to 1890. The main wave of immigration of Armenians into Uruguay took place at the beginning of 20s of XX century as a result of influx of Armenian refugees, survivors of the Armenian Genocide from Western Armenia to many countries of the world, including Uruguay. According to the census of 1931, four thousand Armenians already lived in Uruguay. During this period formation of the Armenian community in Uruguay took place. A number of Armenian charitable and public organizations were founded at the end of the 30s of the XXc. Armenian traditional parties started to operate in Uruguay. At 60s numerous Armenian organizations were working in Uruguay whose primary goal was recognition and condemnation of the Armenian Genocide by the Uruguayan Government. On April 20 1965 Uruguay became the first country in the world to recognize officially the Armenian Genocide.

At the beginning of the XXI century about 20 thousand Armenians were living in Uruguay.

**ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ АРМЯНСКОЙ
ОБЩИНЫ УРУГВАЯ
(КОНЕЦ XIX ВЕКА - НАЧАЛО XXI ВЕКА)**

РЕЗЮМЕ

Первые упоминания об армянах в Уругвае датируются 1890 годом. Основная волна иммиграции армян в Уругвай пришлась на начало 20-х годов XX века, когда из Западной Армении в разные страны мира, в том числе и в Уругвай, хлынул поток беженцев-армян, спасшихся от геноцида. По данным переписи населения 1931 г. в Уругвае проживало уже 4 тыс. армян. В этот период происходит формирование армянской общины Уругвая. В конце 1930-х годов был основан ряд армянских благотворительных и общественных организаций. Начали действовать армянские традиционные партии. К 1960-ым годам в Уругвае уже действовали многочисленные армянские организации, основной целью которых стало признание и осуждение уругвайским правительством геноцида армян, в результате чего 20 апреля 1965 г. Уругвай первым в мире официально признал геноцид.

В начале XXI века в Уругвае проживало около 20 тыс. армян.

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՊՍՏԱՍԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ 1913–1915 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բալկանյան առաջին պատերազմում թուրքիայի պարտությամբ նպաստավոր պայմաններ են ստեղծվում Հայկական հարցի վերաբերած մասին համար: 1912 թ. նոյեմբերին եգիպտահայ նշանավոր գործիչ Պողոս Նուբար փաշան նշանակվում է կաթողիկոսական պատվիրակ՝ եվրոպական ղեկավար շրջանների մոտ արևմտահայերի արդարացի պահանջները ներկայացնելու համար: Ստանձնելով այդ առաքելությունը՝ նա ծեռնամուխ է լինում ակտիվ դիվանագիտական աշխատանքի՝ ի պաշտպանություն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման:

Տերությունների ղեկավար շրջանների մոտ Հայկական հարցի լուծմանը հետամուտ լինելով՝ Պողոս Նուբարը միաժամանակ արևմտահայությանը կոչ էր անում հեռու մնալ թուրքիայի դեմ ապստամբական ու զինված ելույթներից՝ համարելով, որ դրանք կարող են մեծասպես վնասել հետապնդվող խնդրի լուծմանը: «Պետք է բացարձակապես զգուշանալ այնպիսի քայլերից և մինչև անգամ մտածումներից, որոնք կարող են որևէ կերպ արգելք հանդիսանալ գործին», - հայտարարում էր նա¹: Պողոս Նուբարը համոզված էր, որ տվյալ պահին ապստամբական շարժումներն թուրքերի համար կարող էին առիթ հանդիսանալ՝ իրագործելու արևմտահայության բնաջնջման իրենց վաղեմի երազանքները, իսկ տերություններին կհարկադրեին վերապահվելով մոտենալ Հայկական հարցի կարգավորմանը: «Պողոս Նուբարը, - գրում էր Ե. Օտյանը, - առաջին վայրկեանեն դատապարտած է հեղափոխական տարրերու գործունեութեան եղանակը, զոր ազգին համար վնասակար գտած է»²: Այդ էր պատճառը, որ նա մերժում էր արևմտահայության ապստամբական և հեղափոխական

¹ «Ազգ», Բոստոն, 1913, N 35:

² Օտեան Ե., Պողոս Փաշա Նուբար (կենսագրական նօթեր), Կ. Պոլիս, 1913, էջ 16:

շարժումները նյութապես օժանդակելու խնդրանքներով իրեն՝ որպես մեծահարուստի, արվող դիմումները: «Ինչ որ ինե կպահանջեն՝ զայն ամբողջապես պիտի տամ ազգին, - ասում էր Պողոս Նուբարը, - ցույց տալու համար թե դրանը խնայել չեմ ուզեր, այլ այդ ուղղությու-
նում է որ կը դատապարտեմ ու չեմ քաջալերեր»³:

Բացասաբար վերաբերվելով արևմտահայության զինված ելույթ-ների՝ Պողոս Նուբարը հաշվի էր առել նաև տվյալ պատմական ժա-մանակահատվածում ստեղծված անբարենպաստ պայմանները: Առաջին հերթին զինված պայքարին տրամադիր և պատրաստ չէր արևմտահայությունը: «Հայկական հարցի արծարծման բնորոշ ար-տահայտություններից է այն, - 1913 թ. համարներից մեկում գրում էր «Մշակ» թերթը, - որ աննպատակահարմար են ճանաչված ապստամ-բական ակտիվ շարժումները, որոնք ժամանակակից պայմաններում չէին կարող համապատասխանել թուրքահայերի բռնած դիրքերին և նրանց կյանքի պայմաններին»⁴: Այդ էր վկայում նաև 1912 թ. դեկ-տեմբերի վերջերին Կ. Պոլիս այցելած եգիպտահայ գործիչ Վ. Մա-լեգյանը՝ Պողոս Նուբարին հղած նամակում. «Թուրքիոյ մեր բոլոր հայրենակիցները, առանց դաւանական, կուսակցական եւ այլ խտրութեան, հակառակ են զինեալ ապստամբութեան մը՝ ներկայ անդոհալից շրջանին»⁵:

Արևմտահայության ապստամբական շարժումներին դեմ էին նաև մեծ տերությունները, որոնք, հատկապես Օսմանյան կայսրու-թյան եվրոպական տիրույթների կորստից հետո, իրենց բոլոր ջանքե-րը գործադրում էին նրա տարածքային ամբողջականությունը պահ-պանելու և նոր բարդություններից ու բախումներից խուսափելու հա-մար: Ուստի՝ զինված ելույթները ոչ միայն չէին արժանանա տերու-թյունների ղեկավար շրջանների համակրանքին, այլև կվնասեին բա-րենորոգումների խնդրին, որի լուծման համար հայությունը դիմել էր նրանց օժանդակությանը: «Ես համոզված էի, - Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին հետագայում գրում էր Պողոս Նուբարը, - որ Եվրո-պան, մտահոգված լինելով իր քաղաքական և տնտեսական շահե-

³ Օտյան Ե., Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1962, էջ 376:

⁴ «Մշակ», Թիֆլիս, 1913, N 1:

⁵ Մալեգեան Վ., ճամբուս ծայրը, հտ. Բ, Փարիզ, 1955, էջ 227:

րով, ուշադրություն չէր դարձնի մեր տկարության վրա և միայնակ կթողներ մեզ մեր կեղեքիչների դեմ»⁶:

Վերոհիշյալ խնդրում Պողոս Նուբարի դիրքորոշումը որոշ գործիչների կողմից քննադատության է ենթարկվել: Այսպես, Ս.-Դ. Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ս. Ասպահ-Գյուլյանը մեղադրում էր վերջինիս «Երկաթե Շերեփի (հեղինակը նկատի ուներ Խրիմյան Հայրիկի այլախոսությունը – Հ. Բ.) և հեղափոխական շարժման գաղափարների պաշտպանությամբ» հանդես չգալու համար⁷: Այդ մեղադրանքն անհիմն էր մի շարք պատճառներով: Եթե նույնիսկ մի կողմ դնենք և հաշվի չառնենք այդ ժամանակ հեղափոխական շարժման համար ստեղծված անբարենպաստ պայմանները, ապա առաջին հերթին Պողոս Նուբարն իրավասու չէր հանդես գալ նման դիրքերից, քանի որ նրան որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցչի, հանձնարարված էր տերությունների ղեկավար շրջանների մոտ պաշտպանել բարենորոգումների իրականացման պահանջները: Երկրորդ, Պողոս Նուբարի նման կեցվածքն ամբողջովին անհիմաստ կդարձներ և կխափաներ Ազգային Պատվիրակության գործունեությունը: Եվ, վերջապես, երրորդ, Պողոս Նուբարը չէր, որ եվրոպական մայրաքաղաքներից պետք է հեղափոխական շարժման կոչեր աներ, այլ հայ քաղաքական և կուսակցական ղեկավար շրջանները, այդ թվում նաև Ս.-Դ. Հնչակյան կուսակցության առաջնորդները, որ պետք է տեղերում աշխատանք տանեին նման շարժում կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ:

Թուրքիայի դեմ զինված ապստամբություն բարձրացնելու խնդրում Պողոս Նուբարի դիրքորոշումն իր արտահայտությունը գտավ 1913 թ. սկզբներին Կիլիկիայում ծավալվող իրադարձություններում: Օգտվելով Բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած բարենպաստ պայմաններից՝ հայ գործիչներ Մ. Տամատյանն ու Պ. Օհանյանը Կահիրեում ստեղծում են Ազգային Պաշտպանության կոմիտե, որի նպատակն էր Կիլիկիայում թուրքական իշխանությունների դեմ զինված ապստամբության կազմակերպել: Այդ խնդրում իր

⁶ Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915–1918, ed. by V. Ghazarian, Waltham, 1996, p. 14.

⁷ Ասպահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Բեյրութ, 1974, էջ 133–134:

աջակցությունն էր հայտնել նաև հունական կառավարությունը՝ խոստանալով ռազմական օգնություն ցույց տալ կիլիկիահայությանը: Մ. Տամատյանի խնդրանքով ապստամբության ղեկավարությունը ստանձնում է Աղանայի հայոց նախկին առաջնորդ Մուշեղ Սերոբյանը, որն այդ նպատակով Ամերիկայից մեկնում է Եգիպտոս: Սրա հետ մեկտեղ աշխատանք էր տարվում ապստամբության համար դրամական միջոցների հայթայթման ուղղությամբ: Սակայն շուտով պարզ է դառնում, որ, դեռևս չսկսված, ապստամբությունն արդեն դատապարտված էր անհաջողության: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին գրեթե բացակայում էր զինված պայքարի նկատմամբ կիլիկիահայության միասնական ոգին, պատրաստվածությունն ու տրամադրվածությունը, մի հանգամանք, որը նման գործի հաջողության հիմնական գրավականն էր: «Յեղափոխութեան և ապստամբութեան գետին չկար, - հետագայում խոստովանում էր Մ. Սերոբյանը: - Հակառակ տրուած հաւաստումներու՝ կատարուելիքը պիտի ըլլար արուեստական յեղափոխութիւն մը»⁸: Երկրորդ, ապստամբության նախապատրաստական աշխատանքները կատարվել էին խիստ բացահայտ և չէին վրիպել թուրքական իշխանությունների ուշադրությունից: Երրորդ, ռազմական օգնություն խոստանալով և դրանով նպաստելով կիլիկիայում ապստամբությանը՝ հունական կառավարությունը հետապնդում էր իր շահերը. երկրում առաջացած ներքին խռովությունը կհարկադրեր թուրքական իշխանություններին որոշակի զիջումների գնալ հույների հետ այդ պահին ընթացող խաղաղության բանակցություններում: «Մեր աղեկության համար չէ հունաց առաջարկած աջակցությունը», - Ա. Չոպանյանին հղած նամակում 1913 թ. փետրվարի 5-ի գրում էր Ազգային պատվիրակության անդամ Հ. Մոստիշյանը⁹: Նման անբարենպաստ պայմաններում զինված պայքարը, բնականաբար, չէր կարող պսակվել հաջողությամբ, և ոչ միայն կխափաներ բարենորոգումների իրագործման շուրջ տարվող բանակցությունները, այլև կիլիկիահայության կոտորածի պատճառ կհանդիսանար:

⁸ Սերոբեան Մ., Դիտումներ և դատումներ (էջեր օրագրես), Պէյրուք, 1932, էջ 80:

⁹ ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., գ. 4758, թ. 1:

Կիլիկիահայության ապստամբության փորձերը դատապարտվում են Պողոս Նուբարի ղեկավարությամբ գործող Ազգային Պատվիրակության կողմից և որոշում է կայացվում դիմումներ հղել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին, Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին, Ս. Սերոբյանին, Կահիրեի և Ալեքսանդրիայի Քաղաքային ժողովներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելու գինված ելույթի աղետալի հետևանքների վրա: «Նմանօրինակ շարժում մը, - Ս. Սերոբյանին հղած 1913 թ. փետրվարի 7-ի նամակում ընդգծում էր Պողոս Նուբարը, - բնոյթ ունի անվրիպելիօրէն վտանգելու մեր դատը, և պատուիրակութեան պաշտօնը դարձնելու դժուար, չըսելու համար անհնար»¹⁰:

Նման բացասական արձագանքները չէին կարող անտեսվել և հաշվի չառնվել ապստամբության կազմակերպիչների կողմից: Բոլոր հանգամանքներն ուսումնասիրելով՝ Ս. Սերոբյանը ևս գալիս է այն համոզման, որ ծրագրված շարժումը չի կարող հաջողություն ունենալ, և հրաժարվում է այն կազմակերպելուց: «Այս ծախող պարագաներու տակ, - ասում էր նա, - շարժումը ազգային ինքնասպանություն է»¹¹:

Այսպիսով, ծախողվում է Կիլիկիայում թուրքական իշխանությունների դեմ գինված ապստամբության բարձրացման փորձը, որը ստեղծված անբարենպաստ պայմանների բերումով կարող էր աղետաբեր հետևանքներ ունենալ հայության համար: «Շնորհիվ հայ ղեկավար շրջանների ջանքերի, - գրում էր Պողոս Նուբարը, - այդ ծրագիրը բարեբախտաբար վիժեց, և մենք, անկասկած, շահեցինք տերությունների համակրանքը»¹²:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկմամբ և դրանում Թուրքիայի ներգրավմամբ նոր հնարավորություններ ստեղծվեցին Հայկական հարցի լուծման համար: Հայ քաղաքական շրջանների կողմից կազմակերպվեցին կամավորական գնդեր, որոնք ռուսական բանակի կազմում պետք է մասնակցեին Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Նման պայմաններում փոփոխություն են կրում նաև Պողոս Նուբարի մոտեցումները: Եթե մինչպատերազմական շրջանում նա հանդես էր գալիս արևմտահայերի գինված պայքարի դեմ՝

¹⁰ Սերոբեան Մ., նշվ. աշխ., էջ 79:

¹¹ ՀՀ Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ա. Չոպանյանի ֆ., գ. 6557, թ. 3:

¹² Nubar B., Note sur la Question Armenienne, Paris, 1916, p. 10.

համարելով, որ դա կխափանի բարենորոգումների իրականացման շուրջ ընթացող բանակցությունները, ապա ստեղծված նոր իրավիճակում ողջունում է կամավորական շարժման կազմակերպումը: «Կամավորները, մարտնչելով դաշնակից երկրների կողքին, ուժ կտան մեր դատին և նոր իրավունքներ կստեղծեն մեզ համար: Այսպիսով մեր ծայնն ավելի ուժեղ կլինի, երբ ժամանակը գա ձևակերպելու մեր արդարացի և համեստ պահանջները», - 1915 թ. ապրիլ 7-ին Ս. Վարանդյանին հղած նամակում գրում էր Պողոս Նուբարը¹³:

Որոշակի վստահություն ունենալով, որ Արևմտյան Հայաստանը կազատագրվի ռուսական բանակի կողմից, Պողոս Նուբարն անհանգիստ էր հատկապես կիլիկիահայության ճակատագրով, որին սպառնում էր կոտորածի վտանգը: Իր այս մտահոգությունները նա ներկայացնում է «Պատերազմը և կիլիկիահայությունը» հուշագրում, որում ընդգծում է Կիլիկիային ինքնավարություն շնորհելու կամ դաշնակից երկրներից որևէ մեկի կազմի մեջ ներառելու անհրաժեշտությունը¹⁴:

Թուրքիայի՝ Եռյակ միության կազմում պատերազմի մեջ մտնելուց հետո, Մեծ Բրիտանիայի գինված ուժերի գլխավոր շտաբում ռազմական նախարար Հ. Քիթչեների գլխավորությամբ մշակվում է մի ծրագիր, ըստ որի 1915 թ. սկզբներին նախատեսվում էր գործերի ավիհանում կատարել Ալեքսանդրետի ծոցի շրջանում (Սիրիա, Կիլիկիա), այնտեղից էլ շարժվելով հյուսիս-արևելք միանալ, ռուսական բանակին¹⁵: Այդ ծրագրի իրականացմամբ դաշնակից երկրները ջախջախիչ հարված կհասցնեին Օսմանյան կայսրությանը:

Անգլիական ռազմական ղեկավարության մշակած այդ ծրագիրը մեծ ոգևորություն և հույսեր արթնացրեց Պողոս Նուբարի մոտ, քանզի նա գիտակցում էր, որ դաշնակից զորքերի ներկայությունը Կիլիկիայում կերաշխավորեր տեղի հայության անվտանգությունը թուրք ջարդարարներից: Սրա հետ մեկտեղ, Պողոս Նուբարը գտնում էր, որ կիլիկիահայությունն անպայման պետք է օգտվի այդ պատեհ առիթից՝ ապստամբություն բարձրացնելով և անգլիական զորքերի օգ-

¹³ Boghos Nubar's Papers ..., p. 9.

¹⁴ Նույն տեղում, էջ 5:

¹⁵ Barker A. J., The Bastard War: The Mesopotamian Campaign of 1914-1917, New York, 1967, p. 409.

նությամբ ազատագրվելով թուրքական տիրապետությունից: «Անգլիացիների ափհանումը Կիլիկիայում խթան կհանդիսանա ապստամբություն բարձրացնելու համար, որն էլ կնպաստի մեր ազգային իղծերի իրականացմանը», - Գևորգ Ե-ին հղած 1915 թ. հուլիսի 18-ի նամակում գրում էր Պողոս Նուբարը¹⁶: Իսկ Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին հղած 1915 թ. ապրիլի 17-ի նամակում, կարևորելով սեփական իրավունքների համար պայքար մղելը, նա գրում էր. «Յուրաքանչյուր ճնշված ժողովուրդ որոշակի պարտականություններ ունի կատարելու, որպեսզի արժանի լինի ազատագրման»¹⁷:

1914 թ. նոյեմբերին Պողոս Նուբարը հանդիպում է Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատար Ջոն Մաքսվելին և քննարկում կիլիկիահայության կողմից անգլիական էքսպեդիցիային աջակցություն ցուցաբերելու հարցը: Պողոս Նուբարն իր գրուցակցին հավաստիացնում է, որ կիլիկիահայությունը հնարավոր օժանդակությունը կցուցաբերի անգլիական զորքերին և նրանցից զենք ու զինամթերք ստանալու դեպքում միահամուռ կերպով ապստամբություն կբարձրացնի թուրքական իշխանությունների դեմ¹⁸: «Աջակցությունը դաշնակից զորքերին չպետք է սահմանափակվի միայն ջերմ ընդունելությամբ և որոշ փոքր ծառայությունների մատուցմամբ», - Սահակ կաթողիկոսին հղած նամակում գրում էր Պողոս Նուբարը՝ հատուկ կարևորելով զինված ապստամբություն բարձրացնելու հանգամանքը¹⁹: Դաշնակից երկրների օժանդակությամբ կիլիկիահայերի՝ ապստամբություն բարձրացնելու հնարավորության մասին նշում էր նաև Վ. Մալեգյանը Ջ. Մաքսվելին 1915 թ. հուլիսին հղած ծանուցագրում²⁰: Անգլիացի ռազմական բարձրաստիճան պաշտոնյայի հետ հանդիպմանը Պողոս Նուբարը միաժամանակ հույս է հայտնում, որ Մեծ Բրիտանիայի կողմից Կիլիկիայի գրավումը ժամանակավոր բնույթ չի կրի, և կիլիկիահայությունն այլևս չի հայտնվի թուրքական տիրապետության տակ: Հանդիպման վերջում,

¹⁶ Boghos Nubar's Papers ..., p. 212.

¹⁷ Նույն տեղում, էջ 15:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 45:

¹⁹ Boghos Nubar's Papers ..., p. 15.

²⁰ Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հտ. 1, Երևան, 2005, էջ 190:

ընդգծելու համար Կիլիկիայի հայ բնակչության ազատատենչ ոգին և որպես նրանց ռազմական տաղանդի ցայտուն օրինակ, Պողոս Նուբարը հիշատակում է Ձեյթունի 1895 թ. ապստամբությունը²¹։

Սակայն, դժբախտաբար, անգլիական զորքերի՝ Ալեքսանդրետի շրջան նախատեսված ափհանուճը չիրագործվեց։ Դրա փոխարեն, Մեծ Բրիտանիայի ռազմածովային նախարար Ու. Չերչիլի նախաձեռնությամբ և առաջարկով որոշվեց անգլիական և ֆրանսիական զինված ուժերի մասնակցությամբ իրականացնել Դարդանեւի ռազմական օպերացիան, որի նպատակը սևծովյան նեղուցների և Կ. Պոլսի գրավումն էր²²։ Անգլիական զորքերի ծրագրված ափհանուճը Կիլիկիա և Սիրիա չիրականացվեց հիմնականում Ֆրանսիայի դիրքորոշման պատճառով։ Սիրիայում՝ հսկայական տնտեսական և քաղաքական շահեր ունենալով՝ Ֆրանսիան չէր կարող թույլ տալ անգլիական ազդեցության հաստատումն ու ուժեղացումը տարածաշրջանում։ Այդ իսկ պատճառով Անգլիան հրաժարվում է իր այդ նախագծից՝ փոխարենը ստանալով Ֆրանսիայի համաձայնությունը մասնակցել Դարդանեւի ռազմական օպերացիային²³։

Փաստորեն, անգլիական զորքերի սպասված ափհանուճը չիրականացավ, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին անարգել կազմակերպել կիլիկիահայության կոտորածը։

1915 թ. հուլիսին Հայկական հարցի լուծմանն ի նպաստ ծավալած գործունեության շրջանակներում այցելելով Լոնդոն Պողոս Նուբարը հանդիպում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Նիկոլսոնի հետ և հետաքրքրվում անգլիական զորքերի Կիլիկիա ափհանման հնարավորության մասին։ Ի պատասխան՝ անգլիական պաշտոնյան հայտնում է, որ դա անհնարին է, քանի որ այդ պահին դաշնակից երկրների ամբողջ ուժերը ներգրավված են Դարդանեւի ռազմական օպերացիայում²⁴։ «Եթե մենք սպասենք մինչև Կ. Պոլսի պաշարումն ու դաշնակից զորքերի ափհանումը Կիլիկիա,

²¹ Boghos Nubar's Papers ..., p. 5.

²² Դարդանեւի ռազմական օպերացիան, որը սկսվեց 1915 թ. փետրվարի 19-ին և տևեց մոտ մեկ տարի, ավարտվում է ծախսողմամբ և դաշնակից զորքերի պարտությամբ։

²³ Готлиб В. В., Тайная дипломатия во время первой мировой войны, Москва, 1960, с. 115.

²⁴ Boghos Nubar's Papers ..., p. 142.

այնտեղ այլևս ոչ մի հայ չի մնա», - հուսահատորեն նշում էր Պողոս Նուբարը Գևորգ Ե կաթողիկոսին հղած հուլիսի 18-ի նամակում²⁵:

Այսպիսով, համակերպվելով ստեղծված իրավիճակի հետ, Պողոս Նուբարին մնում էր իր ջանքերն ուղղել կիլիկիահայությանը թուրքական դաժան լծից ազատագրելու այլ հնարավորությունների որոնմանը:

HOVAKIM BOYADJYAN

BOGHOS NUBAR PASHA AND THE QUESTION OF REBELLION OF CILICIAN ARMENIANS IN 1913–1915

SUMMARY

Defending the Armenian question, Boghos Nubar called Western Armenians to refrain from raising an armed rebellion against the Turkish government, which could harm the implementation of reforms in Western Armenia. Thus he opposed efforts by some figures to stage a rebellion of Cilician Armenians, which for a number of objective reasons, was doomed to failure. With the outbreak of World War I, Boghos Nubar's views on this subject had changed. Upon learning about the upcoming landing of British troops in Cilicia (at the beginning of 1915), Boghos Nubar believed that Cilician Armenians should take advantage of suitable moment, raise a rebellion and provide all possible support to British troops.

²⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 46:

**ПОГОС НУБАР ПАША И ВОПРОС ПОДНЯТИЯ
ВОССТАНИЯ КИЛИКИЙСКИМИ АРМЯНАМИ
В 1913–1915 ГОДАХ**

РЕЗЮМЕ

Выступая в защиту Армянского вопроса Погос Нубар призывал западных армян воздержаться от поднятия вооруженного восстания против турецких властей, что могло навредить делу осуществления реформ в Западной Армении. Он выступил против попыток некоторых деятелей организовать восстание киликийских армян, которое по ряду объективных причин было обречено на провал. С началом Первой мировой войны взгляды Погоса Нубара изменились. Узнав о готовящейся высадке английского десанта в Киликии в начале 1915 г., Погос Нубар полагал, что киликийские армяне должны воспользоваться подходящим моментом, поднять восстание и оказать всяческую поддержку английским войскам.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԵԾ
ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1915–1916 թթ. Հայոց Մեծ Եղեռնը XIX դարի վերջին սկսված և XX դարի սկզբին շարունակվող Հայոց ցեղասպանության թուրքական պետական քաղաքականության կիզակետն էր, որը հանդիսանում էր նախօրոք կազմված պետական ծրագրի արդյունք: Թուրքական պատմագիտության և դիվանագիտության պաշտոնական դիրքորոշման հիմքում, սակայն, մինչ օրս ընկած է ժխտողականության սկզբունքը, որը նպատակ ունի 1915–1916 թթ. տեղահանություններն ու կոտորածները ներկայացնել որպես պատերազմական իրավիճակի, և ոչ թե՛ մշակված ծրագրի արդյունք¹: Այն հերքելու տեսանկյունից կարևորվում են Օսմանյան կայսրությունում գործող դաշնակից և չեզոք պետությունների դիվանագիտական և ռազմական գործիչների հաղորդումները, զեկուցագրերը: Դրանց ուսումնասիրությունն ու համադրությունը ցույց է տալիս, որ 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության համար համաշխարհային պատերազմը հանդիսանում էր առիթ և ոչ թե պատճառ:

Դեռևս 1915 թ. սկզբին օտարերկրյա դիվանագիտական գործիչները, հենվելով թուրք պաշտոնյաների արտահայտությունների և պաշտոնավարած շրջաններում իրականացվող գործողությունների վրա, փաստում են պետության ներքին քաղաքականության մեջ իայ ժողովրդի բնաջնջման մշակված ուղեգծի առկայությունը: Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն իր հուշերում նշում է, որ թուրք պաշտոնյաներն իր հետ զրույցի ժամանակ կողմ են արտահայտվել ոչ թուրքերի դեմ իրականացվող բռնություններին, որոնց

¹ Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 38:

իրականացման ծրագիրը քննարկվել է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղտնի ժողովների ժամանակ²: Հիրավի, բրիտանական արխիվներում պահպանված մի փաստաթուղթ վկայում է, որ 1915 թ. հունվարի սկզբներին երիտթուրքերը գաղտնի ժողովի ժամանակ ընդունել էին «տասը հրամաններ», որոնք հայերի հանդեպ պետական քաղաքականության ողնաշարն էին կազմում: Դրանք էին՝ լուծարել ընկերությունները, ձերբակալել բոլոր հայերին՝ անկախ այն բանից, գործել են կառավարության դեմ, թե՛ ոչ, աքսորել և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ նշանակման վայրերում: Այնուհետև, խնդիր էր դրվում համապատասխան միջոցներով գրգռել մահմեդականների հասարակական կարծիքն ընդդեմ հայերի և հրահրել կազմակերպված կոտորածներ, իսկ դրանք կասեցնելու համար կարգ ու կանոն պահպանող զինված ուժերին օգտագործել առերևույթ: Նախատեսվում էր միջոցներ ձեռնարկել հայ պաշտոնյաներին պաշտոնանկ անելու, 50 տարին չբուլորած բոլոր տղամարդկանց, քահանաներին և ուսուցիչներին բնաջնջելու համար: Եվ թուրքական հայասպան քաղաքականության թերևս ամենամանենգ դիտավորությունը՝ «Ամենուր գործողությանը ձեռնամուխ լինել միևնույն պահին, որպեսզի պաշտպանողական միջոցների դիմելու համար ժամանակ չհատկացվի»³:

1915 թ. մայիսի 10-ին Հալեպում գերմանական հյուպատոս Վ. Ոյոսլերը նշում է, որ կառավարության հակահայկական տրամադրությունների թիրախը բոլոր շրջանների հայերի ոչնչացումն է⁴: Հյուպատոսի այս փաստարկն արժեքավոր է նրանով, որ մինչ մայիսի 10-ը թուրքական կառավարության կողմից հայ խաղաղ բնակչության դեմ ուղղված որևէ պաշտոնական որոշում կամ հրաման չէր հրապարակվել: Տեղահանության մասին օրենքը՝ որպես կառավար-

² Stü Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, New York, 1918, էջ 175: Ալեքսանդրետի գերմանական հյուպատոս Հ. Հոֆմանը 1915 թ. հոկտեմբերին նշում է մի գաղտնի համաձայնության մասին, ըստ որի բոլոր տեղահանվածները դատապարտվել էին մահվան (տես Dadrian V., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, New Brunswick, 1994, էջ 105):

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հ. I, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, Երևան, 2005, էջ 27–28:

⁴ Stü Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, էջ 106:

րության հանցագործ գործունեությունն իրավական դաշտ բերելու գործիք, ընդունվել է միայն մայիսի 14-ին (27-ին): Այսինքն, դեռևս մինչև օրենքի հրապարակումն, օտարերկրյա դիվանագետն ականատես էր դեպքերի կամ տեղյակ էր ինչ-որ ծրագրի մասին, ինչն էլ հիմք էր տալիս նրան նման եզրակացություն կատարել: 1915 թ. մայիսի 25-ին Հ. Մորգենթաուն պետքարտուղարին ուղղած զեկուցագրում փաստում էր, որ Օսմանյան կայսրությունում բնակչության տեղահանության տեսքով տարվում է ավելի *հետևողական* քաղաքական ուղեգիծ, քան նախկինում⁵: Տեղահանություններին թերահավատություն էր ցուցաբերում նաև գերմանական դեսպան Հ. Վանգենհայմը: Ղրանք իրականացնելու ձևից 1915 թ. հուլիսի 7-ին դեսպանը եզրակացնում է, որ կառավարությունը հետապնդում է հայ ժողովրդի լիակատար ոչնչացման նպատակ: Հ. Մորգենթաուն 1915 թ. հուլիսի 10-ին զեկուցում է պետքարտուղարին, որ կոտորածները ոչ թե պատասխանն են ժողովրդի կամ ֆանատիկոսների պահանջների, այլ ուղղորդվում են Կ. Պոլսից՝ ռազմական անհրաժեշտության անվան տակ, հաճախ այն շրջաններում, ուր անհավանական է, որ ռազմական գործողություններ տեղի կունենան⁶:

1915 թ. օգոստոսի 31-ին Օսմանյան կայսրությունում իտալահպատակների պաշտպանության հանձնակատար Ֆ. Տալիանին հավաստում է, որ իշխանություններն արգելում են Կոստանդնուպոլսից ցանկացած մեկնում: Նշենք, որ, սկսած մարտ ամսից կառավարության հրահանգների համաձայն, կայսրության ցանկացած բնակիչ առանց հատուկ թույլտվության չէր կարող ազատորեն տեղաշարժվել ներքին նահանգներում: Այդ միջոցառումն ուղղված էր հատկա-

⁵ Տես Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, կազմ. և ներած. հեղ.՝ Տ. Ջաքարյան, Երևան, 2002, էջ 31: Երիտթուրքերի դատավարության ժամանակ բացահայտվում է, որ «տեղահանություն»-ը «կոտորած»-ի կամ «ոչնչացնել»-ու ծածկագիրն է: Այսինքն՝ տեղահանության նպատակը ոչնչացումն էր (Dadrian V., Documentation of the Armenian Genocide in Turkish Sources, New York, 1991, p. 89): Երիտթուրքական պարագլուխները դատապարտվել էին ոչ թե տեղահանության իրականացման, այլ դրա քողի տակ կոտորած կազմակերպելու պատճառով (Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբ., թարգմ. և ծանոթ. Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 152):

⁶ Տես Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, էջ 36:

պես հայ ժողովրդի դեմ: Սակայն հանձնակատարը, փաստորեն, իր զեկուցագրում բերում է կառավարության հաջորդ քայլը՝ Երկրից դուրս գալն արգելելը: Տալիանին տեղեկացնում է նաև արտգործնախարարին, որ խոսք է գնում համաներման մի հրամանի մասին, որը կառավարությունը պետք է ընդունի⁷: Նույն օրը Թալեաթ բեյի հետ հանդիպումից հետո, ավստրոհունգարական դեսպան Պալավիչինին նրա դատողություններից եզրակացնում է, որ հայերի դեմ դաժան գործելակերպը պետք է դադարեցվի միայն այն պատճառով, որովհետև բոլոր այն հայերը, որոնք կամ որպես հեղափոխականներ ու պետության թշնամիներ, կամ որպես տնտեսական անցանկալի մրցակից, ասպարեզից վերացվել են⁸: 1915 թ. հոկտեմբերի 6-ին Լորդերի պալատում Ջ. Բրայսը հայերի կոտորածը որակում է կանխամտածված և պարբերաբար իրականացված անպատկառ արկածախնդիրների մի հրոսակախմբի կողմից, որը տնօրինում էր Օսմանյան կայսրության կառավարությունը⁹: Անգլիացի գործիչը նշում է նաև, որ տեղահանության վերջնակետերն էին ընտրվել այնպիսի վայրեր, որտեղից վերադարձն անհնար էր, և քչերը կարող էին դիմանալ դրանց դժվարություններին¹⁰:

1915 թ. սեպտեմբերի 28-ին Տալիանին զեկուցում է արտգործնախարար Սոննինոյին աննախադեպ մի իրադարձության մասին: Թուրքական սենատի նիստի ընթացքում սենատոր Ահմեդ Ռիզա բեյը պահանջել է, որպեսզի կառավարությունը բացատրություն տա Համաձայնության երկրների դեմ պատերազմ սկսելու պատճառների և *հայերի դեմ իրականացվող հալածանքների համար*. Նիստից հետո Թալեաթը կանչել է սենատորին և հայտարարել, որ եթե նա շարու-

⁷ Տես Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923, կազմ. Բալոյան Ա., հ. Ա, Երևան, 2008, էջ 169:

⁸ Տես Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, էջ 55:

⁹ Toynbee A. J., նշվ. աշխ., էջ 6: Լորդ Բրայսի զեկույցի տեքստն առկա է նաև իտալական վավերագրերում (տես Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923, էջ 180–181, ինչպես նաև Հայոց ցեղասպանության դատապարտումը Սեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915–1918 թթ.), էջ 17–23):

¹⁰ Տես Toynbee A. J., նշվ. աշխ., էջ 9: Տես նաև Bryce J., նշվ. աշխ., էջ 643:

նակի պնդել իր առաջադրած խնդիրների քննարկման վրա, ապա նախարարը կիրապարակի որոշ փաստաթղթեր, որոնք մուսուլման բնակչությանը կիրաիրեն բնաջնջել բոլոր հայերին: Ֆ. Տալիանին ենթադրում է, որ Ահմեդ Ռիզա բեյին սպառնացել են մահապատժով: 1915 թ. նոյեմբերի 2-ին Ադրիանապոլսի ավստրոհունգարական հյուպատոս Նադամլենցկին տեղեկացնում է, որ ողբացող և կիսախելագար հայերի արտաքսմանը ներկա էին կոմիտեի տեղի դպրոցի սաները. «Որ այդ երեխաներին կոմիտեական դաստիարակություն տրվի», - բացեիբաց բացատրել է դպրոցի տնօրենը¹¹: Այս դրվագի նկարագրությունը հաստատում է Օսմանյան կայսրությունում տարվող հակահայկական քարոզչության մասին, որը ներարկվում էր նաև երիտասարդ սերնդին՝ հիմք ստեղծելով թուրքական հայաջինջ քաղաքականության շարունակականության համար:

Օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչները հանցագործության նպատակի մասին տեղեկանում էին նաև թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից: Նոյեմբերի 7-ին ավստրոհունգարական դեսպան Պալապիչինին գրում է արտգործնախարարին, որ Օսմանյան խորհրդարանի նախագահ Յալիլ փաշայի հետ հանդիպման ժամանակ վերջինս հայտարարել է, որ Թալեաթը ձգտում է Յայկական հարցը պատերազմի ընթացքում իր ձևով լուծել և տերություններին կատարված փաստի առջև կանգնեցնել¹²: Մեծ Բրիտանիայի Ռազմական նախարարությանը հղած 1916 թ. մայիսի 20-ով թվագրված մի գաղտնի գեկուցագիր հաստատում է տեղահանության քողարկիչ բնույթը և փաստում, որ այն իրականացվել է տեղական իշխանությունների կողմից՝ ի կատարումն անձամբ ներքին գործերի նախարարի հրամանի: Ձեկուցագրում նշվում է նաև, որ Թալեաթը հանդիմանում է «ստահակ պաշտոնյաներին», որոնք դիմել են ժայրահեղությունների հրամանների իրականացման ընթացքում¹³, բայց

¹¹ Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, p. 109: Տե՛ս նաև՝ Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, էջ 80:

¹² Տե՛ս Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, էջ 84:

¹³ «Երիտթուրքերի դատավարության ընթացքում ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը

չի եղել մի դեպք, որ նման որևէ մեկը պատժի ենթարկվի¹⁴: Ընդհակառակը, Անկարայի և Կոնիայի կառավարիչները հրամանին չենթարկվելու պատճառով փոխարինվել են նորերով¹⁵: Այսինքն, ոչ թե պատժվում էին հանցագործ պաշտոնյաները, այլ նրանք, ովքեր անտեսում էին հայերի տեղահանություններն առավել խիստ ծևով իրականացնելու պետական հրամանը:

1916 թ. նոյեմբերի 13-ին գերմանական հյուպատոս Ռադովիցը ռախսկանցիներին գեկուցում է, որ գերմանական զինվորական առաքելության գեներալ Լիման Օտտո ֆոն Սանդերսը միջամտել էր Ջնյուռնիայում տեղահանությանը և սպառնացել վալիին դիմել գեներալի ուժին, եթե հայերի հանդեպ կամայականությունները և ծերբակալությունները շարունակվեն, ինչը ստիպել է թուրք պաշտոնյային տեղի տալ: Վալին, սակայն, բացատրել է ֆոն Սանդերսին, որ տեղի երիտթուրքական կոմիտեն միշտ դժգոհ էր հայերին խնայելու իր քաղաքականությունից և իր դիրքերը խաթարվել են Կոստանդնուպոլսում, որտեղից եկել է հրամանը: Գեներալն, այնուհետև, հայտնում է հյուպատոսին, որ եթե նրան դրան դրդում են Կոստանդնուպոլիսից, ապա տեղահանության համար այլ ճանապարհներ կընտրվեն¹⁶: Բնականաբար ընտրվեցին, քանի որ հայերի կազմակերպված ոչնչացման պատճառն ավելի խորն էր: Դրա մասին է վկայում 1916 թ. դեկտեմբերին էրզրումում գերմանական փոխհյուպատոս Շյոբ-

Քիլիսի կայմակամն էր, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը (հայերի) ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալաաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը» (Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 40):

¹⁴ Տես Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), էջ 302:

¹⁵ Տես նաև երիտթուրքերի դատավարության 1919 թ. հունիսի 3-ի մեղադրական եզրակացությունը. «Կառավարությունը ոչ միայն չի պատժել և արգելել այդ կոտորածներն ու կողոպուտները սանձազերծող հանցագործներին, այլ ընդհակառակը, պաշտոնից հեռացրել է այն վալիներին և մութասարիֆներին, որոնք պատասխանատվությունը իրենց վրա հանձն առնելով, հրաժարվել են գործադրել այդ տեղահանություններն ու կոտորածները» (Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 109–110):

¹⁶ Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918), կազմող Վ. Միջայեյան, Եր., 2004, էջ 168:

ներ-Ռիխտերը: Համաձայն դիվանագետի՝ երիտթուրքական կոմիտեի մեծ մասն այն տեսակետին էր, որ թուրքական կայսրությունը պետք է լինի գուտ մահմեդական, պանթյուրքիզմի հիմքի վրա կառուցված և ոչ մահմեդական ու ոչ թուրք բնակիչները պետք է թրջացվեին, իսկ այնտեղ, որտեղ դա հնարավոր չէր՝ ոչնչացվեին¹⁷:

Այսպիսով, օտարերկրյա դեսպանների և հյուպատոսների զեկուցումների համադրությունը գալիս է հաստատելու, որ Հայոց ցեղասպանության ընթացքում իրականացված տեղահանությունը և կոտորածը, որպես հայ տարրի բնաջնջման մեթոդներ, նույնանուն էին իրենց արդյունքով: Իսկ երիտթուրքերի դատավարության ընթացքում երկու սպաների հաղորդագրությունների վերծանումը հաստատել է, որ առաջինը երկրորդի ծածկագիրն էր: Կոտորածը նման աղետալի չափերի կարող էր հասնել միայն պետական հովանավորչության և նախապես լավ կազմված ծրագրի գոյության պայմաններում: Ինչպես ցույց տվեցին վերոնշյալ զեկուցագրերը, ցեղասպանություն իրագործելու նպատակով թուրքական կառավարությունը նախապես մշակել և հետևողականորեն իրականացնում էր որոշակի միջոցառումներ. արգելափակում էր երկրից դուրս գալ ցանկացողների ելքը, որպեսզի նվազեցնի հայ ժողովրդի ներկայացուցիչների փրկության հավանականությունը, պատերազմի քողի տակ կազմակերպում և վերահսկում էր տեղահանությունը, տեղերում հրամանին չենթարկվող թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին փոխարինում էր նորերով, ընտրում էր տեղահանության համար ամենաանբարենպաստ ճանապարհները և կայանատեղիները, որպեսզի հնարավորինս քչերը հասնեին վերջնակետին, իսկ պակասը լրացնում էր բանակը՝ զինված քրդերին, չեթներին և քրդական զգեստ հագած թուրք զինվորներին ուղղորդելով հատուկ այդ նպատակի համար: Հստակ է նաև, որ հայ ժողովրդի ոչնչացման տեղահանության ձևն ընտրվել էր հետագայում թուրքական պետության արդարացման նպատակով:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 178:

REGINA GALUSTYAN

**THE PREMEDITATION OF THE ARMENIAN
GENOCIDE ACCORDING TO PUBLISHED
DIPLOMATIC DOCUMENTS OF THE GREAT
POWERS**

SUMMARY

The Armenian Genocide of 1915–1916 was the culmination of the massacre of Armenians fulfilled in the Ottoman Empire from the end of XIX to the first half of the XX centuries. It was the result of Turkish state's premeditated program.

РЕГИНА ГАЛУСТЯН

**ПРЕДУМЫШЛЕННОСТЬ ГЕНОЦИДА АРМЯН
1915–1916 ГГ. ПО ОПУБЛИКОВАННЫМ
ДИПЛОМАТИЧЕСКИМ ДОКУМЕНТАМ
ВЕЛИКИХ ДЕРЖАВ**

РЕЗЮМЕ

Геноцид армян 1915–1916 является кульминацией осуществленного в Османской империи геноцида в конце XIX – начале XX века. Геноцид являлся результатом предумышленной политической программы турецкого государства. Весомое значение имеют официальные доклады дипломатических и военных представителей союзнических и нейтральных государств в Османской империи. Исследование и сопоставление этих документов обосновывает тот факт, что Первая мировая война являлась поводом, а не причиной геноцида армян 1915–1916 гг.

**ԼԱԶԻՍՏԱՆԻ ԽՆԴՐՈՒՄ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՆԴՈՆԻ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ
(1920 թ. փետրվար-մարտ)**

Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքական գլխավոր գերակայություններից մեկը ծովային ելքի ապահովումն էր: Այդ նպատակի իրականացման համար իրական հնարավորություն ստեղծվեց Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակություններն առաջ են քաշում նաև այս հարցը:

Սակայն շուտով ակնհայտ է դառնում, որ Անգլիան և Ֆրանսիան Հայաստանի դեպի Սև ծով ելք ունենալու հարցի շուրջ լուրջ տարակարծություններ ունեն, հատկապես, երբ քննարկվում էր Տրապիզոնի հարցը: Այս տարբերակին դեմ էր Ֆրանսիան: Տրապիզոնը Հայաստանին հանձնելուն դեմ արտահայտվեցին նաև Պոնտոսի հույները: Ֆրանսիացիները առաջարկում էին Հայաստանին ծովային ելք տրամադրել Լազիստանով՝ Ռիզեի կամ Աթինեի նավահանգստով, որին անգլիացիները համաձայնեցին միայն 1920 թ. սկզբներին, երբ հրաժարվեցին մերձսևծովյան տարածքներում իրենց հովանու ներքո խամաճիկ պետություն ստեղծելու ծրագրից: Այս առաջարկին էլ կտրուկ դեմ արտահայտվեցին վրացիները¹:

Հայ-վրացական հարաբերություններում պակաս հետաքրքրական չէ նաև Լազիստանի խնդիրը, որը ծագեց 1920 թ. սկզբներին, երբ Հայաստանի դեպի ծով ելքի հարցը քննարկելիս հնարավոր տարբերակներից մեկը դիտվում էր հենց այդ տարածաշրջանը:

Լազիստանը (Լազիկա) Տրապիզոնի վիլայեթի Տրապիզոնից դեպի արևելք Սև ծովի առափնյա գավառներից մեկն էր, որը ձգվում էր մոտավորապես Ռիզե-Աթինե-Խոպա գծով: Ինչպես տեսանք Լազիստանի վրա հավակնություններ ունեին անգլիացիները, հույները, հայերը, վրացիները և, իհարկե, քեմալականները: Անգլիացիներ-

¹ Տես Թորոսյան Շ., Դեպի ծով ելքի հարցը և հայ-վրացական տարակարծությունները Սան Ռեմոյի խորհրդաժողովում, «21-րդ դար», 2013, թիվ 4 (50), էջ 135–136:

րի հավակնությունները դադարեցին 1920 թ. գարնանը, երբ նրանք վերջնականապես հրաժարվեցին Աջարիայի և Լազիստանի տարածքում պետություն ստեղծելու ծրագրից: Հույներն հավակնությունները ի հայտ եկան դեռևս 1919 թ. սկզբներին, երբ նրանք առաջ քաշեցին Պոնտոսի հանրապետություն ստեղծելու ծրագիրը: Հույները իրենց պահանջը հիմնավորում էին պատմական իրավունքով և տարածաշրջանի ազգագրական կազմով: Այդ նույն ժամանակ վրացիները Փարիզի վեհաժողովում հանդես եկան հայտարարությամբ՝ հիմնավորելով իրենց իրավունքները Լազիստանի նկատմամբ, իսկ մի փոքր անց այդ ամենը շարադրեցին նաև վեհաժողովին ներկայացրած հուշագրում²:

Հայաստանի ծովային սահմանի խնդրում անգլո-ֆրանսիական հակասություններն առավել սրվեցին Գերագույն խորհրդի 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի քննարկման նպատակով Լոնդոնում ընթացող խորհրդաժողովում: Խորհրդաժողովը հայկական խնդիրներին անդրադարձավ փետրվարի 16-ի նիստում, որտեղ Ֆրանսիայի ներկայացուցիչ Ֆիլիպ Բերթըլոն դեմ արտահայտվեց Տրապիզոնը Հայաստանին տրամադրելուն՝ նշելով, որ Հայաստանը կարող է արտոնություններ ունենալ Կարս-Բաթում կառուցվելիք երկաթգծում, Կիլիկիայով՝ մինչև Ալեքսանդրետի նավահանգիստը և Փոքր Ասիայով՝ երգրումից մինչև Կոստանդնուպոլիս³: Իտալիայի վարչապետ Նիտտին համաձայնվում է Բերթըլոյի հետ, և Լլոյդ Ջորջը, ստեղծված ներհակությունները շտկելու նպատակով, առաջարկում է ստեղծել Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը ստեղծվեց հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, որը Հայաստանի սահմանների հետ կապված այլ հարցերի շարքում պետք է քննարկեր նաև Բաթումի և Լազիստանի գավառի ապագա կարգավիճակին վերաբերվող հարցերը⁴: Այս հանձնաժողովի մեջ էին մտնում Անգլիան՝ ներկայացուցիչներ Ռոբերտ Վանսիտտարտը

² Авалов З., Независимость Грузии в международной политике 1918–1921 гг., Париж, 1924, с. 255.

³ ՏԵՍ Օվաննիսյան Րիչարդ Գ., Международные отношения Республики Армения 1918–1920 гг., Ереван, 2007, էջ 428–430:

⁴ ՏԵՍ նույն տեղում, էջ 430:

կարգավիճակին վերաբերվող հարցերը⁴։ Այս հանձնաժողովի մեջ էին մտնում Անգլիան՝ ներկայացուցիչներ Ռոբերտ Վանսիտտարտը և գնդապետ Գրիբենը, Ֆրանսիան՝ ներկայացուցիչներ Կամերերը և գնդապետ Շարդինին, Իտալիան՝ ներկայացուցիչներ Գալլին և գնդապետ Գաստոլդին և ճապոնիան՝ ներկայացուցիչներ Իսաբուրո Գոշիդան և լեյտենանտ Կիյուշի Աննոն⁵։ Հանձնաժողովի փետրվարի 21-ի նիստում, որտեղ հիմնականում քննարկվեցին Տրապիզոնին և Լազիստանին առնչվող խնդիրները, հայ պատվիրակներ Պողոս Նուբարը, Ավետիս Ահարոնյանը և գեներալ Գաբրիել Ղորղանյանը ներկայացրեցին Հայաստանի սահմանների վերաբերյալ գրավոր պահանջագիր և քարտեզը, որը կազմել էր գեներալ Ղորղանյանը։ Այդ քարտեզը, ըստ որի հայ-թուրքական սահմանն անցնում էր Տրապիզոնից, Երզնկայից, Դերսիմից և Խարբերդից արևմուտք, հարուցեց Ֆրանսիայի ներկայացուցիչ, ազգությամբ հրեա Կամերերի խիստ դժգոհությունը։ Իսկ Անգլիայի ներկայացուցիչ Վանսիտտարտին հետաքրքրում էր այն հարցը, թե եթե Տրապիզոնը տրվի հայերին, ապա նրանք կպահանջե՞ն նաև Լազիստանը։ Ահարոնյանը վճռականապես «այո» է ասում՝ գիտակցելով, որ այդ պատասխանը կարող է դուր չգալ անգլիացուն⁶։ Հայ պատվիրակները, ելնելով Տրապիզոնի շուրջ հույների բարձրացրած աղմուկից և Ֆրանսիայի դիրքորոշումից, վախենում էին, որ Տրապիզոնը իրենց չտալու դեպքում Հայաստանը կզրկվի ծովային ելքից, ուստի՝ պահանջելով երկուսն էլ, հույս ունեին, որ կստանան դրանցից մեկը։ Սակայն Վանսիտտարտը, առաջնորդվելով ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու փորձված քաղաքականությամբ, ընդդիմանում է, թե լազերը վրացական ծագում ունեն և վրացիները պահանջում են Լազիստանը։ Ահարոնյանը հակադարձում է նրան՝ նշելով, որ Լազիստանն իրենց պետք է ոչ թե որպես տարածք, այլ որպես ելք դեպի ծով՝ Հայաստանի կենսական կարիքներն ապահովելու համար, ապա ավելացնում, որ վրացիները տիրապետում են

⁴ Տես նույն տեղում, էջ 430։

⁵ Տես Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան։ Զաղաքական օրագիր, Երևան, 2001, էջ 60, նաև՝ Авачов З., Независимость Грузии..., с. 254։

⁶ Տես Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 61։

300.000 հայերի վրա, իսկ իրենք հավակնում են ընդամենը 50–60 հազար լազերի, որոնց վրացական ծագումը նույնիսկ ապացուցված չէ⁷:

Այստեղ հատկանշականն այն է, որ դեռևս Գերագույն խորհրդի փետրվարի 16-ի նիստում Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնը հայտարարել էր, որ անգլիական գինվորական իշխանությունները խորհուրդ չեն տալիս էրզրումը մտցնել Հայաստանի կազմի մեջ, քանի որ դա մշտական սպառնալիք կներկայացնի Հայաստանի համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրան հավակնում են թուրքերը: Հետևաբար, ըստ Քերզոնի, դեպի Սև ծով ելք հայերին կարելի է շնորհել Լազիստանով, որը, սակայն, կարելի է հիմնավորել միայն տնտեսական տեսանկյունից, քանի որ այդտեղի բնակիչները վրացական ծագմամբ մուսուլմաններ են⁸:

Ահա թե ինչու էր հակադարձում Վանսիտտարտը հայ պատվիրակներին՝ մատնանշելով վրացիների հավակնությունները: Եվ քանի որ թե՛ Լազիստանի և թե՛ Բաթումի խնդիրները շատ կարևոր էին հայ-վրացական սահմանագատման հարցը լուծելու առումով, ուստի 1920 թ. փետրվարի 25-ին, այսինքն՝ հայ պատվիրակների հետ հանդիպումից չորս օր անց, վրացական պատվիրակությունը հրավիրվում է Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողով՝ այդ հարցերը պարզաբանելու համար⁹: Ըստ վրացական պատվիրակության, իրենց հավակնությունները Լազիստանի, ինչպես նաև էրզրումի նահանգի՝ դրան հարող Բայբուրդի գավառի որոշ մասերի վրա, որոնք ըստ նրանց հիմնավորվում էին որոշակի պատմական և ազգագրական տվյալներով, ինչպես նաև վրաց հանրության մեջ տարածված հայացքներով, ի սկզբանե հանդիսանում էին պայմանական՝ պայմանավորված լինելով Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանության վերացումից և նոր Հայաստանի ստեղծումից: Վրացիների դիտարկմամբ, եթե նախկին Օսմանյան կայսրության որոշակի տարածքներ ենթակա են վերաբաժանման, և հայ-վրացական սահմանը պետք է անցնի ճորոխի ավազանով և Սև

⁷ Տես նույն տեղում, էջ 62:

⁸ Տես Օվաննիսյան Րիչարդ Դ., *Международные отношения...*, էջ 429:

⁹ Տես Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 137:

ծովի առափնյա մուսուլմանական նահանգների տարածքներով, ապա, բնականաբար, Վրաստանը պետք է պահանջի Լազիստանը, որը Բաթումի ծովափի ուղղակի շարունակությունն է՝ թեկուզ և ուժգին թրջացված, բայց արյամբ և լեզվով վրացիներին մոտ կանգնած բնակչությամբ¹⁰: Այստեղ հատկանշականն այն է, որ վրացիները պատրաստ էին չքննարկել Լազիստանի հարցը, եթե այն մնալու էր Թուրքիային, իսկ հույների և հատկապես հայերի պարագայում կենաց ու մահու պայքար էին մղում:

Վրացիների անհանգստությունը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ օրերին «Էխո դե-Պարի» թերթի թղթակիցը Լոնդոնից հաղորդել էր, թե հաշտության կոնֆերանսը նախատեսում է Թուրքիան բաժանել 9 մասի, որոնցից մեկը Լազիստանի հանրապետությունն է՝ առանց Տրապիզոնի, որը հատուկ պայմաններով պետք է կապվի Հայաստանի հետ¹¹:

Հանձնաժողովում նախագահող Ֆրանսիայի ներկայացուցիչ Կամերերը վրացական պատվիրակության ներկայացուցիչ Ջուրաբ Ավալովի վերը բերված փաստարկները բավականաչափ հիմնավոր է համարում, սակայն, անուղղակի հակադրվելով Վանսիտտարտին, նշում է, որ լազերը բուլղոսներն էլ ցանկություն չեն հայտնել միանալ Վրաստանին, և որ, օրինակ, 1918 թ. թուրքերը Բաթումը գրավել են հենց լազերի օգնությամբ: Ավալովը դա բացատրում է նրանով, որ քանի դեռ այդ երկրամասում պայքար էր գնում ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև, ոչ միայն լազերի, այլ նաև նախկին Ռուսական Վրաստանի մուսուլմանների համակրանքը եղել է իրենց հավատակիցների կողմը: Բայց այժմ, երբ մեծ տերությունները որոշել են ստեղծել անկախ Հայաստան և Թուրքիայի իշխանությունն իր նախկին տիրույթների այդ մասի վրա չի պահպանվելու, արդարացի հարց է առաջանում՝ ու՞ր տանել լազերին, կամ նրանք ու՞ր են նախընտրում գնալ՝ դեպի անկախ Վրաստան, թե՞ Հայաստան: Եթե խնդիրը այդպես դրվի, նշանակում է այն արդեն լուծված է¹²: Ինչպես տեսնում ենք, վրացական պատվիրակությունը բավա-

¹⁰ Авалов З., Независимость Грузии..., с. 255.

¹¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, ք. 28.

¹² Տե՛ս Авалов З., Независимость Грузии..., с. 255–256.

կանաչափ վստահ էր Լազիստանի հարցում: Ինչ խոսք, այդ վստահությունն ավելի շատ արհեստական էր՝ տպավորություն գործելու համար և հեռու էր օբյեկտիվ իրականությունից, ինչի մասին ակնարկել էր Կամերերը հանձնաժողովի նիստում:

Իրականում վրացիներն այնքան էլ վստահ չէին լազերի հարցում: Այդ մասին է վկայում վրաց սոցիալ-ֆեդերալիստների օրգան «Սախալխո Սաքմե» թերթի 1920 թ. ապրիլի վերջերի հետևյալ հրապարակումը. «...Մահմեդական վրացիները և նաև քրիստոնյա վրացիները պետք է ցույց տան աշխարհին, որ իրենք չեն ուզում վիրավորված լինել և հիմարի անուն վաստակել: Մենք դեմ չենք, որ Հայաստանին դեպի ծով ելք տրվի, բայց ոչ Վրաստանի հաշվին: Պետք է էմիսարներ ուղարկել Լազիստան, որպեսզի բացատրեն ժողովրդին, թե իրենց համար ինչ դժբախտություն կլինի, եթե բավարարվեն հայ և հույն իմպերիալիստների պահանջները...»¹³: Ի դեպ, ըստ վրաց հանրության մեջ տարածված տեսակետի, ճիշտ չէր նաև Տրապիզոնը Հայաստանին հատկացնելը, քանի որ այնտեղ հայերը կարող էին հասնել միայն ուրիշի տարածքներ գրավելով¹⁴: Ուրիշի տարածքներ ասելով նրանք ի նկատի ունեին Էրզրումի նահանգը, որը համարում էին Թուրքիայինը և այդ նահանգի արևմտյան գավառներն (Բաբերդ, Թորթում) ու Կարսի մարզի հյուսիսային և հյուսիս-արևմտյան գավառները (Արդահան, Օլթի), որոնց նկատմամբ վրացիներն իրենք էին հավակնություններ դրսևորում: Ստացվում էր, որ վրացական կողմն ընդհանրապես դեմ էր Հայաստանի դեպի Սև ծով սեփական ելք ունենալուն:

Իսկ ինչ վերաբերվում էր լազերի վրացական ծագմանը, ապա, ըստ գիտության մեջ տարածված տեսակետի, լազերենը համարվում է քարթվելական լեզվաընտանիքի լեզու, ինչպես վրացերենը, մեգրելերենը և սվաներենը: Այս լեզուներից լազերենին ամենամոտ կանգնած է մեգրելերենը: Սակայն այս ժողովուրդների գենետիկ կապը հստակ ապացուցված չէ¹⁵: Այսինքն՝ վրացիների հավակնությունների ազգագրական ապացույցները հիմնավոր չէին:

¹³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 28:

¹⁴ ՏԵՍ նույն տեղում, թ. 27:

¹⁵ ՏԵՍ www.wikipedia.org.

Ք.ա. 6-րդ դարում Լազիկայում իրենց գաղութներն (Պիոսկուրիադան և Ֆասիսը) են հիմնում հույները: Այդ ժամանակներից մինչև այսօր հույները հանդիսանում են Լազիստանի հիմնական ազգերից մեկը:

Այժմ քնարկենք վրաց պատվիրակության առաջ քաշած մյուս պատմական իրավունքի փաստարկը: Հնագույն ժամանակներից պատմական Լազիկան (Տրապիզոնից մինչև Բաթում՝ Սև ծովի առափնյա տարածքը) մտել է մի շարք պետությունների կազմի մեջ կամ հանդիսացել է ինքնուրույն իշխանություն: Ք.ա. 6–5-րդ դարերում Լազիստանը կազմել է Աքեմենյան Պարսկաստանի մասը, Ք.ա. 4-րդ դարում՝ Կոլխերի թագավորության, Ք.ա. 2-րդ դարի վերջին մտել է Պոնտոսի թագավորության մեջ, իսկ Ք.ա. 1-ին դարում՝ Հռոմեական կայսրության: Տարբեր ժամանակներում Լազիկան ընկել է Հայաստանի (Երվանդականների, Արտաշեսյանների) քաղաքական ազդեցության տակ: 3-րդ դարի վերջին առաջացել է Լազիկայի թագավորությունը՝ Էգրիսին (Կողքիս (Եգր))): 6-րդ դարի կեսերին Լազիկան կորցնում է անկախությունը՝ 562 թ. նվաճվելով Բյուզանդիայի կողմից: 7-րդ դարի վերջին՝ 697 թ., այն ընկնում է Արաբական խալիֆայության լծի տակ, իսկ 8-րդ դարի վերջին՝ մտնում Աբխազական թագավորության կազմի մեջ, որը կախման մեջ էր գտնվում Բյուզանդական կայսրությունից: 1578 թ. այն գրավում են թուրքերը¹⁶: 1878 թ. Աան-Ստեֆանոյի պայմանագրով Լազիստանի արևելյան հատվածը՝ Բաթում քաղաքով, անցնում է Ցարական Ռուսաստանին, որտեղից էլ սկսվում է Բաթումի մարզի (Աջարիայի) պատմությունը:

Լազիկայում մեծ քվով հայեր սկսել են հաստատվել 8-րդ դարում, երբ արաբական հալածանքներից խուսափելով 1200 հայ գյուղացի Համամ Ամատունի իշխանի և իր հոր Շապուհի առաջնորդությամբ հիմնավորվում են այս ապահով լեռներում՝ Բյուզանդական կայսրության հովանու ներքո: Նրանց կենտրոնը կոչվում էր Տամբուր, որն ավելի ուշ Համամ իշխանի անունով կոչվում է Համամաշեն կամ Համշեն: Այսպես հիմք է դրվում Համշեն գավառին և

¹⁶ Մանրամասն տես Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959.

համշենահայության գոյությամբ նաև՝ Հայկական Պոնտոսի պատմությանը: Խաչքար լեռնաշղթայի հովիտների մեջ համշենցիները բազմանում և պահում են իրենց լեզուն ու հավատքը՝ լեռները զարդարելով բազմաթիվ վանքերով և եկեղեցիներով մինչև օսմանցիների ասպատակությունները¹⁷:

Այսինքն՝ հայերը ևս հնուց ի վեր հանդիսանում են Լազիկայի հիմնական բնակիչներից: Այստեղ որոշ քանակությամբ բնակվում են նաև մահմեդականացված վրացիներ:

Իհարկե, հիմնական բնակչությունը հանդիսանում են լազերը, որոնց ծագումը, ինչպես նշվել է, շատ անորոշ է: Ըստ երևույթին տարբեր ժամանակներում Պոնտական լեռներում հաստատված բնակիչներից ժամանակի ընթացքում ձևավորվել է լազ ժողովուրդը: Ինչպես գրում է Մխիթարյան միաբանության անդամ Հարություն վարդապետ Պզտիկյանը, «...երբ ամենքն ալ ծնշուած անտանելի տուրքերու բեռին տակ, կամ վերջնապէս հեռացած են, կամ ալ բռնի իսլամացած: Այս է պարագան Հայերուն, միլիոնը անցնող, որոնցմէ միայն Համշէնն է որ մինչեւ վերջերս պահած էր իր լեզուն: Նոյնն է պարագան Յոյներուն, կիսավայրենի լազերու վերածուած, վրացիները՝ կիւրճի (գյուրջի – Շ. Թ.) կոչուած և հիմա ամենքն ալ փողկապաւոր «Թուրք» հաւատարիմ քաղաքացիներ դարձած»¹⁸:

Այս ամենը կասկածելի են դարձնում Վրաստանի հավակնությունները Լազիկայի վրա նաև պատմական իրավունքի տեսանկյունից:

2. Ավալովի երրորդ փաստարկը հետևյալն է. Լազիստանի վրա հավակնությունները հիմնավորվում են «վրաց հանրության մեջ տարածված հայացքներով»: Այն ոչ մի քննադատության չի դիմանում: Այստեղ, կարծում ենք, պետք է փիլիսոփայորեն մոտենանք հարցին և ընդունենք, որ հանրության հայացքները, սովորաբար, ավելի մաքսիմալիստական են լինում, քան պատմական իրականությունն է:

Հարկ է նկատել, որ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումները լակմուսի թղթի նման

¹⁷ Տե՛ս Պզտիկեան 3. վրդ., Տալք, Բարձր Հայք: Վրացական թե՛ հայկական (ճամբորդական նօթեր), Երևան, 2005, էջ 61–62:

¹⁸ Նոյն տեղում, էջ 56:

պարզորոշ ի ցույց դրեցին Հայաստանի դեպի ծով ելքի հարցում անգլո-ֆրանսիական և վրաց-հայկական հակասությունները: Ֆրանսիան խոստացել էր քեմալականներին աջակցել Տրապիզոնի հարցում և հայերին մղում էր Լազիկայով ծովային ելք պահանջելուն, իսկ անգլիացիները ծրագրել էին Լազիկայում՝ ներառյալ Բաթումը, ստեղծել առանձին պետական կազմավորում և աշխատում էին Հայաստանի ծովային ելքի հարցը լուծել Տրապիզոնում: Բաթումի հարցում թե՛ Ֆրանսիան և թե՛ Անգլիան համակարծիք էին՝ Հայաստանը պետք է Բաթումով ելք ունենա դեպի Սև ծով, իսկ նավահանգիստը պետք է ունենա *porto-franko* կարգավիճակ: Վրաստանն էլ դեմ էր Հայաստանին սեփական ծովային ելքի տրամադրմանը թե՛ Լազիկայում և թե՛ Բաթումում: Սրանք էին պատճառները, որ հայկական պատվիրակության մասնակցությամբ խորհրդակցությունում՝ փետրվարի 21-ին Կամերերի և Վանսիտտարտի նախաձեռնությամբ հիմնականում քննարկվեցին Տրապիզոնի և Լազիկայի խնդիրները, իսկ վրացական պատվիրակության մասնակցությամբ խորհրդակցությունում՝ փետրվարի 25-ին, ակտիվորեն քննարկվեց նաև Բաթումի հարցը:

Ի վերջո, Գերագույն խորհուրդը, ունկնդրելով հանձնաժողովի կարծիքը, փետրվարի 27-ին առաջ քաշեց մի ծրագիր, որտեղ հայ-վրացական սահմանային խնդիրների առաջարկվող լուծումներում նախատեսվում էր Լազիստանը որպես ինքնավար միավոր մտցնել Հայաստանի կազմի մեջ¹⁹: Այս ծրագիրը համահունչ էր Հայաստանի կառավարության տեսակետին: Ըստ երևույթին, այն կազմելիս հաշվի էին առնվել նաև հայկական կողմի մոտեցումները, որոնք շարադրված էին Բաթումի խնդրի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման մեջ²⁰:

Գերագույն խորհրդի վերոնշյալ ծրագրի քննարկման ընթացքում Ֆրանսիայի ներկայացուցիչ ժյուլ Կամբոնը և Իտալիայի ներկայացուցիչ Իմպերիալին Լազիստանի հարցով մտահոգություն հայտնեցին՝ նշելով, թե ավելի նպատակահարմար է Լազիստանը

¹⁹ Տե՛ս Աвалов Յ., Независимость Грузии..., էջ 257:

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 508, թ. 42, նաև՝ Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 251:

թողնել թուրքական տիրապետության ներքո, պայմանով, որ դեպի ծով տանող ճանապարհների վրա Հայաստանին տրվեն անկապտելի իրավունքներ: Սակայն Քերզոնը նախազգուշացնում է, որ այդ դեպքում Թուրքիան Լազիստանը կօգտագործի որպես հենակետ՝ Բաթումը գրավելու համար: Նա նաև նշում էր, որ Հայաստանը չի խառնվի այդ ինքնավար պետության ներքին գործերին (ինչպես նշված էր հանձնաժողովի զեկույցում՝ Հայաստանի գերիշխանությունը Լազիստանի վրա լինելու էր զուտ անվանական – Շ. Թ.), քանի դեռ երաշխավորվում են ճանապարհների օգտագործումը²¹: Պարզաբանվեց նաև «անվանական գերիշխանություն» հասկացությունը, որը հասկացվում էր որպես Լազիստանում հայկական դրոշի բարձրացման իրավունք, որից հետո ծրագիրն ընդունվեց խորհրդաժողովի կողմից:

Մարտի 1-ին վրացական պատվիրակությունը Գերագույն խորհրդին ներկայացրեց մի նոտա, որտեղ ներկայացված էին նրանց մոտեցումները քննարկված հարցերի վերաբերյալ: Այդ նոտայում վրացական կողմը, մերժելով խորհրդաժողովի ընդունած ծրագիրը, պնդում էր սահմանները Վրաստանի օգտին շտկել՝ Լազիստանի գավառը և ճորոխի հովտի որոշ հատվածներ Վրաստանին միացնելու միջոցով: Վրացիները նշում էին, որ սահմանների վերոնշյալ ուղղումների հարցը իրենց կողմից հարուցվել է կապված Տրապիզոնի վիլայեթի սահմաններում Հայաստանին Սև ծով ելք տրամադրելու որոշման հետ²²: Ամեն ինչ պարզ և հստակ էր. ըստ վրացական պատվիրակության տեսակետի, Հայաստանը դեպի Սև ծով սեփական ելք չպետք է ունենա և պետք է հույսը դնի Վրաստանի ողորմածության վրա: Իհարկե, հասկանալի էր վրացական պատվիրակության դիրքորոշումը: Հայաստանը զցելով կոմունիկացիոն կախվածության մեջ, Վրաստանը կկարողանար դյուրացնել Ջավախքի և Լոռու վիճելի խնդիրներն իր օգտին լուծելու հարցը, տարանցիկ փոխադրումներից հսկայական եկամուտներ կստանար և հազուրդ կտար թուրք-ադրբեջանական տանդեմի հայակործան քաղաքականությանը՝ փորձելով դրանից որոշակի

²¹ ՏԵՍ Օваннисян Ричард Г., Международные отношения..., էջ 441:

²² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 78, նաև՝ Авалов З., Независимость Грузии..., с. 257.

օգուտներ քաղել. Լազիստանի և Բաթունի հարցում Թուրքիայի հնարավոր բարյացակամ վերաբերմունքը, եթե այդ տարածքները մեծ տերությունների որոշմամբ Թուրքիային չէին անցնելու, Բաքվից նավթամթերքների ապահով մատակարարումը, Վրաստանի մուսուլմանների խաղաղեցումը և այլն: Սակայն սա անհեռատես մտեցում էր, որովհետև Հայաստանը կործանելուց հետո Թուրքիան և Ադրբեջանը անպայման կբզկտեին նաև Վրաստանը: Ասվածն ապացուցեց իրադարձությունների հետագա ընթացքը 1921 թվականին:

Այսպիսով, վրացական պատվիրակության մերժողական դիրքորոշման պատճառով Լոնդոնի խորհրդածողովում Լազիստանի տարածքով Հայաստանին ծովային ելքի տրամադրման խնդիրը չլուծվեց: Այն տեղափոխվեց 1920 թ. ապրիլի 19–26-ը իտալական Սան-Ռեմո քաղաքում հրավիրված խորհրդածողովի օրակարգ:

SHIRAK TOROSYAN

**ARMENIAN-GEORGIAN DISAGREEMENTS IN
THE PROBLEM OF LAZISTAN DURING THE
LONDON CONFERENCE
(FEBRUARY–MARCH 1920)**

SUMMARY

After the proclamation of independence of the First Republic of Armenia one of the priorities of the foreign policy of the RA was the provision of access to the sea. Lazistan was observed as one of the possible options to resolve this issue around which discussions were held from February 12 to April 10, 1920 during the Supreme Council's conference in London. For the final resolution of the issue and the settlement of Anglo-French contradictions on 17 February, 1920 a Commission for the determination of the borders of Armenia was formed. During the Commission's session on February 21 the Armenian delegates proposed,

among others, the demand for access to the sea at Lazistan, too. During the session on February 25, the Georgian delegates rejected the claim of the Armenians. Finally, on February 27, the Supreme Council, taking into account the opinion of the Commission put forward a project where it was envisaged to include Lazistan as an autonomous unit in Armenia. On March 1 the Georgian delegation sent a note to the Supreme Council with the rejection of the above mentioned project and the issue was moved to the San Remo Conference agenda. The Georgian delegation refused all the versions proposed by Armenia to have own access to the sea.

ШИРАК ТОРОСЯН

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ РАЗНОГЛАСИЯ ПО ПРОБЛЕМЕ ЛАЗИСТАНА В ХОДЕ ЛОНДОНСКОЙ КОНФЕРЕНЦИИ (ФЕВРАЛЬ-МАРТ 1920)

РЕЗЮМЕ

После провозглашения независимости Первой Республики Армения одним из приоритетов внешней политики РА было обеспечение выхода к морю. Лазистан рассматривался в качестве одного из возможных вариантов решения этого вопроса, вокруг которого были проведены переговоры с 12 февраля по 10 апреля 1920 года во время конференции Верховного Совета в Лондоне. Для окончательного решения вопроса и урегулирования англо-французских противоречий 17 февраля 1920 была образована комиссия для определения границ Армении. Во время сессии Комиссии 21 февраля армянские делегаты предложили, в ряду других, требование о предоставлении выхода к морю также через Лазистан. В ходе заседания 25 февраля грузинские делегаты отклонили предложение армян. Наконец, 27 февраля, Верховный Совет, принимая во внимание мнение Комиссии, выдвинул проект, где было предусмотрено включить Лазистан в качестве автономной единицы в состав Армении. 1 марта грузинская делегация направила ноту в Верховный Совет с отказом упомянутого выше проекта, вопрос был перенесен в повестку дня конференции в Сан-Ремо.

ՀԱԽՅ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ – 1922 Թ. ՍԿԻՉԲ)

Երևանում 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՌՍԴԽՅ լիազոր ներկայացուցչության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված համաձայնագրով դադարեց գոյություն ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, Հայաստանը հայտարարվեց «անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»¹: Խորհրդայնացումից հետո մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումը 1922 թ., Խորհրդային Հայաստանն ուներ ինքնիշխան կարգավիճակ, պետականությունն արտահայտող խորհրդանիշներ, Սահմանադրություն և այլն: Երևանի համաձայնագրով «խաղաղ ճանապարհով խորհրդայնացած Հայաստանը դիտվում էր անկախ պետություն, – նշում է պրոֆեսոր Ա. Հակոբյանը, – մանավանդ, որ նա հանդիսանում էր միջազգայնորեն (դե ֆակտո և դե յուրե) ճանաչված Հայաստանի Հանրապետության իրավահաջորդը»²:

Դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը հետխորհրդային հայ պատմագիտության կողմից թեև արժանացել է քննախույզ ուսումնասիրման և պատմաիրավական տարբեր գնահատականների³, այդուհանդերձ, մեր կարծիքով, հիմնավոր ուշադրության

^{*} Հողվածը և կից քարտեզը պատրաստվել են ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող «13-6A402» ծածկագրով թեմայի ուսումնասիրության շրջանակներում:

¹ Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных РСФСР с иностранными государствами. Выпуск 3, Москва, 1922, № 79, с. 14–15.

² Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 211:

³ Տե՛ս Ջոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002: Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, Հակոբյան Ա., նշվ. աշխ.: Հմմտ. Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 283–286:

չի արժանացել այն փաստը, որ համաձայնագիրը հանդիսացավ անդրանիկ միջազգային փաստաթուղթը, որում նշված է հայկական մի շարք տարածքների՝ ՀՍԽՅ–ին «անվիճելի կերպով» պատկանելու մասին: Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի երկրորդ (խորհրդային) Հանրապետությունը նախորդից ժառանգել էր անորոշ պետական սահմաններ և տարածքային–սահմանային չլուծված խնդիրներ հարևան չորս երկրներից երեքի՝ Թուրքիայի, Խորհրդային Ադրբեջանի և Վրաստանի Հանրապետության հետ: Բացառություն էր Իրանը, որի հետ սահմանային վեճեր չկային, հայ–իրանական պետական սահմանն էր Ռուսական նախկին կայսրության և Իրանի միջև 1914 թ. դրությամբ գոյություն ունեցող սահմանը: Առաջին Հանրապետության կողմից 1918–1920 թվականներին ստորագրված և ոչ մի միջազգային պայմանագրով, լինի դա Բաթումի, Սևրի, կամ կնքման իսկ պահից իրավական ուժ չունեցող՝ Ալեքսանդրապոլի, չեն որոշվել Հայաստանի Հանրապետության ամբողջական տարածքներն ու սահմանները, դրանցում որոշվում էր ընդամենը հայ–թուրքական սահմանագիծը:

ՀՍԽՅ կազմում «անվիճելի կերպով» մտնող տարածքները նշված են Երևանի դեկտեմբերի 2–ի համաձայնագրի 3–րդ հոդվածում, որով Ռուսաստանի կառավարությունն ընդունում էր, որ Խորհրդային Հայաստանին պատկանում են Երևանի նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի մարզի մի մասը, որը զինվորական տեսակետից կապահովի երկաթուղու անվտանգությունը՝ Ջաջուռ կայարանից մինչև Արաքս կայարանը, Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառը և Ղազախի գավառի այն մասը, որի սահմանները որոշված են օգոստոսի 10–ի համաձայնության (Թիֆլիսի 1920 թ. հայ–ռուսական – հեղ.) շրջանակներում և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28–ը (մինչև թուրք–հայկական պատերազմի սկիզբը – հեղ.)⁴:

Հայաստանում ՌՍԴԽՅ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը, ով խորհրդային կառավարության անունից ստո-

⁴ Ст и Сборник действующих договоров..., т. 2 14–15:

րագրել էր դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, վերջինիս բովանդակության մասին նույն օրը Երևանից հեռագրում է ՌԿ(Բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոյի անդամ Գ. Օրջոնիկիձեին՝ հատուկ ընդգծելով համաձայնագրի հենց 3-րդ հոդվածը. «Ռուսաստանի խորհրդային կառավարության անունից հայտարարել եմ, որ Ռուսաստանը խորհրդային Հայաստանի կազմում անվերապահ ճանաչում է Երևանի նահանգը, Կարսի մարզի մի մասը..., Չանգեզուրի գավառը, Ղազախի գավառի մի մասը... և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև թուրքական հարձակումը»⁵:

Երևանի համաձայնագիրը ստորագրվել էր տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական բարդ իրավիճակում, երբ խորհրդային Ռուսաստանն աշխատում էր ամեն զնով արագացնել Հայաստանի խորհրդայնացումը: Ուստի՝ հայկական կողմի հետ բանակցություններում Բ. Լեգրանը երբեմն գործում էր անձնական նախաձեռնությամբ, և, փորձելով անցկացնել «սեփական քաղաքականությունը» Հայաստանի հարցում, դուրս էր գալիս իրեն տրված իրավասությունների շրջանակներից: «Լեգրանի դրությունը հասկանալի է, – հայտնում էր Մոսկվա Գ. Օրջոնիկիձեն, – նա չափից ավելին է խոստացել հայկական նախկին կառավարությանը»⁶:

Մյուս կողմից, ինչպես նշում է ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, «նման պայմաններում Հայաստանին արված տարածքային խոստումների մասին Լեգրանի հաղորդումը չհանդիպեց Մոսկվայի դիմադրությանը: Ի վերջո, թե՛ Լեգրանի կնքած համաձայնագիրը, թե՛ Բաքվի հռչակագիրը (նկատի ունի խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նոյեմբերի 30-ի հռչակագիրը, որով Չանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում էին Հայաստանի մասեր, իսկ Ղարաբաղի լեռնային մասին տրվում էր ինքնորոշման իրավունք – հեղ.) մարտավարական նշանակություն ունեին»⁷: Սա էր պատճառը, որ խորհրդային Ռուսաստանը գործնականում հետամուտ չեղավ դեկտեմբերի 2-ի հա-

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2000, էջ 385–386:

⁶ ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու 1, գ. 2, ք. 183:

⁷ Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 311:

մածայնագրով ստանձնած պարտավորությունների, այդ թվում՝ տարածքային–սահմանային հարցի, կատարմանը: Դրան որոշակի նպաստում էր նաև Հայաստանի հեղկոմի քաղաքականությունը: Սարգիս Կասյանի գլխավորությամբ դեկտեմբերի 6–ին ժամանելով Երևան հեղկոմը փաստորեն «անվավեր ճանաչեց» և «առ ոչինչ համարեց դեկտեմբերի 2–ի ակտը», – փաստում է իրադարձությունների ականատես և մասնակից, խորհրդային պետական–կուսակցական գործիչ Աշոտ Հովհաննիսյանը⁸: «Նման դեպքում, – նշում է Լ. Խուրշուդյանը, – Ռուսաստանը մեխանիկորեն իր վրայից գցում էր Լեզրանի կողմից Հայաստանին տարածքային զիջումներ անելու խոստումների կատարման պարտավորությունը»⁹: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Հայհեղկոմի դիրքորոշումը «դեկտեմբերի 2–ի ակտի» վերաբերյալ առավելապես պայմանավորված էր նրանով, որ հեղկոմը վճռական էր տրամադրված Հայաստանի խորհրդայնացման դափնիներն ամբողջությամբ իրեն վերագրելու հարցում, նաև չէր պատրաստվում իշխանությունը Հայաստանում կիսել որևէ քաղաքական ուժի հետ, նամանավանդ՝ ՀՅԴ–ի: ՀՍԽ՝Հ տարածքային–սահմանային խնդրին վերաբերող հայ–ռուսական համածայնագրի հողվածն ամենից քիչն էր հետաքրքրում Հայհեղկոմին: Դեռևս դեկտեմբերի 3–ին Բ. Լեզրանի հետ հեռագրազրույցում Ս. Կասյանը նշում էր, որ «ոչ թե Դրոն, այլ Հայաստանի հեղկոմն է Հայաստանը հռչակել անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն», և դրանից ելնելով՝ պետք է «անվավեր ճանաչվի և Ձեր համածայնությունը Դրոյի հետ»: Լեզրանը նույնպիսի վճռականությամբ Կասյանին հակադարձում էր, որ «դա ամենևին չի փոխում իրավիճակը և ոչ ոք իրավունք չունի չեղյալ հայտարարելու իր կողմից ստորագրված համածայնագիրը»¹⁰:

Այդուհանդերձ, անդրադառնանք այն խնդրին, թե դեկտեմբերի 2–ի հայ–ռուսական համածայնագրի 3–րդ հոդվածով հայկական որ տարածքներն էին ընդգրկվելու նորաստեղծ խորհրդային հանրապե-

⁸ Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը, Երևան, 1926, էջ 26:

⁹ Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 312:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1154, թ. 1:

տության կազմում և որքան էր կազմելու վերջինիս ընդհանուր տարածքը:

1. «Երևանի նահանգն»¹¹ իր բոլոր գավառներով», այն է՝ շուրջ 26400 քառ. կմ¹²:

2. «Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառը», որը զբաղեցնում էր շուրջ 7673,4 քառ. կմ տարածք¹³: Ավելացնենք, որ Չանգեզուրի գավառը ներառում էր ժամանակակից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանն ամբողջությամբ, Բերդաձորի (1920 թ. Ղարաղշլաղ) ենթաշրջանը (այժմ՝ ԼՂՀ Շուշիի շրջանում), ինչպես նաև Մեծ Քիրս լեռնագագաթի (2725 մ) հարավ-արևմտյան ստորոտին ընկած «Ղուզեյի գյուղերը» (այժմ՝ ԼՂՀ Հադրութի շրջանում)¹⁴:

Ի դեպ, Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին հայկական իշխանությունը տարածվում էր նաև Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի Ջվանշիրի (Ջևանշիր) գավառի արևմտյան բարձրլեռնային Մեծ և Փոքր Ալ լճերի վրա (թրք.՝ *Alagollar*)՝ շուրջ 260 քառ. կմ տարածությամբ: Այս տարածքը ՀՍԽՍՀ կազմում էր մինչև 1930 թ. կեսերը, երբ Անդրդաշնության Կենտգործկոմի կամայական որոշմամբ փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանին, ինչը «հիմնավորվում էր» տնտեսական փաստարկներով¹⁵ (տարածքն այժմ ներառված է ԼՂՀ Շահումյանի շրջանում):

Եթե Երևանի նահանգի և Չանգեզուրի գավառի տարածքի հարցում կարծես որևէ անորոշություն չկա, քանի որ դրանք ամբողջությամբ

¹¹ Նահանգը կազմված էր 7 գավառից՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր-Բայազետի, Սուրմալուի, Շարուր-Ղարալազյազի և Նախիջևանի:

¹² Տե՛ս "Кавказский календарь на 1915 г.", Тифлис, 1914, "Отдел статистический" (այսուհետև՝ ՕՍ) էջ 250, "Кавказский календарь на 1917 г.", Тифлис, 1916, ՕՍ, էջ 218: Վարչամիավորների տարածքները տրված են Ռուսական կայսրությունում ընդունված քառակուսի վերստերով, որոնք վերածել ենք քառակուսի կիլոմետրերի (1 քառ. վերստ = 1,138 քառ. կմ):

¹³ Տե՛ս "Кавказский календарь на 1915 г.", ՕՍ, էջ 230, "Кавказский календарь на 1917 г.", ՕՍ, էջ 194:

¹⁴ Այդ բնակավայրերը՝ Քարինգ (Արփազյաղուկ), Սպիտակաշեն, Պետրոսաշեն և Վաղավեր (Թեգխարաբ), համարվում են նշանավոր Հարար ավանի գյուղակ-«թաղերը»: Հարարը, 1918–1920 թթ. հայաթափվելով, հետագայում մտցվեց ԼՂՀ-ի հարևան Լաչինի շրջանի մեջ (վերանվանվել էր Ներքին Ֆարաջան):

¹⁵ Տե՛ս ռուսական 5-վերստանոց քարտեզի (մասշտաբը՝ 1:210000) Ж-9 պլանշետը: Տարածքն ըստ՝ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 551, ք. 7–8 (կից սխեմա-քարտեզ):

յամբ ընդգրկվելու էին ՀՍԽՅ կազմում, ապա դեկտեմբերի 2-ի համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված մյուս տարածքների պարագայում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք կարող են հավելյալ պարզաբանումների:

3. Համաձայնագրի «Կարսի մարզի մի մասը, որը գինվորական տեսակետից կապահովի երկաթուղու անվտանգությունը՝ Ջաջուռ կայարանից մինչև Արաքս կայարանը» սահմանումը բավական անորոշ ձևակերպում է: Ուստի առկա քարտեզագրական նյութի վերլուծության միջոցով փորձենք պարզել Կարսի մարզի այն տարածքը, որը տեսականորեն կարող էր անցնել Խորհրդային Հայաստանին: Նկատի ունենալով, որ վերոհիշյալ կայարանների միջև ձգվող երկաթգիծը գրեթե ամբողջությամբ անցնում էր Ախուրյան (1920 թ. Արփաչայ) գետի երկայնքով, տրամաբանական է կարծել, որ ՀՍԽՅ համար նախատեսվող շրջանի մեջ պետք է ներառվեին նախկին Կարսի մարզի համանուն շրջանի (օկրուգ) Աղբաբայի, Ջարիշատի և Շորագյալի (Արևմտյան Շիրակ), ինչպես նաև Կաղզվանի շրջանի (օկրուգ) Նախիջևանի տեղամասերը: Նշված վարչամիավորները, ինչպես նշեցինք, ձգվում էին Ախուրյան գետի երկայնքով և դրանց ընդգրկումը ՀՍԽՅ կազմում կապահովեր այն ռազմավարական «խորությունը», որը հնարավոր կդարձներ Հայաստանի հյուսիսային շրջաններն Արարատյան դաշտի և Երևանի հետ կապող երկաթուղու անխափան և անվտանգ շահագործումը հայկական իշխանությունների կողմից: Աղբաբայի տեղամասը զբաղեցնում էր շուրջ 650 քառ. կմ տարածություն¹⁶ ընդգրկելով Արփի լճի ավազանն ու Ախուրյանի ակունքների շրջանը: Տեղամասը Կարսի մարզի միակ տարածքն էր, որ գրեթե ամբողջությամբ մնաց Խորհրդային հանրապետության կազմում (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջան): Ջա-

¹⁶ Հաշվարկն ըստ "Кавказский календарь на 1909 г.", СО, էջ 444: Ընդ որում, Ամասիայի տարածաշրջանը (նախկինում շրջան) ունի 608 քառ. կմ տարածք (ըստ «Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանումը, առ 1 օգոստոսի 1988 թ.», Երևան, 1989, էջ 16): Փաստորեն, Երբեմնի Աղբաբայի տարածքի շուրջ 94 %-ն այժմ գտնվում է ՀՀ-ի կազմում: Ի դեպ, մեր հանրապետության կազմում է գտնվում մի փոքր մաս նաև Շորագյալի տեղամասից՝ ավելի քան 74 քառ. կմ: Խոսքը գյուների քաղաքից արևմուտք ընկած Հայկավան (ն. Բաջօղլի), Ոսկեհասկ (ն. Մոլլա-Մուսա), Առափի (ն. Օջախղուլի), Ողջի (ն. Օխչօղլի), ինչպես նաև մի փոքր հարավ-արևմուտքում գտնվող Ախուրիկ (ն. Ղարաքիլիսա) գյուղերի մասին է:

րիշատի տեղամասը, որն ընկած էր Աղբաբայից հարավ, զբաղեցնում էր շուրջ 1256,5 քառ. կմ տարածություն, իսկ Շորագյալը ներառում էր պատմական Անիի շրջանը՝ մինչև Կարսագետի և Ախուրյանի միախառնման վայրը՝ զբաղեցնելով շուրջ 1151,4 քառ. կմ տարածություն: Ինչ վերաբերում է 4-րդ՝ Կաղզվանի շրջանի Նախիջևանի տեղամասին (պատմական Շիրակի հարավ-արևմտյան հատվածը), ապա այն Անիի հարավային մատույցներից ձգվում էր մինչև Սուրմալուի գավառի վարչական սահմանը՝ զբաղեցնելով շուրջ 1359 քառ. կմ տարածություն¹⁷: Այսպիսով՝ Կարսի մարզից ՀՍԽՖՀ-ին անցնող տարածքը կազմելու էր շուրջ 4417 քառ. կմ, ինչը նախկին մարզի (տարածքը՝ 18738,5 քառ. կմ) գրեթե 1/4 մասն էր¹⁸: Այս կապակցությամբ նշենք նաև հետևյալը: Վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանը խնդրին առնչվող իր բոլոր քարտեզներում ՀՍԽՖՀ-ին անցնող վերոհիշյալ տեղամասերի հետ միասին ներառել է նաև Կարսի մարզի Արդահանի շրջանի (օկրուգ) Չլդըրի տեղամասը¹⁹, որը կազմում էր շուրջ 1095 քառ. կմ²⁰: Այս վարչամիավորը, տարածվելով մինչև Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառի հարավային սահմանագլուխը, խիստ հեռու էր ընկած, որպեսզի ուղղակի վտանգ ներկայացներ հայկական երկաթուղու համար: Ուստի կարծում ենք, որ Չլդըրի տեղամասի ընդգրկվելը ՀՍԽՖՀ-ին Կարսի մարզից հատկացվելիք տարածքների մեջ այնքան էլ հիմնավորված չէ:

4. Համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ «Ղազախի գավառի մի մասը, որի սահմանները որոշված են օգոստոսի 10-ի համաձայնության շրջանակներում» ձևակերպումը նույնպես որոշակի լուսաբանման կարիք ունի: Նախ հարկ է նշել, որ Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրով, որը ռուսական կողմից ստորագրեց Բ. Լեգրանը, Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Հայաս-

¹⁷ Հաշվարկն ըստ "Кавказский календарь на 1909 г.", СО, էջ 444:

¹⁸ Տե՛ս "Кавказский календарь на 1917 г.", СО, էջ 198:

¹⁹ Տե՛ս մասնավորապես «Հայաստանի ազգային ատլաս», հատոր Բ, Երևան, 2008, էջ 113. «Հայաստանի ՍԽՖ սահմանների խնդիրը (1920–1921 թթ.)» քարտեզը (մ. 1:1700000): Հմմտ. Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Գ մաս), Երևան, 2012, էջ 44. «Հայաստանի ՍԽՖ սահմանների խնդիրը (1920–1921 թթ.)» քարտեզը (մ. 1:2000000):

²⁰ Հաշվարկն ըստ "Кавказский календарь на 1909 г.", СО, էջ 444:

տանի Հանրապետության անկախությունը: Համաձայնագրով իրավական ձևակերպում էր ստանում ՌՍԴԽՀ զորքերի կողմից Ղարաբաղի, Ձանգեզուրի և Նախիջևանի «ժամանակավոր» զինագրավումը: Դրանով Ռուսաստանը «ստեղծում է բարենպաստ պայմաններ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճերը խաղաղ կարգավորելու համար»: Մասնավորապես, ինչ վերաբերում էր Ղազախի գավառին, ապա կողմերը համաձայն էին, որ ՀՀ զորքերը մնան այն գծի վրա, որը նրանք զբաղեցնում էին հուլիսի 30-ի դրությամբ²¹: Փաստորեն, խորհրդային կառավարությունը ճանաչում էր Ղազախի գավառի տարածքում 1918–1920 թթ. ձևավորված հայ-ադրբեջանական սահմանը:

Ղազախի գավառը (տարածքը՝ շուրջ 5800 քառ. կմ)²², որը մինչև 1918 թ. մտնում էր Ելիզավետպոլի նահանգի մեջ, ազգագրական առումով կազմված էր երկու հայկական (արևմուտքն ու հարավը) և մահմեդական (արևելքն ու հյուսիսը) մասերից: Հայկականը, որը կազմում էր գավառի մեծ մասը, հիմնականում ընդգրկում էր ժամանակակից ՀՀ Տավուշի մարզի գրեթե ամբողջ տարածքը (2587 քառ. կմ)²³: Միաժամանակ հայկական հատվածի մեջ էին մտնում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի ճամբարակի տարածաշրջանի (ն. Կրասնոսելսկի շրջան) Աղստև գետի Գետիկ վտակի հովտում ընկած հյուսիսային բնակավայրերը²⁴՝ ներառյալ շրջկենտրոնը, ինչպես նաև Արծ-

²¹ Нагорный Карабах в 1918–1923 гг., Ереван, 1992, с. 574–575.

²² "Кавказский календарь на 1915 г.", ОС, с. 230. Հմմտ. "Кавказский календарь на 1917 г.", ОС, էջ 194:

²³ Տավուշի մարզի տարածքից դուրս էր մնում Կողբ գետակի (Կուրի վտակներից) և Դեբեդի միջև բարձրացող Գուգարաց լեռնաշղթայով ձգվող ջրբաժանից արևմուտք ընկած փոքր հատվածը, որը, լինելով Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի կազմում, 1919 թ. մտցվել էր Լոռու չեզոք գոտու մեջ: Այս հատվածն ընդգրկում է ժամանակակից ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի (նախկին շրջանը) Այրում քաղաքը և Բագրատաշեն (1920 թ. Լամբալու), Ձորական (1920 թ. Վերին Քյորփլու կամ Քերփլի), Լճկաձոր (Աչքաձոր), Արճիս, Դեղձավան, Դեբետավան, Հաղթանակ, Պտղավան գյուղերը՝ 117,35 քառ. կմ ընդհանուր մակերեսով (հաշվարկն ըստ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման տեղեկատու», Երևան, 2012, էջ 101 (այսուհետ՝ Տեղեկատու):

²⁴ Ավելորդ չենք համարում ստորև ներկայացնելու այդ բնակավայրերի անունները (ժամանակակից և նախկին տարբերակներով). ճամբարակ քաղաք [(կազմված է երբեմնի Սիխայլովկա, իսկ խորհրդային տարիներին՝ Կրասնոսելսկ (հայերի միջավայրում՝ Կարմիր) վերանվանված գյուղից, ինչպես նաև Վերին և Ներքին ճամբարակներից), Այգուտ (ն. Գյուլքենդ, ներառյալ ճապկուտ (ն. Ջիվիխլու գյուղը), Անտա-

վաշեն (1920 թ. Բաշգյուղ կամ Բաշքենդ) ավանն իր շրջակայքով: Ընդ որում, ինչպես ցույց են տվել փաստերը, վերջինիս հետ Առաջին Հանրապետության մաս են կազմել նաև Ախնջի գետակի (Տավուշի բազուկը) ակունքների շրջանը և Կուրի մեջ թափվող Ասրիկչայից արևմուտք ընկած տարածքը, որը ձգվում էր մինչև Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի (ն. Շամշադինի կամ Տավուշի շրջան) ծայր արևելյան սահմանագլուխը: Փաստորեն, 1918–1920 թվականներին այս հատվածում պահպանվել էր երբեմնի Ղազախի ու Ելիզավետպոլի գավառների վարչական սահմանագիծը²⁵: Մեր հաշվարկներով, վերը նշված սահմաններում, պայմանականորեն ճամբարակի և Արծվաշենի անվանված ենթաշրջանները զբաղեցնում էին ավելի քան 610 քառ. կմ տարածք, որից 356,4 քառ. կմ–ը բաժին էր ընկնում առաջինին²⁶, իսկ 254 քառ. կմ–ը երկրորդին²⁷:

Վերջապես, Ղազախի գավառի հայկական հատվածի սահմանների ճշտագրտման համար հարկ է քննարկել ևս մի հուշատարածքի հարցը, որը մեր հանրապետության համար ուներ (և առ այսօր ունի) ռազմավարական բացառիկ կարևորություն: Խոսքը ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի և Իջևանի տարածաշրջանների միջև սեպի նման խրված Ներքին Աքսիփարայի (թրք. *Aşağı Aksipara*, աղավաղված հայկական Ոսկեպարից) ենթաշրջանի մասին է, որը համընկնում է նախկին Ղազախի գավառի երկրորդ ոստիկանական տեղամասի ութ թաթարաբնակ գյուղերից կազմված Աքսիփարայի (Акси́пара) գյուղական հասարակությանը²⁸: 1918–1920 թվականներին այս տարածքը նույնպես գտնվել է Հայաստանի Հանրապետության կազմում: Սա երևում է ՀՍԽՅ ներքին գործերի ժողկոմատի կողմից 1923 թ. մարտի 21–ին կառավարություն առաքված մի գեկու-

ռամեջ (ն. Յանըղփայա, Մեշաքենդ), Չորավանք (ն. Ղարաղայա), Դպրաբակ (ն. Չայքենդ), Մարտունի, Գետիկ (ն. Նոր Բաշգյուղ), Թթուջուր, Վահան (ն. Ուլքենակերտ) գյուղական համայնքներն ամբողջությամբ, ինչպես նաև Կալավանի (ն. Ամրխեր) համայնքի հյուսիսային հատվածը, այդ թվում Բարեպատ (ն. Բարիարադ) գյուղը]:

²⁵ Տես ռուսական 5–վերստանոց քարտեզի E–8 և Ж–8 պլանշետները: Հմմտ. Цыганов А., Атлас этнополитической истории Кавказа (1774–2004), Москва, 2006, с. 21 – “Советский Кавказ – первый административно–территориальный вариант” քարտեզը:

²⁶ Հաշվարկն ըստ Տեղեկատու, էջ 39:

²⁷ Հաշվարկը Գ. Բաղալյանի:

²⁸ “Кавказский календарь на 1917 г.”, ОС, с. 58.

ցագրից, ուր մասնավորապես նշված է. «Փաստացի սահմաններից Ադրբեջանը պահանջում է Իջևանի գավառի Բարանայի (այժմ՝ Նոյեմբերյան) շրջանի Աքսիփարայի անտառային մասը, որը բաժանված է երկու մասի և կազմում է Բարանայի շրջանի ամենամեծ մասը»²⁹: Նույն փաստաթղթում հանդիպող լրացուցիչ տվյալներից պարզվում է, որ երկու «մաս» ասելով հասկացվել է ինչպես հայկական Ոսկեպարից արևմուտք գտնվող Վերին, այնպես էլ արևելք ընկած Ներքին Աքսիփարա նույնանուն գյուղերը: Ի դեպ Առաջին Հանրապետության տարածքում են եղել և Աքսիփարայի հարևան մի քանի գյուղեր ևս (Բաղանիս-Հայրում, Ղուլչի-Հայրում, Մազամլու, Հայրըմլու): Այդ հողատարածքը կազմում էր շուրջ 60 քառ. կմ: Անշուշտ, հարևան հանրապետության ղեկավարությունը հեռահար նպատակներ էր հետապնդում, երբ պահանջում էր վերոհիշյալ ենթաշրջանը: Ըստ էության, դրա նպատակն էր տարանջատել Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները, սեպածև խրվել մեր հանրապետության տարածքում և շարունակել ավանդական դարձած գավթողական քաղաքականությունը:

Ամփոփենք. ըստ էության 1920 թ. կեսերին Հայաստանի իրավասության ներքո գտնվում էր Ղազախի գավառից շուրջ 3260 քառ. կմ տարածք:

5. Համաձայնագրի 3-րդ հոդվածի «Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը», ձևակերպման մեջ պետք է հասկանալ նախկին Բորչալուի գավառի այն հատվածը, որը տարածվում էր Ձորագետից անմիջապես հարավ՝ մինչև նախկին Երևանի նահանգի հյուսիսային սահմանը և մտնում էր վերոհիշյալ վարչամիավորի Լոռու ոստիկանական տեղամասի մեջ: Այս հատվածում էին գտնվում 11 գյուղական հասարակություններ՝ իրենց 26 բնակավայրերով³⁰:

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 3, ք. 43:

³⁰ Ըստ "Кавказский календарь на 1917 г.", ОС, էջ 96-97: Դրանցից 9-ն ամբողջությամբ էին անցնելու ՀՍԽՀ-ին, իսկ 2-ը՝ ռուսական Ջալալ-օղլու և Շահնազարի գյուղական հասարակությունները, հատվածաբար լճով-Ալեքսանդրովկա (այժմ Բովածոր, խորհրդային տարիներին՝ Մաքսիմ Գորկի, Ստեփանավանի տարածաշրջանում) և Շահնազար (այժմ՝ Մեծավան, Տաշիրի տարածաշրջանում) գյուղերը:

Ըստ էության, Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկվելու էին ներկայիս ՀՀ Լոռու մարզի Ալավերդու (ն. Թումանյանի) և Ստեփանավանի տարածաշրջանների հարավային, Վանաձորի տարածաշրջանի (ն. Գուգարքի շրջան) հյուսիսային և Տաշիրի տարածաշրջանի (ն. Կալինինոյի շրջան) հարավ-արևմտյան հատվածները՝ շուրջ 1060 քառ. կմ տարածությամբ³¹: Նշված տարածքից ամենամեծ մասնաբաժինը հասնում է Ստեփանավանի (407,5 քառ. կմ)³² և Ալավերդու տարածաշրջաններին (335,5 քառ. կմ)³³: Վանաձորի և Տաշիրի տարածաշրջաններից Խորհրդային Հայաստանին անցնող մասերը կազմում էին համապատասխանաբար՝ 144,3 և 90 քառ. կմ³⁴:

Հետաքրքիր է, որ դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածում որևէ ակնարկ չկար 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական կարճատև պատերազմի արդյունքում 1919 թ. հունվարին ստեղծված և նախկին Լոռու ոստիկանական տեղամասի մեծագույն մասն ընդգրկող չեզոք գոտու մասին (մոտ 1900 քառ. կմ տարածքով³⁵):

1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր քեմալական բանակի՝ Լոռի ներխուժելու վտանգը, Վրաստանի կառավարության առաջարկով նոյեմբերի 13-ին Թիֆլիսում

³¹ Հաշվարկն ըստ՝ Տեղեկատու, էջ 49-51, 55-57:

³² Ներառում էր ներկայիս Ստեփանավան քաղաքը (1920 թ. Զալալօղլի), ինչպես նաև Ամրակից (ն. Նիկոլանկա, Խորհրդային շրջանում Կիրով), Արմանիս, Գարգառ (ն. Հայ Գյառգյառ), Գյուլագարակ, Կաթնաղբյուր (ն. Ղոթուրբուլաղ), Կուրթան, Հոբարծի, Պուշկինո (ն. Ռուս Գյառգյառ), Վարդաբլուր, Ուրասար (1920 թ. Նովո-Պոկրովկա, Խորհրդային շրջանում Կույբիչև) համայնքներն իրենց հողատարածքներով:

³³ Ներառում էր ներկայիս Դսեղ, Մարց, Լորուտ, Շամուտ, Ահնիձոր, Աթան, Չկալով (ն. Սադիբազդի) համայնքներն իրենց հողատարածքներով:

³⁴ Ներառում էր ներկայիս Վանաձորի տարածաշրջանի հետևյալ համայնքները. Չորագյուղ, Չորագետ (ն. Քուլագերան քաղաքատիպ ավան), Անտառամուտ (ն. Քուլագերան), Վահագնի (1920 թ. Շահալի), Եղեգնուտ (1920 թ. Ղամշկուտ), Դեբետ (1920 թ. Խաչիգյուղ), Վահագնաձոր: Տաշիրի տարածաշրջանից միայն այժմյան Կաթնառատի համայնքի տարածքն էր ամբողջությամբ ընդգրկվելու ՀՍԽՀ կազմում: Բացի այդ, Խորհրդային Հայաստանի մաս էր կազմելու նաև ներկայիս Սեդվահովիտ (ն. Թազաքենդ կամ Ղարախսա) համայնքի մեծագույն մասը՝ Նորամուտ (ն. Ղարաղալա) գյուղով (Անդվահովիտը մնում էր չեզոք գոտում), ինչպես նաև Բլագոդարնոյե համայնքի հողատարածքները՝ առանց գյուղի:

³⁵ Հաշվարկը՝ Գ. Բաղալյանի:

ստորագրվեց հայ-վրացական համաձայնագիր՝ չեզոք գոտի ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին: Համաձայնագրի 2-րդ կետով արձանագրվեց, որ «չեզոք գոտում վրացական զորքերի գտնվելը չի առաջացնելու այդ տարածքի նկատմամբ (վրացական կողմի – հեղ.) որևէ նոր իրավունք»: Համաձայնագիրը կնքվում էր 3 ամիս ժամկետով, այն լրանալուց հետո՝ կողմերի համաձայնությամբ, կարող էր երկարաձգվել, հակառակ դեպքում՝ կորցնելու էր իր ուժը. զորքերը դուրս էին բերվելու, գոտում վերականգնվելու էր նախկին դրությունը³⁶:

Վրացական կողմը, սակայն, օգտվելով Հայաստանի ծանր վիճակից և խախտելով համաձայնագիրը, շուտով ավելացրեց չեզոք գոտում տեղակայվող վրացական զորամասերը, դրանք մտցրեց նաև գոտու սահմաններից դուրս գտնվող հայկական այլ բնակավայրեր՝ Ջալալօղլի (Ստեփանավան), Շահալի կայարան (Վահագնի), Փամբակ, Լորուտ, Քոլագերան և այլն: Լոռիում հաստատվեց վրացական զեներալ-նահանգապետություն:

Այդուհանդերձ, Հայաստանի խորհրդայնացումից հետո ռազմաքաղաքական նպաստավոր իրավիճակ ստեղծվեց Լոռու վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճը հիմնականում ՀՍԽՖՍՀ օգտին լուծելու համար: ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի և Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից Լոռիում կազմակերպված ապստամբության արդյունքում չեզոք գոտին 1921 թ. փետրվարի կեսերին ազատագրվեց վրացական ռազմակալումից: Դրա արդյունքում կանխվեց նաև գոտու հարակից հայկական մի քանի բնակավայրերի հնարավոր բռնակցումը Վրաստանի Հանրապետությանը: Եթե Խորհրդային Ռուսաստանի համար Լոռու չեզոք գոտում վրացական զինագրավման դեմ բարձրացրած ապստամբությունն առաջին հերթին կարևորվում էր Վրաստանի խորհրդայնացման հեռանկարներով (ինչն էլ շուտով իրականացվեց), ապա Լոռին ազատագրելը և Խորհրդային Հայաստանին միացնելը տեղի բնակչու-

³⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 340–341: Տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 325–327:

յան միահամուռ ցանկությունն էր: Սա նաև նորաստեղծ խորհրդային հանրապետության տարածքային առաջին լուրջ ձեռքբերումն էր:

Ի մի բերենք տարածքային հաշվարկները.

1. Երևանի նահանգ՝ 26400 քառ. կմ

2. Ջանգեզուրի գավառ (ներառյալ Ալ լճերի տարածքը)՝ 7933,4 քառ. կմ

3. Կարսի մարզի արևելքը՝ 4417 քառ. կմ

4. Հայկական Ղազախ՝ 3260 քառ. կմ

5. Բորչալուի գավառի հարավը՝ 1060 քառ. կմ

Ընդամենը՝ 43070,4 քառ. կմ:

Այսպիսով, 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով նորահռչակ խորհրդային Հայաստանի համար նախատեսված տարածքը պետք է կազմեր ավելի քան 43000 քառ. կմ³⁷:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, ինչպես նշվեց, նրա տարածքների նկատմամբ անթաքույց հավակնություններ ունեին հարևան պետությունները, բացառությամբ Իրանի: Հայ-ադրբեջանական վիճելի տարածքներ էին համարվում Նախիջևանը, Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը, իսկ հայ-վրացական՝ Լոռին, Ախալքալաքի գավառը և Խրամի (Ծալկա) տարածքը:

Ինչ վերաբերում է քենալական Թուրքիայի կողմից բռնագավթված հայկական տարածքներին, ապա Հայաստանի խորհրդայնացումով խնդիրը ստորադասվեց խորհրդա-թուրքական տարածքային սահմանազատմանը, որը որոշվելու էր ապագա բանակցություններում: ՀՍԽՅ նոր իշխանությունները՝ ի դեմս հայ կոմունիստների, թեպետ վճռական էին հայկական տարածքների և սահմանների

³⁷ Համեմատության համար նշենք, որ Մոսկվայում 1921 թ. հրատարակված «Статистический ежегодник, 1918–1920» գրքում ՀՍԽՅ տարածքը 1920 թ. դեկտեմբերի դրությամբ ցույց է տրված 34288 քառ. վերստ կամ 39019 քառ. կմ (տե՛ս Поляков Ю. А., Советская страна после окончания гражданской войны: территория и население, Москва, 1986, էջ 68): Իսկ Ա. Հակոբյանը, իր իսկ հարցադրմանը՝ «թե որքան տարածք էր մնում խորհրդային Հայաստանին 1920 թ. դեկտեմբերի իրավիճակով», նշում է. «Տարածքային սահմանային խնդրի քիչ թե շատ հետևողական ու արդարացի լուծման դեպքում, կարծում ենք, որ ՀՍԽՅ տարածքը կարող էր հասնել առնվազն 40000 քառ. կմ-ի» (Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 93–94):

խնդրի հօգուտ հանրապետության լուծման հարցում, սակայն վճռորոշ էր լինելու Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը:

1920 թ. դեկտեմբերի 9-ին քեմալական իշխանություններին ուղղված հուշագրում ՌՍԴԽՀ կառավարությունը անհրաժեշտ է համարում նախատեսվող կոնֆերանսին Խորհրդային Հայաստանի (ինչպես նաև՝ Խորհրդային Ադրբեջանի) ներկայացուցիչների մասնակցությունը: Խորհրդաթուրքական կոնֆերանսին նշանակված հայկական պատվիրակությունը ՀՍԽՀ արտգործօժոկոմ Ալեքսանդր Բեկզադյանի գլխավորությամբ Մոսկվայում Ռուսաստանի արտգործօժոկոմատ է ներկայացնում փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական նյութերի մեծ փաթեթ՝ «Հայկական պատվիրակության 1921 թ. փետրվարի 2-ի տեղեկատու-զեկուցումը ռուս-թուրքական կոնֆերանսի համար» վերնագրով: Թղթապանակի «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» բաժնում ներկայացվում է հայկական մի շարք տարածքների (Կարս, Արդահան, Բայազետ, Սուրմալու, Նախիջևան, Շարուր-Ռարալազյազ և այլն) ինչպես ռազմավարական, այնպես էլ սոցիալ-տնտեսական նշանակությունը ՀՍԽՀ-ի համար, շեշտվում է, որ նշված տարածքները հարկավոր է ընդգրկել Խորհրդային Հայաստանի կազմում: Այստեղ առաջարկվում է Թուրքիայի հետ սահմանների չորս հնարավոր տարբերակներ: Փաստաթղթերին ուշադրությամբ ծանոթանալուց հետո ակնհայտ է դառնում, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունների կարծիքով՝ հանրապետության բնականոն զարգացման համար նրա կազմում անհրաժեշտ էր ընդգրկել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող վերը նշված շրջանները, որոնք կազմում են շուրջ 60000 քառ. կմ տարածք: Այսպիսով, Հայաստանի նոր իշխանություններին ակնհայտորեն չէր բավարարում Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագրով հանրապետությանն անցնող տարածքները, նրանց ակնկալիքներն ավելի էր: Հայ-թուրքական սահմանազատման տարբերակների հիմքում ընդունելով դեկտեմբերի 2-ի համաձայնագրի 3-րդ կետի պայմանները, հայկական կողմը, այսպիսով, հավակնություններ էր ներկայացնում նաև Ախուրյան և Արաքս գետերից արևմուտք, մասամբ՝ հարավ ընկած տարածքների,

այդ թվում՝ Կարսի մարզի, Արդահանի օկրուգի որոշ հատվածների, Բայազետի նկատմամբ³⁸։

Հայկական կողմի փաստարկները, սակայն, որևէ նշանակություն չունեցան. Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրով խորհրդաթուրքական սահմանի հայ-թուրքական հատվածն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով թուրքական կողմին թողնելով Կարսի մարզը, Սուրմալուի ողջ գավառը (Մեծ և Փոքր Արարատներով)։ Նախիջևանի երկրամասը (Շարուր-Դարալագյազի շրջանի հարթավայրային մասով), իբրև «Նախիջևանի մարզ», ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվեց խորհրդային Ադրբեջանի «խնամակալությանը»՝ պայմանով, որ վերջինս այն չի զիջելու մի երրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին։ Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքները կազմում էին ավելի քան 25000 քառ. կմ։

Մոսկվայի կոնֆերանսում հայկական շահերի անտեսման կապակցությամբ ՀՍԽՀ պատվիրակությունն ապրիլի 15-ին բողոքի հուշագիր ուղղեց ՌԿ(Բ)Կ կենտկոմին և խորհրդային պետության ղեկավար Վլադիմիր Լենինին։ Դրանում մասնավորապես նշվում էր. «Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր խորհրդային Հայաստանի համար»³⁹։

Այսպիսով, ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեցին և Թուրքիային ու խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեցին հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին և ոտնահարվեցին միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները։ Ոչ խորհրդային Ռուսաստանը և ոչ էլ քեմալական Թուրքիան առանց խորհրդային Հայաստանի մասնակցության որևէ իրավասություն չունեին տնօրինելու հայկական տարածքների և հայության ճակատագրերը։ Ուստի միանգամայն իրավացի է սփյուռքահայ իրավաբան-պատմաբան Շ. Թորիկյանը, երբ եզրակացնում է, որ «Հայաստանի տարածքային հարցերին վերաբերող պայմանագրի

³⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 1-23։

³⁹ Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 355։

կետերը չեն կարող լինել իրավական պարտավորություն Չայաստանի համար»⁴⁰:

Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության և Կարմիր բանակի հրամանատարության վճռական դիրքորոշման շնորհիվ քեմալական զորքերի զինագրավումից ազատագրվեց Ալեքսանդրապոլի գավառը, որը, համաձայն պայմանագրի, մնալու էր ՉՍԽՉ կազմում: Ապրիլի 22-ին թուրքական վերջին զորամասերը հեռացան Ալեքսանդրապոլից: Լոռուց հետո Ալեքսանդրապոլի գավառը հաջորդ տարածքն էր, որ Չայաստանի Խորհրդայնացումից հետո միացվեց հանրապետությանը:

Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն Խորհրդային Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնել դիմելու անհրաժեշտ քայլերի, որպեսզի Թուրքիայի և Անդրկովկասի Խորհրդային հանրապետությունների միջև առաջիկայում ստորագրվող պայմանագրում վերջիններս «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերվում»⁴¹: Փաստորեն, Ռուսաստանը ոչ միայն նվիրաբերում էր Չայաստանի տարածքները Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին, այլև պարտավորվում էր ստիպելու ՉՍԽՉ իշխանություններին ճանաչել այդ փաստը:

Թուրքանդրկովկասյան կոնֆերանսին նախապատրաստվելու փուլում 1921 թ. մայիսի 7-ին Բաքվում գումարվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների ներկայացուցիչների Խորհրդակցություն, որտեղ քննարկվեց նաև սահմանների հարցերը: Ելնելով ՉՍԽՉ ու Նախիջևանի միջև սահմանի ճշտման վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածից Խորհրդակցությունը որոշեց. «իսկույն ևեթ միջոցներ ձեռք առնել տեղում Ադրբեջանի և Չայաստանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրելու սահմանի ճիշտ որոշման հարցը, ազգագրական սկզբունքի, նմանապես և տեղական բնակչության կողմից այդ հարցի շուրջը հաստատված հայացքների հա-

⁴⁰ Թորիկյան Շ., Չայկական հարցը և միջազգային իրավունքը, Բեյրութ, 1976, էջ 107:

⁴¹ Документы внешней политики СССР, т. III, Москва, 1959, с. 602.

մածայն»⁴²: Հայ-ադրբեջանական հանձնաժողովի կայացրած որոշումով ՀՍԽՅ սահմանը Նախիջևանի հետ սկսելու էր ոչ թե Արարատ կայարանից, այլ Ուրմիա գյուղից (այժմ՝ անբնակ) և Արագդայան (այժմ՝ Երասխ) կայարանից: Երևանի գավառից անջատված Արարատ-Քյոնուրլուդաղ-Արագդայան եռանկյունին պետք է մնար ՀՍԽՅ կազմում:

Թուրքանդրկովկասյան կոնֆերանսի համար Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական միասնական ծրագրի դրույթները հաստատվեցին ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3-ի «Կարսի կոնֆերանսի մասին» որոշումով: Նրանում մասնավորապես նշվեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները, բոլոր հարցերում լինել միահամուռ»⁴³:

Կոնֆերանսի հետ կապված իր հարցերը նախապատրաստեց նաև Հայաստանի կառավարությունը: «Կարսում Թուրքիայի հետ առաջիկա կոնֆերանսում ՀՍԽՅ-ի կողմից քննարկման ներկայացվող հարցեր» վերնագիրը կրող հուշագրում այլ հարցերի թվում հայկական կողմն առաջարկում էր ՀՍԽՅ օգտին սահմանների որոշ ուղղումներ կատարել Նախիջևանի երկրամասում և Արփաչայի գոտում, Հայաստանին վերադարձնել նրա միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները և այլն: Սակայն հայկական առաջարկները կոնֆերանսում հանդիպեցին թուրքական կողմի համառ դիմադրությանը և մերժվեցին:

1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրած թուրք-անդրկովկասյան «Բարեկամության պայմանագիրը» չնչին փոփոխություններով վերահաստատեց Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանը: Խորհրդային կողմի միակ ձեռքբերումը կարելի է համարել այն, որ ՀՍԽՅ սահմանների մեջ ներառվեց նախկին Երևանի գավառի հարավում

⁴² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1972, էջ 515:

⁴³ ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1185, թ. 42-43:

գտնվող վերը նշված եռանկյունին՝ շուրջ 260 քառ. կմ տարածքով: Ընդ որում, վերջինիս մեջ էին մտնում նաև Արարատյան դաշտից Ղարալագյազ (Վայոց Ձոր) տանող ճանապարհը (այն այսօր էլ չի կորցրել իր ռազմավարական նշանակությունը) վերահսկող Քյարքի (այժմ՝ Տիգրանաշեն), ինչպես նաև Ջաֆարլու-Գյունութ (Գենուտ) գույգ գյուղերը, որոնք հետագա տարիներին աստիճանաբար «փոխանցվեցին» Նախիջևանի ԻԽՍՀ-ին (35–40 քառ. կմ տարածքով)⁴⁴:

Ավելացնենք նաև, որ, ի տարբերություն Մոսկվայի պայմանագրի, որով Նախիջևանի ինքնավար մարզի նկատմամբ խնամակալությունն Ադրբեջանն իրավունք չունեի զիջելու «մի երրորդ պետության», Մոսկվայի ջանքերով Կարսի պայմանագրից այդ պայմանը հանվեց: Թուրքիան, փաստորեն, «ճանաչում էր Անդրկովկասի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի ամբողջական վերահսկողությունը»⁴⁵:

«Այդ զիջումների դիմաց,- ինչպես հետագայում հայտարարեց կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուխթար բեյը,- մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և եղբայրական Ադրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»⁴⁶:

Խորհրդային Ռուսաստանի ճնշման ներքո Խորհրդային Հայաստանը թեև ստորագրեց Կարսի պայմանագիրը, սակայն նրա իշխանություններն առիթը բաց չէին թողնում իրենց դժգոհությունը հայտնելու համար: Կարսի պայմանագրի տակ իր ստորագրությունը դրած ՀՍԽՂ արտգործոժողկոմ Ասքանազ Մռավյանը նշում է. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»⁴⁷:

⁴⁴ Հաշվարկները Գ. Բադալյանի:

⁴⁵ Օ'Քոննոր Թ. Յ., Դ. Յ. Չիչերին և советская внешняя политика (1918–1930), пер. с англ., Москва, 1991, с. 200.

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 221, ք. 36:

⁴⁷ «Խորհրդային Հայաստան», Երևան, 21 հոկտեմբերի 1921, թիվ 201:

«Ավելի ծանր և ավելի անօգուտ խաղաղություն, քան Կարսինն է, հազիվ թե կարելի է գտնել պատմության էջերում»⁴⁸, – արձանագրում է հեղափոխական պատմաբան Բ. Բորյանը և իրավացիորեն նկատում, որ Կարսի պայմանագիրն «ըստ էության, այնպես էլ ֆորմալ, քաղաքական և միջազգային իրավական նորմերի տեսանկյունից ինքնուրույն փաստաթուղթ հանդիսանալ չի կարող, այլ կրկնում և ամրագրում է 1921 թ. մարտի 16–ի պայմանագիրը»⁴⁹:

Հետևաբար, քանի որ Մոսկվայի պայմանագիրն իր հերթին ստորագրվել էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներով [պայմանագիրը ստորագրող կողմերն առանց որևէ լիազորության միջամտել էին այն չստորագրած ինքնիշխան պետության (պետությունների) տարածքային ամբողջականության հարցերին], ուստի տարածքային սահմանազատման հարցում Կարսի պայմանագրի նկատմամբ Հայաստանն իրավական պարտավորություն չպետք է կրի:

Կարսի պայմանագրով որոշված թուրք–անդրկովկասյան սահմանի սահմանագծման աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար նշանակվեց թուրք–անդրկովկասյան սահմանագծման միացյալ հանձնաժողով՝ ՌՍԴԽՀ ներկայացուցչի մասնակցությամբ: Անդրկովկասյան պատվիրակությունների առաջարկով այդ հանձնաժողովն իր հերթին բաժանվեց երկու ենթահանձնաժողովների՝ թուրք–հայկական և թուրք–վրացական սահմանների տեղում ուսումնասիրման և ճշտման համար: Թիֆլիսում 1921 թ. դեկտեմբերի 10–ին համապատասխան քարտեզագրմամբ հաստատվեց թուրք–անդրկովկասյան սահմանագիծը (դելիմիտացիա)⁵⁰:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը Կարսի պայմանագիրը վավերացրեց 1922 թ. մարտի 20–ին, իսկ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների փոխադարձ պայմանավորվածությամբ՝ վերջիններս պայմանագիրը վավերաց-

⁴⁸ Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть II, Москва–Ленинград, 1929, с. 163.

⁴⁹ Նույն տեղում, էջ 300–301:

⁵⁰ Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 262–263, 304:

րեցին միաժամանակ՝ 1922 թ. մարտի 16–ին⁵¹։ Մոսկվայի ռուս-թուրքական թալանչիական պայմանագրի տարեդարձի օրը։

Վավերագրերի փոխանակումից հետո 1922 թ. վերջերից ձեռնարկվեցին սահմանանշման անցկացման աշխատանքները։ Մի քանի տարվա ընթացքում՝ բարդ ռելիեֆային և խիստ կլիմայական պայմաններում, հարյուրավոր սահմանապահ սպաների, զիֆվորների ու հողաչափ մասնագետների մասնակցությամբ զգալի աշխատանքներ տարվեցին սահմանագատման և հատուկ սահմանային ազդանշանների տեղադրման ուղղությամբ (դեմարկացիա)⁵²։ Այդ աշխատանքների ավարտից հետո 1926 թ. հաստատվեց խորհրդա-թուրքական պետական սահմանագծի գլխավոր արձանագրությունը⁵³։

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև տարաժբային–սահմանային վեճերը կարգավորելու նպատակով ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. մայիսի 2–ի որոշումով ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի աշխատանքներն ընթացան 1921 թ. հունիսի 25–27–ը Թիֆլիսում։ Հանձնաժողովի անդրանիկ նիստում Հայաստանի միակ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը ներկայացնելով վերջին տարիներին Հայաստանի տարաժբային կորուստներն ու ծանր սոցիալ–տնտեսական վիճակը, առաջարկում է ՀՍԽՀ–ին միացնել Լեռնային Ղարաբաղը, նաև Լոռին ու Ախալքալաքի գավառը, Շուլավերը։ Առաջարկը, սակայն, կտրուկ մերժվում է հանձնաժողովի 3 ադրբեջանցի և 2 վրացի ներկայացուցիչների կողմից։ Նրանց աջակցում էր հանձնաժողովի նախագահ Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Կիրովը։ ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրո 1921 թ. նոյեմբերի 22–ին ուղղված զեկուցագրում անդրադառնալով Անդրկովկասի հանրապետություններում ազգայնական թեքումների հարցին, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի անդամներ Ս. Հուսեյնովն ու Ռ. Ախունդովը, որպես դրա «ցայտուն օրինակ», ցինիկորեն բերում էին Բեկզադյանի կողմից հանձնաժողովի վերը նշված նիստում ներկայաց-

⁵¹ Պայմանագիրը վավերացրեցին Համառուսաստանյան կենտգործկոմի նախագահությունը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 35) և Թուրքիայի Ազգային սեժ ժողովը. 172 կողմ, 12 դեմ և 3 ձեռնպահ ձայներով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 144)։

⁵² Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 314։

⁵³ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2008, թիվ 1 (111), էջ 190։

ված տարածքային պահանջների օրինակը. «Ընկ. Կիրովը վկա է հանդիսանում, – նշվում է գեկուցագրում, – թե ինչպես առաջին իսկ նիստում Հայաստանի ներկայացուցիչ ընկ. Բեկգադյանը հանձնաժողովին մի քարտեզ ներկայացրեց՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանագծերի նախագծով, ըստ որի՝ Ադրբեջանի շուրջ քառորդ մասն անցնում էր Հայաստանին»⁵⁴:

Ա. Բեկգադյանը հունիսի 27–ին հրաժարվում է մասնակցել հանձնաժողովի հետագա աշխատանքներին և պնդում, որ վիճելի հարցերը փոխանցվեն Կովկասյան բյուրոյի քննարկմանը:

1921 թ. հուլիսի 2–7–ը Թիֆլիսում գումարված ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4–ի նիստը, որին մասնակցում էր ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը, քննարկելով Ղարաբաղի հարցը, քվեարկության արդյունքում ընդունում է Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՅ կազմ մտցնելու մասին արդարացի որոշումը: Այն միանգամայն համահունչ էր ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3–ի այն որոշմանը, որով Հայաստանի կառավարությանը հանձնարարվեց Հռչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին»⁵⁵: ՀՍԽՅ ժողկոմխորհի համապատասխան հայտարարությունը հրապարակվեց 1921 թ. հունիսի 12–ին, ուր նշված էր. «Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է ՀՍԽՅ անբաժան մասը»⁵⁶:

Հուլիսի 4–ի որոշմանը, սակայն, դեմ է արտահայտվում Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Նարիմանովը, ունա պնդում է, որպեսզի հարցի վերջնական լուծումը փոխադրվի Մոսկվա՝ ՌԿ(Բ)Կ կենտկոմ: Բայց հաջորդ օրը՝ հուլիսի 5–ին, հրավիրվում է Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստ, որտեղ հօգուտ Ադրբեջանի վերանայվում են Ղարաբաղի հարցի վերաբերյալ նախորդ օրը կայացրած որոշումները: Առանց հարցը քվեարկության դնելու պլենումը որոշում է «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ՍԽՅ - սահմաններում, նրան տալով մարզային լայն ինքնավարություն»⁵⁷:

⁵⁴ ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու 1, գ. 3, թ. 140–141:

⁵⁵ Նույն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 13:

⁵⁶ «Խորհրդային Հայաստան», Երևան, 19 հունիսի 1921:

⁵⁷ Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 649–650.

Այսպիսով, հուլիսի 5-ի անօրինական որոշումով ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի շուրջ 95 %-ը կազմող հայ բնակչության իրավունքները, խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Ահա թե ինչու ՌԿ(Բ)Կ կենտկոմը 1921 թ. հուլիսի 16-ին միանգամայն սխալ և անբավարար ճանաչեց Ղարաբաղյան հարցի վերաբերյալ Կովկասյան բյուրոյի պլենումի որոշումները և բողոքեց դրանց դեմ⁵⁸:

Հայ-ադրբեջանական վիճելի տարածքներից միայն Չանդեզուրի գավառն էր, որ Գարեգին Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ կազմեց Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, հակառակ դեպքում նրան կարող էր սպառնալ Լեռնային Ղարաբաղի կամ Նախիջևանի ճակատագիրը:

1921-1922 թվականներին Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների կողմից հայ-ադրբեջանական սահմանագատման մասին վերջնական համաձայնագիր այդպես էլ չկնքվեց և հայ-ադրբեջանական սահմանը փաստորեն մնաց անորոշ:

ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 7-ի նիստում թեժ քննարկումներ ծավալվեցին նաև Լոռու չեզոք գոտու և Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի) շրջանների՝ Հայաստանին կամ Վրաստանին միացնելու խնդրի շուրջ: Զվեարկության արդյունքում, ծայների վեց կողմ, մեկ ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու չեզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի ու Խրամի շրջանների հարցը փոխանցել Վրաստանի կոմկուսի կենտկոմի քննարկմանը⁵⁹: Վերջինս հուլիսի 16-ին հաստատեց Լոռու չեզոք գոտու մասին Հայաստանի օգտին որոշումը, ինչ վերաբերում է Ախալքալաքի ու Խրամի շրջաններին, ապա, նկատի ունենալով այդ շրջանների՝ Թիֆլիսի հետ «ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կապվածության նկատառումները», կենտկոմն անընդունելի համարեց դրանց փոխանցումը Հայաստանին⁶⁰:

Հայ-վրացական սահմանագատման մասին վերջնական համաձայնագիրը 1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ստորագրեցին

⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 47, թ. 8:

⁶⁰ ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու 1, գ. 7, թ. 43-45:

ՀՍԽՅ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանին: Դրանով Լոռու չեզոք գոտին (մոտ 1700 քառ. կմ), բացառությամբ գոտու հյուսիսային հատվածում գտնվող սահմանամերձ որոշ գյուղերի⁶¹, շուրջ 200 քառ. կմ տարածքով, մնաց Խորհրդային Հայաստանի կազմում⁶²:

Ամփոփենք, նորաստեղծ Խորհրդային Հայաստանի տարածքը և Թուրքիայի, Խորհրդային Ադրբեջանի ու Խորհրդային Վրաստանի հետ նրա սահմանները ձևավորվեցին մի քանի փուլերով. ա) 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով, բ) Մոսկվայի և Կարսի 1921 թ. խորհրդաթուրքական պայմանագրերով, գ) կենտրոնական և հանրապետական կուսակցական մարմինների առանձին որոշումներով: Արդյունքում, եթե դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ՀՍԽՅ տարածքը, ինչպես նշվել է, պետք է կազմեր մոտ 43070,4 քառ. կմ, ապա արդեն 1921 թ. վերջին – 1922 թ. սկզբին տատանվում էր 32000–33000 քառ. կմ-ի սահմաններում⁶³, կրճատվելով ավելի քան 1/4-ով:

Այսպիսով, ՀՍԽՅ տարածքի և սահմանների որոշման հարցում բոլշևիկյան Ռուսաստանը չպաշտպանեց Խորհրդային Հայաստանի և հայության շահերը: Հայկական տարածքների զգալի մասը ապօրինաբար հանձնվեցին Թուրքիային, Խորհրդային Ադրբեջանին ու Խորհրդային Վրաստանին: Դրանով, սակայն, Խորհրդային Հայաստանին պարտադրված տարածքային կորուստները չավարտվեցին, այլ շարունակվեցին հետագա տարիներին ևս: Խորհրդային Հայաստանը, ի վերջո, պարփակվեց խիստ խոցելի սահմաններում՝ ընդամենը 29742,59 քառ. կմ⁶⁴ տարածության վրա:

⁶¹ Իրզանչայ, Սաաթի կամ Սաաթլու, Ջանդար կամ Լոք–Ջանդար, Աղբյուրփի, Օփրեթ, Խոժոռնի, Բրդածոր, Սադախլու և այլն:

⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 3, թ. 66–67, նաև՝ նույն տեղում, ց. 3, գ. 116, թ. 29: Հմմտ.՝ ՀՍԽՅ արտաքին գործերի ժողկոմատի տեղեկատվական («ինֆորմասիոն») բաժնի "Բիւլետեն", թիվ 8, Երևան, 1922, էջ 7:

⁶³ Ուշագրավ է, որ 1924 թ. Մոսկվայում հրատարակված "Сборник статистических сведений по Союзу ССР" գրքում ՀՍԽՅ տարածքը 1923 թ. մայիսի դրությամբ ցույց է տրված 30349 քառ. վերստ կամ 34539 քառ. կմ (տե՛ս Поляков Ю. А., նշվ. աշխ., էջ 68): Իսկ Հայաստանում Անգլիական նպաստամատույց կոմիտեի կողմից 1923 թ. վերջին կազմված տեղեկատու փաստաթղթերից մեկում նշվում է, որ Խորհրդային Հայաստանի տարածքը կազմում է 33000 քառ. կմ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 150, թ. 67):

⁶⁴ Տե՛ս Տեղեկատու, էջ 5:

*KAREN KHACHATRYAN,
GEGHAM BADALYAN*

**THE FORMATION OF THE TERRITORY AND
BORDERS OF THE ARMENIAN SSR
(DECEMBER, 1920 – BEGINNING OF 1922)**

SUMMARY

According to the Russian-Armenian Erevan Treaty of December 2, 1920 Armenia was sovietized and proclaimed independent Soviet Socialist Republic the territory of which constituting more than 43000 km². was recognized by Soviet Russia. But afterwards, Bolshevik Russia did not protect the interests of newly established Soviet Armenia and the Armenians in the question of definition of the borders of the Armenian SSR. Not only Western, but also tangible part of Eastern Armenia were illegally transferred to Turkey, Soviet Azerbaijan and Soviet Georgia in 1921. But territorial losses of Soviet Armenia continued also in subsequent years. As a result, the borders of Soviet Armenia were again cut and the Armenian statehood appeared to be limited within vulnerable borders on the territory of only 29742.59km².

*КАРЕН ХАЧАТРЯН,
ГЕГАМ БАДАЛЯН*

**ФОРМИРОВАНИЕ ТЕРРИТОРИИ И ГРАНИЦ
СОВЕТСКОЙ АРМЕНИИ
(ДЕКАБРЬ 1920 Г. – НАЧАЛО 1922 Г.)**

РЕЗЮМЕ

По российско–армянскому Ереванскому соглашению от 2–го декабря 1920 г. Армения была советизирована, объявлена независимой Советской Социалистической республикой, Советская Россия признала за республикой территории общей площадью свыше 43000 кв. км.

ՀԱՄԷ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1920 թ. դեկտեմբեր - 1922 թ. սկիզբ)

Մասշտաբ 1:2 000 000

- Նահանգների կենտրոններ
- Քաղաքներ
- Երկաթուղի



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Պետությունների սահմանները 1914 թ.
- Նախկին Ռուսական կայսրության նահանգների, մարզերի և շրջանների (օկրուգներ) սահմանները
- Նախկին գավառների սահմանները
- Հայաստանի ԱԽՀ սահմանները և տարածքը (ընդամենը 43070,4կմ²) ըստ 02.12.1920 թ. Երևանի հայ-ռուսական համաձայնագրի
- Լոռու շեզոք գոտու հյուսիսային սահմանները և տարածքը
- 1920 թ. ռազմական գործողությունների ընթացքում քեմալականների կողմից բռնազավթված տարածքը, որը 1921 թ. անցավ Թուրքիային

- 26400կմ² Հայաստանի ԱԽՀ կազմում ընդգրկվելիք վարչամիավորների տարածքն ըստ 02.12.1920 թ. համաձայնագրի
- Հայաստանի ԱԽՀ արևմտյան և հարավ-արևմտյան սահմանագիծն ըստ 16.03.1921 թ. Մոսկվայի պայմանագրի
- Հայաստանի ԱԽՀ սահմանը Սադարակի հատվածում ըստ 13.10.1921 թ. Կարսի պայմանագրի
- Հայաստանի ԱԽՀ փաստացի սահմանները 1922 թ. սկզբին

© Զարտեգի հեղինակ՝ Գեղամ Բաղդասյան
 Քարտեզագիր՝ Մարտին Մարտիրոսյան
 Խմբագիր՝ Կարեն Խաչատրյան

Однако в дальнейшем позиция Советской России в вопросе формирования границ Советской Армении (армяно-турецкого, армяно-азербайджанского, армяно-грузинского территориального разграничения) изменилась. Несмотря на некоторые дипломатические усилия властей Армении добиться справедливого решения вопроса границ молодой советской республики, по Московскому и Карсскому советско-турецким договорам 1921 г. большевиками были незаконно уступлены Турции армянские территории Карса и Ардагана, Сурмалинский уезд (со священной для армян горой Арарат); под протекторат Советского Азербайджана на правах автономной территории был передан Нахичеванский уезд (на тех же правах в начале июля 1921 г. большевиками Азербайджану был незаконно передан Нагорный Карабах, а Советской Грузии – Ахалкалакский уезд, некоторые территории Лорийской нейтральной зоны и т.д.).

В результате, в конце 1921 – начале 1922 гг. территория Советской Армении колебалась в пределах 32000–33000 кв. км. По сравнению с соглашением от 2-го декабря, территориальные потери республики составили свыше 10000–11000 кв. км. В течение последующих лет по решениям партийных и советских органов территориальные потери Советской Армении продолжились, в итоге армянская государственность оказалась в уязвимых границах, а её территория составила всего лишь 29742,59 кв. км.

**ԲՅՈՒՐՈՎՐԱՏԻՉՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.**

Խորհրդային երկրի պետական-կառավարման համակարգի բնորոշ գծերից մեկը հանդիսանում է այդ համակարգի բյուրոկրատական բնույթը, որի դրսևորումները առկա էին նաև Խորհրդային Հայաստանում: Արդեն 1920-ականների վերջին և 30-ականների սկզբին Խորհրդային Հայաստանում բյուրոկրատական համակարգի առկայությունը պետական կառավարման մեջ իրողություն էր:

Հայաստանի Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատի՝ 1921 թ. փետրվար ամսի հրամաններից մեկով կոմիսարիատին կից ստեղծվել էր բողոքների բյուրո՝ բնակչության բողոքները լսելու և դրանց համապատասխան ընթացք տալու նպատակով: Բողոքների բյուրոն պետք է ընդուներ «հայտարարություններ և բողոքներ պաշտոնական անձանց կողմից կատարված ապօրինի գործողությունների, իրավազանցությունների և զեղծարարությունների մասին»¹: Բողոքների բյուրոն քաղաքացիներին հնարավորություն էր տալիս դիմումներ և բողոքներ գրել «վերև», երբ նրանց «նեղացնում» էին «ներքևում»: Եվ վերևը (ի նկատի ունենք կուսակցական և պետական բարձրաստիճան մարմինները), և ներքևը (ստորադաս պետական և կուսակցական առաջնային կազմակերպությունները, ստորին պաշտոնյաները) նույն պետության, կառավարման նույն համակարգի տարբեր օղակներն էին:

1920-ականների սկզբին Հայաստանի Խորհրդային իշխանությունը ներկայացնում էին հեղափոխական գիտակցությամբ մարդիկ, որոնք իրենց իսկ ստեղծած վարչական ապարատը, նրա ստորին օղակներին համարում էին ցարիզմի մնացուկներ, չէին վստահում և գերադասում էին ժողովրդի հետ շփվել, այսպես ասած, առանց միջ-

¹ Տես Հակոբյան Ա., Հայաստանի Բանգյուղտեսչությունը սոցիալիզմի համար մղված պայքարում, Երևան, 1974, էջ 27:

նորոգների: Սրա անմիջական հետևանքով հասարակական գիտակցության մեջ հստակ ամրակայված էր խիստ տարասեռ վերաբերմունք պետության և նրա ստորին պաշտոնյաների հանդեպ: Որևէ դիմումի կամ խնդրագրի մեջ չենք հանդիպում քննադատություն պետության հասցեին, մինչդեռ տեղական պաշտոնյաների կողմից դիրքի չարաշահման վերաբերյալ խորհրդային Հայաստանի բնակիչների կողմից գրված դիմումները են: Օրինակ «Սաճկալ» թերթին ուղարկված 1929 թ. «Ավելի փող է վերցնում» վերնագրով մի անտիպ թղթակցության մեջ գյուղացին բողոքում էր Նալբանդ կայարանի գանձապահից իրենից տոմսակի համար ավել փող վերցնելու կապակցությամբ: Դիմումի վերջում գյուղացին կասկած էր հայտնում առ այն, որ ավել գումարը գրպանում են տեղական պաշտոնյաները. «...Այդ փողը ու՞ր է գնում. իրանց գրպանը, թե՞ պետության օգտին: Բայց ես չեմ հավատում, որ պետության օգտին գնա»²: Նկատենք, որ փաստաթուղթը պարունակում է գյուղացու կողմից արտահայտված որոշակի վերաբերմունք պետության նկատմամբ, ավելի ճիշտ՝ որոշակի վստահություն, որը նա չի տածում վարչական մարմինների, տեղական իշխանավորների (նաչալնիգների) նկատմամբ: Գյուղացու արտահայտած տարակուսանքը, թե ու՞ր է գնում ավել փողը, արդյո՞ք պետության օգտին, ցույց է տալիս հասարակական գիտակցության մեջ պետություն և բյուրոկրատիա հստակ տարանջատումը: Պարզորոշ երևում է, որ սրանք նույն հասկացությունները չեն պարզ մարդու համար:

1920–30-ական թթ. մանր պաշտոնյաների վարքագիծն ակտիվ քննարկվում, քննադատվում էր թե՛ բնակչության, թե՛ կուսակցության կողմից: Շրջանային, տեղական պաշտոնյաների չարաշահումները, անպատասխանատու վերաբերմունքը կուսակցական պարտականություններին, հովանավորչությունը, անգրագիտությունը հաճախակի շահարկվող թերություններ էին, որոնք վերագրվում էին նրանց: Այս երևույթների խիստ քննադատությամբ հանդես էր գալիս նաև մամուլը, որը, անշուշտ, համապատասխան աջակցություն էր ստանում պետության կողմից: «Աշխատանք» թերթի համարներից

² ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2214, թ. 18:

մեկում «Ի՞նչ է բյուրոկրատիզմը, ո՞վ է բյուրոկրատը» վերնագրով հոդվածում հանդիպում ենք բյուրոկրատի հետաքրքիր բնորոշման. «Բյուրոկրատը խորհրդային իշխանության վտանգավոր թշնամին է. նա պետ-ապարատի վանողական ուժն է, նա թունավորում է մասսաների քաղաքական տրամադրությունները, շաղկապի փոխարեն անդունդ է բաց անում գյուղի և քաղաքի միջև»³:

Հասարակական և պետական գիտակցության մեջ բյուրոկրատիզմն ընկալվում էր լայն իմաստով՝ ընդգրկելով և՛ պաշտոնական չարաչափումները, և՛ անպատասխանատու վերաբերմունքը իր վրա դրված պարտականություններին, և՛ քաղաքական ու կուսակցական անգրագիտությունը, և՛, որ երևի թե ամենահետաքրքիրն է, պաշտոնյայի կեցվածքն աշխատանքի մեջ և աշխատանքից դուրս: Բյուրոկրատիզմի տակ շատ հաճախ ընկալվում էր նաև տեղական պաշտոնյաների կողմից կիրառվող մանր հովանավորչությունը: Կոմունիստական կուսակցության Երևան քաղաքի քաղաքային ակտիվի ժողովներից մեկը, գումարված 1927 թ., ամբողջությամբ նվիրված էր բյուրոկրատիզմի դեմ պայքարի հարցերին: Ժողովի մասնակիցների ելույթներում պարզորոշ երևում է չարաչափումների այն բազմազանությունը, որ հավաքական ծեղկ ընկնում էր «բյուրոկրատիզմ» բնորոշման տակ: Ջեկուցողներից մեկը որպես բյուրոկրատիզմի օրինակ, բերում է մահամերձ հիվանդին հիվանդանոց հասցնելու համար փաստաթղթային ձևակերպումների անթույլատրելի ձգձգումները, մյուսը՝ «իսկական բյուրոկրատներ» է համարում հիմնարկի ուշացող աշխատողներին, երրորդը նշում է, որ շատ շրջաններում և Երևան քաղաքում պատասխանատու պաշտոնյաները հիմնարկության մեքենաներով գնում են որսի, և առաջարկում է խիստ հսկողություն սահմանել, որպեսզի հիմնարկությունների մեքենաներն օգտագործվեն միայն ծառայողական նպատակներով և այլն: Իսկ ժողովի մասնակիցներից մեկը, դիմելով կուսակից ընկերներին, նշում է, թե նրանք բյուրոկրատիզմը ներկայացնում են որպես հրեշ և երևույթ.

³ «Աշխատանք», 04.02.1925 թ., № 2, էջ 8:

որը բացակայում է իրենց մեջ, մինչդեռ դա այդպես չէ, որպես հաստատում իր ասածի, բերում է կոնկրետ փաստեր⁴:

Բյուրոկրատիզմը տարածված երևույթ էր խորհրդային պետական-կուսակցական ապարատում, և, չնայած ձեռնարկված միջոցառումներին, մանր պաշտոնյաների կողմից թույլ տրվող չարաշահումները եղել են խորհրդային Հայաստանի ներքին կյանքը բնորոշող երևույթներ: Ազգաբնակչության տրամադրությունները տեղական պաշտոնյաների մեծ մասի նկատմամբ հիմնականում բացասական էին, և նրանց մոտ առաջանում էր ցանկություն կուսակցական և պետական բարձրաստիճան մարմիններին բողոքներ ուղարկել այդ պաշտպանների դեմ: Բողոքները հիմնականում շոշափում էին քաղաքացիների տարաբնույթ իրավունքներ, որոնք պարբերաբար խախտվում էին տեղական աստիճանավորների կողմից: Այս բողոքներում արտացոլված էին առօրյա կյանքում հանդիպող այն բազմաթիվ խնդիրները, որոնց բախվում էին Հայաստանի քաղաքացիները:

1920-ականների սկզբին ցավոտ խնդիրներից էր, օրինակ, բնակարանային հարցը: Բնակարանների տրամադրման ժամանակ թույլ տրված բազմաթիվ չարաշահումների հետևում հաճախ կազմած էին լինում իրավասու հիմնարկները, որոնց անօրինական որոշումների արդյունքում քաղաքացիները լավագույն դեպքում զրկվում էին սենյակներից մեկից կամ մի քանիսից, իսկ վատագույն՝ հայտնվում էին փողոցում: Օրինակ՝ ՀՍԽՅ հողժողկոմատի աշխատակիցներից մեկը 1923 թ. ժողկոմատի Երևանի տեղկոմին ուղարկած դիմումում բողոքում է կոմունալ տնտեսության կայացրած օրինական որոշման դեմ, որի արդյունքում նրա հինգ անդամից բաղկացած ընտանիքից, ի օգուտ քաղաքացի Աբովյանի խլում էին նրան հատկացված երկու սենյակներից մեկը: Քաղաքացին նշում է, որ, չնայած իր և կնոջ արտահայտած վճռական բողոքներին, միլիցիոներները նետում են նրանց իրերը մի սենյակից մյուսը՝ խտացնելով իրենց՝ «մի սենյակում սեղանների վրա քնելու աստիճանի»⁵: Քաղաքացին նշում էր, որ իրեն բնակարանից վտարելու որոշումը կարողացել է ստանալ բողոքի մեջ նշվող Աբովյանը: Թե ինչ ճանապարհով էր վերջինս

⁴ Ժողովի ամբողջական արձանագրությունը տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 119, ք. 1-4:

⁵ Նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 227, ք. 1:

ստացել աջակցություն, դիմողը չի նշում, սակայն պետք է ենթադրել, որ օրինական ուժի մեջ մտած որոշման անտեսման կամ լուծման համար քաղաքացին դիմել էր այլ միջոցների: Առհասարակ այս ոլորտի գործունեության մեջ առկա թերությունները երբեմն խոստովանում էին նույնիսկ ոլորտի պատասխանատուները, աշխատողները: Օրինակ՝ Երևանի բնակահանձնաժողովի անդամներից մեկը բողոքում էր, որ բնակվարչության նախագահը խոչնդոտում է իր աշխատանքը պարբերաբար: Նա նշում էր, որ նախագահը հնարավորություն չի տալիս իրեն կատարելու իր վրա դրված պարտականությունները, հաշվառել առկա բնակարանները, բացի այդ՝ առանց հանձնաժողովի կարծիքը հարցնելու բավարարում է խնդրառու շատ քաղաքացիների մասնավոր դիմումներ⁶: Այստեղ օրինաչափ հարց է ծագում, թե ինչու էր բնակվարչության նախագահը մասնավոր դիմումներին առավելություն տալիս, ավելի ճիշտ՝ ի՞նչ իրավունքով էր դրանց ընթացք տալիս առանց բնակվարչության բոլոր անդամների գիտության: Պետք է ենթադրել, որ սա տեղական պաշտոնյայի կողմից թույլ տրված կամայականության ևս մեկ դրսևորում էր:

Ջբաղեցրած պաշտոնի նկատմամբ բյուրոկրատական, անբարեխիղճ վերաբերմունքի պարարտ հող կար նաև աշխատանքային հարաբերությունների ոլորտում: Եթե կուսակցական գաղափարախոսությամբ ամրագրվում էր բանվորի և գյուղացու նկատմամբ ընդգծված հարգանք, նրանց աշխատանքի գովերգում և հիմնարկի ղեկավարը հանդես էր գալիս որպես պրոլետարիատի շահերի պաշտպան, ապա գործնականում պաշտոնյաների կողմից դրսևորվող վարքագիծը միշտ չէ, որ համապատասխանում էր կուսակցության պահանջներին: Խորհրդային հիմնարկների ղեկավարներն ավելի շատ հիշեցնում էին մարդկանց, ովքեր տեղերում գերազնահատում էին իրենց տրված լիազորությունները, ինչը նրանց կողմից բազմաթիվ չարաշահումների առիթ էր տալիս: Հիմնարկություններում աշխատանքային գործունեության բնորոշ կողմեր էին դարձել մանր հովանավորչությունը, կամայականությունները, պաշտոնա-

⁶ Նույն տեղում, ց. 1, գ. 59, ք. 155:

կան դիրքի չարաշահումները, որոնք բյուրոկրատիզմի դրսևորման խոսուն օրինակներ են:

Խորհրդային տարբեր հիմնարկների հետ բնակչության ամենօրյա առնչությունների արդյունքում հանրային գիտակցության մեջ ձևավորվել էր հիմնարկության դեկավարի յուրօրինակ կերպար: Նա հանդիսանում էր իր փոքրիկ գրասենյակային կայսրության միանձնյա տիրակալը և առաջնորդվում էր բացառապես հրամայական աշխատելաճով: «Աշխատանք» թերթը բազմիցս անդրադարձել է բյուրոկրատիզմի հիմնախնդրին: Թերթի երգիծական բաժնում գետեղված՝ «Նորին մեծություն վերջին բյուրոկրատը» վերտառությամբ ծաղրանկարը պատկերում է հիմնարկի դիրեկտորին՝ բազմած գահի վրա: Գլխին թագ է «Առանց զեկուցման չմտնել» մակագրությամբ: Որպես գահի հենակներ՝ աջ և ձախ կողմերում գրասենյակային գործերի կապուկներն են, որպես արքայական իշխանության ատրիբուտներ՝ մի ձեռքում թանաքամանն է, մյուսում՝ գրիչը: Բերանի կողմում երիզված շրջանակներում գրված են ամենօրյա հրահանգները քաղաքացիներին՝ «եկեք վաղը» և աշխատակիցներին՝ «ստեղծել հանձնաժողով»⁷: Հաջորդ ծաղրանկարը՝ «Գրասենյակային ոստայն» վերնագրով, ներկայացնում է հիմնարկի դիրեկտորին սարդոստայնի կենտրոնում, որի ցանցի մեջ խճճվել են խնդրառու քաղաքացիները⁸: Խորհրդային Հայաստանում պաշտոնյաների նման շերտի ձևավորումն արդեն իսկ իրականություն էր 1920-ականներին, ինչի վկայությունը պետք է համարել քաղաքացիներից ստացվող բազմաթիվ բողոքներն իրենց աշխատանքային իրավունքների խախտման վերաբերյալ: Օրինակ՝ քաղաքացի Օլգա Առաքելովան, ով 1926 թ. աշխատել էր երկաթգծում որպես Լենինականի կայարանի գանձապահ, բանգյուղտեսչությանն ուղարկած իր դիմումի մեջ պատմում է, թե ինչպես է ենթարկվել երկաթգծի պաշտոնյաներից մեկի՝ ոմն Դատերովի հետապնդումներին, ինչի արդյունքում գանձապահի իր տեղը զբաղեցրել է նշված պաշտոնյային հովանավորող չեկայի նախագահ Զթյանի քրոջ դուստրը: Մանրամասն նկարագրելով իր հանդեպ իրականացված անօրինական ստուգումները, հետապնդումները,

⁷ «Աշխատանք», 10.04.1927 թ., № 4 (22), էջ 18:

⁸ Նույն տեղում:

խուզարկություններն իր բնակարանում, իբր կայարանի գանձարկ-
ղից յուրացված գումարներ գտնելու համար՝ Առաքելովան իր դիմու-
մն ամփոփել է օգնության խնդրանքով⁹:

Պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանում ազգաբնակչու-
թյան կողմից բյուրոկրատիզմի ընկալումներն առավել հաճախ կապ-
վում էին մի երևույթի հետ, որը սովորաբար նշվում էր «խնամհու-
թյուն» եզրույթով: Դատելով 1930-ականներին վերաբերվող փաս-
տաթղթերից այն բավականին լայն տարածում էր գտել ժամանակի
առօրեական իրողություններում: Բերենք մի քանի օրինակ: Ներկա-
յացվող փաստաթղթում բանգյուղտեսչության բողոքների բյուրոյի
վարիչի զեկուցագիրն է առ այն, որ բողոքների բյուրոն, գնալով ինչ
որ անտիպ թղթակցության մեջ նկարագրված իրադարձությունների
հետքերով, իրականացնում է քննություն և պարզում, որ 1929 թ. ոմն
Տեր-Աստվածատուրյան, որ ազատվել էր Հայպղինձ արտադրական
կազմակերպության վարչությունում զբաղեցրած պաշտոնից, քաղա-
քացի Շահբազովի միջնորդությամբ, առանց աշխատանքային բոր-
սայում գրանցվելու և նրա համաձայնությունը ստանալու, տեղավոր-
վել էր աշխատանքի՝ որպես գործավար Հացմիությունում: Նշված
զեկուցագրի եզրակացության մեջ առկա է բանգյուղտեսչության բո-
ղոքների բյուրոյի վարիչի կարծիքը, որ թղթակցության մեջ նշվածը
համապատասխանում է իրականությանը, և որ քաղաքացի Շահբա-
զովի կողմից իսկապես իրականացվել է «խնամհուծություն և հովանա-
վորչություն»¹⁰: Իսկ ահա Հայաստանի կոմկուսի կենտկոմ ուղարկ-
ված գաղտնի զեկուցագրերից մեկում նշված է, որ Աշտարակի քար-
տուղարներից Շահագիզյանը, պարբերաբար օգտագործել է իր
պաշտոնական կապերը ծանոթներին օգնելու նպատակով: Նրան-
ցից ոմանց օգնել է սպիրտային խմիչքներ իրացնելու գործում,
մյուսներին հովանավորել է, ինչի համար էլ ձերբակալվել է շրջկոմի
մեղադրական եզրակացության հիման վրա¹¹:

Մեկ այլ բողոքում պատմվում է երկաթգծի դպրոցական բաժնի
վարիչ Ինճիկյանի մասին, որը դպրոցբաժնին ենթակա մանկապար-

⁹ ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2214, ք. 6:

¹⁰ Նույն տեղում, գ. 2502, ք. 12:

¹¹ Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 61, ք. 32:

տեզի ղեկավար է նշանակել իր ծանոթ Գինոսյանին: Անտեսելով մանկապարտեզի վարիչի այն պնդումը, որ իրենք նոր ղեկավարի կարիք չունեն, Ինժիկյանը շարունակել է տանը նստած Գինոսյանին աշխատավարձ վճարել¹²:

Կազմակերպչական պաշտոնեական տարաբնույթ գործառույթներում խնամհույսյան ընդհանուր մթնոլորտը բավականին դժպուկ և զավեշտական բնույթով ներկայացված է «Աշխատանք» թերթի երգիծական բաժնում՝ «Արժեքավոր ատեստացիա» վերտառությամբ փոքրիկ անդրադարձում, որը ներկայացնում ենք ստորև.

«-Չգիտեմ, ի՞նչ գործ տանք Աարկոսովնային:

- Ի՞նչ մասնագիտություն ունի:

- Կառավարչի կնոջ քույրն է»¹³:

Զբաղեցրած պաշտոնը շատերի համար դառնում էր գայթակղության առարկա, ինչքան էլ որ կուսակցական գաղափարախոսությամբ քննադատվեր այս երևույթը: Հետաքրքիրն այն է, որ երբեմն հանդիպում էին նաև այս երևույթի տարօրինակ, ծայրահեղ դրսևորումներ, ինչպես, օրինակ, էլեկտրոմեխանիկական տրեստի հաշվապահ Մուշեղ Գրիգորյանի դեպքում, որ ընդամենը հաշվապահի պաշտոնում լինելով՝ նշված հիմնարկում իրականացրել էր ղեկավար գործառույթներ՝ չունենալով դրա համար ոչ մի պաշտոնական լիազորություն: Դատելով նրա դեմ բողոքից՝ հիմնարկում ղեկավար գործառույթներ իրականացնելը սովորական հաշվապահի համար հնարավոր էր եղել բարձրաստիճան պաշտոնյայի կողմից հովանավորվելու պատճառով¹⁴:

Որպես պետական ապարատի անկատար գործունեության հետևանք, որպես հասարակական իրողություն, որի ազդեցությունները չափազանց մեծ էին խորհրդային իրականության վրա: Բյուրոկրատիզմը կուսակցական և պետական գործունեության մեջ շարունակվեց նաև 1930-ականներին: Չնայած 1932 թ. վերացվեց խորհրդային Հայաստանի բանգյուղտեսչության ժողկոմատի բողոքների բյուրոն, վերահսկողությունը պետական հիմնարկների վրա շա-

¹² ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2497, թ. 35:

¹³ «Աշխատանք», 10.04.1927, № 4 (22), էջ 19:

¹⁴ Տես ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 224, թ. 20:

րունակվեց: Արդեն կուսակցական և պետական այլ կառույցներ շարունակում էին ուղարկվել բողոքներ ազգաբնակչությունից՝ տարբեր մասշտաբի պաշտոնյաների չարաշահումների վերաբերյալ: Կարելի է արձանագրել, որ կուսակցական-պետական ստորին հիմնարկներում ձևավորվել էր պաշտոնյային բնորոշ առանձնահատուկ մտածելակերպ, և բյուրոկրատիզմի դրսևորումներն այս մտածելակերպի հետևանք էին: Մի քանի փաստաթուղթ, որ կներկայացնենք սուտորև, մեր կարծիքով, կլրացնեն ասվածը:

Այսպես՝ 1935 թ. կուսակցական վերահսկողության հանձնաժողովին ուղարկված զեկուցագրերից մեկում կապի վարչության պետն իր դժգոհությունն է հայտնում կուսակցության Արթիկի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղարի անօրինական կարգադրության և կապի տեղական բաժնի պետի՝ այդ կարգադրությանը ենթարկվելու կապակցությամբ: Կարգադրության համաձայն՝ աշխատանքից ազատվել էր տեղական կոմուտատորի աշխատակցուհիներից մեկը, միայն այն պատճառով, որ հրաժարվել էր իր հերթապահության ժամին թողնել կոմուտատորը և շրջկոմի երկրորդ քարտուղարի պահանջով հեռախոսի մոտ կանչել կապի բաժնի պետին, որն այդ պահին գտնվելիս է եղել ակումբում: Չեկուցագրի հեղինակը բարեխիղճ աշխատողի նկատմամբ նման վերաբերմունքի համար պահանջում էր կապի բաժնի պետին ի ցույց դնել, իսկ շրջկոմի քարտուղարին՝ ենթարկել կուսակցական պատասխանատվության¹⁵: Եշված փաստաթղթի ուշագրավ կողմը այս պարագայում ոչ այնքան շրջկոմի քարտուղարի, որքան բաժնի պետի պահվածքն է: Դատելով զեկուցագրից՝ շրջկոմի քարտուղարի անօրինական կարգադրությանն ընդդիմանալը նրա համար կնշանակեր ընդդիմանալ համակարգին, ձեռք բերել «գորավոր» թշնամի՝ ի դեմս շրջկոմի քարտուղարի: Անշուշտ, խորհրդային իրականության առանձնահատկությունների պայմաններում դժվար թե որևէ մեկի համար սա հեշտ որոշում լիներ, և կապի բաժնի պետը գերադասել է այսպես ասած «գոհաբերել» իր հասարակ աշխատողին:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 656, թ. 91:

Իսկ ահա մյուս բողոքի «հերոսը» հենց սովորական աշխատողն է, որի շուրջ Քանաքեռչին կազմակերպությունում ստեղծվել է լարված մթնոլորտ: Պատճառը այս հիմնարկության մեքենագրուհիներից մեկն է, որը օգտագործելով հիմնարկի տնօրեն՝ Մելիքսեթյանի հետ ունեցած կապը, իր համար արտոնյալ պայմաններ է ստեղծել և կարողացել է ավելի շատ գումարներ վաստակել, քան մյուսները: Բացի այդ, օգտվելով տնօրենի կողմից իր հանդեպ բացահայտ հովանավորչական վերաբերմունքից, նա կարողանում է կազմակերպության մնացած մեքենագրուհիներից շատերին վարկաբեկել, և նրանց ազատում են աշխատանքից¹⁶:

Համեմատելով այս երկու դիմումները՝ հետաքրքիր դիտարկումներ կարող ենք անել: Առաջինի մեջ սովորական աշխատողը, որ իր աշխատանքին մոտենում է մեծ պատասխանատվությամբ, ըստ էության՝ ենթարկվում է հալածանքի, ազատվում է աշխատանքից միայն այն պատճառով, որ բարեխղճորեն կատարում է իր վրա դրված պարտականությունները: Երկրորդ դեպքում սովորական աշխատողը, վայելելով հիմնարկի ղեկավարի անմիջական հովանավորությունը, իր համար ստեղծում է աշխատանքային արտոնյալ պայմաններ:

Ինչո՞ւ էր խորհրդային հիմնարկներում հնարավոր դառնում նման իրողությունները: Ինչո՞վ էր բացատրվում այն հանգամանքը, որ նույնիսկ կուսակցական աչալուրջ հսկողության պայմաններում շատ հիմնարկությունների ղեկավարներ կարողանում էին զբաղվել բացահայտ հովանավորչությամբ, ցուցաբերել վարքագծի այնպիսի որակներ, որոնք հարիր չէին կուսակցական գաղափարախոսությամբ, կարգապահական պահանջներով ամրագրված կուսակցական բարոյականության ընկալումներին: Պատճառները նախ և առաջ կապվում էին խորհրդային բյուրոկրատիայի առանձնահատկությունների, նրա կլանային բնույթի հետ, որ արտահայտված էր նաև հայաստանյան իրողություններում: Խոսելով խորհրդային բյուրոկրատիայի մասին՝ Ա. Խոցեյն իր «Հասարակության տեսություն» մենագրության մեջ նշում է. «Խորհրդային բյուրոկրատիզմը մի կողմից հանդես էր գալիս որպես ռուսական (նաև ցարական – Գ. Ժ.)

¹⁶ Նույն տեղում, թ. 153:

բյուրոկրատիզմի ժառանգորդ, մյուս կողմից՝ արտացոլում էր ընդհանրապես բյուրոկրատիզմին բնորոշ ժառանգական գծերը, իսկ երրորդ կողմից՝ իր զարգացման ժամանակ անցել էր բյուրոկրատական համակարգի փոխակերպումների բավականին մեծ շարք՝ ցենտրալիզմից մինչև մասնատվածություն, ինչն էլ, բնականաբար, միջնորդավորված էր կլանային մտածողության, աստիճանակարգության ձևավորմամբ»¹⁷։

Այս պնդումից կարելի է եզրակացնել, որ խնամիությունը չէր հանդիսանում ներկազմակերպական երևույթ փոքր հիմնարկների համար, որ սրա ակունքները գնում էին կուսակցական ապարատի առավել վերին օղակներ։ Պետք է ընդունել, որ այս երևույթների առաջացման մեջ քիչ չէր նաև կուսակցական վերադաս մարմինների դերը։ Շատ հիմնարկությունների ղեկավարներ հանդիսանում էին հենց նրանց հովանավորյալները, համենայն դեպս սա կենսունակ վարկած է նրանց պահվածքը բացատրելու համար։ Օրինակ, հենց նույն Սելիքսեթյանը, որի դեմ հաճախ էին բողոքներ ուղարկվում կուսակցական վերադասին, մասնավոր գրույցներից մեկի ժամանակ ասել էր, որ կուսակցության վերին օղակներում ունի հուսալի բարեկամներ, որոնք միշտ էլ իրեն կպաշտպանեն¹⁸։

Ակնհայտ է, որ տեղական պաշտոնյաները շատ հաճախ չէին կաշկանդում իրենց կուսակցության հանդեպ պատասխանատվությամբ, որովհետև վայելում էին այդ նույն կուսակցության հովանավորությունը։ Պրոֆեսոր Վ. Ղազախեցյանը նշում է, որ 1930-ականների սկզբին հանրապետական և մարզային կուսակցական կոմիտեների քարտուղարներն ամեն մեկն իր վարչական տարածքում նմանվում էր թագավորի կամ իշխանի¹⁹։

Թե ինչպես էր հնարավոր պաշտոնյաների արտոնյալ դրություն մի երկրում, որը պետական գաղափարախոսություն էր հռչակել պրոլետարիատի դիկտատուրան, իսկ նրա գաղափարական մեքենան մշտապես քննադատում էր պաշտոնեական չարաչափումները և կոչ էր անում հավատարիմ մնալ պրոլետարիատի պայքարի գործին,

¹⁷ <http://www.materialist.kcn.ru/kniga10/s73.php3>.

¹⁸ ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 656, ք. 152։

¹⁹ Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 477։

մշտապես հետաքրքրել է խորհրդային ժամանակաշրջանի ուսումնասիրողներին: Սիխայիլ Վոսլենսկին, օրինակ, գրում է, որ խորհրդային իշխանությունը ոչ թե պրոլետարիատի, այլ կուսակցական անվանակարգության (номенклатура) իշխանությունն էր, որը խորհրդային բոլոր երկրներում փաստացի հաստատվեց այն ժամանակ, երբ Ստալինը 1930-ականների սկզբին կարողացավ հաղթել ներքաղաքական պայքարում և ասպարեզից հանել Լենինի կողմնակիցներին՝ պրոֆեսիոնալ հեղափոխականներին, որոնք նույնպես ոչ մի կապ չունեին պրոլետարիատի շահերի հետ և դրանց պաշտպանությանը վերաբերվող գաղափարներն ընդամենը որպես միջոց էին օգտագործում հասարակության մեջ իրենց դիրքերն ամրապնդելու համար²⁰: Այս տեսակետը լայն իմաստով արտահայտում է խորհրդային երկրներում ներքաղաքական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը, ըստ որի իրական իշխանությունը պատկանում էր ոչ թե բանվորա-գյուղացիական դասակարգին, այլ կուսակցական վերնախավին: Յետևաբար՝ պրոլետարական գաղափարախոսությունը չէր կարող իրագործվել իրական կյանքում:

Խորհրդային բյուրոկրատիայի առկայությունը, դրա բազմաթիվ դրսևորումները պետական-կուսակցական կառավարման համակարգում ավետք է դիտել ոչ թե շեղումներ ընդհանուր քաղաքական կուրսից, այլ այդ քաղաքական կուրսի, կառավարման վարչահրամայական մեթոդներով ուղեկցվող ընդհանուր գործընթացների բաղկացուցիչ մասնիկը, դրանք բնորոշող տարրը: Այս տեսակետն ամրապնդելու է գալիս նաև այն հանգամանքը, որ, ինչպես նշել ենք, բյուրոկրատիզմը լայն հասարակական հնչեղություն ուներ, սա մի երևույթ էր, որը, ինչպես ցույց տվեցինք 1920–30-ականների հայաստանյան իրողությունների օրինակով, մեծապես ներկայացված էր նշված ժամանակաշրջանի առօրեականության մեջ:

²⁰ Стн Восленский М. С., Номенклатура. Господствующий класс Советского Союза, Москва, 1991.

**MANIFESTATIONS OF BUREAUCRACY IN
SOVIET ARMENIA IN THE 1920-1930s**

SUMMARY

The article reveals one of the phenomena typical for political everyday life of the 1920–1930s Soviet Armenia - bureaucratism with its various manifestations. Bureaucratism is represented as a consequence of the activities of state government system. Relying on the archives material, the author has tried to analyse the conditions that brought bureaucratism into being as well as its influence on public consciousness and everyday life events of the time.

ГАГИК ЖАМАРЯН

**ПРОЯВЛЕНИЯ БЮРОКРАТИЗМА В
СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920–1930-ЫХ ГОДАХ**

РЕЗЮМЕ

В статье представлено одно из характерных явлений политической повседневности Советской - Армении 1920–1930 годов: бюрократизм с разнообразными проявлениями. Бюрократизм представляется как следствие деятельности системы государственного правления, установленного партийной идеологией в Советской Армении. Автор, опираясь на архивные материалы, анализирует условия возникновения бюрократизма, его воздействие на общественное сознание и события повседневности.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՌՍԴԽՅ-ՈՒՄ

1920—1930-ական թթ. ՌՍԴԽՅ-ում և միութենական մյուս հանրապետություններում կյանքի կոչվեց մի քաղաքականություն, որն ուղղված էր էթնիկ խմբերի ազգային պահանջմունքների և շահերի բավարարմանը:

1923 թ. ապրիլին անցկացված ՌԿ(բ)Կ XII համագումարն ազդարարեց անցում արմատավորման (коренизация) քաղաքականությանը: Այն ենթադրում էր պետական շինարարության և կուսակցական աշխատանքներում լայնորեն ներգրավել տեղական էթնիկ խմբերի ներկայացուցիչներին: Արմատավորման քաղաքականությունն ուղեկցվեց այլ էթնիկ խմբերի անդամների ծանրակշիռ ներկայացուցչությամբ պետական կառավարման օղակներում, կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու, հարկային և այլ արտոնություններով: Այս միջոցառումները որոշակիորեն նպաստեցին ազգային առաջընթացին՝ հիմքեր ստեղծելով ՌՍԴԽՅ ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի համար ծեփավորելու ազգային շրջաններ և գյուղխորհուրդներ:

Հյուսիսկովկասյան երկրամասային խորհուրդների 1924—1925 թթ. ընտրություններում ազգային փոքրամասնությունները մեծ ակտիվություն դրսևորեցին, որը, սակայն, անհամաչափ էր տեղական մարմիններում նրանց ներկայացվածության աստիճանի համեմատ՝ կապված թե՛ թվաքանակի, թե՛ ակտիվության հետ: Այդ իրողության վրա ուշադրություն էր հրավիրել Հյուսիսկովկասյան երկրագործկոմի 1925 թ. գարնանային պլենումը: Խնդիրն ավելի վաղ քննարկել էր նաև ազգային փոքրամասնությունների շրջանում աշխատանքներ տանելու համար ստեղծված կուսկազմակերպության և խորհրդային իշխանության ազգային սեկցիաների քարտուղարների խորհրդակցությունը:

Հյուսիսկովկասյան երկրամասային իշխանության մարմինները 1925 թ. նոյեմբերին Դոնի Ռոստովում կայացած հերթական խորհրդակցության ընթացքում, վերլուծելով ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունը խորհրդային շինարարության մեջ, ընդունել են «Երկրամասի ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքների մասին» բանաձև, որում արձանագրված էր, որ բնակչության ազգային և լեզվական առանձնահատկությունների անտեսումը վարկաբեկում է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ կուսակցության և խորհրդային իշխանության ընդունած հեղինակավոր հրահանգ-ցուցումները: Առաջարկվում էր ազգային փոքրամասնությունների համախումբ բնակեցման վայրերում արագ ձևավորել ինքնավարության «փոքր ձևեր»՝ ազգային շրջաններ, օկրուգներ և գյուղխորհուրդներ: Ընդ որում, ազգային գյուղխորհուրդները դառնալու էին ինքնավարության ցածր, ստորին օղակը:

Ազգային գյուղխորհուրդները, որպես կանոն, իրենց մեջ ներառում էին հարևանությամբ գտնվող մի քանի բնակավայրեր, ուր բնակվում էին նույն ազգության ներկայացուցիչներ: Ձևավորվել են նաև երկու և ավելի ազգություններից կազմված խառը գյուղխորհուրդներ:

Մինչև 1920-ական թթ. կեսերն ազգային գյուղխորհուրդները հիմնվել են 1923 թ. նոյեմբերի 21-ի Համամիութենական Կենտգործկոմի Վարչական հանձնաժողովի շրջաբերականի և նույն թվականի հոկտեմբերի 8-ի Համկենտգործկոմի և Ժողկոմխորհի հրահանգների հիման վրա:

Այդուհանդերձ, ազգային գյուղխորհուրդների ձևավորումը կանոնակարգվեց և արագացավ Հյուսիսկովկասյան երկրամասի՝ որպես վարչատարածքային միավոր ձևավորումից հետո (1924 թ.): Ազգային գյուղխորհուրդների առանձնացման ծրագիրը կազմվում էր մարզային (օկրուգային) գործկոմների կողմից:

Համկենտգործկոմի 1926 թ. ապրիլի 29-ին հրապարակված «Ազգային գյուղական խորհուրդների առանձնացման վերաբերյալ» նամակի հիման վրա, որը դարձավ հիմնարար փաստաթուղթ գոր-

ծընթացի ձեռնարկի առումով, սկսվեց ազգային գյուղխորհուրդների ձևավորումը:

Նախատեսվում էր խառը էթնիկ կազմ ունեցող շրջաններում առանձնացնել ազգային առումով միատարր գյուղական բնակավայրեր և ստեղծել ինքնուրույն գյուղխորհուրդներ: Այն դեպքերում, երբ նման գյուղխորհուրդների ձևավորման համար բնակչության թվաքանակը չէր բավարարում պահանջվող նորմերը, դրանք կարող էին հիմնվել երկրամասային, մարզային և օկրուգային գործկոմների որոշումներով:

Հյուսիսկովկասյան երկրամասի Կանոնադրության VII գլխի համաձայն՝ բոլոր գյուղխորհուրդներն ունեին իշխանության միասնական կառուցվածք, այն տարբերությամբ, որ ազգային գյուղխորհուրդները, իրենց ազգային բնույթից ելնելով, ստանում էին ներկայացուցչության բարձր հարաբերակցություն խորհրդում: Սահմանված էր, որ յուրաքանչյուր 50 բնակչի հաշվով ընտրվելու է 1 պատվիրակ, սակայն այն հաշվով, որ պատգամավորների թվաքանակը խորհրդում չգերազանցեր 100 մարդը և թեկնածուների 1/3-ը: Այսպիսի գյուղխորհուրդների առանձնահատկությունը ազգային լեզվի լայն կիրառման հնարավորության ընձեռումն էր գործավարության ու դատավարության մեջ, հատկապես մշակութային-լուսավորական և կրթական ասպարեզներում:

Հյուսիսկովկասյան երկրամասի ազգային փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող աշխատակիցների 1927 թ. խորհրդակցության ընթացքում ընդունվեց «Ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող խորհրդային աշխատանքների վերաբերյալ» բանաձև, որում ուշադրություն էր հրավիրվում ազգային գյուղխորհուրդներում գործավարությունը մայրենի լեզվով իրականացնելու վրա:

Արդեն 1928 թ. Հյուսիսային Կովկասում կասզմակերպվել էր 158 ազգային գյուղխորհուրդ, որից 22-ը՝ հայկական¹: Հայկական

¹ Акопян В. З., Национальные сельсоветы на юге России в 20–30-е гг. XX в., Армяне юга России: история, культура, общее будущее. материалы Всероссийской научной конференции (30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону), отв. ред. акад. Г. Г. Матишов, Ростов н/Д., 2012, с. 14.

ազգային գյուղխորհուրդներ էին ձևավորվել Դոնի և Մայկոպի օկրուգներում՝ յուրաքանչյուրում 7-ական, Չերնոմորիեում՝ 5, Ստավրոպոլում՝ 2, Թերեքում՝ 1: Հետագայում հայկական ազգային գյուղխորհուրդների թվաքանակն ընդլայնվեց:

Առաջիններից մեկը՝ որպես ինքնուրույն ազգային գյուղխորհուրդ, Ստեպանովսկի շրջանի (ավելի ուշ մտցվել է Մոզդոկի, ապա՝ Կուրսկի շրջանի կազմի մեջ) կազմի մեջ 1924-1929 թթ առանձնացվեց հայաբնակ Եդեսիան²: 1930-ական թթ. Եդեսիայի հիմքի վրա կազմակերպվել են երեք կոլտնտեսություններ: Եդեսիայի դպրոցում ուսուցումը մինչև 1943 թ. տարվել է հայերենով, որից հետո այն վերածվել է ռուսական դպրոցի՝ հայերենի դասավանդմամբ:

Մոզդոկ քաղաքից 50 կմ հյուսիս գտնվող խոպան տարածքներում տրամադրված հողերի և վարկերի օգտագործմամբ Հյուսիսային Կովկասում ապաստանած հարյուրավոր արևմտահայերի և կարսեցիներին հաջողվեց 1928 թ. հիմնադրել Արարատ գյուղը: Հյուսիսկովկասյան երկրագործկոմի 1931 թ. փետրվարի 13-ի որոշման հիման վրա Արարատն առանձնացվել է որպես ազգային գյուղխորհուրդ՝ դուրս գալով Նադեժդենսկի գյուղխորհրդի կազմից³: Կարճ ժամանակում գյուղում բացվել է տարրական դպրոց, ուր կրթությունն ընդհուպ 1940-ական թթ. սկիզբը տարվում էր մայրենի լեզվով:

Վերոհիշյալ հայկական գյուղխորհուրդներից բացի կային նաև խառը կազմով գյուղխորհուրդներ: Ընդհանուր առմամբ, Չերնոմորիեի օկրուգի տարբեր գյուղական խորհուրդներում 1926–1927 թթ. հայ անդամների թիվը կազմում էր 181–204 մարդ⁴:

Հետաքրքրական է, որ կոլեկտիվացման քաղաքականության կիրառումն էականորեն նպաստել է ազգային կոլտնտեսությունների ձևավորման գործընթացին: Կուրբանում առաջիններից մեկը հիմնվել է «Трудовая Армения» կոլտնտեսությունը (Կանաևսկի շրջան), ուր այդ նպատակով վերաբնակեցվել են հայ բնակիչներ ամբողջ երկ-

² Симонян Р., Едесия-Эдиссия: Историко-этнографический очерк (К 200-летию создания села), Эдиссия, 1998, с. 75.

³ Акопян В. З., Ставропольский Арарат, hАмайнк (Община), Пятигорск, 1996, с. 33.

⁴ Минасян М., Армяне Причерноморья, Ереван, 1990, с. 131.

րամասից: Ընդ որում, տեղական իշխանություններին հրահանգվել է վերաբնակիչներին հատկացնել նախկինում կազակներին պատկանող հողերը, տները, կառույցները, գույքը և հայ գաղթական-վերաբնակիչների տեղավորման արդյունքում իրականացնել ազգային կոլտնտեսությունների խոշորացում:

1920-ական թթ. Ղրիմի հայությունը ևս հանդես բերեց հասարակական ակտիվություն, որը դրսևորվեց տեղի կուսակցական և անկուսակցական շրջանակների համագումար-քննարկումներում, որոնք վերաբերում էին երկրամասի հայության կյանքի ամենատարբեր ոլորտներին: Այսպես՝ առաջին համաղրիմյան հայկական անկուսակցական համագումարը տեղի ունեցավ Սիմֆերոպոլում 1926 թ. հունվարի 23–26-ը:

Համագումարի «Կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության խնդիրների մասին ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների վերաբերմամբ» բանաձևում առանձնահատուկ ընդգծվում էր Խորհրդային իշխանության քաղաքականությունն ազգային հարցի և ազգային փոքրամասնությունների խնդիրների լուծման ուղղությամբ, որը զարգացման լայն հնարավորություններ էր ընձեռել փոքր ազգերին. «Խորհրդային քաղաքականությունն ազգային փոքրամասնությունների վերաբերմամբ հիմնվում է այն ձգտումի վրա, որ ոչնչացնում է մեծ ազգերի ճնշումն ու տիրակալությունը, ...փոխում է ազգային փոխհարաբերությունները...»: Բանաձևում նշվում էր երկրի տնտեսության համար կարևորություն ունեցող «երեսներս դեպի գյուղ» նոր նշանաբանի և հայ գյուղացիության դերի աստիճանական բարձրացման մասին:

Համագումարը շեշտել է հայ գեղջուկ-կնոջ մասնակցության բացակայությունը հասարակական և պետական կյանքում և ամբողջ ազգաբնակչության ուշադրությունն է հրավիրել վերացնելու այդ բացթողումը՝ հայ կանանց հասարակական կյանքի մեջ լայնորեն ներգրավելու ծանապարհով⁵:

Բանաձևի հաջորդ կետերում ողջունվում էր ազգային գյուղ-

⁵ Резолюции первой Всекрымской армянской беспартийной конференции (23–26 января 1926 г.), Симферополь, 1926, с. 23.

խորհուրդների կազմակերպումը, քանի որ այն ապահովում էր ոչ միայն մայրենի լեզվով ուսուցումը դպրոցներում ազգային փոքրամասնությունների համար, այլև մայրենի լեզվով գործավարություն, հասարակական-քաղաքական, մշակութային աշխատանքների կազմակերպում և նույնիսկ դատավարություն: Լուրջ հնարավորություններ էին բացվում ոչ միայն գյուղական, այլ նաև քաղաքաբնակ ղրիմահայերի համար տարբեր հասարակական և պետական հաստատություններում ներգրավվելու ուղղությամբ:

Այսպիսով, ակնհայտ է, որ 1920-ական թթ. կեսերին Ղրիմի հայաբնակ գյուղերում ևս ազգային գյուղխորհուրդների ձևավորման խնդիրն օրակարգային էր և, ըստ էության, դրանք կազմավորվել են: Դրա լավագույն վկայությունն էր 1926 թ. վերջին շարք մտած 14 նոր հայկական դպրոցները, որոնք գործում էին գյուղերում և ավաններում (Ասմա, Ազատ, Հայկաշեն, Շահումյանովկա, Կիշկենե, Սարպուզ, Կալմուկարա և այլն):

Ղրիմի գյուղական վայրերում հայկական դպրոցական ցանցի ստեղծմանը նպաստել է նաև գյուղխորհուրդների մանրացման քաղաքականությունը, ապա դրանց ձևավորումը ազգային հիմքի վրա (հետաքրքրական է, որ Հյուսիսային Կովկասում կիրառվել է գյուղխորհուրդների խոշորացման և նոր միայն ազգային հիմքով գյուղխորհուրդների ձևավորման քաղաքականություն), որը առավելագույնս ընդհանրված դպրոցական ցանց ունենալու հնարավորություն էր տալիս⁶:

Հյուսիսային Կովկասում տարածքային առումով հարևանությամբ գտնվող զուտ ազգային և էթնիկ կազմով խառը գյուղխորհուրդների հիմքի վրա տարբեր տարիների ձևավորվեցին 10 ազգային շրջաններ, այդ թվում՝ երկուսը հայկական:

1925 թ. մարտի 10-ին Հյուսիսկովկասյան երկրամասի Մայկոպի օկրուգի կազմում հիմնվեց Հայկական ազգային շրջան (1925–1953 թթ.): Շրջանի մեջ մտան Խաղիժենսկի շրջանի Գոյթխ, Գունայ, Ելիսավետպոլսկոյե, Կուբանո-Արմյանսկի, Ռեժեթի և Չերնիգովյան գյուղխորհուրդները և Կուբանի օկրուգի Գորյաչիկյուլչի շրջանի Սա-

⁶ Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Երևան, 2011, էջ 151–152:

դովի գյուղխորհուրդը: Մայկոպի օկրուգի Հայկական ազգային շրջանը կազմակերպվեց գլխավորապես հայերով բնակեցված գյուղական խորհուրդներից, շրջկենտրոնը Ելիսավետապոլսկոյե (Շահումյան) գյուղն էր: Շրջանը զբաղեցնում էր Մայկոպի օկրուգի հարավ-արևմտյան մասը, սահմանակից էր Կուբանի և Չերնոմորիեի օկրուգներին՝ կազմելով 1.286 քառ. կմ⁷:

Հայկական ազգային շրջանի կազմակերպումը հնարավոր դարձավ Մայկոպի օկրուգային գործկոմի Հյուսիսկովկասյան երկրային մարմինների առջև հանդես բերած միջնորդության արդյունքում: Ազգային շրջանի կազմակերպման անհրաժեշտությունը պատճառաբանվում էր շրջկենտրոնից և օկրուգային կենտրոնից հայկական բնակավայրերի հեռու գտնվելով, որը խոչընդոտում էր հիմնականում հայերով բնակեցված գյուղխորհուրդների տնտեսական և մշակութային վերելքին:

Հատուկ հանձնաժողովը, հետազոտելով հայկական բնակավայրերը, Հյուսիսկովկասյան երկրկոմին ներկայացրել էր հայ գյուղի տնտեսական և մշակութային ծանր վիճակը: Հանձնաժողովի եզրակացության մեջ նշված է հայկական գյուղերում դպրոցական-կրթական գործի թույլ վիճակը (անգրագիտությունը կազմում էր 80 %), առողջապահության ցանցի բացակայությունը: Առանձին խնդիր էր դիտարկվում նաև այդ գյուղերի լեռնային գոտիով կտրվածությունը կենտրոնից, որի արդյունքում ավելի քան 5 հազար բնակչի շրջանում բացակայում էր խորհրդային իշխանության իրողությունը և այլն: Հանձնաժողովի եզրակացության մեջ նշվում էր հայկական ազգային շրջանի ձևավորման անհրաժեշտությունը⁸: Այսպես ծնունդ առավ Մայկոպի օկրուգի Հայկական ազգային շրջանը:

Չերնոմորիեի օկրուգի Սոչիի շրջանի հայկական գյուղխորհուրդները չմտան ձևավորված Հայկական ազգային շրջանի կազմի մեջ, քանի որ դրանք Կովկասյան լեռնազանգվածով կտրված էին Հայկական շրջանից: Հայկական ազգային շրջանը գոյատևեց շուրջ երկու տասնամյակ:

⁷ Адобашьян В., Образование в составе Краснодарского края Армянского района, "Вестник архивов Армении", Ереван, 1970, N 3, с. 169.

⁸ Նույն տեղում, էջ 168:

1953 թ. օգոստոսի 22-ին Կրասնոդարի երկրամասում լուծարվեցին 24 շրջաններ (72 առկա շրջաններից), որոնց թվում էր նաև Հայկական ազգային շրջանը: Հայկական ազգային շրջանը, թեև վարչական տեսակետից ինքնուրույն չէր, սակայն որոշակիորեն ներկայացնում էր որպես ազգային վարչատարածքային միավոր:

ՌՍԴԽՅ-ի տարածքում երկրորդ հայկական ազգային շրջանը կազմակերպվեց 1926 թ. Դոնում (Մյասնիկյանի ազգային շրջան 1926–1963 թթ.):

1925 թ. հոկտեմբերին կայացած Դոնի օկրուգային խորհրդակցությունը, որը նվիրված էր խորհրդային շինարարության խնդիրներին, բանաձև ընդունեց «Ազգային փոքրամասնությունների շրջանում աշխատանքների մասին», որում ընդգծվում էր 6 գյուղխորհուրդներից կազմված հայկական ազգային շրջան ձևավորելու նպատակահարմարությունը: Խորհրդակցությունն անհրաժեշտ համարեց հարցը դնել այդ տարածքի բնակչության քննարկմանը, որի արդյունքում ռուս ազգության բնակիչները դժգոհություն չհայտնեցին:

1926 թ. մարտի 8/9-ի Դոնգործկոմի նախագահության որոշման հիմքի վրա Աքսայի շրջանի հայկական բնակավայրերի առանձնացումով հիմք դրվեց Մյասնիկյանի հայկական ազգային շրջանի կազմավորմանը⁹: Շրջանի մեջ մտան Չալթր, Ղրիմ, Սուլթան-Սալա, Նեսվիթա գյուղխորհուրդները:

Շրջանի վարչական կենտրոնը 1926–1928 թթ. Նոր Նախիջևանն էր, 1928–1929 թթ.՝ Ղրիմը, ապա՝ Չալթրը:

Մյասնիկյանի ազգային շրջանի մեջ մտան նաև դեռևս 1922–1927 թթ. հիմնված նոր գյուղական բնակավայրերը՝ Տրուդ (Աշխատանք) կոմունան, որը վերանվանվեց Լենինական, Կրասնի Ղրիմը, Լենինավանը և Վեսյուլի խուտորը, որոնցում նույնպես գլխավորապես հայեր էին բնակվում: Ավելի ուշ շրջանի մեջ մտան նաև Խապյորի (1929), Կալինինի (1933) և Պետրովսկի գյուղխորհուրդները:

Մյասնիկյանի ազգային շրջանի կազմակերպումը մեծապես նպաստել է Դոնի հայության ազգային ինքնության և մշակույթի պահպանմանը:

⁹ В семье единой, Мясниковский райисполком, Ростов-на-Дону, 1989, с. 8.

Մյասնիկյանի շրջանը 1963 թ. միավորվել է Նեկլինովսկի շրջանի հետ, որի արդյունքում կորցրել է հայկական ազգային շրջանի կարգավիճակը¹⁰, թեև 1965 թ. Մյասնիկյանի շրջանը՝ որպես առանձին վարչատարածքային միավոր, կրկին վերականգնվել է:

Այսպիսով, 1920-ական թթ. ՌՍԴԽՅ-ում ձևավորված հայկական ազգային գյուղխորհուրդներն ու շրջանները որոշակիորեն ստանձնեցին հայկական էթնիկ խմբի համախմբման, ազգային լեզվի, մշակույթի և տնտեսական զարգացման դերակատարություն: Ազգային ինքնավարության այս ցածր միավորները միտված էին բավարարելու ազգային պահանջմունքներն ու շահերը՝ 1920-ական թթ. սկզբին ռուսահայ ազգային-համայնքային կառույցների լուծարումից հետո:

Ի վերջո, Հյուսիսային Կովկասում, Դոնում, Դրինում ապաստանած տասնյակ հազարավոր հայ գաղթականներ, օգտվելով խրախուսվող ազգային համախումբ բնակեցման քաղաքականության հնարավորությունից, վերջապես դարձան հայկական միջավայրի լիարժեք մասնիկը, հողակտոր ստացան (այդ թվում՝ կազակական ստանիցաներում), ազատվեցին անվերջանալի թվացող տեղաշարժերից ու դեգերումից: Դրան նպաստեցին նաև ազգային գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների ու շրջանների կազմակերպումը:

Խորհրդային իշխանություններն այս կերպ ձգտում էին բարձրացնել ազգային փոքրամասնությունների մշակութային, տնտեսական և քաղաքական մակարդակը՝ նրանց լայնորեն ներգրավելով խորհրդային շինարարության մեջ և ամրապնդելով հավատարմությունը խորհրդային կարգերին:

¹⁰ Мясниковский район, ред., сост. Гизгизов Т.В., Ростов-на-Дону, 1999, с. 68–69.

**ARMENIAN NATIONAL SELSOVIETS (RURAL
COUNCILS OF WORKING PEOPLE'S DEPUTIES)
AND DISTRICTS IN THE RSFSR**

SUMMARY

A policy of fulfilling national aspirations of the ethnic groups, residing outside of their historic homelands, was actively put into practice in the RSFSR during the years 1920s and 1930s. The said course in Soviet politics pursued a number of tactical interests, one of which was the foundation of a social ground for the support of Soviet regime among the ethnic groups through the encouragement of their representatives to undertake some of the responsibilities of the local Soviet authorities.

A large number of Armenians were living in different corners of the Russian Federation, in the North Caucasus, Don and the Crimea.

The number of national village councils in the Northern Caucasus reached 158 in 1928, of which 22 were Armenian. There were Armenian national rural councils in the districts of Don, Maikop, Chernomorsk (the Black Sea eastern region), Stavropol and Terek. Later, the Armenian rural councils grew in number. Two Armenian national districts had been formed within the bounds of the closely-spaced national and mixed rural councils in the RSFSR (in the North-Caucasus region). An Armenian national territorial-self-administrative unit was created of Armenian villages in the Maikop and Kuban districts in 1925 (1925–1953) and the Miasnikyan one within the district of Don in 1926 (1926–1963).

The formation of Armenian national rural councils and districts in the areas of the compact residences of Armenian population in the RSFSR facilitated the resettlement process of a number of Armenian refugees in that country.

The Soviet authority was eager to create a rapprochement between all nationalities and to engage them in the construction of socialism through the way of strengthening cultural, economic and political consciousness of national minorities.

АРМЯНСКИЕ НАЦИОНАЛЬНЫЕ СЕЛЬСОВЕТЫ И РАЙОНЫ В РСФСР

РЕЗЮМЕ

В 1920–1930-х гг. в РСФСР активно велась политика удовлетворения национальных запросов этнических групп, проживающих за пределами своей исторической родины. Она преследовала тактические интересы - всяческое поощрение меньшинств на участие в местных органах советской власти и, тем самым, привлечение национальных меньшинств на свою сторону для создания социальной опоры власти из представителей этнических групп.

В разных регионах РСФСР, на Северном Кавказе, на Дону и в Крыму, проживало абсолютное большинство армянского населения республики.

В 1928 г. на Северном Кавказе уже было 158 национальных сельсоветов, в том числе 22 армянских. Армянские национальные сельсоветы имелись в Донском, Майкопском, Черноморском, Ставропольском и Терском округах. В дальнейшем количество армянских сельсоветов возросло. В РСФСР (Северо-Кавказский край), в пределах близко расположенных друг к другу национальных и смешанных сельсоветов, образовались два армянских национальных районов. Из армянских селений Майкопского и Кубанского округов в 1925 г. был образован Армянский национальный район (1925–1953 гг.), а в 1926 г. - Мясникянский (Мясниковский, 1926–1963 гг.) на Дону.

Создание армянских национальных сельсоветов и районов на местах компактного проживания армянского населения способствовало оседанию части армянских беженцев на территории РСФСР.

ԽՈՐՀՐԴԱՅԱՅ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՕՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 ԹԹ.)

1941 թ. հունիսի 22-ին սկսված Հայրենական մեծ պատերազմը մեծապես ազդեց խորհրդային հասարակության կյանքի բոլոր բնագավառների վրա: Պատերազմի պայմաններում փոխվեց նաև խորհրդային դպրոցի առջև դրված խնդիրները: Խորհրդահայ դպրոցը հայտնվեց բոլորովին այլ պայմաններում, որին հատուկ էր մանկավարժական կադրերի թվաքանակի խիստ նվազումը, նրանց փոխարինելու եկած նոր ուսուցիչների մասնագիտական ցածր որակը, աշակերտների ոչ լրիվ հաճախումները դպրոց և այլն: Խորհրդային պետությունը չկարողացավ ավարտին հասցնել նախորդ տարիներին սկսած դպրոցաշինության գործը: Դեռ 1940 թ. խորհրդային իշխանությունը որոշում էր կայացրել թերի միջնակարգ դպրոցները միջնակարգ դպրոցների վերածելու վերաբերյալ, սակայն նոր՝ արտակարգ իրադրությանը պայմանավորված, ՀԽՍՀ բոլոր շրջաններում տեղի ունեցավ դպրոցների և դասարանների կոմպլեկտավորում:

Օրինակ՝ Ապարանի շրջանի Մելիք գյուղի յոթամյա դպրոցը միջնակարգի վերածելու նպատակով 1940 թ. բացվել էր 8-րդ դասարան, որը, սակայն, 1941 թ. փակվեց, քանի որ աշակերտները գնացին դաշտ աշխատելու¹: Կոտայքի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1941 թ. հուլիսի 29-ի որոշման համաձայն՝ շրջանում եղած 13 միջնակարգ, 24 ոչ լրիվ և 6 տարրական դպրոցների մի մասը՝ անհրաժեշտաբար փակվեց, իսկ որոշ դպրոցների տիպեր փոխվեց²:

¹ Տես Մադաթյան Բ., Մելիք գյուղ, Երևան, 1991, էջ 56:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), Աբովյանի տարածքային ներկայացուցչություն, ֆ. 6, ց. 1, գ. 269, թ. 2:

Պատերազմի նախօրյակին՝ 1940–1941 թթ. Խորհրդային Հայաստանի գյուղական վայրերում գործում էր 1020 դպրոց, որից՝ 551-ը յոթամյա, 234-ը՝ միջնակարգ³:

Պատերազմը ծանր անդրադարձավ ուսուցչական համակազմի մասնագիտական որակի վրա: Առաջին հերթին ռազմաճակատ մեկնելու հետևանքով, զգալիորեն նվազեց ուսուցիչների թվաքանակը: Պատերազմի առաջին տարիներին ուսուցիչների թիվը կրճատվեց 1300-ով⁴, որոնց փոխարինելու եկան շատ հաճախ յոթամյա կրթությամբ պատահական մարդիկ, որոնք չունեին համապատասխան մասնագիտական որակավորում: Օրինակ, Ապարանի շրջանում 1942 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով շրջանի դպրոցներում աշխատող 146 ուսուցիչներից ընդամենը 12-ն ունեին բարձրագույն կրթություն, 11-ը՝ թերի բարձրագույն⁵:

Ամասիայի շրջանում 1945 թ. հունվարի դրությամբ աշխատող 54 ուսուցիչներից 5-ը ունեին բարձրագույն կրթություն, 7-ը՝ թերի բարձրագույն⁶: Ինչպես երևում է վերոնշյալ փաստերից, թվային հարաբերակցությամբ մեծամասնություն էին կազմում յոթամյա և միջնակարգ կրթությամբ ուսուցիչները, որը և հանդիսացավ աշակերտների ուսման ցածր որակի հիմնական պատճառներից մեկը:

Պատերազմը փոխեց ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների առօրյա կյանքի պայմանները: Նրանք ստիպված էին ապրել, աշխատել և սովորել արտակարգ պայմաններում: Ուսուցիչները հաճախ դասարաններում պարապում էին երկու խմբերի հետ: Դրա հետ միասին՝ նրանք զուգահեռաբար աշխատում էին կոլտնտեսություններում: Լինում էին դեպքեր, երբ սննդի պակասի պատճառով լքում էին դպրոցը: Նրանց կյանքի պայմանները չափազանց ծանր էին: Պետության կողմից նրանք ստանում էին մեկ կտոր օճառ, մթերքներ և ապրանքներ: Պետությունը պարտավոր էր նրանց ապահովել նաև ապրելատեղով, սակայն պատերազմի պայմաններում սա

³ Худавердян К. С., Культурная революция в Советской Армении 1920–1940 гг., Ереван, 1966, с. 193.

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, Երևան, 1970, էջ 172:

⁵ ՀԱԱ, ֆ. 1230, ց. 3, գ. 63, ք. 2:

⁶ Նույն տեղում, ֆ. 31, ց. 1, գ. 396, ք. 2:

ևս բավարար չափով չէր իրականացվում, ուստի որոշ ուսուցիչներ ստիպված էին լինում ապրել հենց դպրոցում: Արխիվային փաստաթղթերից մեկում Ապարանի շրջանի ժողկրթբաժնի վարիչի տեղակալ Հ. Բոյաջյանը ժողկրթբաժնին բողոքում էր, որ շրջանի Ծաղկաշեն գյուղի դպրոցի տնօրեն Թ. Ավչյանը և Վարդենուտի դպրոցի տնօրեն Ա. Եղյանը ապրում են իրենց դպրոցների դասարաններում և դրանով խանգարում ուսումնական գործընթացին⁷: Ուսուցիչների այս ծանր վիճակը բարելավելու նպատակով միայն 1943 թ. օգոստոսին կառավարությունը որոշում ընդունեց նրանց աշխատավարձը բարձրացնելու մասին:

Պատերազմի տարիներին աշակերտների առօրյան նույնպես արտակարգ էր: Դպրոցում դասերն ավարտելուց հետո նրանք իրենց ուսուցիչների գլխավորությամբ գնում էին դաշտ՝ մասնակցելու բերքահավաքի աշխատանքներին: Նրանք կատարում էին ամեն ինչ՝ սկսած ցորենի արտերում հունձ, հասկ հավաքելուց, ավարտած դաշտից խոտը և ցորենը կոլտնտեսություն տանելը և նույնիսկ տրակտոր և կոմբայն էին վարում՝ չնայած իրենց մանուկ հասակին: «Լենինի դրոշով» թերթը, անդրադառնալով դպրոցականների աշխատանքներին, գրում էր. «Բազմաթիվ ուսուցիչներ և դպրոցականներ են մասնակցում բերքահավաքի աշխատանքներին: Նրանք դաշտում կատարում են փոցխ, հասկ են հավաքում, մասնակցում խոտի տեղափոխմանը: Ութերորդ դասարանի աշակերտները հավաքում են հնձված խոտը: Նրանք խոտհնձի սկզբից մինչև օրս չեն բացակայել աշխատանքից»⁸: Հաճախ երեխաները կատարում էին այնպիսի աշխատանքներ, որոնք խաղաղ պայմաններում տղամարդկանց մենաշնորհն էր: Նույն թերթը իր մեկ այլ համարում գրում էր. «Թայջարուխի միջնակարգ դպրոցի ԼԿԵՄ կազմակերպությունը դպրոցի դիրեկցիայի հետ միասին կոլխոզի բերքահավաքին օգնելու նպատակով օգոստոսի 3-ից կազմակերպել է գիշերային հունձ, որին մասնակցեցին 180 աշակերտ»⁹: Թերթն աչքի ընկած երեխաների թվում հիշատակում էր նաև դպրոցական Վարդուշ Խաչատրյանին, ով աչքի

⁷ Նույն տեղում, ֆ. 1230, ց. 3, գ. 52, ք. 43:

⁸ «Լենինի դրոշով», 9 հուլիսի 1941 թ.:

⁹ Նույն տեղում, 6 սեպտեմբերի 1941 թ.:

էր ընկել հացահատիկի գիշերային հնձի աշխատանքներում: Թերթերում տպագրված բազմաթիվ նմանատիպ նյութերը խոսում են այդ տարիներին երեխաների հերոսական աշխատանքի մասին, որոնք պատերազմի պայմաններում դրսևորեցին անասելի կամք և մեծահասակներին ամեն կերպ օգնելու պատրաստակամություն:

Պարոցականները, գյուղատնտեսական աշխատանքների մեջ ներգրավված լինելուց բացի, պարտավոր էին նաև ակտիվ մասնակցել համաժողովրդական միջոցառումներին: Նրանք ընդգրկված էին մետաղների հավաքման, ծանրոցներ պատրաստելու, պաշտպանական անրությունների կառուցման աշխատանքներին, ինչպես նաև 8–16 տարեկան բոլոր երեխաները պարտավոր էին մասնակցել հակաօդային և հակաքիմիական խմբակներին, որտեղ պետք է սովորեին օդային հարձակումների ժամանակ օգտվել անհատական պաշտպանության միջոցներից: Նրանք մասնակցում էին նաև կոմերիտական կազմակերպությունների կողմից կազմակերպվող կիրակնօրյակներին, որոնց ընթացքում վաստակված աշխօրերը որպես օգնություն ուղարկվում էր Կարմիր բանակին:

Պարոցականների խնդիրն էր օգնել նաև ռազմաճակատայինների այն ընտանիքներին, որոնք օգնության կարիք ունեին. մշակել տնամերձ հողամասը, կերակրել անասուններին, նորոգել բնակարանները, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ խնամել աշխատող մայրերի երեխաներին: Այս ջոկատները, որոնք ստացան «Թիմուրականներ» անվանումը, մեծ աշխատանք կատարեցին գյուղերում: Օրինակ՝ Ղափանի շրջանում գործում էր 85 թիմուրական ջոկատ, որտեղ ընդգրկված էր 1350 պիոներ-դպրոցական: Միայն Շիկահող գյուղում կազմակերպվել էր 5 թիմուրական ջոկատ, որոնք իրենց ավագ ջոկատավար Անիտկա Հարությունյանի ղեկավարությամբ կարմիրբանակայինների ընտանիքների համար տեղափոխել են 350 բեռ փայտ, ցանկապատել են 62 ընտանիքի բանջարանոց և փորել 70 ընտանիքի տնամերձ այգի¹⁰:

Պատերազմական տարիների դպրոցական առօրյային առանձնահատուկ էր գրենական պիտույքների, սարքավորումների, դա-

¹⁰ Հարությունյան Կ., Գր. Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.), Երևան, 2001, էջ 135:

սագրքերի խիստ պահանջարկը: Ինչպես նշում էր Սևանի շրջանի Կարմիրաղբյուր գյուղի դպրոցի ուսումնական մասի վարիչ Հակոբ Սաղեյանը, նույնիսկ 15 աշակերտին մեկ գիրք չէր հասնում, իսկ յուրաքանչյուր դասարանում սովորող 30 աշակերտից դպրոց էր հաճախում 5–6-ը¹¹: Դպրոցներում դասերն անցկացվում էին 3–4 հերթով, տարածված էր երկտարեցույթյան երևույթը, երբ աշակերտը մնում էր նույն դասարան կամ դուրս էր մնում դպրոցից: Աշակերտների մեծ մասը հաջորդ դասարան էր փոխադրվում առանց համապատասխան կրթական մակարդակ ստանալու:

Պատերազմի տարիներին դպրոցականների առօրյա կյանքի անբաժան ուղեկիցներն էին՝ սովը, տարբեր տեսակի վարակիչ հիվանդությունները, հագուստի և կոշիկի խիստ բացակայությունը, որոնք խոչընդոտ էին հանդիսանում երեխաների դպրոց հաճախելուն: Ամենասարսափելին սովն էր, որը շատ հաճախ դպրոցում երեխաների շրջանում կռվի պատճառ էր դառնում: Հակոբ Սաղեյանը հիշում է. «Հաճախ դասարանի վառարանի մեջ աշակերտները տներից բերած կարտոֆիլ էին եփում և ուտում: Մի անգամ ուսուցիչներից մեկը եկավ և բողոքեց, որ աշակերտները վառարանում եղած կարտոֆիլի պատճառով դասարանում կռիվ են սարքել և իր դասը խանգարել: Ուսուցիչը հարցնում էր, թե ինչ անի այդ կարտոֆիլները: Ես նրան ասացի, որ նա դրանք չտանի դասարան, այլ ինքը ուտի, որովհետև ուսուցիչը նույնպես սոված էր»¹²: Փաստ է, որ սոված աշակերտներին ավելի շատ հետաքրքրում էր սնունդը, քան դասը: Շատ քչերն էին հետաքրքրվում դասերով: Այդ տարիների մասին Գողթ գյուղի բնակիչ, 1928 թ. ծնված Գ. Թադևոսյանը հիշում է. «Երբ պատերազմը սկսվեց, ես վեցերորդ դասարան էի: Մեզ՝ երեխաներիս համար, ամենասարսափելին դա սովն էր: Ես առավոտից երեկո մտածում էի միայն ուտելու մասին: Հաճախ դպրոցից փախչում էի, գնում կոլտնտեսություն աշխատելու՝ մտածելով, որ այնտեղ գոնե մի բան կտան ուտելու»¹³: Սրա վառ ապացույցն էր այն, որ երբ Ապա-

¹¹ Շահրազյան Վ., Կարմիրաղբյուր, Երևան, 2004, էջ 270:

¹² Նույն տեղում:

¹³ Հեղինակի անձնական արխիվ, էջ 8:

րանի շրջանում 1942 թ. որոշում կայացվեց շրջանի բոլոր դպրոցներում յուրաքանչյուր աշակերտի օրական տալ 70 գրամ հաց, աշակերտների դպրոց հաճախումների թվի աճ նկատվեց¹⁴։

Կյանքի վատ պայմանների արդյունք էր դպրոցահասակ երեխաների շրջանում սննդի գողությունների զգալի աճը։ Հոկտեմբերյանի շրջանի կուս. շրջկոմի քարտուղար Ն. Մախմուդովին 1941 թ. ուղղված զեկուցագրում նույն շրջանի դատախազ Խ. Սմբատյանը գրում էր. «Իմ կողմից 1941 թ. առ դեկտեմբերի 15-ը ընկած ընթացքում հարուցած քրեական գործերի ուսումնասիրությունից պարզվեց, որ պատասխանատվության ենթարկվողներից 24 հոգին դպրոցական հասակ ունեցող անձեր են, որոնք բոլորն էլ մեղադրվում են գողության մեջ։ Օրինակ՝ 2-րդ սովխոզի բնակչուհի 13 տարեկան Վարսիկ Վարդանյանի գործը, որը մեղադրվում է այն բանի համար, որ նա Ջագոտգերնոյի մոտ թափված, էվակուացիայի ենթարկված հացահատիկից 35 կգ գողացել է։ Վարդանյանը դպրոցական է, այս տարի թողել է դպրոցը և էլ չի սովորում։ Կամ Բամբակաշատ գյուղի բնակիչներ Ռսկան Ավդալյանի, Ժիրիկ Երեմյանի, Բաբկեն Գաբրիելյանի, Խաչիկ Մանուկյանի և Եղիշկա Ղամբարյանի գործը։ Նրանք բոլորն էլ դպրոցականներ են, ամենամեծը 17 տարեկան է։ Այս վեց անձնավորությունները մեղադրվում են կոլտնտեսության մեղվանոցից սխտեմատիկաբար մեղր գողանալու մեջ...»¹⁵։ Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ գողությունները կյանքի չափազանց ծանր պայմանների արդյունք էին։ Այստեղ հետաքրքրականն այն էր, որ, վկայակոչելով վերոհիշյալ հանցագործությունները, դատախազ Սմբատյանը մեղադրում էր դպրոցի տնօրեններին և ԼԿԵՄ կազմակերպություններին, որ իբր նրանք թերացել են իրենց աշխատանքների մեջ, ինչն էլ հիմք է հանդիսացել նման հանցագործությունների աճի համար։ Սակայն սա ոչ թե այդ կազմակերպությունների վատ աշխատանքի արդյունք էր, այլ ժամանակի տխուր իրողություն, ապացույց մարդկանց կյանքի դժնդակ պայմանների։ Միայն Հոկտեմբերյանի շրջանում 1941 թ. հունվարի 1-ից մինչև 1942 թ. օգոստոսի

¹⁴ ՀԱԱ, ֆ. 1230, ց. 3, գ. 63, թ. 2։

¹⁵ Նույն տեղում, ֆ. 90, ց. 4, գ. 169, թ. 77։

10-ն ընկած ժամանակաշրջանում ազատագրկման դատապարտված 32 անձանցից 20-ը 12-17 տարեկան անչափահասներ էին¹⁶:

Պատերազմի տարիներին դպրոցական առօրյայի հաջորդ կարևոր խնդիրը վառելիքի բացակայությունն էր, որը երեխաների հագուստ և կոշիկ չունենալու պարագայում էլ ավելի սարսափազդու պատկեր էր ստեղծում: Նման պայմաններում ձմեռը դառնում էր սարսափելի, իսկ ցուրտը՝ անտանելի, որը դժվարացնում էր աշխատանքը դպրոցներում: Ըստ կառավարության որոշման՝ կոլտնտեսությունները պետք է հոգային իրենց տարածքում եղած դպրոցների վառելիքի հարցը, որը շատ հաճախ հանգեցնում էր նրան, որ քանդում էին կոլտնտեսությունների եղած հին շենքերի և շինությունների ծածկերը և օգտագործում որպես վառելիք: Դասարաններում տիրող ցուրտը և երեխաների հագուստ և կոշիկ չունենալու փաստը նպաստում էին տարբեր հիվանդությունների տարածմանը: Գյուղական դպրոցներում առավել տարածված էին քոսը, աչքացավը, կոկորդացավը, քութեշ և ծաղիկ հիվանդությունները, համատարած էր ոջլոտությունը: Կոտայքի շրջանի Ջովք գյուղում միայն 90 աշակերտ դպրոց չէր հաճախում քոս հիվանդության պատճառով: Նույն երևույթը տեղի էր ունենում Սևանի, Հրազդանի, Աշտարակի և Մարտունու գյուղերում¹⁷: Արտաշատի շրջանի Շահունյան, Արևշատ, Ազատավան և մի շարք այլ գյուղերի դպրոցներում տարածված էր քութեշ հիվանդությունը¹⁸:

Ինչպես նշվեց, դպրոցականների առօրյայի հաջորդ անբաժանելի ուղեկիցը հագուստի և կոշիկի խիստ պահանջարկն էր: Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ այն շրջաններում, որտեղ այդ օգնությունը բավարար չափով կազմակերպվում էր, դպրոցներում մաղումները քիչ թիվ էին կազմում: Ամենաքիչ մաղումները եղան Ալավերդու շրջանում, որտեղ շրջանային կազմակերպությունների կողմից կազմակերպված օգնության արդյունքում 603 երեխա ստացավ կոշիկ, 324 երեխա՝ կոստյում¹⁹:

¹⁶ Նույն տեղում, գ. 237, թ. 95:

¹⁷ Նույն տեղում, ֆ. 36, ց. 6, գ. 58, թ. 2:

¹⁸ Նույն տեղում, ֆ. 87, ց. 1, գ. 152, թ. 52:

¹⁹ Նույն տեղում, ֆ. 36, ց. 6, գ. 149, թ. 7:

Պատերազմական առօրյայի առանձնահատուկ դրսևորում էր նաև Շամշադինի շրջանի Նավուր գյուղի բնակչուհի Զիլինգարյան Ելենայի դեպքը, որը թույլ չէր տալիս, որ իր երեխան դպրոց հաճախի այն պարզ պատճառաբանությամբ, որ «Հիտլերը կգա ու դպրոցը կռմբակոծի»²⁰: Առաջին հայացքից անհեթեթ թվացող այս պատճառաբանությունն իրականում ուներ խորը հոգեբանական արմատներ: Պատերազմից ահաբեկված հայ կինը վախենում էր իր երեխայի համար՝ չմտածելով, որ նրան զրկում էր դպրոց հաճախելու կարևոր գործից:

Նույն վիճակն էր նաև Հոկտեմբերյանի, Մարտունու, Ապարանի շրջաններում²¹:

Շրջանի անվանումը	1941թ. 8-15 տարեկան երեխաների թիվը	1942թ. հոկտեմբերի 5	1943թ. հունվարի 1	Դպրոցներից մաղված երեխաները
ք. Կոտայք	8175	6796	5235	3484
Արտաշատ	8565	8165	6064	1901
Միկոյան	6276	5050	3576	1547

Ինչպես երևում է վերոհիշյալ աղյուսակում ներկայացված երեք շրջանների թվական տվյալներից երեխաների դպրոցներից մաղումների մեծ թիվ նկատվում է 1942 թ. հոկտեմբերից մինչև 1943 թ. հունվար ընկած շրջանում, որը համընկնում է ծնունդ ամիսների հետ և հաստատում վերը նշված պատճառները: Ամենամեծ մաղումները նկատվում են Կոտայքի շրջանում և, ի վերջո, եթե փորձենք համեմատել, ապա կտեսնենք, որ եթե մինչև պատերազմը հանրապետության բոլոր դպրոցներից դուրս էր մնացել 8117 երեխա, ապա 1942-1943 թթ. միայն այս երեք շրջաններում մաղումների ընդհանուր թիվը հասնում էր 6932-ի²²:

Պատերազմի բացասական հետևանքներից էր նաև անապատան և թափառող երեխաների թիվը, որոնք սնունդ հայթայթելու նպատակով գյուղերից հասնում էին մայրաքաղաք, թափառում էրևանի փողոցներում և զբաղվում մուրացկանությամբ: Զնայած

²⁰ Նույն տեղում, ֆ. 12, ց. 1, գ. 397, թ. 48:

²¹ Նույն տեղում, ֆ. 36, ց. 6, գ. 58, թ. 2:

²² Նույն տեղում, ֆ. 84, ց. 1, գ. 51, թ. 30:

պետության կողմից նրանց համար նախատեսված էին գիշերօթիկ դպրոցներ, որտեղ, ըստ երևույթին, պետք է գտնվեին այդ երեխաները: Սևանի շրջանի ներքին գործերի բաժնի վարիչ կապիտան Պողոսյանը 1944 թ. հունիսին շրջանի կուսբյուրոյի պլենումում գեկուցում էր, որ շրջանի Յաջրիկ, Դոմաշեն, Ծաղկունք, Շահրիզ գյուղերից 35 երեխաներ թափառում են Երևանի փողոցներում և խանգարում հասարակական կարգը²³:

Սրանով, փաստորեն, վտանգված էր ժողովրդական կրթության բնագավառում նախորդ տարիներին ձեռք բերված կարևոր նվաճումներից մեկը՝ ընդհանուր պարտադիր տարրական ուսուցումը: Ուստի՝ մտահոգված այս խնդրով՝ ՀԿ(Բ)Կ կենտրոնական կոմիտեն և տեղական կազմակերպություններն ամեն ինչ անում էին, որպեսզի դպրոցական տարիքի երեխաները դպրոցներից դուրս չմնային: Խորհրդային պետությունն աշխատում էր մշտապես ուշադրության կենտրոնում պահել դպրոցը, քանզի այն համարվում էր խորհրդային երիտասարդության դաստիարակության կարևոր օջախ, որի պահպանման գործը պատերազմի ժամը պայմաններում պետության առաջնահերթ խնդիրներից մեկն էր: Հարկավոր էր պահպանել ժողովրդական կրթության ամենակարևոր նվաճումներից մեկը՝ ընդհանուր պարտադիր ուսուցումը: «Պրավդա» թերթը գրում էր. «Ոչ մի դժվարություն չպետք է խանգարի ընդհանուր պարտադիր կրթության իրականացմանը»²⁴:

Ժողկրթբաժնի կողմից որոշում կայացվեց կարմիրբանակայինների երեխաների համար կոլտնտեսության հաշվին ճաշ տրամադրել, իսկ ղեկավար կադրերից պահանջվում էր հոգատար վերաբերմունք ցուցաբերել իրենց դպրոցահասակ երեխաների նկատմամբ, ուշադիր լինել և ապահովել նրանց ամենօրյա հաճախումը դպրոց: Դպրոցներում աշակերտներին ոգևորելու համար վերադասի կողմից պարտադրվում էին դպրոցներին կից ստեղծել ինքնագործ խմբակներ՝ երգի, պարի, ասմունքի և այլն՝ չնայած պատերազմական պայմաններում դրանք այդքան էլ արդյունավետ չէին գործում:

²³ Լույն տեղում, ֆ. 87, ց. 1, գ. 152, ք. 47:

²⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, Երևան, 1970, էջ 173:

Պատերազմի տարիներին խորհրդային դպրոցի կարևոր բարեփոխումներից էին՝ ռազմագիտություն առարկայի դասավանդումը, 4–7-րդ դասարանների աշակերտների համար սահմանված պարտադիր քննությունները, 10-րդ դասարանում հասունության վկայականի քննությունները, աշակերտների առաջադիմության և վարքի գնահատման 5 բալանոց համակարգը, ոսկե և արծաթե մեդալները: Նորույթ էր նաև կառավարության 1943 թ. հուլիսի 15-ի որոշման համաձայն Բաներիտ՝ քաղաքներում, գյուղերիտ՝ գյուղերում և ավաններում, դպրոցների հիմնադրումը, որոնց թիվը պատերազմի ավարտին հասավ 28-ի: Նաև կառավարության 1944 թ. որոշման համաձայն 7 տարեկան երեխաների պարտադիր ուսուցումը, որն ուներ երկու նպատակ՝ թեթևացնել մանկապարտեզների և նախադպրոցական հիմնարկների ծանրաբեռնվածությունը և մայրերի ներգրավումը արտադրության մեջ: Յոթ տարեկան երեխաների թիվը հանրապետությունում 1944 թ. հասնում էր 34.929, որոնց ընդգրկումը դպրոցական համակարգում նպաստեց աշակերտության թվի ընդհանուր աճին՝ այն հասավ մինչև 279.000-ի, նախորդ՝ 1943 թ. 226.600-ի համեմատ:

Այսպիսով, պատերազմը չափազանց ծանր փորձություն էր ուսուցիչների, աշակերտների համար, որոնք ստիպված էին հարմարվել կյանքի նոր պայմաններին: Մարդիկ սովի, աղքատության մեջ, առանց հագուստի, կիսասոված, տարբեր վարակիչ հիվանդություններով վարակված կարողացան ցուցաբերել ուժեղ կամք և պատրաստակամություն և պատերազմի պայմաններում իրենց դրսևորել լավագույնս: Խորհրդային պետությունը նույնպես ամեն ինչ արեց դպրոցը պահպանելու և դպրոցաշինության գործն առաջ տանելու ուղղությամբ: Պատերազմական տարիներին հաջողվեց շահագործման հանձնել 12 դպրոցական շենք: Դրանցից մեկը՝ երկար ձգձգումներից հետո շահագործման հանձնվեց Բերիայի շրջանում²⁵: Սա ևս խոսում է խորհրդային պետության և խորհրդահայ դպրոցի կենսունակության մասին:

²⁵ Սուբխասյան Գ., Երրորդ գյուղից մինչև Երևանի Սիլիկյան թաղամաս, Երևան, 2012, էջ 51:

NARINE HOVSEPYAN

**SOVIET ARMENIAN VILLAGE SCHOOL DAILY
ROUTINE DURING THE GREAT PATRIOTIC
WAR (1941–1945)**

SUMMARY

On June 22 1941 started the Great Patriotic War which greatly affected the Soviet public life in all areas. The Soviet school appeared in new routine conditions, the number of pedagogical staff reduced, being replaced by new low quality professional teaching staff, low school attendance lack of textbooks the demand for fuel, the spread of infectious diseases among the pupils the lack of clothing and shoes, famine, etc. in parallel with increased involvement of children in agricultural works and popular events. Because of the war the most important achievements of compulsory education were threatened. In spite of the difficulties caused by teachers were able to perform their tasks with dignity, (being deprived of basic living conditions). The Soviet Armenian school was able to implement the mandatory training.

НАРИНЕ ОВСЕПЯН

**БУДНИ ШКОЛЫ АРМЯНСКОГО СЕЛА В ГОДЫ
ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941–1945 ГГ.)**

РЕЗЮМЕ

Великая Отечественная война во-многом повлияла на все области жизни советского общества. В совершенно новых будничных условиях оказалась советская школа, характерным явлением стало сокращение численности педагогических кадров, низкий профессиональный уровень пришедших им на смену новых учительских кадров, неполные посещения

уроков, распространенность инфекционных заболеваний среди школьников, факт нехватки одежды и обуви, голод и т.д. Помимо этого, возросла привлеченность школьников в сельскохозяйственных работах и во всенародных мероприятиях. Под угрозой было поставлено одно из важнейших завоеваний народного образования — всеобщее обязательное образование.

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМИТЕТА ОСОБОГО УПРАВЛЕНИЯ НКАО

Указом Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 г.¹ вся власть в НКАО с 20 января 1989 г. была передана Комитету особого управления Нагорно-Карабахской автономной области (КОУ НКАО). Такой институт власти не был предусмотрен Конституцией СССР и советским законодательством. Он представлял собой гибрид партийной и советской власти.

Данный Указ приостанавливал полномочия Совета народных депутатов НКАО XX-го созыва, принявшего все предыдущие правовые акты, связанные со статусом НКАО, до проведения выборов нового состава Совета.

КОУ подчинялся «...непосредственно высшим органам государственной власти и управления СССР»² и обладал «...в полном объёме полномочиями Совета народных депутатов автономной области и его исполнительного комитета: председатель Комитета – правами и обязанностями председателя исполнительного комитета областного Совета народных депутатов»³.

На период действия Указа все предприятия, учреждения и организации НКАО союзного и республиканского подчинения подчинялись КОУ по кругу вопросов, определяемому Совмином СССР с учётом мнения Совмина АзССР.

КОУ мог приостанавливать полномочия местных Советов народных депутатов всех уровней и их исполнительных органов, назначать и организовывать выборы в местные Советы, получил право приостанавливать противоречащую Конституции и законодательству СССР дея-

¹ Указ Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 г. «О введении особой формы управления в Нагорно-Карабахской области Азербайджанской ССР» // Известия. 1989. 15 янв.

² Там же. Пункт 2.

³ Указ Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 г. «О введении особой формы управления в Нагорно-Карабахской области Азербайджанской ССР» // Известия. 1989. 15 янв.

тельность общественных организаций и самодеятельных объединений, а в случае необходимости распускать их: любая общественная организация НКАО могла быть фактически запрещена⁴.

Пункт 4 Указа предоставлял КОУ право при необходимости входить с предложениями по вопросам государственного, хозяйственного и социально-культурного строительства непосредственно в Президиум Верховного Совета, Совет Министров, министерства, госкомитеты и ведомства Союза ССР⁵.

Отдельным пунктом⁶ Указа временно приостанавливались некоторые пункты ряда статей Закона СССР «О государственном предприятии (объединении)», в том числе, об отдельных положениях, дававших предприятиям больше самостоятельности в вопросах выбора партнёров и смежников⁷.

Следовательно, в НКАО была введена «мягкая диктатура», контролирующая всю экономическую, социальную и общественно-политическую жизнь автономной области. Полномочия областной законодательной власти были приостановлены, аппарат исполнительной власти передавался в подчинение КОУ в качестве его рабочего органа.

Возглавил КОУ НКАО Аркадий Иванович Вольский⁸, с 1985 г. занимавший должность заведующего отделом машиностроения ЦК КПСС. Летом 1988 г. он был направлен в автономную область в качестве специального представителя ЦК КПСС и Верховного Совета СССР для информирования Центра и проведения в жизнь его указаний на месте.

В состав КОУ входили прикомандированные из Москвы руководители:

- Сергей Купреев, генерал-майор МВД – отвечал за координацию работы правоохранительных органов и работу с местными райкомами партии.

⁴ Там же. Пункт 4.

⁵ Там же.

⁶ Там же. Пункт 5.

⁷ Закон СССР от 30 июня 1987 г. «О государственном предприятии (объединении)». № 7284-ХІ // Ведомости Верховного Совета СССР. 1987. № 26. Ст. 385.

⁸ Вольский Аркадий Иванович // Биографический энциклопедический словарь / Составитель Н. М. Ланда. М.: Большая Российская Энциклопедия: Оникс 21 век, 2001. С. 138–139.

- Виктор Мишин, комсомольский работник – курировал вопросы организационно-кадровой партийной работы, профсоюза и комсомола, других общественных организаций и вопросы социальной сферы, включая здравоохранение.

- Виктор Плисов – отвечал за социально-экономическое планирование автономной области, её материально-техническое обеспечение, отработку схем управления, хозяйственного механизма.

- Валерий Сидоров – отвечал за вопросы идеологической сферы, культуру и образование.

В январе 1989 г. в КОУ вошли также представители НКАО:

- Семён Бабаян – председатель областного исполнительного комитета – отвечал за работу местных советских органов, торговлю, связь, транспорт и за развитие связей НКАО с Армянской ССР.

- Владимир Товмасын – председатель областного Комитета народного контроля.

- Вагиф Джафаров – Первый секретарь Шушинского райкома НКАО – представлял азербайджанское меньшинство автономной области.

Впоследствии в состав КОУ были введены ещё несколько местных партийно-хозяйственных руководителей.

Заслугой в создании КОУ стало то, что:

- фактически НКАО частично выводилась из-под прямого подчинения АзССР;

- он дал право областным предприятиям и объединениям самим выбирать себе смежников и заключать договоры.

В целом, для НКАО это могло означать экономическую переориентацию с Азербайджана на Армению, что, наряду с экономической выгодой отвечало целям карабахского движения за воссоединение НКАО с Армянской ССР.

Вначале КОУ стабилизировал обстановку в регионе, но ненадолго. У него не было новых идей и достаточных полномочий для решения карабахской проблемы. Главная проблема заключалась в том, что руководители КОУ прибывшие из Москвы в НКАО, не зная исторических причин конфликта, слабо ориентировались в его специфике.

Это неоднократно подтверждалось в интервью самого председателя КОУ и некоторых членов комитета:

- А. И. Вольский: «Реакционные силы в регионе пытаются организовать политический бойкот перестройке. Но уверен: перестройка придёт и сюда – гласностью, демократией, добром и справедливостью»⁹.

- Член КОУ В. Сидоров: «Политика – это всегда вопрос о власти: кому она принадлежит, за кем последнее слово в решении всех ключевых вопросов. Если мы обеспечим в НКАО, как и в других автономиях, реальное народовластие, демократию и самоуправляемость – мы решим карабахский вопрос именно политически»¹⁰.

- В день опубликования Указа¹¹, в интервью газете «Правда» А. И. Вольский отметил: «Подлинная трагедия как армянского, так и азербайджанского народов в том, что в чистое дело борьбы за социальную справедливость грязными ручейками стали вливаться националистические начала. Вместо того, чтобы строго, как того требует перестройка, как зовёт партия, спросить с бездарных и чиновных работников, чтобы выявить и призвать к ответу разгильдяев в своей среде, – вместо этого, единственно верного пути начали искать внешнего врага, взваливать на него все обиды и просчёты, в нём видеть корень всех бед. Недопустимо даже в маленьком регионе страны устраивать политический бойкот перестройке. Ответственность за сложившееся положение дел несут, прежде всего, руководители области»¹².

В то время автономная область подвергалась железнодорожной и автотранспортной блокаде извне, на многих внутренних дорогах развернулась «каменная война» (из-за попустительства правоохранительных органов), стали повседневными нападения на граждан, фермы, угоны скота. Местная советская власть практически не работала¹³.

КОУ не смог повлиять на активную деятельность руководства Азербайджана по развитию населённых азербайджанцами сёл и деревень НКАО, а также изменению демографической ситуации в автоном-

⁹ Пральников А. НКАО: будни особого управления // Московские новости. 1989. 5 нояб. С. 15.

¹⁰ Чаплыгин Н. На грани большой трагедии // Аргументы и факты. 1989. 30 сент.-6 окт. С. 2.

¹¹ Указ Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 г. «О введении особой формы управления в Нагорно-Карабахской области Азербайджанской ССР» // Известия. 1989. 15 янв. С. 1.

¹² Мир земли Карабаха: От конфронтации - к борьбе за перестройку // Правда. 1989. 15 янв. С. 6.

¹³ Бабанов И., Воеводский К. Карабахский кризис. СПб.: Издание Комитета гуманитарной помощи Карабаху, 1992. С. 24, 35; Шакарян С. Политика постсоветской России на Кавказе и её перспективы. Ереван, 2001. С. 29.

ной области. Это спровоцировало весной 1989 г. продолжительную забастовку промышленных предприятий, транспорта, учреждений и учебных заведений автономной области, которая длилась около четырёх месяцев.

Отвечая на претензии жителей НКАО, Председатель КОУ А. И. Вольский на встрече 6 мая с местными журналистами и собкором ТАСС ответил, что из 96 млн руб. капитальных вложений, предусмотренных для области в 1989 г., лишь 4 млн приходилось на азербайджанские населённые пункты¹⁴.

Из этого следовало, что названные главой КОУ данные о капитальных вложениях непосредственно в азербайджанонаселённые пункты НКАО были занижены почти вдвое. То есть, в текущем году предусматривалось ввести в действие основных фондов на сумму 51,1 млн руб., из которых 10,4 млн приходилось на долю Шушинского района. Планом социально-экономического развития азербайджанские населённые пункты не были обделены¹⁵.

Следовательно:

- Во-первых, из выделенных Центром в 1989 г. на развитие НКАО средств, более 20% основных фондов приходилось на долю Шушинского района, население которого было на 90% азербайджанским и составляло около 10% населения области¹⁶. Население всей НКАО составляло на тот момент 189085 чел., из них: армян – 145450 (77%), азербайджанцев – 40668 (21,5%)¹⁷.

- Во-вторых, наряду с реализацией в НКАО плановых объектов, власти АзССР самостоятельно, через бюджетные республиканские организации развернули массовое строительство в азербайджанских населённых пунктах автономной области, заселяя в них переселенцев с целью изменения демографического баланса.

¹⁴ Встреча Председателя Комитета Особого управления А. И. Вольского с местными журналистами и собкором ТАСС // Советский Карабах (г. Степанакерт). 1989. 7 мая.

¹⁵ Маилян Р. Семь раз отмерь // Советский Карабах (г. Степанакерт). 1989. 20 мая.

¹⁶ Распределение населения Нагорно-Карабахской автономной области по наиболее многочисленным национальностям и языку // Национальный состав населения СССР: По данным Всесоюзной переписи населения 1989 г. / Госкомстат СССР, М.: Финансы и статистика, 1991. С. 120-121.

¹⁷ Там же.

- В-третьих, КОУ, не показывая эти очевидные процессы, выдавал за действительность другие цифры и факты, которые публиковались в сообщениях ТАСС, центральных и азербайджанских СМИ.

Центральные советские и азербайджанские СМИ, освещая события, не раскрывали истинных действий руководства республики, которое перераспределяло выделенные НКАО средства в пользу азербайджанского меньшинства автономной области и прилегающих к ней азербайджанских районов. Особая роль в этом принадлежала ТАСС, который отмечал, что «На территории автономной области заработал карабахский групповой водовод. Планируемое наращивание в тринадцатой пятилетке объёмов жилищного строительства в 1,4 раза, должно привести к тому, что в 2000 г. каждая семья будет иметь здесь отдельную квартиру или индивидуальный жилой дом. Действующий аэропорт в Степанакерте оснащён современным радионавигационным оборудованием»¹⁸.

Фактически, касаясь решения жилищной проблемы, выступивший по областному телевидению председатель Степанакертского городского Совета М. Мирзоян отметил, что только в Степанакерте на 1 января в очереди на жильё стоят свыше 4500 чел., остро нуждаются в нём более 10000 беженцев¹⁹.

В сообщениях ТАСС утверждалось, что НКАО оказывается большая помощь из всех республик СССР. Это связывалось с переживаемым автономной областью кризисом в связи с забастовкой, которая серьёзно осложняла политическое рассмотрение карабахского вопроса в Верховном Совете СССР, не позволяла добиться решительных сдвигов в социально-экономическом развитии НКАО и отрицательно сказывалась на состоянии межнациональных отношений²⁰. В материале признавалось, что область фактически находится в блокаде, её транспортные коммуникации неоднократно перерезаются²¹.

В ходе встречи народных депутатов СССР от НКАО и руководителей области с руководством СССР не была достигнута договорённость о точных сроках восстановления областных структур. В связи с этим, ли-

¹⁸ Егоров В. Нагорному Карабаху – всем миром // Труд. 1989. 13 мая. С. 2.

¹⁹ Пашаян Л. В кривом зеркале // Советский Карабах (г. Степанакерт). 1989. 6 июня.

²⁰ ТАСС. К событиям в Нагорном Карабахе // Советский Карабах (г. Степанакерт). 1989. 16 авг.

²¹ Там же.

деры карабахского движения провели 16 августа 1989 г. Съезд полномочных представителей Нагорного Карабаха²². Был избран Национальный Совет – аналог Карабахского Национального Совета 1918–1920 гг.²³ – для стабилизации обстановки в регионе до восстановления функций Облсовета и Обкома партии. Ему были переданы от имени народа верховенство в управлении областью во всех сферах в период между съездами²⁴. Он характеризовался как единый народный орган коммунистов и беспартийных²⁵, которые проводят свою линию в интересах народа через местные Советы народных депутатов, парткомы, профсоюзы, комсомол, советы трудовых коллективов и общественные организации. Национальный Совет объявлялся независимым в своей деятельности, подконтрольным только съезду полномочных представителей, а его решения – обязательными для исполнения на всей территории НКАО²⁶.

В Москве на сентябрьском Пленуме ЦК КПСС 1989 г., посвящённом межнациональным отношениям, председатель КОУ заявил: «Никогда ранее не звучали так открыто сепаратистские призывы и центробежные идеи; цели у этих национал-патриотов однозначны: борьба за власть, ставка на неограниченное местничество. Развитие основополагающего принципа: права наций на самоопределение нельзя сводить только к республиканскому суверенитету или к лозунгу «вплоть до отделения»²⁷.

Такого рода выступления и растущее понимание населением НКАО того, что партийные и советские органы автономной области не будут восстановлены в ближайшее время, стали причинами его отчуждения от КОУ.

Также росло отчуждение между КОУ и Комендатурой района особого положения, которая следовала указаниям командования из Москвы – выполнять поступающие из Баку распоряжения и просьбы.

²² Манасян А. Карабахский конфликт: Ключевые понятия и хроника. Ер.: НОФ «Нораваню», 2005. С. 90.

²³ Там же. С. 63.

²⁴ Съезд полномочных представителей Нагорного Карабаха // Советский Карабах (г. Степанакерт). 1989. 25 авг.

²⁵ Там же.

²⁶ Там же.

²⁷ Материалы Пленума Центрального Комитета КПСС, 19–20 сентября 1989 г. М.: Политиздат, 1989. С. 152–153.

Роль КОУ в карабахских событиях неоднозначна. Она трактовалась и сегодня трактуется по-разному с различных сторон: российской, азербайджанской и армянской, в том числе, в НКР. Каждая из них отмечала и отмечает, что КОУ в целом не выполнил своего предназначения:

- В июле 1989 г. учёные-академики Ленинградского научного центра АН СССР А. Д. Александров, Д. С. Лихачёв и А. Л. Тахтаджян в своём письме отмечали: «Совершенно очевидно, что надежды, которые связывались с Комитетом особого управления, не оправдались. Положение в автономной области стало ещё хуже. Следует немедленно восстановить общую для всех регионов СССР систему власти, полностью восстановить демократию...»²⁸

- Особое управление могло существовать только как мягкий вариант военного управления, а последнее, подчиняясь своей собственной логике, должно было в конечном итоге, перерасти в чисто военное правление²⁹.

- ...для стабилизации ситуации в НКАО в области 12 января 1989 г. была введена новая форма правления – Комитет особого управления во главе с ... Аркадием Вольским. Однако загнать джина обратно в бутылку было уже очень трудно. Разбуженное гласностью, в обеих республиках быстро набирало силу народное движение, пользовавшееся огромной популярностью³⁰.

- В своё время был создан КОУ НКАО. Из-за своего неопределённого политического статуса он не прижился. ... было желание стабилизировать обстановку, но непоследовательность в решении конфликта, постоянное желание КОУ не обидеть ни ту, ни другую сторону, даже в ущерб справедливости, привели к очередному конфликту³¹.

²⁸ Письмо академиков А. Д. Александрова, Д. С. Лихачёва и А. Л. Тахтаджяна в Президиум Верховного Совета СССР (Копия: В Комиссию Верховного Совета СССР по Нагорному Карабаху) от 24 июля 1989 г. г. Ленинград // НАА Ф. 1159. Оп. 1. Д. 56. Л. 1–2.

²⁹ Гаврилов В., Шепова Н. Нетрадиционные войны на постсоветском пространстве. Южный Кавказ / Глава 5.3. Конфликт в Нагорном Карабахе. М. Центр стратегических и политических исследований, 2009. С. 354.

³⁰ Юнусов А. Горбачёвская перестройка и Карабах / Карабах: прошлое и настоящее. Баку, 2005. С. 34.

³¹ Золян С. Т. Нагорный Карабах: проблема и конфликт / Глава 4.1. «Особое управление» – пролог к диктатуре. Ереван: Лингва, 2001. С. 74.

- ...так как если в одних вопросах, особенно гуманитарных, КОУ сыграл большую и положительную роль, то для решения других у него не было ни полномочий, ни возможностей³².

Таким образом, деятельность Комитета особого управления НКАО в период с января по ноябрь 1989 г. трактовалась и трактуется неоднозначно. КОУ НКАО в целом не выполнил своего предназначения, т.к. у него на это не было ни полномочий, ни возможностей.

VLADIMIR PONOMARYOV

ACTIVITIES OF THE COMMITTEE OF SPECIAL ADMINISTRATION FOR NKAO

SUMMARY

The article deals with the activities of the Committee of Special administration for NKAO within the period of January – November, 1989, and its influence from historical point of view.

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՆՈՄԱՐՅՈՎ

ԼՂԻՄ-Ի ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությանը (հունվար-նոյեմբեր, 1989 թ.): Հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ կոմիտեն հիմնականում չկատարեց իր առջև դրված խնդիրը:

³² Мелик-Шахназаров А. А. Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта / Глава 9. Комитет Особого управления. М.: Волшебный фонарь, 2009. С. 389.

ՀՀ-ԻԻՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՇՈՒՐՋ (1992-1994 ԹԹ.)

Հայաստանի նորանկախ Հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն ունեւ Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների հաստատումը: Դրա նախօրյակին ՀՀ-ում էր գտնվում ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավոր Ա. Բաղումյանը: 1992 թ. հունվարի 31-ին ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունենում ՀՀ ԱԳՆ-ի տեղակալ Ա. Նավասարդյանի և Ա. Բաղումյանի հանդիպումը: Ձրույցի ընթացքում քննարկվում են հայ-իրանական հարաբերություններին վերաբերող հարցեր¹: ԻԻՀ-ն շահագրգռված էր ՀՀ-ի հետ հնարավորինս արագացնել միջպետական հարաբերությունների հաստատումը, որը պետք է հակակշիռ դառնար զարգացող թուրք-ադրբեջանական կապերին:

Բաղումյանը նշում է, որ ՀՀ-ն կարևոր նշանակություն է ձեռք բերում ԻԻՀ-ի համար, որը պետք է ընտրություն կատարի նրա և Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) միջև: Նրա խոսքով՝ ԻԻՀ-ն նախապատվությունը տալու է ՀՀ-ին, բայց անհրաժեշտ է, որ հայկական կողմը ցուցաբերի աշխուժություն: ԻԻՀ-ի բուն նպատակը հարաբերությունների հաստատման աշխատանքների արագացումն էր, քանի որ ի սկզբանե ՀՀ-ում Թուրքիայի ներկայությունը քացառվում էր, և ԻԻՀ-ն մրցակցելու խնդիր չուներ: Մյուս կողմից, իրոք, ՀՀ-ն ակտիվ նախաձեռնություն չէր ցուցաբերում ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների հաստատման հարցում: ԻԻՀ-ն պատրաստ էր հաստատել դիվանագիտական հարաբերություններ ՀՀ-ի հետ, կնքել համաձայնագրեր: Այդ ամենը հնարավոր էր իրագործել ՀՀ ԱԳ նախարարի ԻԻՀ այցի ընթացքում: Ա. Բաղումյանի խոսքերը հիմնված էին ԻԻՀ-ի ԱԳՆ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 10-11:

վրա²: Փաստորեն, նա ներկայացնում էր պաշտոնական թեհրանի տեսակետը:

Նորանկախ ՀՀ-ի արտաքին քաղաքականության մեջ ԻԻՀ-ն ուներ առանձնահատուկ տեղ: 1992 թ. փետրվարի 8-10-ը՝ Իսլամական հեղափոխության 13-րդ տարեդարձի օրերին, ՀՀ ԱԳ նախարար Ր. Հովհաննիսյանն առաջինը պաշտոնական այցով ժամանեց ԻԻՀ: ՀՀ պատվիրակության առաջին հանդիպումը տեղի է ունենում ԻԻՀ ԱԳՆ-ում³: ՀՀ կողմից բանակցություններին մասնակցում էին՝ ԱԳ նախարար Ր. Հովհաննիսյանը, փոխվարչապետի օգնական Ս. Շիշմանյանը, ԱԳՆ մամուլի քարտուղար Ն. Բադալյանը և ԱԳՆ Իրանի բաժնի վարիչ Գ. Առաքելյանը, իսկ իրանական կողմից՝ ԱԳ նախարար Ա. Վելայաթին, ԱԳՆ գլխավոր քարտուղար Ս. Բանքը, արարողակարգի վարչության պետ Սաֆիհը, «Զանբազան» հիմնադրամի նախագահի տեղակալ Ջարեհը, ԱԳՆ ընդհանուր հարաբերությունների վարչության պետ Ռահնեման, ԱԳՆ Արևելյան Եվրոպայի բաժնի վարիչ Ղասեմին և նրա տեղակալ Արեֆին, «Զանբազան» հիմնադրամի արդյունաբերության վարչության պետի տեղակալ Շաբանյանը և ԱԳՆ-ի փորձագետներ: Հայկական կողմը ցանկություն է հայտնում, որ տարածաշրջանի երկրներում առաջին հայկական դեսպանությունը բացվի Թեհրանում: Վելայաթիի խոսքով՝ Թեհրանում հայկական դեսպանության բացումը միանգամայն բնական էր և տրամաբանական⁴: Փաստորեն, իրանական կողմն ի սկզբանե սահմանափակումներ չէր դնում:

Նա առաջարկում է ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև ստեղծել միջխորհրդարանական կապեր: ՀՀ պատվիրակությունը հանդիպում է նաև ԻԻՀ նախագահի Հ. Ռաֆսանջանիին: Ր. Հովհաննիսյանը նրան հանձնում է ՀՀ նախագահի ուղերձը⁵: Ռաֆսանջանին նշում է, որ ԻԻՀ-ը և ՀՀ-ը որպես հարևան պետություններ, բնականաբար, պետք է լավ հարաբերություններ հաստատեն: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ

² Տե՛ս նույն տեղում, թ. 11:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 22:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 23:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 27:

ԻԻՅ-ն պատրաստ էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՅՅ-ի հետ:

Փետրվարի 9-ին Թեհրանում ստորագրվում է հռչակագիր՝ ՅՅ-ի և ԻԻՅ-ի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Կողմերը համաձայնության եկան, որ մեկ ամսվա ընթացքում երևանում և Թեհրանում բացվելու են դեսպանություններ⁶: Նույն օրը ստորագրվում է ՅՅ-ի և ԻԻՅ-ի միջև հարաբերությունների սկզբունքների ու նպատակների մասին հռչակագիր, որով կողմերն իրենց գործունեության ելակետ էին ընդունում փոխադարձ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքը և միմյանց գործերին չմիջամտելը⁷: Այսպիսով, հիմք է դրվում միջպետական դիվանագիտական հարաբերություններին:

1992 թ. փետրվարի 27-28-ը առաջին պաշտոնական այցով երևանում էր գտնվում ԻԻՅ ԱԳ նախարար Ա. Վելայաթիի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունենում ՅՅ ղեկավարության հետ⁸: Քանի որ Վելայաթիի խաղաղարար առաքելության առաջին փուլի համար նախատեսված ծրագիրը՝ մեկնելու Լեռնային Ղարաբաղ, չիրագործվեց, նա փորձեց շեշտը դնել ԻԻՅ-ՅՅ հարաբերությունների զարգացման վրա և դրանով կարևորել իր այցը: Վելայաթին անսպասելիորեն հայտարարեց ԻԻՅ-ի դեսպանատան բացման մասին: Նրա տեղակալ Մ. Վայեզին սեփական նախաձեռնությամբ երկուժամանոց բանակցություններ ունեցավ ԱԳ փոխնախարար Ա. Նավասարդյանի հետ⁹:

Մարտի 28-ին Վելայաթիի գլխավորած պատվիրակությունը կրկին երևանում էր: ՅՅ ԳԽ-ում Վելայաթին հանդիպում է ՅՅ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ¹⁰: Վելայաթին հայտնում է, որ ԻԻՅ-ն նախատեսում է դիվանագիտական ներկայացուցչություն բացել

⁶ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 196, թ. 10:

⁷ ՏԵՍ Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 17, Երևան, 1998, էջ 7:

⁸ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 55:

⁹ ՏԵՍ նույն տեղում, թ. 58:

¹⁰ ՏԵՍ նույն տեղում, թ. 59:

Երևանում: Եւ Լ. Տեր-Պետրոսյանին է հանձնում ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիի՝ Թեհրան այցելելու հրավերը¹¹:

Ղիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու առաջին քայլը կատարեց ԻԻՀ-ն: Երևանում ԻԻՀ-ի դեսպանության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին «Հրազդան» հյուրանոցային համալիրում, որին մասնակցեց ՀՀ ղեկավարությունը՝ նախագահի գլխավարությամբ¹²: Դեսպանության բացումն իրանական ճկուն և նպատակասլաց քաղաքականության արդյունքն էր: Դեռ 1992 թ. փետրվարի 29-ին ՀՀ-ում ԻԻՀ-ի ժամանակավոր հավատարմատար և լիազոր ներկայացուցիչ է նշանակվում Բ. Ղասեմին¹³, ինչը հավանության արժանացավ ՀՀ ԱԳՆ-ի կողմից¹⁴: Հուլիսի 8-ին ՀՀ-ում ԻԻՀ գործերի հավատարմատար է նշանակվում Ա. Սոբհանին¹⁵, որը ԻԻՀ ԱԳՆ-ում աշխատում էր 1985 թվականից¹⁶:

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության այցը Թեհրան՝ երկկողմ հարաբերությունները զարգացնելու և Լեռնային Ղարաբաղի հարցը կարգավորելու նպատակով¹⁷: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց «Համագործակցության, բարեկամության ու բարիդրացիության մասին» համատեղ հայտարարություն¹⁸, որը դարձավ միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևոր փաստաթուղթ՝ բաղկացած 18 հոդվածից: Մայիսի 7-ին ՀՀ և ԻԻՀ միջև կնքվեցին հյուպատոսական համագործակցության մասին¹⁹ և Ղիվանագիտական ու ծառայողական անձնագիր ունեցող անձանց

¹¹ Տես նույն տեղում, թ. 63:

¹² Տես «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 01.05.1992:

¹³ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 169, թ. 3:

¹⁴ Տես նույն տեղում, գ. 25, թ. 54-55:

¹⁵ Տես նույն տեղում, գ. 169, թ. 63:

¹⁶ Տես նույն տեղում, թ. 62:

¹⁷ Տես «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 06.05.1992:

¹⁸ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 88-93:

¹⁹ Տես Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., թիվ 1 (1), Երևան, 2002, էջ 52:

ելումուտն առանց մուտքի վիզայի ապահովելու մասին համաձայնագրերը²⁰ :

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացմանը սպասվում էր բարդ փորձաշրջան՝ պայմանավորված Արցախյան պատերազմով: Որպես կանոն, ԼՂ-ի հակամարտության գոտում տեղի ունեցած ցանկացած դեպք արձագանք էր գտնում երկկողմ հարաբերություններում: Շուշիի ազատագրումը (09.05.1992) ստիպեց ԻԻՀ-ին հայտնել ինքնաբացարկ միջնորդական առաքելությունից: ԻԻՀ-ՀՀ դիվանագիտական հարաբերություններում առաջացավ անվստահություն: Բոլորովին չփորձելով բացարձականացնել կրոնական գործունը՝ նշենք, որ ԻԻՀ-ԱՀ հարաբերությունները պայմանավորված էին նախ և առաջ ընդհանուր կրոնամշակութային կապերով և եթե անգամ ԻԻՀ պաշտոնական դիրքորոշումը ԼՂ-ի հարցում երբեմն մեղմանում էր, ապա հասարակական շրջանակներում այն կառավարելի դարձնելն ըստ էության բացառվում էր:

Չնայած դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվել ԻԻՀ և ՀՀ միջև, տեղի էին ունենում երկու պետությունների ԱԳ նախարարների և պետական պաշտոնյաների հանդիպումներ, սակայն Թեհրան-Երևան և Թեհրան-Բաքու կապերի զարգացման համեմատական գործընթացը ցույց է տալիս, որ այն տարբերվում էր: Կրոնապետական ԻԻՀ-ն, բնականաբար, առաջնությունը պետք է տար շիա ԱՀ-ին: Այսպես՝ եթե ԻԻՀ դեսպանության պաշտոնական բացումը Երևանում տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին, այսինքն՝ երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից (09.02.1992) ընդամենը մոտ 2,5 ամիս անց, ապա Թեհրանում ՀՀ-ի ներկայացուցչություն բացելու գործընթացն իրանական կողմը արհեստականորեն ձգձգվում էր, և միայն 1992 թ. դեկտեմբերի 22-ին Թեհրանում պաշտոնապես բացվեց ՀՀ դեսպանությունը:

1992 թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ ԱԳՆ-ն տեղեկացրեց իրանական կողմին, որ ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար և լիազոր ներկայացուցիչ է նշանակված արևելագետ, պրոֆեսոր Վ. Բայբուրոյա-

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 53:

նը²¹: Հոկտեմբերի 28-ին Վ. Բայբուրդյանը հանդիպում է ԻԻՀ ԱԳ նախարար Վելայաթիին և հանձնում ՀՀ ԱԳ նախարարի նամակը՝ իրեն որպես ՀՀ գործերի հավատարմատար նշանակելու մասին²²:

1992–1994 թթ. ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին հավատարմատարի մակարդակի վրա և միայն պատերազմում հրադադար կնքելուց (12.05.1994) հետո իրանական կողմը որոշեց հավատարմատարի կարգավիճակը փոխարինել դեսպանի աստիճանով: 1994 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ նախագահին հավատարմագրերն է հանձնում ՀՀ-ում ԻԻՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան Յ. Ռ. Նիքքար-եսֆահանին²³: ԻԻՀ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Վ. Բայբուրդյանը երկու տարի այդ կարգավիճակով պաշտոնավարելուց հետո 1994 թ. նոյեմբերի 9-ին նշանակվում է ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան²⁴: Նա դեկտեմբերի 20-ին հավատարմագրերը հանձնում է ԻԻՀ նախագահին²⁵:

1993 թ. հունվարի 11-ին ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Վ. Բայբուրդյանը ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար Ա. Կիրակոսյանին հեռագրով հայտնում էր, որ երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացումը կենսական անհրաժեշտություն է ստեղծում թավրիզում բացելու հյուպատոսություն: Նշվում էր, որ եթե տվյալ պահին դա հնարավոր չէ, ապա օրնե անհրաժեշտ է այնտեղ ունենալ հյուպատոսական ներկայացուցիչ, որը հաշվետու կլինի թեհրանում ՀՀ դեսպանությանը²⁶: ՀՀ հավատարմատարը առաջարկում էր հյուպատոսական ներկայացուցչի համար հնարավոր աշխատավայր ապահովել թավրիզի առաջնորդարանում: Հակառակ դեպքում՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ և կաթողիկոսական փոխանորդ Նշան վրդ. Թոփուզյանի վրա դնել պատվավոր հյուպատոսի պարտականությունները, մինչև որ հարցը ստանա իր

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 170, թ. 30, 32:

²² Տե՛ս նույն տեղը, գ. 84, թ. 100–102:

²³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 24.09.1994:

²⁴ Տե՛ս նույն տեղը, 10.11.1994:

²⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 242, թ. 47–49:

²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 176, թ. 1–2:

վերջնական լուծումը, մանավանդ որ դրա նախադեպը կար՝ Վ. Բայբուրդյանը առաջարկում էր նույն մեխանիզմը օգտագործել նաև հայաշատ Սպահանում:

1993 թ. փետրվարի 5-ին ՀՀ ԱԳՆ-ն հիշյալ հարցով դիմում է նաև Երևանում ԻԻՀ-ի դեսպանությանը²⁷: Թեհրանում գտնվելու ժամանակ ՀՀ ԱԳՆ Իրանի բաժնի վարիչ Գ. Առաքելյանը թավրիզում գլխավոր հյուպատոսարանի կարգավիճակով ներկայացուցչություն բացելու վերաբերյալ մարտի 22-ին նուտա է ներկայացնում ԻԻՀ ԱԳՆ: Սակայն ԱՊՀ և Կովկասի երկրների վարչության պետ Բ. Ղասեմին պաշտոնապես հայտարարում է, որ, քանի դեռ ԱՀ-ն թավրիզում չի հիմնել հյուպատոսարան, իրանական կողմը նպատակահարմար չի գտնում ՀՀ-ին նման հնարավորություն տալ²⁸: Թեհրանը դեմ չէր, եթե ՀՀ-ն նման թավրիզում հիմներ առևտրատնտեսական ներկայացուցչություն, այլ ձգտում էր Երևանին և Բաքվին տալ հավասարաչափ հնարավորություններ:

1993 թ. երկկողմ քաղաքական-դիվանագիտական հարաբերություններում առկա էին որոշ խնդիրներ: Ապրիլի 13-ին Թեհրանի համալսարանի առավելապես ադրբեջանցի ուսանողությունը համալսարանի տարածքում կազմակերպեց հանրահավաք, որտեղ ԼՂՀ ուժերի կողմից Քելբաջարը ազատագրելու կապակցությամբ հնչում էին հակահայկական կոչեր: Հանրահավաքի մասնակիցները քայլարշավ կազմակերպեցին դեպի ՀՀ դեսպանության շենք: Հանրահավաքին մասնակից ԻԻՀ-ի խորհրդարանի՝ Խոյի, Մակուի, Արդեբիլի, Մարաղայի պատգամավորները թուրքերեն հնչեցրին հակահայկական ճառեր ու կարգախոսներ՝ «Չավթիչ պետության հետ պետք է խզվեն դիվանագիտական հարաբերությունները», «Ղաշնակները և սիոնիստները մեկ դրամի երկու երեսն են», «Հայաստանի բանակ՝ դուրս մահմեդական տարածքից», «Լաչինը, Քելբաջարը և Ղուբաթլին պետք է ազատվեն»²⁹: Ամբոխն այրեց ՀՀ-ի պետական դրոշը,

* 1919–1920 թթ. թավրիզում ՀՀ հյուպատոսական ներկայացուցչի պարտականությունները դրված են եղել Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Սելիք-Թանգյանի վրա:

²⁷ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 176, թ. 9:

²⁸ Տես նույն տեղում, թ. 12–13:

²⁹ Տես «Ազգ», օրաթերթ, 15.04.1993:

սկսեց քարկոծել դեսպանության շենքը, փորձեց ջարդել դռները և ներխուժել ներս: Կառավարությունն անվտանգության ուժերի և զորքի օգնությամբ ցրեց հանրահավաքի մասնակիցներին:

Հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին, ԻԻՀ ԱԳ նախարար Ա. Վելայաթին ուղերձով դիմեց ՀՀ կառավարությանը՝ մտահոգություն հայտնելով իրադարձությունների զարգացման այդօրինակ ընթացքի առնչությամբ: Ուղերձում կոչ էր արվում հայկական ուժերը դուրս բերել «Ադրբեջանի գրավյալ տարածքներից» և Ղարաբաղի խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով: Որպես բողոք այդ ամենի դեմ, ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայբուրդյանը թեհրանից վերադարձավ Երևան: Երկու շաբաթ անց, երբ ԻԻՀ ԱԳՆ-ն հավաստիացրեց ՀՀ կառավարությանը, որ նման միջադեպերն այլևս չեն կրկնվի, Վ. Բայբուրդյանը վերադարձավ թեհրան և դեսպանության դրոշը կրկին բարձրացվեց³⁰:

Սակայն պաշտոնական թեհրանն ամենևին էլ չէր ծրագրել ծայրահեղորեն սրել հարաբերությունները ՀՀ-ի հետ՝ հաշվի առնելով ոչ այնքան ԼՂ-ի իրադրությունը, որքան ԱՀ-ի ընդգծված թուրքամետությունը: Այս փուլում թեհրանին բավարարում էր արդեն իսկ եղած միջադեպը:

Քաղաքական և դիվանագիտական խնդիրները շաղկապված էին: Այսպես՝ 1993 թ. հունիսի 26-ին ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայբուրդյանի նամակը ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանին հենց այդ մասին է վկայում³¹: ԻԻՀ ԱԳՆ-ն գործող կանոնակարգից ավելի երկար էր ձգձգում ՀՀ դեսպանությանը տրվող թույլտվությունները: Համաձայն ԻԻՀ ԱԳՆ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգի՝ եթե որևիցե դեսպան կամ դեսպանատան աշխատակից ցանկանում է հանդիպում կամ հեռախոսազրույց ունենալ որևէ պաշտոնատար անձի հետ, ապա նա նախապես այդ մասին հատուկ նոտայով տեղեկացնում էր ԱԳՆ-ին, որի գրավոր կամ բանավոր թույլտվությունը ստանալուց հետո միայն իրականացնում էր իր ցանկությունը: Չնայած այս կարգը պարտադիր պայման էր անխտիր բոլոր դեսպանատների

³⁰ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան հարևաններ, թե՛ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. XXIII, Երևան, 2003, էջ 11-12:

³¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թ. 30-32:

համար, բայց ՀՀ դեսպանությանն տրվող պատասխան-թույլտվությունները շատ ավելի էին ձգձգվում: Արդյունքում ՀՀ դեսպանության գործունեությունը խիստ կաշկանդվում էր:

1993 թ. հուլիսի 22-ին ՀՀ դեսպանությունը հայտնում է ԻԻՀ-ի ԱԳՆ-ին, որ հաճախակի են դարձել անանուն զանգերը ՀՀ դեսպանություն, որոնց ընթացքում պարսկերեն լեզվով սպառնալիքներ էին հնչում ՀՀ դեսպանության աշխատակիցների հասցեին³²: Մասնավորապես հուլիսի 21-ին անհայտ անձը զանգահարում է ՀՀ դեսպանություն և ադրբեջանական առողջանությանը զգուշացնում, որ դեսպանի կյանքին վտանգ է սպառնում: ՀՀ դեսպանությունն իրանական կողմին խնդրում է միջոցներ ձեռնակել դեսպանության անվտանգությունն ապահովելու համար:

Երկկողմ հարաբերություններում կտրուկ լարվածություն նկատվեց, երբ 1994 թ. մարտի 17-ին հայկական զինուժը խփեց իրանական ինքնաթիռ, որի հետևանքով 34 մարդ զոհվեց: Չնայած «Ջոն-հուրիե էսլամի» իսլամական արմատական թերթը կառավարությունից պահանջում էր ստիպել ՀՀ-ին ընդունել իր պատասխանատվությունն այդ միջադեպի համար, իրանական ղեկավարությունը չէր ցանկանում սուր կերպով վատթարացնել հարաբերությունները ՀՀ-ի հետ: Եւ միայն նախազգուշացրեց հայկական և ադրբեջանական կողմերին խնդիրը լուծել բանակցությունների ճանապարհով, որպեսզի չապակայունանա իրադրությունը տարածաշրջանում³³: ՀՀ և ԼՂՀ ղեկավարությունը ցավակցական հեռագրեր հղեցին ԻԻՀ-ի ղեկավարությանը: Դեպքը տեղի էր ունեցել Ստեփանակերտի մատույցներում հայտնված Մոսկվայից Թեհրան թռչող իրանական Ա-130 «Հերկուլես» ռազմատրանսպորտային ինքնաթիռի հետ: Մարտի 21-ին Թեհրանից Երևան ժամանեցին ԻԻՀ-ի ԱԳՆ-ի օդային ուժերի փորձագետներ, իրավաբանական վարչության պետ Ամինիանին և տեխնիկական խմբի ղեկավար գեներալ Ռեզվանին³⁴: ԻԻՀ-ի ԱԳՆ-ն մարտի 28-ին հայտարարեց, որ ինքնաթիռի կործանման պատճառը Լեռնային Ղարաբաղի տարածքից արձակված հրթիռն է և ՀՀ կառավար-

³² ՏԵՍ ԴԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, ք. 41:

³³ ՏԵՍ Դադжиев К. С., Геополитика Кавказа, Москва, 2001, с. 343.

³⁴ ՏԵՍ «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 22.03.1994:

րությունից պահանջեց պատասխանատվության ենթարկել մեղավորներին³⁵։

Մարտի 31-ին ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի նախագահությամբ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովը հայտարարեց, որ արտասահմանյան լրատվամիջոցների ապատեղեկատվությունը դժբախտ պատահարը դարձնում է քաղաքական շահարկման առարկա³⁶։ Ապացուցվեց, որ ինքնաթիռը չէր ունեցել «սև արկղ» և ՀՀ-ի օդային տարածք չէր մտել, կապի դուրս չէր եկել Երևանի դիսպետչերական ծառայության հետ։

1994 թ. մայիսի 4-ին ՀՀ փոխնախագահը թեհրանում հանդիպեց ԻԻՀ-ի նախագահին։ Վերջինս հայտնեց, որ ՀՀ-ից համագործակցություն է սպասում հետաքննության արդյունքների հրապարակման և ողբերգության մեղավորներին պատժելու հարցում այն դեպքում, եթե մեղքն ապացուցվի³⁷։

Ինչևէ, վերոնշյալ միջադեպով ավարտվում է ՀՀ-ԻԻՀ միջպետական դիվանագիտական հարաբերություններում առաջացած ամենաբարդ խնդիրը։ Դրանց հաջորդեցին ավելի «մեղմ ու հանգիստ» հարաբերություններ, որոնց զարգացման հիմք հանդիսացավ ԼՂ-ի ճակատում հաստատված հրադադարը։

Փաստորեն, ԼՂ-ի հակամարտության ընթացքում երկու անգամ լրջորեն խարխլվեցին ՀՀ-ԻԻՀ միջպետական դիվանագիտական հարաբերությունները. նախ Շուշիի ազատագրմամբ ու Լաչինի մարդասիրական միջանցքի բացմամբ և ապա՝ 1994 թ. իրանական ինքնաթիռի կործանման պատճառով։ Հիշյալ դեպքերը, սակայն, չխանգարեցին երկու պետությունների հետագա բարիդրացիությունը։ Թեհրանը և Երևանը գտան իրենց բարեկամությունը անսասան պահելու բանաձևը՝ անտեսել Բաքվի սադրանքները։ Փոխադարձ պետական շահերը ստիպեցին կողմերին դրսևորված պոռթկումները չդարձնել միջպետական հարաբերություններում թելադրող գործոն։ Լարված պահերին կողմերը ցուցաբերեցին ողջախիռություն և հեռանկարային մոտեցում՝ հավատարիմ մնալով իրենց սկզբունքներին և չվտանգելով երկկողմ կապերը։

³⁵ Տես նույն տեղում, 31.03.1994։

³⁶ Տես «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 01.04.1994։

³⁷ Տես նույն տեղը, 06.05.1994։

KAREN MKRTCHYAN

**ABOUT SEVERAL PROBLEMS WHICH
APPEARED IN THE DIPLOMATIC RELATIONS
BETWEEN RA AND IRI (1992–1994)**

SUMMARY

The article discusses several issues between RA and IRI, that were in the years of Karabakh's national liberation war (1992–1994) in the Armenian-Iranian diplomatic relations. RA-IRI intergovernmental diplomatic relations seriously suffered twice during the Karabakh's conflict: at first with liberation of Shushi and the opening of Berdzor humanitarian corridor and the strike of Iranian airplane in 1994. But mentioned events didn't hamper subsequent good-neighbourliness of two states. Tehran and Yerevan found their friendship unshakable keeping to the formula - to ignore all provocations of Baku. The sides were wise and showed long-range approach in tense moments endangering bilateral ties. They remain faithful to their principles and exert efforts to keep bilateral ties.

КАРЕН МКРТЧЯН

**О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ В
ДИПЛОМАТИЧЕСКИХ
ОТНОШЕНИЯХ РА И ИРИ (1992–1994 ГГ.)**

РЕЗЮМЕ

В статье обсуждаются некоторые проблемы возникшие между ИРИ и РА в годы Карабахской национально-освободительной войны (1992–1994 гг.). Дипломатические отношения РА и ИРИ первый раз пострадали по причине освобождения Шуши и открытия гуманитарного коридора через Лачин (Бердзор), а во второй – из-за сбитого иранского самолета в 1994

году. Однако эти события не стали препятствием для дальнейших добрососедских отношений между двумя государствами. Тегеран и Ереван нашли формулу сохранения стойкой дружбы, игнорируя все провокации Баку. В напряженных ситуациях стороны проявили мудрость и перспективный подход – придерживаться своим принципам и не подвергать опасности двухсторонние связи.

**ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1998-2003 ԹԹ.)**

Խորհրդային Միության փլուզումից հետո Ֆրանսիայի Հանրապետությունը լուրջ հետաքրքրություն ցուցաբերեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների նկատմամբ, ինչը պայմանավորված էր թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական նկատառումներով: 1996 թ. դեկտեմբերին Ֆրանսիան, ցանկանալով ամրապնդել իր քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում, դառնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: Նա այս շրջանում նպատակ էր հետապնդում խորացնել քաղաքական երկխոսությունը տարածաշրջանի պետությունների հետ, ինչպես նաև անթաքույց հետաքրքրություն էր ցուցաբերում Մերձկասպյան տարածաշրջանի էներգետիկ պաշարների արդյունահանման ծրագրերի նկատմամբ¹:

1998 թ. փետրվարին Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը և նույն թվականի մարտին Ռոբերտ Բոչարյանի ընտրվելը ՀՀ նախագահի պաշտոնում միանգամայն նոր իրադրություն են ստեղծում ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում: Հայաստանի նոր իշխանությունները կտրուկ դեմ են արտահայտվում հակամարտության լուծման փուլային տարբերակին², ինչը սառնության պատճառ է դառնում հայ-ֆրանսիական հարաբերություններում: Այս կապակցությամբ Ֆրանսիայի դիվանագիտական շրջանակներ-

¹ 1996 թվականից ֆրանսիական «Elf Aquitaine» ընկերությունը 10 % մասնաբաժնով մասնակցում էր Շահ Դենիզ հանքավայրի շահագործման աշխատանքներին, իսկ 1997 թ. հունվարից նույն «Elf Aquitaine» ու ֆրանսիական «Total» ընկերությունները համապատասխանաբար 65 ու 10 % մասնաբաժիններով մասնակցում էին Լենքորանի հանքավայրի շահագործմանը: Բացի այդ ֆրանսիական կողմը նախատեսում էր նոր պայամանագրեր կնքել և խորացնել տնտեսական համագործակցությունն Ադրբեջանի հետ (տե՛ս «Azerbaijan's Caspian exploration heating», Oil & Gas Journal, Jan. 20, 1997, էջ 31):

² Տե՛ս Hovhannisyán N., The foreign policy of the republic of Armenia in the Transcaucasia-middle eastern geopolitical religion, Yerevan, 1998, էջ 16:

րը գտնում էին, որ Քոչարյանի դիրքորոշումը ԼՂ խնդրի կարգավորման հարցում բավականին կոշտ է և նույնիսկ կարող է տապալել բանակցային գործընթացը³:

Միևնույն ժամանակ ճգնաժամ էր հասունանում նաև ֆրանսադրբեջանական հարաբերություններում: Ֆրանսիացիներին չի հաջողվում ադրբեջանական կողմի հետ ստորագրել տնտեսական համագործակցության նոր փաթեթը, որը թույլ կտար ընդլայնել ֆրանսիական ընկերությունների գործունեությունն Ադրբեջանի էներգետիկ սեկտորում⁴: Այս ամենը պայմանավորված էր Ֆրանսիայի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների վստահության անկումով, որն էլ Ֆրանսիայի ԱԺ կողմից 1998 թ. մայիսին Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրինագծի ընդունման հետևանքն էր: Ուստի պատահական չէ, որ Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, հետաձգում է⁵ 1998 թ. սեպտեմբերին նախատեսված այցը Հարավային Կովկաս⁶:

Նման պայմաններում Հայաստանի առջև խնդիր էր ծառայել մեղմել ԼՂ հարցում ՀՀ դիրքորոշման վերաբերյալ Ֆրանսիայի բացասական արձագանքը: Այդ նպատակով նախ 1998 թ. մայիսի 25-ին Ռոբերտ Քոչարյանը ժակ Շիրակին նամակ է գրում, որտեղ ներկայացնում է հայկական կողմի տեսակետները ԼՂ խնդրի կարգավորման գործընթացի վերաբերյալ և պատրաստակամություն հայտնում վերսկսել բանակցությունները⁷: Դրանից զատ մայիսի 30-ին Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիի միջնորդությամբ Բեյրութում տեղի է ունենում Վարդան Օսկանյանի և ժակ Շիրակի հանդիպումը: Ձրուցի ընթացքում Օսկանյանը Ֆրանսիայի նախագահին է ներկայացնում ԼՂ հակամարտության կարգավորման հարցում ՀՀ նոր իշխանությունների մոտեցումները, որոնք միանգա-

³ Տե՛ս նույն տեղում, ց. 3, գ. 196, թ. 38:

⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 22, թ. 79:

⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 3, գ. 196, թ. 4:

⁶ Ժակ Շիրակի տարածաշրջանային այցը, որի մասին հայտնի էր դարձել դեռևս 1997 թ., այդպես էլ չի կայանում: Միայն 2006 թ. Շիրակը պետական այցով հյուրընկալվում է Հայաստանում:

⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 3, գ. 196, թ. 88:

մայն հասկանալի են դառնում Ֆրանսիայի նախագահին⁸։ Շիրակը նշում է, որ այս հանդիպումն արդեն հնարավորություն կտա իրեն ներգրավվելու և աշխատելու կողմերի հետ։ Այս կապակցությամբ Օսկանյանն իր հուշերում գրում է. «Իրոք, հաջորդ մի քանի տարիների ընթացքում Շիրակը դարձավ բանակցությունների հիմնական շարժիչ ուժը։ Նրա անձնական մասնակցության շնորհիվ բանակցությունները գաղափարական լուրջ բեկում ապրեցին»⁹։

Ժակ Շիրակին ուղղված նամակից և Օսկանյան-Շիրակ հանդիպումից հետո Ֆրանսիան վերանայում է իր մոտեցումները հակամարտության կարգավորման հարցում։ Ֆրանսիացիներն ընդունում են, որ Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո կարգավորման «փուլ առ փուլ» տարբերակն արդեն սպառել է իրեն, և անհրաժեշտ է մշակել խնդրի լուծման նոր տարբերակներ՝ հաշվի առնելով հակամարտության բոլոր կողմերի մոտեցումները¹⁰։ Ֆրանսիայի այս դիրքորոշումը հաստատվում է 1998 թ. հոկտեմբերին, երբ նախարար Օսկանյանը Փարիզում քննարկում է ԼՂ կարգավորման խնդիրն իր ֆրանսիացի գործընկերոջ՝ Յուլբեր Վեդրինի հետ։ Վերջինս պատրաստակամություն է հայտնում «աջակցել կողմերին՝ բանակցային գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակը հաղթահարելու նպատակով»¹¹։ Այս մոտեցումը կիսում էին նաև ԱՄՆ-ը և Ռուսաստանը։ Ուստի Մինսկի խումբը 1998 թ. նոյեմբերին կողմերին է ներկայացնում հակամարտության կարգավորման «Ընդհանուր պետության» տարբերակը, որը, սակայն, անմիջապես մերժվում է Ադրբեջանի կողմից։

Հաջորդ երկու տարիների ընթացքում խաղաղ կարգավորման գործընթացը լուրջ տեղաշարժեր չի արձանագրում, սակայն աչքի է ընկնում Քոչարյանի ու Ալիևի մի շարք հանդիպումներով։ Ֆրանսիան, ողջունելով Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների

⁸ Տե՛ս Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով։ Փոքր երկրի մեծ մարտահրավերները։ Նախարարի օրագրից, Երևան, 2013, էջ 189։

⁹ Նույն տեղում, էջ 190։

¹⁰ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 3, գ. 196, թ. 4։

¹¹ "Point de presse, déclarations du porte-parole". 13.10.1998, Paris. Bases documentaires du ministère des Affaires étrangères et européennes.

միջև ուղղակի շփումների վերականգնումը¹², ուշադրության կենտրոնում էր պահում դրությունը Հարավային Կովկասում և փորձում հակամարտության լուծման հնարավոր տարբերակներ գտնել: Հիմնականում հենց այդ նպատակով էր 1999թ. սեպտեմբերին Հարավային Կովկաս է այցելում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի բանազնաց Միշել Ֆուլշեն¹³:

1999-2000 թթ. Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև տեղի ունեցող պարբերական հանդիպումներն ու խնդրի կարգավորման հարցում Մինսկի խմբի համանախագահների ներդաշնակ մոտեցումները բարենպաստ պայմաններ են ստեղծում հակամարտությանը համապարփակ լուծում տալու համար: Օգտագործելով այս հանգամանքը՝ ժակ Շիրակը 2001 թ. հունվարին հանդես է գալիս միջնորդությամբ: Շիրակը Փարիզ է հրավիրում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին՝ երկկողմ և եռակողմ ծևաչափով բանակցությունների: Այս հանդիպմանը հաջորդում են Շիրակի միջնորդությամբ և նրա մասնակցությամբ ևս մի քանի հանդիպումներ¹⁴: Ամենակարևոր բանակցությունները տեղի են ունենում 2001 թ. մարտին Փարիզում: Հանդիպումից հետո Շիրակը լավատեսական գնահատական է տալիս բանակցությունների ընթացքին՝ հույս հայտնելով, որ «տարին չի ավարտվի առանց կողմերի համար ընդունելի լուծում գտնելու»¹⁵:

Փարիզի հանդիպումներից հետո շրջանառության մեջ է դրվում «փարիզյան սկզբունքներ» հասկացությունը, որը, ըստ էության, Շիրակի առաջարկած կարգավորման տարբերակի հիմնասյունն էր: Բանակցությունների մանրամասները, ինչպես նաև փարիզյան սկզբունքների ամբողջական բովանդակությունը մինչ այսօր հայտնի չեն: Այնուամենայնիվ, ըստ արտագործնախարար Օսկանյանի,

¹² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, ց. 5, գ. 22, թ. 218-219:

¹³ Տե՛ս "Point de presse, declarations du porte-parole". 03.09.1999, Paris. Bases documentaires du ministère des Affaires étrangères et européennes.

¹⁴ Տե՛ս Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 193:

¹⁵ "Point de presse conjoint du President de la Republique, M. Jacques Chirac, du pPresident de la Republique d'Azerbaïdjan, M. Heydar Alirezaoglou Aliev, et du Ppresident de la Republique d'Armenie, M. R. Kotcharian". 05.03.2001, Paris. Bases documentaires du ministère des Affaires étrangères et européennes.

Ժակ Շիրակի միջնորդության գաղափարական հենքը «կառուցված էր հարցին ամբողջական լուծում տալու մոտեցման վրա՝ սկզբունք ընդունելով Լեռնային Ղարաբաղը Լաչինի հետ միասին Հայաստանի ինքնիշխանությանը հանձնելու դիմաց Ադրբեջանին Հայաստանի տարածքով դեպի Նախիջևան կայուն և անխափան միջանցքի տրամադրումը»¹⁶:

Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին 2001 թ. ապրիլին Քի Վեսթում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում հաջողվում է համաձայնեցնել հաշտության համաձայնագիր՝ հիմնված փարիզյան սկզբունքների վրա: Այնուամենայնիվ Հեյդար Ալիևը շուտով հրաժարվում է հետագա ընթացք տալ համաձայնագրի կնքմանը: 2001 թ. ընթացքում Սինսկի խմբի և հատկապես Ֆրանսիայի միջնորդության որոշակի հաջողությունը պայմանավորված էր մի շարք գործոններով: Նախ՝ Հեյդար Ալիևը տրամադրված էր լուրջ փոխզիջումների գնալ: Նա ցանկանում էր ԼՂ հիմնահարցին տալ վերջնական ու համապարփակ լուծում՝ ձերբազատելով որդուն այս բարդ խնդրից: Երկրորդ՝ համանախագահ երեք պետություններն այս ժամանակահատվածում բավականին ներդաշնակ և համաձայնեցված էին գործում, ինչը պակաս կարևոր չէր: Իսկ ահա երրորդ գործոնը, մեր կարծիքով, կապված է Ֆրանսիայի գործադրած ջանքերի և մասնավորապես նախագահ Շիրակի գաղափարական ներդրման հետ:

2002 թ. սկզբում Ֆրանսիան փորձում է վերակենդանացնել կարգավորման գործընթացը՝ շարունակելով հիմք ընդունել Փարիզում ձեռք բերված պայմանավորվածությունները: Այսպես ՀՀ նախագահին ուղղված նամակում Ժակ Շիրակը ցանկություն է հայտնում, որ «Հայաստանի և Ադրբեջանի միջև երկխոսությունը, չնայած բանակցային գործընթացում առկա դժվարություններին, կհանգեցնի կողմերի միջև քաղաքական և վերջնական համաձայնության՝ Փարիզյան հանդիպումների ընթացքում մատնանշված ուղուն համապատասխան»¹⁷: Սակայն հունիսին տեղի է ունենում մի իրա-

¹⁶ Տե՛ս Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 194:

¹⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. Ց, գ. 22, թ. 7:

դարձություն, որը լուրջ հարված է հասցնում փարիզյան սկզբունքների հիման վրա հակամարտությունը կարգավորելու հեռանկարին և Ֆրանսիայի միջնորդական ջանքերին: Հեյդար Ալիևը Բաքվում Մինսկի խմբի Ֆրանսիացի նոր համանախագահի հետ հանդիպման ժամանակ մամուլի առջև բացահայտում է փարիզյան սկզբունքների որոշ մանրամասներ¹⁸: Այս իրադարձությունն արժանանում է Ֆրանսիայի խիստ քննադատությանը¹⁹: Ավելորդ չէ նշել նաև, որ հայկական կողմն անմիջապես ժխտում է Ալիևի խոսքերը՝ շեշտելով, որ փարիզյան սկզբունքների վերաբերյալ վերջինիս ձևակերպումներն աղավաղված են:

Չնայած Ադրբեջանի նախագահի հայտարարության բացասական ազդեցությանը՝ Ֆրանսիան շարունակում էր իր միջնորդական ջանքերը: 2002 թ. հոկտեմբերին Հարավային Կովկասի հանրապետություններ է այցելում Ֆրանսիայի ԱԳՆ պետական քարտուղար Ռընե Մյուզըլիեն: Նախարար Օսկանյանի և Մյուզըլիեի հանդիպման ընթացքում վերջինս նշում է, որ Ալիևը պատրաստ է հիմնախնդիրը կարգավորել փարիզյան սկզբունքների շրջանակներում՝ չնայած, որ ադրբեջանական կողմը զգուշավոր ու սպասողական կեցվածք է ընդունել: Ավելին, Ֆրանսիացի պաշտոնյան ընդգծում է, որ «հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացն ապահով հուն տեղափոխելու համար անհրաժեշտ է վստահել նախագահ Շիրակին և Ֆրանսիայի միջնորդական առաքելությանը»²⁰:

Մյուզըլիեի այցը և նրա կատարած դիտարկումները ցույց տվեցին, որ Ֆրանսիական կողմը դեռևս չէր կորցրել հակամարտությունը փարիզյան սկզբունքների հիման վրա կարգավորելու հույսը և փորձում էր բանակցային գործընթացը պահպանել Ֆրանսիայի առաջնորդության ներքո: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Մյուզըլիեն Բաքվում ոչ միանշանակ հայտարարություններ արեց: Ադրբեջանական «էխո» պարբերականին տված հարցազրույցում նա նշում է, որ ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում Ֆրանսիայի «անփոփոխ դիրքորոշումը հիմնվում է Ադրբեջանի տարածքային

¹⁸ Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 15.06.2002:

¹⁹ Տե՛ս «Նոյյան Տապան» լրատվական կենտրոն, 20.06.2002:

²⁰ ՀՀ ԱԳՆ ՊՊԱ, ց. 8, գ. 22, թ. 54:

ամբողջականության պաշտպանության սկզբունքի վրա»²¹: Այս հանգամանքն ակնհայտորեն փոխկապակցվում է Ադրբեջանում ֆրանսիական նավթային ընկերությունների գործունեության խնդրի հետ, որը կրկին անգամ պետք է քննարկման առարկա դառնար Մյուզըլիեի և Ադրբեջանի իշխանությունների միջև բանակցություններում²²:

2003 թ. հոկտեմբերին Ադրբեջանի նախագահ է ընտրվում Յեյդար Ալիևի որդին՝ Իլհամ Ալիևը, ով վերանայում է Ադրբեջանի քաղաքականությունը ԼՂ խնդրի կարգավորման հարցում: Ադրբեջանի նոր նախագահը սպասողական քաղաքականություն է որդեգրում և վերջնականապես հրաժարվում հիմնախնդիրը փարիզյան սկզբունքների հիման վրա լուծելու մոտեցումից: Այս իրադարձությամբ, փաստորեն, ավարտվում է ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում Ֆրանսիայի միջնորդության ամենաակտիվ շրջանը:

Ամփոփելով՝ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ 1998-2003 թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում Ֆրանսիայի ակտիվ միջնորդությունը հիմնականում պայմանավորված էր Հարավային Կովկասում Ֆրանսիայի քաղաքական ազդեցության հաստատման և տնտեսական դիրքերի ամրապնդման գործոններով: Ֆրանսիան գիտակցում էր հիմնախնդրի արագ կարգավորման և տարածաշրջանում կայունության ամրապնդման անհրաժեշտությունը, ինչը կերաշխավորեր թե՛ Ֆրանսիայի և թե՛ Եվրոպական միության անդամ մյուս պետությունների ներդրումների ապահովությունը տարածաշրջանում: Միևնույն ժամանակ Ֆրանսիան ակնհայտ շահագրգռվածություն էր ցուցաբերում զարգացնելու տնտեսական համագործակցությունն Ադրբեջանի հետ: Չնայած Ֆրանսիայում ազդեցիկ ու մեծաթիվ հայ համայնքի ներկայությանը, ինչպես նաև հայ-ֆրանսիական սերտ համագործակցությանը, Ֆրանսիան այս ժամանակահատվածում

²¹ "Visite en Azerbaïdjan, entretien du Secrétaire d'Etat aux Affaires Etrangères, M. Renaud Muselier, avec le quotidien Azerbaïdjanais "Echo"; 01.10.2002; Bakou. Bases documentaires du ministère des Affaires étrangères et européennes.

²² Sbu Point de presse, Paris, 27.09.2002, Bases documentaires du ministère des Affaires étrangères et européennes.

ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում երբեք աչքի չի ընկել ընդգծված հայամետ դիրքորոշումներով: Հակառակը, ֆրանսիական դիվանագիտությունը որպես կանոն փորձել է հավասարակշռված մոտեցում ցուցաբերել, թեև երբեմն ընդգծել է հակամարտությունն Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում կարգավորելու անհրաժեշտությունը:

TIGRAN BAGHDASARYAN

THE FRANCE'S ROLE IN THE NAGORNO-KARABAKH CONFLICT SETTLEMENT (1998-2003)

SUMMARY

The interest of France towards the Republics of Armenia, Georgia and Azerbaijan is determined mainly by political and economic factors. Since December 1996, France was involved in the Nagorno-Karabakh conflict settlement as one of the OSCE Minsk group co-chair countries.

As a result of change of power in the Republic of Armenia in 1998, the Armenian approach to the conflict settlement was reconsidered, which entailed a negative reaction from France. However, in 1999-2003 the French mediation and the personal involvement of French president Jacques Chirac in conflict settlement process was constructive and mainly useful.

ТИГРАН БАГДАСАРЯН

**РОЛЬ ФРАНЦИИ В УРЕГУЛИРОВАНИИ
НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА
(1998-2003 ГГ.)**

РЕЗЮМЕ

Начиная с декабря 1996 года Франция является сопредседателем Минской группы ОБСЕ. В результате смены власти в Республике Армения в 1998 году армянская сторона пересмотрела свою позицию в вопросе урегулирования Нагорном Карабахского конфликта, что в свою очередь вызвало отрицательную реакцию со стороны Франции. Несмотря на это, в период 1999-2003 годов посреднические усилия французской стороны в вопросе урегулирования конфликта и в частности личная вовлеченность президента Жака Ширака были конструктивными и в основном полезными.

ԱՐՄԻՆ ՎԵՉՆԵՐԻ ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ

Հայ հետազոտողների կողքին Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ տարիներ շարունակ զբաղվում են նաև մեծ թվով օտար հեղինակներ: Նրանց զգալի մասը լուրջ ներդրում ունի խնդրի առանչառ ուսումնասիրության բնագավառում, սակայն մի մասն էլ, առաջին հերթին՝ քաղաքական նկատառումներով, ուղղակի կեղծում է պատմությունը, ծառայում հակահայ թուրքական քաղաքական շրջանակներին: Նմանատիպ «ուսումնասիրողների» մեջ վերջին շրջանում առանձնանում է գերմանացի աստվածաբան, պրոֆեսոր Մարտին Թամբեն: Նա հատկապես «հայտնի» դարձավ Հայոց ցեղասպանության ականատես, հետազոտող Արմին Թեոֆիլ Վեգների գործունեության վերաբերյալ կեղծիքներով լեցուն հրապարակումներով: Մասնավորապես «Արմին Թեոֆիլ Վեգները և հայերը. մի ականատեսի հավակնությունն ու իրողությունը» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունում հեղինակը կասկածի տակ է դնում նշանավոր հայասեր գործչի հայանպաստ գործունեությունը՝ կանգ չառնելով ամեն տեսակ շինծու և միտումնավոր մեկնաբանությունների առջև:

Թամբեի ատենախոսության գիտաքննական վերլուծությունն ու լուսաբանումը դառնում է անհրաժեշտություն, քանի որ հիմնահարցն առնչվում է մեր պատմության ամենազգայուն խնդրին՝ Հայոց ցեղասպանությանն ու հայ ժողովրդի մեծագույն ողբերգության վերաբերյալ առկա հայտնի վավերագրերի ու լուսանկարների իսկությունը կասկածելի ներկայացնելուն: Բացի այդ, այսօր Գերմանիայում նորօրյա հեղինակները, ովքեր զբաղվում են Արմին Վեգներով կամ Արևելքի խնդիրներով, Մարտին Թամբեի հիշյալ աշխատանքն օգ-

տագործում են իբրև թե որպես նորահայտ աղբյուրներ պարունակող գործ՝ առանց նյութի ճշմարտացիության և հավաստիության մեջ խորանալու:

Մ. Թամբեի աշխատանքը որքան էլ «հարուստ» է «ապացույցներով», այդուհանդերձ դրա առաջին իսկ քննությունը գիտականության ու անաչառության տեսանկյունից անվստահություն է առաջացնում¹:

Իր աշխատանքի մեջ Թամբեն, Վեգների չիրապարակած օրագրերից և ավելի ուշ հրատարակած գրառումներից «ապացույցներով» «կանոնակարգում է» ականատեսի վկայությունները և գալիս ցնցող եզրահանգման. «Վեգների հրատարակած («Տունդարծի քառասուն օր ու գիշեր» օրագիրը) այսուհետև չի կարող դիտվել իբրև տեղահանության պատմական հավաստի աղբյուր և վկայում է հեղինակի կեղծ խիզախության մասին: Այն խորապես շահարկված է»²:

Սակայն, Թամբեն շուտով կրկին հավատ է տածում դեպի Վեգները: «Վեգների՝ 1916 թ. գրած պատերազմի մասին օրագիրը, սակայն, հայերի տեղահանության վերաբերյալ պատմական հավաստի աղբյուր է ...» և դրանում «... առանձին դեպքերում, որոշակի վայրերում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ի հայտ են գալիս նոր տեղեկություններ»: Ակնհայտ է, որ հեղինակը հակասում է ինքն իրեն: Թամբեին դուր չի գալիս, որ Վեգներն առանձնահատուկ սեր է վայելել հայության շրջանում: Նրան բանաստեղծություններ են ծնվել, 1968 թ. էջմիածնում կաթողիկոս Վազգեն Առաջինի կողմից Արմին Թ. Վեգներին շնորհվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշան: Դա այն դեպքում, երբ, ըստ Թամբեի, Վեգները եղել է «անինքնավստահ,

¹ Ասվածին հիմնավոր պատասխան տալու համար անհրաժեշտ է ինչյալ աշխատանքը քննել ըստ գիտականության չափորոշիչների՝ առաջնորդվելով Մյունխենի Լուդվիգ Մաքսիմիլիան համալսարանի (Ludwig Maximilian Universität München) առաջարկած և Ալբրեխտ Բեհմելի (Albrecht Behmel) հեղինակած գիտականության չափորոշիչներով (<http://www.kunstgeschichte.uni-muenchen.de/studium/wissenschaft/wissenschaftlichkeit/index.html> (Stand: 06.01.2012), <http://www.student-online.net/dictionary/action/glossary?q=Wissenschaftlichkeit> (Stand: 06.01.12)):

² Tamecke, Martin: Armin T. Wegner und die Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen. Habilitationsschrift. Marburg o.J., էջ 215.

մշտապես հեշտությամբ հարմարվող, հոգեշուայլ մեկը»³: Առավել ևս, որ գերմանացի այս հեղինակն ըստ էության Հայոց ցեղասպանության փաստը համարում է որևէ էական նշանակություն չունեցող մի «սովորական դեպք»:

Մարտին Թամբեն իր հակակրանքը Վեգների նկատմամբ չի թաքցնում: Ըստ նրա՝ երեխա ժամանակ Վեգները թուլակազմ էր⁴... «Այլ դեպքերում նա իր կյանքը կազմակերպում էր խորամանկորեն, նենգորեն և ազահորեն, հնարավորինս հաճելի...»⁵, «Ի՞նչ պատմական արժեքներ կարող են ունենալ այն դիտարկումները, որոնք անում է Վեգների նման մարդը, ով աշխարհի ողջ իրադարձությունները որպես իրեն վերաբերվող է ընդունում: Նրա եսակենտրոնությունն ընթանում էր կապերի և օրենքների թերըմբռնմանը զուգընթաց ...»⁶:

Թամբեի նպատակն ակնհայտ է՝ ժխտել Վեգների ականատես լինելու փաստը, վարկաբեկել նրա փաստարկները և, ի վերջո, Հայոց ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնել:

Այս առումով նույն հետևությանն է հանգել նշանավոր հայագետ Ալբերտ Աուշեդյանը «Արմին Վեգների հիշատակն անարգելու փորձ» հոդվածում⁷, որտեղ նա մասնավորաբար գրում է. «Պատահական չէ նաև, որ պրոֆեսոր Մարտին Թամբեն իր հոդվածներում և մենագրության մեջ ամենուրեք օգտագործում է միայն «արտաքսում» ու «տեղահանություն» բառերը, իսկ վիեննաբնակ պատմաբան Արտեմ Օհանջանյանի գերադասած «ժողովրդի սպանդ» („Völkermord“) և «ցեղասպանություն» («Genozid») տերմինները համարում հայերի հավակնություն: Նրա թյուր կարծիքով հայերի հետ կատարվածը գենոցիդ անվանելը կնշանակեր գերազնահատել այն, ուստի բառի կիրառությունը «պետք է թողնել եղելության քաղաքական քննարկմանը»⁸:

³ Tamcke Martin, Armin T. Wegner und die Armenier, Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen. Habilitationsschrift. Marburg o.J., էջ 215:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

⁵ Նույն տեղում, էջ 64:

⁶ Նույն տեղում, էջ 71:

⁷ «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2010, N 2, էջ 26:

⁸ Տե՛ս Tamcke Martin, նշվ. աշխ., էջ 11:

Թամբեն իր նպատակին հասնելու համար անգամ կանգ չի առնում այնպիսի մի կեղծիքի առջև, ինչպիսին Վեգներին համասեռամոլություն վերագրելն է: «Նա երեխա ժամանակ նույնպես հակված էր համասեռամոլային հարաբերությունների,- գրում է Թամբեն,- ապա ճամփորդության ժամանակ բազմիցս տուրք էր տալիս նմանատիպ ազդակների ...» և այլն⁹: Դա այն դեպքում, երբ Վեգներն իր ժամանակակիցների մեջ հայտնի էր որպես ավանդական ընտանեկան կյանքով ապրող անձնավորություն, օրինակելի ամուսին և երկու զավակների հոգատար հայր: Անտարակույս, Թամբեի կատարած այդ քայլը հասցեագրված է հայերին, որոնց համար ընտանեկան հայեցի բարքերը վեր են ամեն ինչից:

Թամբեն շուտով բացահայտում է իր գլխավոր նպատակը՝ ամեն գնով կասկածի տակ առնել Հայոց ցեղասպանության իրողությունը փաստող վեգներից եզակի ու արժեքավոր լուսանկարները: «Լուսանկարներից 100-ն ինքն անձամբ է նկարել, - կարդում ենք Թամբեի ատենախոսությունում, - դրանց թվում՝ լուսանկարների հավաքածուի միայն փոքր մասը հայերի արտաքսման վերաբերյալ հավաստի աղբյուր կարող է հանդիսանալ»¹⁰: Այս կապակցությամբ հանդես կգանք մեկ այլ հոդվածով: Միայն ավելացնենք, որ անգնահատելի է Արմին Վեգների լուսանկարների նշանակությունը՝ որպես Հայոց Մեծ եղեռնի կենդանի վավերագրերի:

Ատենախոսության վերջում Մ. Թամբեն եզրակացնում է, որ Վեգների կերպարը շինծու է՝ արհեստականորեն ուռճացված ու հերոսացված:

Չավեշտալի է, որ «պրոֆեսորը» հերթական անգամ ընկնում է հակասության մեջ: Մի կողմից նա նշում է, թե Վեգներն առանձնապես հայանպաստ գործ չի կատարել, բայց մյուս կողմից գրում է. «Թուրքական և գերմանական իշխանությունների համար ցանկալի չէր, որ գրող-սանիտարը՝ հայերի օգտին գործունեություն ծավալած

⁹ Նույն տեղում, էջ 62, 94:

¹⁰ Նույն տեղում, էջ 215:

գործիչը, մնա (Թուրքիայում – Մ.Մ.)»¹¹: Ուստի այդ ժամանակահատվածում գերմանական զինվորական ներկայացուցչության կողմից նա ձերբակալվեց:

Թամքեի ընդգծված կողմնակալությունը երևում է այն ժամանակ, երբ նա մոռացության է տալիս Արմին Վեգների գործունեության մի շարք դրվագներ, որոնք ծանոթ են խնդրին քիչ թե շատ մոտ կանգնած յուրաքանչյուր հետազոտողի: Թամքեն կարծես մոռացության է մատնում, որ 1919 թ. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին Վեգները գրել է. «Որպես մեկը այն քիչ եվրոպացիներից, ովքեր սկզբից ևեթ ականատես են եղել Անատոլիայի¹² ծաղկուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում նրա (հայ ժողովրդի – Մ.Մ.) զարհուրելի բնաջնջմանը և եփրատի ափերին, Սիջագետքի անապատի քարքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը, ինձ իրավունք են վերապահում այդ թշվառության ու սարսափների պատկերները վկայակոչել ...»¹³:

Այն Վեգները, ով 1933 թ. Սուրբ զատիկի օրը նամակ գրեց Ադոլֆ Հիտլերին՝ ի պաշտպանություն հալածված հրեաների, ով Օրանիենբուրգի համակենտրոնացման ճամբարում դիմացավ կտտանքների, Թամքեի կողմից որպես ոչ հերոս է ներկայացվում:

Դոկտոր Մարտին Ռունին Վեգների գրական ստեղծագործությունը հետևյալ կերպ է արժևորել. «Ոչ մի դեպքում չպետք է աչքաթող անել այն, որ Գերմանիայի պատմության մեջ 1933 թ. իշխանության գրավումը նացիոնալ-սոցիալիստների կողմից, ինչպես Վեգների ստեղծագործական աշխատանքի, այնպես էլ նրա աշխատությունների համար եական հետևանքներ ունեցավ՝ հանգեցնելով նրա ձերբակալմանն ու գրքերի արգելմանը, որոնք, այնուամենայնիվ, մինչ այդ օրը մոտ 300000 օրինակներից բաղկացած ընդհանուր տպաքանակի էին հասել: Լավ է հիշել, որ Գերմանիայում ֆաշիզմի օրոք արգելված գրառումների սև ցուցակում Վեգների անունն այն օրերի գերմանական գրականության լավագույն ներկայացուցիչների կող-

¹¹ Նույն տեղում, էջ 67:

¹² Փոքր Ասիայից դուրս՝ սխալ կերպով կիրառվում է Արևմտյան Հայաստանի առումով:

¹³ Tamcke Martin, նշվ. աշխ., էջ 41:

քին էր դրվում: Թվարկենք դրանցից մի քանիսին՝ Բրեխտ, Բյոբլին, Ֆոյշտվանգեր, Կիշ, Հայնրիխ և Կլաուս Մանն, Ռեմարկ և Տուխոլսկի»¹⁴:

Այս ամենին Թամբեն հակադրվում է: Համաձայն Թամբեի ատենախոսության՝ Վեգները հայերի «հանձնարարությամբ» է վեպ գրել, պատմական դեպքերի աղավաղումների համար նրանցից բավականաչափ գումար ստացել: «Վեգները, - կարդում ենք Թամբեի աշխատությունում, - մշտապես ինքն էր իր թեմաների կիզակետում: Նա հանրային գիտակցությունն ուղղում էր դեպի հայերը՝ առանց որոնց նա էլ չէր լինի և կսուզվեր մոռացության մթնշաղում»¹⁵: Ապա Թամբեն շարունակում է. «Հատկապես Գերմանիայում համահայկական շարժման ավետարանչական աստվածաբանները ջանքեր թափեցին Վեգներին հաջողության հասցնելու համար ...: Աքսորված հայերը նրա համար հայկական թերթերում հայթայթում էին հոդվածներ գրելու պայտվերներ, մեծ քանակությամբ գնում էին նրա գրքերը և ահռելի գումարներ էին վճարում հայերի տեղահանության մասին գրվելիք վեպի համար»¹⁶:

Վեգներին սևացնելու մարմաջը Թամբեի ատենախոսության վերջում հասնում է բարձրակետին: Ըստ կեղծարար հեղինակի՝ Վեգներն «իր սեփական մեղքը ընդունելու փոխարեն, ... իրեն դասում է այն մարդկանց շարքը, ովքեր բարոյականության ու ճշմարտության համար պայքարում էին անբարոյականության դեմ և իրենց մատը դնում ցավոտ վերքի վրա»¹⁷:

Բարեբախտաբար այսօր Գերմանիայում կան շատ գիտնականներ, ովքեր Վեգների գործունեությանը նվիրված աշխատություններում սուր քննադատության են ենթարկում Թամբեին՝ իր թույլ տված կեղծիքների համար: Վկայակոչենք միայն պրոֆեսոր Անդրեաս Աայերին: 2011 թ. իրատարակած գրքում նա գրում է, թե հազվադեպ է

¹⁴ Rooney Martin. „Weg ohne Heimkehr“ Armin T. Wegner zum 100. Geburtstag. Ein Gedenkschrift, Bremen, 1986, էջ 52:

¹⁵ Tamcke Martin, նշվ. աշխ., էջ 241:

¹⁶ Նույն տեղում, էջ 174-175:

¹⁷ Նույն տեղում, էջ 209:

լինում երբ իր իսկ ընտրած շինծու ու անփույթ նյութերով «բանաստե-
րը նմանօրինակ ճշգրտությամբ որևէ մի գրողի կառչի՝ նրան նախ և
առաջ վարկաբեկելու նպատակով»¹⁸:

Ստեֆան Ցվայգը, դեռ 1922 թ. բարձր գնահատելով Արմին Վեգ-
ների հայապաշտպան գործունեությունը, «Berliner Tageblatt» թեր-
թում գրում էր. «... պատերազմից հետո նրա առաջին խոսքն այլևս
խանդավառ չէր ... Հայոց եղեռնի ցնցող նկարագրությունը, որ առա-
ջինը նրա խոսքի միջոցով հայտնի դարձավ անտեղյակ Գերմանիա-
յում, երբեք կրքի այնպիսի ուժով և առնական սրբազան ցասումով չի
պատկերվել: Նրա «երանության հարկի տակ» և «ճանապարհ
առանց տունդարձի» նշմարումներում առաջին անգամ է, որ Արևելքի
աշխարհը չի ներկայացվում այլևս Պիեռ Լոտիի վարդագույն ակվա-
րելներով: Այստեղ, վերջապես, ոչ թե սոսկ արվեստին ու էկզոտիկա-
յին ապշահար աշխարհաշրջիկն է, այլ երկիրն ու ժողովուրդն իր
ամենածանր ժամին տեսած սոսկահար մարդը ...»¹⁹:

Վերջում ցանկանում ենք ավելացնել, որ ովքեր հայկական ող-
բերգության վրա կարիերա են ստեղծում, դրանով հասարակության
մեջ դիրք զբաղեցնում, պետք է արժանի հակահարված ստանան:
Այդ իմաստով տեղին էր 2013 թ. մարտի 12-ին Պոտսդամում հրավիր-
ված «Ցեղասպանություն և գրականություն, Ֆրանս Վերֆելը հայկա-
կան-հրեական-թուրքական-գերմանական հեռանկարում» խորագի-
րը կրող կոնֆերանսում պրոֆ. Աշոտ Մելքոնյանի ելույթը, որտեղ նա
դիմելով միջոցառման բանախոս Թամքեին և մասնակիցներին, նշեց,
որ անթույլատրելի է հանիրավի վարկաբեկել հայ ժողովրդի օտա-
րազգի այն բարեկամներին, ովքեր իրենց կյանքով, գործով և անվե-
րապահ նվիրումով կիսել են հայության տառապանքն ու եղել նրա
արդար դատի պաշտպանը, անգնահատելի դեր ունեցել Հայոց ցե-
ղասպանության վերաբերյալ իրեղեն ապացույցների հավաքման ու
հրապարակման գործում:

¹⁸ Meier Andreas (Hrsg.), Armin T. Wegner. Die Austreibung des armenischen Volkes in die Wüste, Göttingen, 2011, էջ 190:

¹⁹ Wegner T., AM KREUZWEG DER WELTEN Lyrik. Prosa. Briefe. Autobiographisches, 1. Auflage, Buchverlag Der Morgen, Berlin, 1982, էջ 441:

Վերջում վկայակոչենք համացանցային մի կայքէջ²⁰, որտեղ ի չարս են օգտագործված Մարտին Թամքեի հիշյալ ատենախոսության նյութերը: Այն ընթերցելուց հետո պարզ է դառնում, թե այսօր որքան կարևոր է գիտագաղափարական պայքարը նման կեղծարարության դեմ:

MANUSHAK MARKOSYAN

ON THE ASSESSMENT OF ARMIN T. WEGNER'S ARMENOPHIL ACTIVITIES

SUMMARY

The false and fabricated approaches to the activities of famous Armenophil Armin Teofil Wegner presented in German professor Martin Tamke's Thesis for Doctor's Degree ("Armin T. Wegner and the armenians. The pretension of the eyewitness and reality") are analyzed and criticized in the article.

The necessity of scientific-political struggle against the denial of the Armenian Genocide, particularly in Germany, is underlined in the article.

²⁰ www.tallamentale.com/armin-wegner.htm

ВОКРУГ ОЦЕНКИ АРМЕНОФИЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМИНА Т. ВЕГНЕРА

РЕЗЮМЕ

В статье подвергаются анализу и критике ложные и сфабрикованные подходы относительно деятельности выдающегося арменофила Армина Теофила Вегнера, представленные в докторской диссертации немецкого профессора Мартина Тамке (“Армин Вегнер и армяне: притязание очевидца и действительность”).

В статье подчеркивается также необходимость научно-политической борьбы против отрицания Геноцида армян, в частности в Германии.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշոտ Մելքոնյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ

Կարեն Խաչատրյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, Նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, ԳԱԱ ԳԿԱԿ Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Համո Սուքիասյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Գոհար Վարդումյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Կարինե Մելիքյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Ալիսա Դումիկյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Արգիշտի Վարդանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Զոհրաբ Գևորգյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Սեդա Օհանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի ասպիրանտ

Լիլիթ Բոսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Լիլիթ Հովհաննիսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Զարուհի Ազիզբեկյան

ԵՊՀ դասախոս

Հովակիմ Բոյաջյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ռեզինա Գալուստյան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակից

Շիրակ Թորոսյան

ԵՊՀ դասախոս, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

Գեղամ Բադալյան

ԵՊՀ դասախոս

Գագիկ Ժամհարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային վարժարանի ուսուցիչ

Հովհաննես Ալեքսանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նարինե Հովսեփյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Վլադիմիր Պոնոմարյով

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (ՌԴ, Կենտրոնի մարզ, ք. Յուրգա)

Կարեն Մկրտչյան

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ

Տիգրան Բաղդասարյան

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ

Մանուշակ Մարկոսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 5

ՀԱՄՈՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ զԱՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ 22

ԳՈՐԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԴԻՑԱՊԱՇՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
(համառոտ ակնարկ) 33

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 45

ԱԼԻՍԱ ԴՈՒՄԻԿՅԱՆ

ԳՈՒԳԱՐԱՑ ԲԴԵՇԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ
ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ
ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ 58

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲՈՒՆ ՍՂՎԱՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ
ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի 66

ԶՈՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԶՈՎԱՆՆԻ ԲՈՎԱԶՉՈ «ԴԵԿԱՄԵՐՈՆ»,
ԶԵՖՐԻ ԶՈՍԵՐ «ՔԵՆՏԵՐԲԵՐՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ») 79

ՍԵՂԱ ՕՅԱՆԵԱՆ

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԻՐԱՔԻ
ՍԷՋ 17-19ՐԴ ԴԱՐԵՐՈՒՆ 90

ԼԻԼԻԹ ԲՈՍՅԱՆ

ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻՑ ՓՐԿՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՐԱՅ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ
(1890-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ) 107

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1914 Թ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1895 Թ. ՄԱՅԻԱՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ 119

ԶԱՐՈՒՀԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ՈՒՐՈՒԳՎԱՐԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
(XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ – XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 134

ՀՈՎԱԿԻՍ ԲՈՅԱԶՅԱՆ

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԱՊՍՏԱՍԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ 1913-1915
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 143

ՌԵԳԻՆԱ ԳԱԼՈՒՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ
ՍԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ... 153

ՇԻՐԱԿ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԱԶԻՍՅԱՆԻ ԽՆԴՐՈՒՄ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ
(1920 թ. փետրվար-մարտ) 161

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳԵՂԱՍ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՍԽՀ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1920 Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐ – 1922 Թ. ՍԿԻԶԲ) 173

ԳԱԳԻԿ ԺԱՄՅԱՐՅԱՆ

ԲՅՈՒՐՈՎՐԱՏԻՉՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 198

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՅՈՒԴԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԸ
ՌԱԴԽՅ-ՈՒՄ 211

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՅՈՒԴԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՕՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 ԹԹ.) 222

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՆՈՄԱՐՅՈՎ

ԼԴԻՍ-Ի ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 234

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ-ԻՒՅ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1992-1994 ԹԹ.) 243

ՏԻԳՐԱՆ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1998-2003 ԹԹ.) 255

ՄԱՆՈՒՇԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ 264

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

..... 273

CONTENTS

ASHOT MELKONYAN, KAREN KHACHATRYAN INSTITUTE OF HISTORY	5
HAMO SUKIASYAN THE COURSE MADE BY THE COUNCIL OF YOUNG RESEARCHERS OF THE INSTITUTE OF HISTORY OF NAS OF RA	22
GOHAR VARDUMYAN ANCIENT ARMENIAN MYTHO-WORSHIP SYSTEM (BRIEF SURVEY)	33
KARINE MELIKYAN ABOUT SOME SPECIFITIES CONCERNING THE ARMENIAN APOSTOLIC CHURCH'S RELATIONS WITH STATE IN EARLY MIDDLE AGES	45
ALISA DUMIKYAN SIGNIFICANCE OF GUGARK <i>BDESHKUTYUN</i> IN THE DEFENCE SYSTEM OF THE NORTH-EASTERN BORDER OF GREAT ARMENIA IN THE INTERPRETATION OF THE XIX CENTURY FRENCH ARMENOLOGISTS	58
ARGISHTI VARDANYAN ADMINISTRATIVE DIVISION OF PROPER AGHVANK ACCORDING TO "ASHKHARHATSUYTS"	66
ZOHRAB GEVORGYAN CILICIAN ARMENIA IN THE LITERATURE OF THE EARLY RENAISSANCE PERIOD (GIOVANNI BOCCACCIO "THE DECAMERON", GEOFFREY CHAUCER "THE CANTERBURY TALES")	79

SEDA OHANYAN

ARMENIAN MERCHANTS' ACTIVITIES IN IRAQ IN THE XVII-XIX CENTURIES 90

LILIT QOSYAN

SURVIVORS OF THE HAMIDIAN POGROMS AND MASSACRES
THE ARMENIAN REFUGEES IN EJMIATSIN GAVAR (THE
SECOND HALF OF THE 1890s) 107

LILIT HOVHANNISYAN

THE SIGNIFICANCE OF THE RUSSIAN-TURKISH AGREEMENT
OF 1914 ON THE REFORMS IN WESTERN ARMENIA IN
COMPARISON WITH THE MAY PROGRAM OF 1895 119

ZARUHI AZIZBEKYAN

FORMATION AND DEVELOPMENT OF THE ARMENIAN
COMMUNITY IN URUGUAY (THE END OF XIX
CENTURY – THE BEGINNING OF XXI CENTURY) 134

HOVAKIM BOYADJYAN

BOGHOS NUBAR PASHA AND THE QUESTION OF REBELLION
OF CILICIAN ARMENIANS IN 1913-1915 143

REGINA GALUSTYAN

THE PREMEDITATION OF THE ARMENIAN GENOCIDE
ACCORDING TO PUBLISHED DIPLOMATIC DOCUMENTS OF
THE GREAT POWERS 153

SIIRAK TOROSYAN

ARMENIAN-GEORGIAN DISAGREEMENTS IN THE PROBLEM
OF LAZISTAN DURING THE LONDON CONFERENCE
(FEBRUARY-MARCH 1920) 161

KAREN KHACHATRYAN, GEGHAM BADALYAN

THE FORMATION OF THE TERRITORY AND BORDERS OF
THE ARMENIAN SSR (DECEMBER, 1920 – BEGINNING OF
1922) 173

<i>GAGIK ZHAMHARYAN</i>	
MANIFESTATIONS OF BUREAUCRACY IN SOVIET ARMENIA IN THE 1920-1930s	198
<i>HOVHANNES ALEKSANYAN</i>	
ARMENIAN NATIONAL SELSOVIETS (RURAL COUNCILS OF WORKING PEOPLE'S DEPUTIES) AND DISTRICTS IN THE RSFSR	211
<i>NARINE HOVSEPYAN</i>	
SOVIET ARMENIAN VILLAGE SCHOOL DAILY ROUTINE DURING THE GREAT PATRIOTIC WAR (1941–1945)	222
<i>VLADIMIR PONOMARYOV</i>	
ACTIVITIES OF THE COMMITTEE OF SPECIAL ADMINISTRATION FOR NKAO	234
<i>KAREN MKRTCHYAN</i>	
ABOUT SEVERAL PROBLEMS WHICH APPEARED IN THE DIPLOMATIC RELATIONS BETWEEN RA AND IRI (1992–1994) ...	243
<i>TIGRAN BAGHDASARYAN</i>	
THE FRANCE'S ROLE IN THE NAGORNO-KARABAKH CONFLICT SETTLEMENT (1998-2003)	255
<i>MANUSHAK MARKOSYAN</i>	
ON THE ASSESSMENT OF ARMIN T. WEGNER'S ARMENOPHIL ACTIVITIES	264
<i>ABOUT THE AUTHORS</i>	273

СОДЕРЖАНИЕ

<i>АПОТ МЕЛКОНЯН, КАРЕН ХАЧАТРЯН</i> ИНСТИТУТ ИСТОРИИ	5
<i>АМО СУКИАСЯН</i> ПРОЙДЕННЫЙ ПУТЬ СОВЕТА МОЛОДЫХ УЧЕНЫХ ИНСТИТУТА ИСТОРИИ НАН РА	22
<i>ГОАР ВАРДУМЯН</i> МИФО-КУЛЬТОВАЯ СИСТЕМА ДРЕВНИХ АРМЯН (КРАТКИЙ ОБЗОР)	33
<i>КАРИНЕ МЕЛИКЯН</i> О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ВЗАИМООТНОШЕНИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ И ГОСУДАРСТВА В РАННЕМ СРЕДНЕВЕКОВЬЕ	45
<i>АЛИСА ДУМИКЯН</i> ЗНАЧЕНИЕ ГУГАРКСКОГО БДЕШХСТВА В СИСТЕМЕ ОБОРОНЫ СЕВЕРО-ВОСТОЧНЫХ ГРАНИЦ АРМЕНИИ В ИНТЕРПРЕТАЦИИ ФРАНЦУЗСКИХ АРМЕЛОВЕДОВ XIX ВЕКА	58
<i>АРГИШТИ ВАРДАНИЯН</i> АДМИНИСТРАТИВНОЕ ДЕЛЕНИЕ СОБСТВЕННО АГВАНКА ПО "АШХАРАЦУЙЦУ"	66
<i>ЗОГРАБ ГЕВОРКЯН</i> УПОМИНАНИЯ О КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ В ЛИТЕРАТУРЕ РАННЕГО ВОЗРОЖДЕНИЯ (ДЖОВАННИ БОКАЧЧО "ДЕКАМЕРОН", ДЖЕФФРИ ЧОСЕР "КЕНТЕРБЕРИЙСКИЕ РАССКАЗЫ")	79

СЕДА ОГАНЯН	
АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В ИРАКЕ В XVII-XIX ВЕКАХ	90
ЛИЛИТ КОСЯН	
ВЫЖИВШИЕ ИЗ ГАМИДОВСКИХ ПОГРОМОВ И РЕЗНИ АРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ В ЭЧМИАДЗИНСКОМ ГАВАРЕ (ВТОРАЯ ПОЛОВИНА 1890-Х ГОДОВ)	107
ЛИЛИТ ОГАНИСЯН	
ЗНАЧЕНИЕ РУССКО-ТУРЕЦКОГО СОГЛАШЕНИЯ 1914 ГОДА О РЕФОРМАХ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ В СВЕТЕ СРАВНЕНИЯ С МАЙСКИМ ПРОЕКТОМ 1895 ГОДА	119
ЗРУИ АЗИЗБЕКЯН	
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ УРУГВАЯ (КОНЕЦ XIX ВЕКА - НАЧАЛО XXI ВЕКА)	134
ОВАКИМ БОЯДЖЯН	
ПОГОС НУБАР ПАША И ВОПРОС ПОДНЯТИЯ ВОССТАНИЯ КИЛИКИЙСКИМИ АРМЯНАМИ В 1913–1915 ГОДАХ	143
РЕГИНА ГАЛУСТЯН	
ПРЕДУМЫШЛЕННОСТЬ ГЕНОЦИДА АРМЯН 1915–1916 ГГ. ПО ОПУБЛИКОВАННЫМ ДИПЛОМАТИЧЕСКИМ ДОКУМЕНТАМ ВЕЛИКИХ ДЕРЖАВ	153
ШИРАК ТОРОСЯН	
АРМЯНО–ГРУЗИНСКИЕ РАЗНОГЛАСИЯ ПО ПРОБЛЕМЕ ЛАЗИСТАНА В ХОДЕ ЛОНДОНСКОЙ КОНФЕРЕНЦИИ (ФЕВРАЛЬ–МАРТ 1920 Г.)	161
КАРЕН ХАЧАТРЯН, ГЕГАМ БАДАЛЯН	
ФОРМИРОВАНИЕ ТЕРРИТОРИИ И ГРАНИЦ СОВЕТСКОЙ АРМЕНИИ (ДЕКАБРЬ 1920 Г. – НАЧАЛО 1922 Г.)	173

ГАГИК ЖАМАРЯН	
ПРОЯВЛЕНИЯ БЮРОКРАТИЗМА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920–1930-ЫХ ГОДАХ	198
ОВАНЕС АЛЕКСАНИЯН	
АРМЯНСКИЕ НАЦИОНАЛЬНЫЕ СЕЛЬСОВЕТЫ И РАЙОНЫ В РСФСР	211
НАРИНЕ ОВСЕПЯН	
БУДНИ ШКОЛЫ АРМЯНСКОГО СЕЛА В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941–1945 ГГ.)	222
ВЛАДИМИР ПОНОМАРЁВ	
ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМИТЕТА ОСОБОГО УПРАВЛЕНИЯ НКАО	234
КАРЕН МКРТЧЯН	
О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ В ДИПЛОМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ РА И ИРИ (1992–1994 ГГ.)	243
ТИГРАН БАГДАСАРЯН	
РОЛЬ ФРАНЦИИ В УРЕГУЛИРОВАНИИ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА (1998-2003 ГГ.) ...	255
МАНУШАК МАРКОСЯН	
ВОКРУГ ОЦЕНКИ АРМЕНОФИЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМИНА Т. ВЕГНЕРА	264
ОБ АВТОРАХ	273

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» հանդեսին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Յեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Arial Armenian, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատեսակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ծախից՝ 3, աջից՝ 1:

- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» հանդեսի բոլոր համարների էլեկտրոնային տարբերակները տես

<http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

14

Համակարգչային ծնավորումը՝ Ն. Աղամյանի
Համակարգչային շարվածքը՝ Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 20.12.2013 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

« ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

«, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>



